

ԱԼԵԿՍԱՆԴՐ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՈՒՇԵՐ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՈՒՇԵՐ

Գրի առավ, հավելվածը կազմեց և խմբագրեց

ԱՐՄԵՆ ԲՈՒԴԱԳՅԱՆԸ

«ԱՐՃԵՇ» հրատարակչություն
ԵՐԵՎԱՆ 2000

ԴՏՀ 78(479.25)
ՊՄԴ 85.313(2Հ)
Հ 422

Գիրքը հրատարակության է երաշխավորել պրոֆեսոր
Արաքսի Սարյանը

Հարությունյան Ա.

Հ 422 Հուշեր. գրի առավ, հավելվածները կազմ. և խմբ. Ա. Բուդաղյանը.– Եր.:
Արճեշ, 2000.– 156 էջ, 32 էջ ներդիր:

«Հուշերի» հեղինակը հայ ականավոր կոմպոզիտոր, ԽՍՀՄ և Հայաստանի Հանրապետության Ժողովրդական արտիստ, ԽՍՀՄ և Հայաստանի Հանրապետության Պետական մրցանակի դափնեկիր, պրոֆեսոր Ալեքսանդր Հարությունյանն է: Գրավիչ և անմիջականորեն է պատմում նա իմանակի և իր ստեղծագործության, 20-րդ դարի արվեստի աչքի ընկնող գործիչների հետ ունեցած հանդիպումների մասին:

Հ $\frac{4905\ 000\ 000}{822(01)-2000}$ 2000

ՊՄԴ 85.313(2Հ)

ISBN 99930-825-1-1

© Издательство “Амроц”, 2000

© Ա. Հարությունյան, 2000

© Հայաստանի Կոմպոզիտորների և Երաժշտագետների միություն, 2000

1927 թվականի հեռավոր ամառն էր...

Մրտիս այնքա՛ն մոտ ու հարազատ հին Երևան՝ իր փոշոտ, ծուռուծուռ փողոցներով ու կարկաշող առվակներով, մրգատու այգիներով, սազանդարներով ու երկրից երկիր թափառող աշուղներով, այն օրերի ամենախսկական հրաշքով՝ կոնսերվատորիայով... Հայաստանում այդ ժամանակ գործող միակ երաժշտական ուսումնական հաստատությունը ճակատագրի բերումով առանձնահատուկ դեր ունեցավ իմ ողջ կյանքում: Մակայն երաժշտության հետ իմ անդրանիկ հանդիպումը կայացավ շատ ավելի վաղ, քան կընդունվեի կոնսերվատորիա:

Դեռ 1925 թ., երբ տակավին հինգ տարեկան էի, սովորեցի լսողությամբ նվագել: Տանը «Շրյոդեր» ֆիրմայի մի հին դաշնամուր ունեիք: Բավականին վարժ էի նվագում: «Նվագացանկիս» թիվ մեկ ստեղծագործությունը «Յաքլոչկո» պարն էր (այն էլ՝ վարիացիաներով):

Մի անգամ ծնողներս ինձ տարան Ալեքսանդր Սպենդիարյանի հեղինակային համերգի՝ Մշակույթի տուն (այն ժամանակ այդպես էր կոչվում ներկայիս Հայֆիլիարմոնիայի Փոքր դահլիճը): Ակամա լցվեցի համր ակնածանքով, երբ առաջին անգամ լսեցի սիմֆոնիկ նվագախմբի հնչողությունը (նվագախումբը ղեկավարում էր ինքը՝ հեղինակը):

Տուն դառնալուն պես վագեցի դաշնամուրի մոտ և սկսեցի հիշողությամբ վերարտադրել քիչ առաջ լսած ու ինձ այնքան դուր եկած «Երևանյան էտյուդները»՝ փորձելով պահպանել ստեղծագործության հարմոնիկ հաջորդականությունը, մի բան, որ միանգամայն աներևակայելի էր թվում յոթնամյա երեխայի համար: Վերջապես, միգուցե բացարձակ լսողության շնորհիվ (շրջապատում այդպես էին ասում), յուրովի, մանկական ընկալմամբ, այնուամենայնիվ կարողացա հնդթահարել պիեսը:

Ընտանեկան հանդիսությունների առիթով մեր տանը հաճախ խնջույքներ էին կազմակերպվում, և մեր հյուրերը, որոնք հիմնականում հորս՝ մայրո Գրիգորի Պետրովիչ Հարությունյանի գործընկերներն էին, խնդրում էին, որ «փոքրիկ Կոտիկը նվագի իրենց համար»: Իմ նվագը սիրում էր լսել նաև մեր տանը հաճախակի հյուրընկալվող Արտաշես Ստեփանյանը՝ Հանրապետության զինկոմը: Հայրիկիս պետն իսկապես կիրթ մարդ էր և մտերմական հարաբերությունների մեջ էր Երևանի մտավորականության բազմաթիվ ներկայացուցիչների հետ, որի կորիզն էին կազմում այնպիսի վառ անհա-

տականություններ, ինչպիսիք էին Ալեքսանդր Սպենդիարյանը, Մարտիրոս Մարյանը, Ալեքսանդր Թամանյանը և այլք:

1927 թ. ամառային պայծառ մի օր զինկոմն առաջարկեց հորս, ինչպես ինքն ասաց, «Կոտիկին ցույց տալ Սպենդիարյանին», ինչը և անհապաղ արվեց: Հիշողության մեջ մնացել է զինկոմի՝ բեմզինի անուշ բույր արձակող ավտոմեքենան: Մի քանի րոպե անց արդեն կոնսերվատորիայի շենքի մոտ էինք: Մեր գալստյան մասին ըստ երևույթին զեկուցել էին, և երկրորդ հարկում գտնվող սենյակներից մեկում մեզ դիմավորեց ինքը՝ Ալեքսանդր Աֆանասևիչը: Մենյակում ճերմակ ոռյալ կար, որի առջևից վեր կենալով՝ նա եկավ մեզ ընդառաջ: Ներողություն խնդրելով անհանգստություն պատճառելու համար՝ զինկոմը շարադրեց մեր այցելության նպատակը:

Բնավորությամբ ես բավական ամաչկոտ երեխա էի, բայց այստեղ, չգիտես ինչպես, զարմանալի խիզախությամբ լցվեցի ու մեծ աշխույժով նվագեցի «Յաբլոչկոն», հետո էլ անցա ամենակարևորին՝ «Երևանյան էտյուդներին»՝ իմ մանկական «մեկնաբանությամբ»: Հիշում եմ Սպենդիարյանի բաց երկնագույն, պեմսնեի ապակիներից խոշորացած աչքերը և բարություն ճառագող ժայտը:

Սպենդիարյանի հետ հանդիպումը վճռեց իմ հետագա կյանքը: Ինձ ընդունեցին Երևանի կոնսերվատորիային կից գործող մանկական խմբի դաշնամուրի դասարան, որը ղեկավարում էր Օլգա Բաբայանը:

1928 թ. մայիսին մահացավ Սպենդիարյանը... Նրա հետ իմ երկրորդ հանդիպումը չափազանց տխուր էր: Մայրս ինձ տարավ մարդկանցով լեփ-լեցուն Աբովյան փողոց, որով դանդաղ վեր էր ընթանում սզո թափորի մեքենան՝ մեծ երաժշտի դագաղի վրա խոնարհված երեք արմավենիներով: Ինչպես իմացա հետագայում, այդ արմավենիները Վրաստանի կոմպոզիտորներն էին բերել որպես Սպենդիարյանի հիասքանչ սիմֆոնիկ պոեմի՝ «Երեք արմավենու» խորհրդանիշ:

Կոմպոզիտորի աճյունը հանձնվեց հողին՝ օպերային թատրոնի պուրակում (թատրոնի շենքը դեռ նոր կառուցվում էր): Այդ վշտալի օրն առիավետ մնաց հիշողությանս մեջ:

Փոքր-ինչ՝ մեր տոհմի մասին:

Հորս նախնիներին չեմ տեսել: Գիտեմ միայն, որ պապս՝ Պետրոս Տեր-Հարությունյանը, քահանա է եղել Արդահանի Շավշետ գյուղում (այժմ՝ Թուրքիայի տարածքում), ղեկավարել է եկեղեցական երգչախումբը, ինքն էլ շատ լավ երգել է: Նա իր ողբերգական մահկանացուն է կնքել ընտանիքի մյուս անդամների հետ միասին 1918 թ. ջարդերի ժամանակ, երբ մի գիշերվա ընթացքում սրի է քաշվել Շավշետի ողջ բնակչությունը: Հրաշքով ողջ մնացած

Միհրան հորեղբայրս, որ այն ժամանակ տասնհինգամյա պատանի է եղել, ուշքի է գալիս իր հարազատների դիակների տակ: Սրից ստացած զլխի վերքից ուժասպառ, ձմռան ցրտին անտառներ ու սարեր կտրել-անցնելով՝ նա մի կերպ հասնում է Թիֆլիս, որտեղ հետևազորային ուսումնարանում սովորում էր իր եղբայրն ու իմ հայրը՝ Գրիգորի Հարությունյանը, որը հետագայում դարձել է կադրային գինվորական:

Մոր կողմից պապս՝ Ալեքսանդր Գևորգյանը, բնիկ երևանցի էր, ժառանգաբար՝ առաջին գիլդիայի վաճառական:

Իմ շատ սիրելի Վարսենիկ տատիկի ընտանիքը ժամանակին մեծ համբավ է վայելել: Նրա հայրը՝ Տիգրան Տեր-Դավթյանը, ավարտել է Թեոդոսիայի գիմնազիան հռչակավոր ծովանկարիչ Հ.Կ. Այվազովսկու եղբոր տնօրինության օրոք: Որոշ ժամանակ անց նա դայրոց է հիմնել Ջալալօղլում (այժմ՝ Ստեփանավան), որտեղ հետագայում ուսանել է մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը:

Մայրս՝ Էլեոնորան, միառժամանակ սովորել է Մոսկվայում, հայտնի նկարիչ Մոշկովի ստուդիայում, սակայն Հայաստանում ծավալված իրադարձություններն ստիպում են նրան վերադառնալ հայրենիք: 1919 թ. նա ամուսնանում է հորս հետ, որն այդ ժամանակ ծառայում էր Կարսում: 1920 թ. սկզբին, ռազմական իրադրության սրման հետ կապված, հայրս իր հղի կնոջն ապահովության համար ուղարկում է Երևան: Ծնվել են Երևանից ոչ հեռու, մայրիկիս դայակի խաղողի այգում, 1920 թ. սեպտեմբերի 23-ին:

Իմ մանկության երաժշտական տպավորությունները սերտորեն կապված են եղել մորեղբորս՝ Յակով Ալեքսանդրովիչի հետ, որը, մաթեմատիկայի ուսուցիչ լինելով հանդերձ, աշխատանքից հետո կիթառի նվագակցությամբ երգում էր թե՛ ռուսական, թե՛ հայկական քաղաքային ռոմանսներ և ժողովրդական երգեր:

Արդեն հիշատակված Միհրան հորեղբայրս հաճախ հայկական հայրենասիրական երգեր էր երգում ինձ համար, որոնք ժամանակին սովորել էր քահանա հորից:

Սակայն կրկին դառնամ դպրության տարիներիս:

Երևանի կոնսերվատորիային կից մանկական խմբում երեք տարի սովորելուց հետո, շարունակեցի ուսումնա Երևանում մոր բացված առաջին երաժշտական դպրոցում, որին հետագայում շնորհիվեց Ա.Սպենդիարյանի անունը:

Գպրոցի պատուհանները նայում էին երևանյան «մեյդահին», այն աչքի էր ընկնում արևելյան բոլոր շուկաներին հատուկ յուրօրինակ, գունազեղ խայտաբղետությամբ: Հիշում են այնտեղ հպարտորեն բազմած ուղտերին (քարա-

վաններն Իրանից էին գալիս): Շուկայի աղմկոտ եռուզեռի անմիջական հարկանությամբ մենք Բախ, Մոցարտ, Չեռնի էինք նվագում...

Դարոցում ամեն ամիս անցկացվող ցերեկային աշակերտական համերգները երբեմն լսելու էր գալիս չափազանց արտահայտիչ դիմագծերով ու ճերմակ մազափնջով մի մարդ: Նստում էր դահլիճի խորքում և գլուխը ձեռքերի վրա իջեցրած՝ լուս: Մի անգամ, ցերեկույթի ավարտից հետո, որի ընթացքում ես նվագեցի Մոցարտի սոնատներից մեկը, նա մոտ կանչեց ինձ: Չգուշավորությամբ էի նայում նրան, թեև աչքերը բարություն էին ճառագում:

«Անունդ ի՞նչ է»,— հարցրեց նա (խոսակցությունը հայերեն էր): «Կոտիկ»,— պատասխանեցի ես: Նա հեզմական երանգով կրկնեց. «Կոտիկ: Այդ ո՞վ է քեզ այդպես անվանել»:

Պիտի խոստովանեմ, որ այդ անունն առաջին անգամ լսել էի իմ վարսենիկ տատից: Բայց մտքովս էլ չանցավ մատնել սիրելի տատիկիս:

Ոտքից գլուխ զննելով իմ նիհարավուն կազմվածքը՝ «քեռին» ձեռքս բռնեց ու տարավ տնօրենի աշխատասենյակ: Այնտեղ ծնողներիս ուղղված մի երկտող գրեց, որում նրանց խորհուրդ էր տալիս ինձ լավ կերակրել, ապա ստորագրեց այն ու ասաց. «Կփոխանցես հայրիկիդ»:

Հետագայում իմացա, որ այդ մարդը Ռոմանոս Մելիքյանն էր՝ ականավոր կոմպոզիտորն ու հասարակական գործիչը: Նրա ջանքերով ու խանդավառությամբ կազմավորվեց Երևանի կոնսերվատորիան: Նուրբ, ոգեշունչ արվեստագետը և «Ջերմիտի», «Ջառ-վառ» հիասքանչ երգաշարերի հեղինակը, ցավոք, հասարակական ու մանկավարժական գործունեության հետ կապված ծայրահեղ ծանրաբեռնվածության պատճառով քիչ ժամանակ էր գտնում ստեղծագործելու համար:

Նա ևս կարևոր դեր ունեցավ իմ կյանքում: Իմանալով, որ մեր տանը եղած դաշնամուրը վատն է, խնդրեց մորս այցելել իրեն: 1934 թ. ամռանն էր: Ըստ սիրալիր ընդունելով նրան՝ Ռոմանոս Մելիքյանն ասաց, թե մտադիր է միջնորդել, որ լուսավորության ժողկոմը միջոցներ հատկացնի «Կոտիկի համար ոռյալ զննելու»:

— Վստահ եմ, որ կհաջողեմ,— ասաց նա:

Եվ իրոք, Մելիքյանին հաջողվեց հայթայթել անհրաժեշտ դրամը, որն այն ժամանակ բավականին մեծ գումար էր: Դեկտեմբեր ամսին, Լենինգրադում եղած ժամանակ, այդ գումարով հայրս ինձ համար «Բլյուբներ» ֆիրմայի ոռյալ զննեց:

Հաճախ եմ մտածում այն մասին, թե որքան մեծ էր այդ անձնավորության հեղինակությունն ու նրա խոսքի արժեքը, որ այն օրերի ավերածություններից ու սովից հետո դեռ ոտքի չկանգնած Հայաստանի կառավարությունը համաձայնեց այդ անել:

Ըստ երևույթին, իր խորաբափանցության և առանձնահատուկ լսողության շնորհիվ Ռոմանոս Մելիքյանն ի գորու էր սկսնակ երաժիշտների մեջ տեսնել այն, ինչն անտեսանելի էր շատերի համար: Իսկ տեսնելով՝ ջանում էր ամեն կերպ օգնել ու սատար կանգնել նրանց:

30-ականների սկզբին սկսեցի իմ առաջին համեստ փորձերը կոմպոզիցիայի բնագավառում: Իրեն հատուկ ջերմեռանդությամբ Ռ.Մելիքյանը դրանց առթիվ արձագանքեց «Խորհրդային արվեստ» ամսագրում (1934, N 11). «Այսօր, Հայաստանի խորհրդայնացման 14-ամյակի օրը, մեզանում կան խորհրդային ժամանակաշրջանում ծնված և խորհրդային պայմաններում մեծացած պատանի կոմպոզիտորներ (Կ. Հարությունյան, Ա. Բարաջանյան), որոնք իրենց աշխարհայացքով և կոմպոզիցիաների ինքնատիպությամբ գերազանցում են անցյալի ակնառու շատ երաժիշտներին»: Այս գնահատականը, որին մենք արժանացանք՝ լինելով դեռ սկսնակ երաժիշտներ, առանձնապես քանկ է ինձ համար:

Այդ հրաշալի մարդու և կոմպոզիտորի կյանքն անժամանակ ընդհատվեց: Եթե այն գոնե երկու տասնամյակ էլ տևեր, ռոմանասային լիրիկայի քանի՞ նոր գլուխգործոցներ կստեղծվեին...

...1935 թ. վաղ գարնանը Ռոմանոս Մելիքյանի աճյունով սզո գնացքը Թիֆլիսից ժամանեց Երևանի երկաթուղային կայարան: Դժվարությամբ զսպեցի արցունքներս, երբ տեսա նրա այդքան հարազատ, բայց, ավա՛ղ, անկենդան դիմագծերը...

Իմ պատանեկան տարիների հիշողություններում հատուկ տեղ են գրավում գիտակցությանս մեջ արմատացած վառ հանդիպումները երաժշտության հետ:

1933 թ. ձմռանը տեսական առարկաների մեր ուսուցիչը՝ Օվսաննա Տեր-Գրիգորյանը (որն, ի դեպ, ավարտել էր Լայպցիգի կոնսերվատորիան) առաջարկեց ունկնդրել Ա. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի փորձը: Երևանի նորաստեղծ օպերային թատրոնը պատրաստվում էր բացման արարողության: Դահլիճ մտնելիս արդեն լսելի էին նվագախմբի հնչյունները: Թովիչ երաժշտությունն ու բեմական գործողությունը միանգամից կյանեցին ինձ. չէ՞ որ ամենաառաջին ծանոթությունս էր օպերային արվեստին... Այսօր էլ, երաժշտական թատրոնին առնչվելիս, ակամա հիշում եմ Սպենդիարյանի անմահ ստեղծագործության հետ վաղեմի հանդիպումը, որ այնքա՛ն մեծ հուզմունք պատճառեց ինձ:

Իսկապես զարմանալի է, թե որքան մեծ էր այն անմոռանալի համերգների և վառ անումների թիվը, որոնց հետ ծանոթանալու հնարավորություն ունեցան 20-30-ական թվականների երևանցիները՝ Էզոն Պետրի, Վալերիա Բարսուվա, այն ժամանակ դեռ բոլորովին երիտասարդ Դավիդ Օյստրախ, Էմիլ Գիլելս,

Յակով Ֆլիեր, Ռոզա Տամարկինա, Ալեքսանդր Սվեշնիկովի երգչախումբ, Էդդի Ռոզենբերի ջազային խումբ, ամերիկյան ջազի փայլուն ներկայացուցիչներ՝ «Վայնթրաուբ-Սինկոպատորգ»... Անհնար է բոլորին թվարկել: Մեր հանդիսատեսը լի էր բարյացակամությամբ ու խանդավառությամբ, Մշակույթի տան դահլիճը մշտապես լեփ-լեցուն էր, իսկ կատարողներն արժանանում էին ամենաջերմ ընդունելության ու ծափողոյունների:

Վառ հիշողությունների հետ է կապված Սերգեյ Պրոկոֆևի հեղինակային համերգը Երևանում: Կարծես հիմա էլ աչքերիս առջև է նրա կիսադեմը՝ ինքնատիպ, խելացի մարդուն հատուկ ճակատով և կատարման ժամանակ փոքր-ինչ կախ ընկնող ստորին շրթունքով: Նվագում էր «Վաղանցիկ տեսիլքները», Երրորդ սոնատը և իր մյուս ստեղծագործությունները, նվագում էր հրաշալի՞, անկրկնելի:

Մեծ կոմպոզիտորի երաժշտությունը ցնցող տպավորություն թողեց ինձ վրա: Տարիներ անց ես սովորեցի նրա Երրորդ սոնատը և այդ ժամանակ, իհարկե, շատ ավելի լավ ընկալեցի Պրոկոֆևի երաժշտական նորարարության խիզախությունը:

Երևանյան երաժշտասերների վրա առանձնահատուկ տպավորություն էին գործում Կոմիտասի անվան լարային քառյակի համերգները նրա առաջին կազմի կատարմամբ: Դեռ այն ժամանակ, նրանց ելույթների ընթացքում հնչում էին Սերգեյ Ալբանազյանի՝ մեծն Կոմիտասի երգերի հիման վրա ստեղծած գլուխգործոցները: Կարծում եմ, որ այս դեպքում միանգամայն անտեղի է սովորաբար գործածվող «մշակում» սահմանումը: Հետագայում, Ալբանազյանի պիեսների պարտիտուրներն ուսումնասիրելիս, չէի դադարում հիանալ դրանց բացառիկ կվարտետային բնույթով:

Մեծ հետաքրքրություն էին առաջացնում Սուրեն Քոչարյանի բոլոր գրական երեկոները՝ սկսած «Դեկամերոնից» մինչև Թումանյանի հեքիաթներն ընդգրկող իր հարուստ խաղացանկով: Էլ չեմ ասում Սունդուկյանի անվան թատրոնի բեմականացումների, նրա փայլուն դերասանների՝ Վահրամ Փափազյանի, Հրաչյա Ներսիսյանի, Հասմիկի, Արուս Ոսկանյանի և մյուսների մասին:

Ինչ խոսք, բոլորովին այլ բնույթի տպավորություններն էլ շատ էին: Ժողովրդի կյանքը չափազանց ծանր էր: Կոլեկտիվացման ընթացքը մեծ դառնությունների ու բարոյությունների հետ էր կապված: Դպրոցից վերադառնալիս հաճախ էի հանդիպում «կուլակաթափ» արված մարդկանց, որոնց շարասյունով բշուռ էին Արուսյան փողոցով: Նրանց կողքերից գնում էին հրացանները պատրաստ պահած չեկիստները, իսկ քիչ այն կողմ, աղիողորմ ճիչերով ու լացով վագում էին ձեռքակալվածների կանայք ու մայրերը: Եվ դա ընդամենը սկիզբն էր այն չարագույժ զանգվածային հետապնդումների, որոնք դեռ առջևում էին:

Ահա այսպիսի հակասական «զգացմունքային ֆոնի» վրա էր անցնում իմ ուսումնառությունը երաժշտական դպրոցում, ապա և՛ կոմսերվատորիայում, ուր ընդունվեցի տասնչորս տարեկանում (այն ժամանակ տարիքային սահմանափակումներ չէին կիրառվում):

Հենց այդ ժամանակ էլ դաշնակահարի իմ մասնագիտության կողքին հայտնվեց մեկ այլ մրցակից. աստիճանաբար գորանում էր երաժշտություն գրելու ցանկությունն ու՝ մղումը:

«Հնչյունաստեղծման» բնագավառում առաջին անհամարձակ քայլերն արել եմ տասներկու տարեկանում: Դաշնամուրային «երկերիս» շարքում, չգիտես թե ինչու, ինձ համար առաճճնապես թանկ էր «Պոեմ Սևան-Հեկ-ի մասին» վերամբարձ անունը կրող պիեսը: Սա գրվել է այն օրերին լայնորեն գովազդվող Սևանի կասկադի առաջին ստորգետնյա էլեկտրակայանի շինարարության ազդեցության տակ: Իմ «ստեղծագործական պոռթկումները», սակայն, որոշ չափով սառչում էին պասիս եղբոր՝ Գոգոյի (որն, ի դեպ, երևանյան հայտնի «Ֆլորա» այգու սեփականատերն էր) տանը ծավալվող խոսակցությունների պատճառով: Այստեղ հավաքվող երևանցի մտավորականները չափազանց կծու խոսքերով էին արտահայտվում սևանյան կասկադի նախագծի հեղինակների մասին՝ կանխատեսելով, որ այդ շինարարությունը Սևանա լճի կործանման սկիզբն է դառնալու: Ավա՞ղ, ժամանակն ապացուցեց նրանց իրավացիությունը:

1934 թ: ես ընդունվեցի Երևանի կոմսերվատորիայի կոմպոզիցիայի դասարան, որը ղեկավարում էր ժամանակի հայտնի կոմպոզիտոր Սերգեյ Բարխուդարյանը: Նրա օգնական Վարդգես Տալյանը շատ հետաքրքիր անձնավորություն էր: Հիմնականում հենց նա էր անցկացնում մեր դասերը, քանի որ Թիֆլիսի (մերօրյա Թբիլիսիի) կոմսերվատորիայի պրոֆեսոր Մ.Վ. Բարխուդարյանը Երևանում համատեղությամբ էր աշխատում:

Ինձ հետ միասին կոմպոզիցիայի դասարան ընդունվեցին իմ ընկերներ Առնո Բաբաջանյանն ու Ղազարոս Սարյանը, իսկ մեկ տարի անց՝ նաև Էդվարդ Միրզոյանը: Այն ժամանակ չէինք կարող անգամ ենթադրել, որ մեզ վիճակված էր մեր կյանքի ողջ ուղին միասին անցնել:

Մ. Բարխուդարյանին մենք կատակով «հայ Մայկապար» էինք անվանում, որովհետև հիմնականում դաշնամուրային մանրամվազներ էր գրում: Բարխուդարյանական ստեղծագործությունների ոճով է գրված նաև կոմպոզիցիայի դասարանում ուսանելիս ստեղծված իմ անդրանիկ երկը՝ «Հայկական պարը» դաշնամուրի համար:

Սկզբնական շրջանում մեր պարապմունքներն ընթանում էին փոքր և միջին կտավի երաժշտական երկերի ստեղծման ուղղությամբ: Մեզ դասավան-

դող երաժիշտները հարմոնիկ լուծումների մեր որոնումներն ուղղում էին առավելապես կվարտա-կվինտային և սեկունդային համահնչյունների ոլորտ, որոնք ըստ տվյալ ժամանակի ըմբռնումների՝ առավելագույնս համապատասխանում էին հայկական երաժշտության կառուցվածքին: Սակայն մենք ևս փորձում էինք ընտրված մեղեդայնությանը կամ թեմատիկ հիմքին համապատասխանող հարմոնիկ նոր ձևեր գտնել:

1936 թ. կոմպոզիցիայի դասարանի ղեկավարումը փոխանցվեց Վ.Գ.Տալյանին: Անգնահատելի էր Վարդգես Տալյանի դերը իմ հասակակիցների, այսինքն՝ հայ կոմպոզիտորների նոր սերնդի դաստիարակության գործում: Նրա մեջ ակնհայտ էր մանկավարժի բնատուր տաղանդը (հիշեցնեմ, որ նա կրթություն էր ստացել Թիֆլիսում, կոմպոզիտոր Ն. Չերեպինի դասարանում): Տալյանը մեզանից յուրաքանչյուրի ընդունակությունների առանձնահատկություններն ընկալելու զարմանահրաշ կարողությամբ էր օժտված և ամեն կերպ ջանում էր վեր հանել և առավելագույնս զարգացնել մեր ներունակ հնարավորությունները:

Վարդգես Գրիգորևիչն իսկական ընկեր էր իր ուսանողների համար, նրանց մասին գիտեր ամեն ինչ՝ ընդհուպ մինչև նրանց կենցաղի մանրամասները: Նա կարողանում էր ոգևորել ուսանողներին, համբերությամբ զրուցել նրանցից յուրաքանչյուրի հետ՝ ներշնչելով այն միտքը, որ անելանելի վիճակ չի լինում, հարկ է լրկ աշխատել, աշխատել ջանադրաբար և նպատակաուղղված:

Հայտնի գուսան Ծերամի (Գոշոր Տալյանի) որդին լինելով՝ Վարդգես Տալյանը գեղջկական երգի և գուսանական, աշուղական արվեստի հիանալի գիտակ էր: Նա շռայլորեն կիսում էր իր գիտելիքները մեզ հետ՝ ջանալով մեզանում սեր արթնացնել ժողովրդական երաժշտության նկատմամբ: Դրա հետ մեկտեղ նրան հաջողվեց մեզ գերծ պահել ստեղծագործության մեջ ժողովրդայնության հիմնախնդրի գոեհկացված ըմբռումից:

Միշտ ժպիտով եմ հիշում այն դեպքը, երբ 1935 թ. Տալյանը մեզ հանձնարարեց երգեր գրել Թումանյանի մանկական բանաստեղծությունների տեքստերի հիման վրա: Ղազարոս Սարյանը պետք է կատվի մասին երգ գրեր («Փիսոն, փիսոն մլավան»), Առնոն՝ արաղաղի, իսկ ինձ «քախտ էր վիճակվել» երգ՝ գրել շան մասին («Հա՛ֆ, հա՛ֆ, ահա այսպես հաչում եմ ես»): Հանձնարարությունը միանգամայն հստակ էր՝ վոկալի և դաշնամուրի միջոցով արտահայտել կոնկրետ կերպարը: Մեծ համառությամբ էի փորձում գտնել անհրաժեշտ ինտոնացիաները և անգամ հարմոնիկ շերտավորումների օգնությամբ հաջողեցի դաշնամուրով արտահայտել շան կատաղի հաչոցը: Հիշում եմ՝ Վարսենիկ տատս, կտրվելով գրքից, լուրջ-լուրջ ասաց. «Կոտիկ ջան, կարծում էի, թե ձեզ մոտ գալով՝ Ստեփանավանի շների հաչոցից ազատվեցի, էն էլ ընկա քո շան ձեռք»:

Հասկացա, որ կերպարն ստացվել է...

Վարսենիկ տատս մեր բոլոր բարեկամների, մաև իմ ընկերների սիրելիմ էր: Նրա անվան հետ կապված բազմաթիվ պատմություններից կուզեմայի հիշել մեկը:

...Դժվարին 30-ականների սկզբին Երևանում, ինչպես և ամենուր Խորհրդային Միությունում, բացվեցին, այսպես կոչված, «Տորգսինթ» խանութներ, որտեղից բնակչությունը կարող էր սննդամթերք ձեռք բերել քանկարժեք մետաղների դիմաց: Մեր հանրակրթական դպրոցում երեխաներից մեկը մեզ հուշեց այն միտքը, թե կարելի է տնից արծաթյա իրեր բերել և խանութում փոխանակել կոնֆետների հետ, ապա՝ դրանք հավասար բաժանել այս «ձեռնարկման» բոլոր մասնակիցների միջև: Շուտով հեքթն ինձ հասավ: Տանը վաղուց «աչք էի դրել» Վարսենիկ տատի ակնոցի արծաթե հին շրջանակի վրա: Երկարատև երկմտանքից հետո հաղթեց դասարանի հետ համերաշխության զգացումը, և «փոճի հետ գործարքը» կնքվեց... Դասերից հետո բրոջս համար տուն բերեցի թղթի մեջ փաթաթած կաշուն «բարձիկների» իմ բաժինը:

Արդեն այն տարիներին բավական կարողացած էի. ծանոթ էի Տոլստոյի, Չեխովի, Ժյուլ Վեռնի և, իհարկե, Վիկտոր Հյուգոյի բոլոր ստեղծագործություններին (Մայն Ռիդն ու Ֆենիմոր Կուպերը «երկրորդ պլանում» էին): Սեղանի վրա կոնֆետները տեսնելով՝ տատս, տխուր ժպիտը դեմքին, հիշեցրեց Վիկտոր Հյուգոյի «Թշվառներ» վեպի արծաթե մոմակալների գողության դրվագը՝ նրբորեն հասկացնելով ինձ, որ իր ակնոցի շրջանակի անհետացումը համանման դրության մեջ դրեց թե՛ ինձ, թե՛ իրեն:

Այրող ամոթից դեմքս շառագունեց: Բակի կողմից երկար պատշգամբ ունեինք. այդ չարաբաստիկ կոնֆետները ձեռքիս՝ սուրացի պատշգամբի երկայնքով ու շարտեցի դրանք ուղիղ զուգարանի մեջ:

Դառնալով կոմպոզիցիայի մեր դասարանական աշխատանքների՝ պիտի ասեմ, որ ամենամյա հաշվետու համերգների ժամանակ բավականին լավ արդյունքներով էինք հանդես գալիս: Լենինգրադցի պրոֆեսորներ Զ. Ս. Զուչնարյանն ու Մ.Օ. Շտեյնբերգը Երևանում եղած ժամանակ ունկնդրեցին մեր համեստ *օպուսները*՝ հետագայում շեշտելով դրանց ազգային արմատներն ու ձևի համոզությունը, ինչն, իհարկե, չէր կարող մեզ չոգեշնչել:

Յուրահատուկ ձևով, պատանեկան ամմիջականությանը էինք արձագանքում բոլորովին այլ կարգի երևոյթներին: 1936 թ. լույս տեսան «Պրավդա» թերթի «Երաժշտության փոխարեն՝ խառնաշփոթ» և «Բալետային ֆալշ» վերտառությանը խմբագրական հոդվածները, որոնց քննադատության փրախն էր դարձել Դմիտրի Շոստակովիչի երաժշտությունը: Հիշում եմ այն տպավորությունը, որն առաջացնում էր նշված հոդվածների կոպիտ, ոչնչացնող

լեզվաճճը: Այն ժամանակների պահանջներին հարազատ մնալով՝ համապատասխանաբար արձագանքեց նաև մեր հանրապետական մամուլը: Մասնավորապես համաման «խարազանման» ենթարկվեց Երևանի օպերային թատրոնում բեմադրված՝ Հարո Ստեփանյանի «Քաջ Նազար» օպերան: Այդ ստեղծագործությունը երգիծական օպերայի ժանրում նկատելի երևույթ էր, և շատ ցավալի է, որ նշված ժամանակից ի վեր այն մոռացության մատնվեց:

1938 թ. մայիսին Վարդգես Տալյանն Առնոյին ու ինձ իր հետ տարավ Մոսկվա, ուր մեր ստեղծագործությունների ունկնդրում կազմակերպվեց Հայաստանի Մշակույթի տան դահլիճում: Համերգի առաջին բաժնում Առնոն և ես ներկայացրինք մեր դաշնամուրային գործերը, իսկ երկրորդ բաժնում հանդես եկավ Լենինգրադի կոմսերվատորիայի ուսանող Թունիկ Հովհաննիսյանը, որ ուսանում էր Բ.Ս.Քուշնարյանի դասարանում: Ավա՛ղ, այդ շնորհալի երաժիշտը զոհվեց ռազմաճակատում, Լենինգրադի մատույցներում մղվող մարտերի ընթացքում:

Այդ համերգի ժամանակ առաջին անգամ տեսա Արամ Խաչատրյանին: Հիշողությանս մեջ տպավորվել է խոշոր, արտահայտիչ աչքերով նրա դեմքը: Մեր ելույթից հետո «Սովետսկոյե իսկուստովո» թերթում (10.6.1938) հրատարակվեց նրա հոդվածը, որում մասնավորապես ասվում էր հետևյալը. *«Իհարկե, թե՛ Ա.Բաբաջանյանի, թե՛ Կ.Հարությունյանի ստեղծագործական առաջին փորձերը դեռևս աշակերտական բնույթ ունեն: Սակայն դրանք հույս են ներշնչում, որ համառ, հետևողական աշխատանքի դեպքում և մանկավարժական պատշաճ ղեկավարության առկայությամբ երկու պատանի կոմպոզիտորներն էլ կնվաճեն կոմպոզիցիայի իսկական վարպետության բարձունքները»:*

Այսպես սկսվեց մեր շփումը Արամ Խաչատրյանի հետ:

Կոմսերվատորիայում երկու մասնագիտությամբ իմ ուսումնառությունը կապված էր մեծ լարվածության հետ, քանի որ Օ.Բաբաջանը և Վ.Տալյանը յուրովի էին գնահատում իմ հետագա գործունեության հեռանկարները և ըստ այդմ էլ, լավագույն մղումներից ելնելով, ծանրաբեռնում էին ինձ տնային հանձնարարություններով: Ժամանակ առ ժամանակ նրանց միջև իմ ապագային վերաբերող բավականին «պատվախնդիր» խոսակցություններ էին ծագում:

Այն տարիների իմ ստեղծագործություններից հիշում եմ «Հովվերգությունը», «Բալլադ 26-ի մասին»-ը, «Երեք պրեյլուդ» դաշնամուրային պիեսները (դրանք լույս տեսան 1939 թ.) և երկու դաշնամուրի համար գրված «Քայլերգը», ինչպես նաև Կոմիտասի գրառած «Լոռվա հորովելի» դաշնամուրային մշակումն ու աշուղ Ջիվանու «Իդ» երգի մշակումը ձայնի և

դաշնամտրի համար: «Այս ուռու տակ» ռոմանտում անդրադարձել են Ավետիք Իսահակյանի պոեզիային:

1939 թ. կազմակերպվել էին մի շարք հանդիսություններ՝ կապված «Մասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակի հետ: Երևանի կոնսերվատորիան մրցույթ հայտարարեց էպոսի որևէ հատվածի խոսքերով գրված լավագույն ստեղծագործության համար: Իմ «Տի գովեն Խանդութ խանում» երգով արժանացա Առաջին մրցանակի:

Նույն տարում, չնայած մեր երիտասարդ տարիքին, Էդվարդ Միրզոյանն ու ես դարձանք Հայաստանի Կոմպոզիտորների միության անդամ (Առնոն և Ղազարոս Մարյանը 1938 թվականից Մոսկվայում էին):

1939 թվականը հիշարժան է Մոսկվայում առաջին անգամ նախաձեռնված Հայկական արվեստի և գրականության տասնօրյակով: Նույն տարվա գարնանը դեռևս 3-րդ կուրսի ուսանողիս իր մոտ հրավիրեց Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար Գրիգորի Արտեմևիչ Հարությունյանը: Նա մշտապես հետաքրքրվում էր հայկական արվեստի խնդիրներով: Արդեն այն ժամանակ անձամբ ճանաչում էր ուսանող-կոմպոզիտորներին:

Գրիգորի Հարությունյանն ինձ առաջարկեց երգչախմբի և նվագախմբի համար մի երգ գրել, որով հարմար կլիներ պսակել տասնօրյակի եզրափակիչ համերգը: Պարտքս համարեցի ասել, թե համերգի եզրափակիչ համարի պատշաճ «թեկնածու» կարող է դառնալ Արամ Խաչատրյանի մեծ ճանաչում վայելող «Երգ Ստալինի մասին»-ը: Գ.Հարությունյանը պատասխանեց, որ ավելի ճիշտ կլինի նոր երգով մասնակցել տասնօրյակին:

Ի վերջո, ես գրեցի երգը: Դրա համահեղինակը տաղանդավոր կոմպոզիտոր և դաշնակահար Ալեքսանդր Դուրխանյանն էր: Սակայն իմ ենթադրությունները ճիշտ էին. տասնօրյակի եզրափակիչ մասում օրինաչափորեն հնչեց Ա. Խաչատրյանի «Երգ Ստալինի մասին»-ը:

Մտտեմում էին պետական քննությունները, և Վարդգես Տայանն առաջին անգամ իմ առջև խոշոր կտավի բազմամաս երկի ստեղծման խնդիր դրեց: Նման ստեղծագործություն դարձավ իմ Դաշնամուրային կոնցերտը: Նրա կերպարներն ու տրամադրությունները բնորոշ էին այն տարիներին գրված իմ երաժշտությանը: 1-ին մասի եռանդուն, քայլերգային թեմա, 2-րդի մտահայտող քնարականություն, ֆինալի պարային դինամիկա՝ այսպիսին են այդ ստեղծագործության հիմնական «պարագծերը»:

Կոնցերտի գործիքավորումն սկսել են 3-րդ մասից, ապա անցել 2-րդին: Այդպես էլ շիասրեցի մինչև դիալոմային քննությունը վերջացնել 1-ին մասի

գործիքավորումը. ցավոք, մինչև օրս էլ այն կլավիրի (դաշնամուրային տարրերակի) տեսքով է մնացել:

Կոնցերտի վրա աշխատելիս ես խորհրդակցում էի կոնսերվատորիայի ռեկտոր, ակադեմիկոս ղեկավար Կոնստանտին Սարաջևի հետ: Նա բարյացակամորեն ընդունում էր ինձ իր տանը. զգում էի իմ այս աշխատանքն ավարտված տեսնելու նրա անկեղծ շահագրգռությունը: Իր առաջարկությունները Սարաջևը զարմանալի նրբանկատությամբ էր անում. «Ի՞նչ եք կարծում, աղավնյակ, լավ չի՞ լինի, եթե այս տակտերը հանձնարարվեն միայն լարայիններին» և այլն: Եթե ասվածը համոզիչ էր թվում ինձ, մի բան, որ ավելի հաճախ էր պատահում, մենք հենց տեղում կատարում էինք համապատասխան փոփոխություններ:

Կոնստանտին Սարաջևն օժտված էր երիտասարդության հետ հաղորդակցվելու արտասովոր տաղանդով: Նա այնպես էր իրեն պահում, որ ակամա մոռանում էինք տարիքային տարբերությունը: Ամեն անգամ այդ հրաշալի, բազմակողմանիորեն զարգացած երաժշտի և հմայիչ անձնավորության հետ հանդիպելիս մեծագույն ուրախություն էի ապրում:

Կոնցերտի վրա աշխատելու ընթացքում ես, բնականաբար, դասական գրականության միջոցով ծանոթացա տվյալ ժանրի բազմաթիվ նմուշներին: Սակայն առանձնահատուկ էր Արամ Խաչատրյանի՝ Երևանում կատարված Դաշնամուրային կոնցերտի տպավորությունը: 1939 թ. այդ կոնցերտի փայլուն կատարմամբ մեր նվագախմբի հետ հանդես եկավ Լև Օրբիհնը, ընդ որում, համերգի դիրիժորն էր Գևորգ Բուդաղյանը: Ըստ երևույթին, հենց այդ ոգեշնչումն էլ լուրջ ազդակ դարձավ իմ Կոնցերտի ստեղծման համար:

1941 թ. հունիսին նշանակված էր «դաշնամուր» առարկայի իմ առաջին դիպլոմային քննությունը: Քննական հանձնաժողովի նախագահ, կոմպոզիտոր Հարո Ստեփանյանը հետագայում նշում էր այն գոհունակությունը, որ ապրել էր Բեթհովենի «Ապասիոնատի» իմ կատարման ժամանակ: Մի քանի օր անց հաջողությամբ հանձնեցի նաև «կոմպոզիցիա» առարկայի ավարտական քննությունը: Նույն տարում կոնսերվատորիան ավարտեց նաև Էդվարդ Միրզոյանը՝ ներկայացնելով իր «Լոռեցի Սաքուն» սիմֆոնիկ պոեմը:

Կոնսերվատորիան ավարտեցի գերազանց: Պետական հանձնաժողովը երաշխավորեց իմ գործուղումը Մոսկվայի կոնսերվատորիա՝ կոմպոզիցիայի գծով ուսումը շարունակելու համար:

Ավա՛ղ, սկսվեց պատերազմը...

1941 թ. հունիսի 22-ին կոմպոզիտորների մի խմբով անհոգ ու անվրդով, առավոտ կանուխ մեկնեցինք Դիլիջան՝ զբոսախմբույքի, որ կազմակերպել էր Հայաստանի Երաժշտական ֆոնդը մեր դիպլոմային քննությունների բարե-

հաջող հանձնման կապակցությամբ (օրվա հերոսներն էինք ես ու Էդվարդ Միրզոյանը): Հենց Դիլիջանում էլ իմացանք, որ պատերազմ է սկսվել: Չարագույժ նորությունը ցնցեց բոլորիս, և ամեն բան թողնելով՝ անմիջապես վերադարձանք Երևան: Երեկոյան, Քանաքեռի բարձունքից տեսնելով մեր մթնած քաղաքը, ողջ էությամբ զգացի, որ ավարտվեց իմ կյանքի որոշակի մի փուլը, իսկ առջևում մեծ գրկանքների և աղետալի իրադարձությունների շրջանն է:

Պատերազմն ամեն ինչ գլխիվայր շրջեց: Արդեն մեկ ամիս անց միայն մեր համեմատաբար փոքր կրնեսեթևատորիայից ռազմաճակատ ուղարկվեց ավելի քան 60 մարդ:

Իմ սիրելի ընկերը՝ Ղազարոս Սարյանը, բանակում էր 1939 թվականից և պատերազմի ողջ ընթացքում մարտնչում էր ռազմաճակատի զենիթային հրետազորի կազմում: Երկարուձիգ երեք տարի ոչ մի լուր չկար նրանից. հայրը՝ Մարտիրոս Սարյանը, այդ ընթացքում բառ անգամ չէր արտասանում. հավատում էր, որ Ջարիկը վերադառնալու է:

Չորակոչվեցին նաև (ճիշտ է՝ կարճ ժամանակով) իմ ընկերներ Առնո Բաբաջանյանն ու Էդվարդ Միրզոյանը: Չորակոչից դուրս մնացած առանձին անհատների թվում էի նաև ես: Ավելի ուշ իմացա, որ իմ հարցը բննելիս վճռորոշ դեր էր խաղացել Գրիգորի Հարությունյանը, որն ավելի նպատակահարմար էր համարել այդպիսի լուծումը:

Պատերազմի առաջին ամիսներին իմ «սխրանքները» սահմանափակվում էին բակերում երկար խրամատներ փորելով (բոլոր չգորակոչվածներն էին դրանով զբաղված): Հոգուս վրա ծանր բեռ էր նստել: Տանջում էր մեղքի սուր զգացումը ռազմաճակատում կռվող հասակակիցներիս նկատմամբ:

Մի անգամ հանդիպեցի մեր օպերային թատրոնի խմբավար Վենիամին Նիկոլսկուն. խոսակցության ժամանակ նա միտք հայտնեց, թե կարելի է Երևանի Մպայի տանը կից գործող երգի-պարի անսամբլ կազմակերպել: Ես ոգևորությամբ ընդունեցի այդ գաղափարը և շուտով ստանձնեցի նորաստեղծ կոլեկտիվի երաժշտական մասի ղեկավարի պարտականությունները՝ միաժամանակ խմբի անդամներին նվագակցելով մերթ դաշնամուրով, մերթ սկորդեռով: Հիմնականում ելույթ էինք ունենում զինվորական ստորաբաժանումների համար: Նվագացանկին մասնակցություն էի բերում նաև ես. այդ ընթացքում ստեղծեցի մի շարք հայրենասիրական երգեր: Մեր անսամբլն իր գործունեությունը շարունակեց մինչև 1944 թ.:

Այսօր էլ զարմանքով եմ հիշում, թե պատերազմի դժվարին տարիներին որքան հաճախ էին մարդիկ գնում թատրոն և համերգային դահլիճներ: Պարբերաբար, շարաթական մեկ անգամ, կազմակերպվում էին սիմֆոնիկ երաժշտության համերգներ Սարաջևի և Խարաջանյանի ղեկավարությամբ: Երևանի օպերային թատրոնի խաղացանկը ևս հարուստ էր ու հետաքրքիր:

1942 թ. հուլիսին օպերային թատրոնի դահլիճում օպերայի և ֆիլհարմոնիայի միացյալ նվագախմբի կատարմամբ հնչեց Դմիտրի Շոստակովիչի Յոթերորդ («Լենինգրադյան») սիմֆոնիան: Նվագախմբի դիրիժորն էր Միքայել Թավրիզյանը: Դա Շոստակովիչի նշանավոր ստեղծագործության թվով երրորդ կատարումն էր (Կուլբիշևից և Մոսկվայից հետո): Պրեմիերայի կապակցությամբ Թբիլիսիից Երևան էր ժամանել մշակույթի գործիչների մի ամբողջ խումբ, այդ թվում՝ Ն.Մյասկովսկին, Յու.Շապորինը, Կ.Իզումնովը, Ա.Գաուկը: Ես պարզապես ցնցված էի երաժշտական այդ կտավի մասշտաբներով, հաղթանակի այն հույսով, որով շնչում էր Շոստակովիչի երաժշտությունը:

Այն օրերին գերմանացիները բառիս բուն իմաստով Կովկասյան լեռնաշղթայի փեշերին էին, ուր խորհրդային զինվորների շարքերում մարտնչում էին մաև մեր հայրենակիցները: Հպարտությամբ կարդացի «Պրավդայում» տպագրված «Իսահակյանի հրացանային համազարկերը» հոդվածը: Շատ լավ ճանաչում էի Պարույր Իսահակյանին: Մեր կոմսերվատորիայի կոնտրաբասի դասարանի ուսանողներից էր: Պատերազմի տարիներին մեծ կիրառում գտած հրացանային համազարկերի արդյունավետ օգտագործման գաղափարը նրան էր պատկանում: Շատ-շատերի նման Իսահակյանն էլ չվերադարձավ ռազմի դաշտից...

1942 թ. մարտի 2-ը հիշարժան է Էդվարդ Միրզոյանի և ինձ համար: Փոքրինչ ավելի վաղ, Կոնստանտին Մարաջևը հայտնեց, թե մտադիր է սիմֆոնիկ երաժշտության հերթական համերգի ժամանակ կատարել մեր դիպլոմային աշխատանքները: Համերգային բաժնից ազդագրեր վերցնելով՝ Միրզոյանի հետ երեկոյան սոսնձեցինք դրանք քաղաքի մութ փողոցներում: Զգիտեմ՝ ազդագրերի շնորհիվ էր, թե ոչ, բայց համերգի օրը դահլիճը լեփ-լեցուն էր: Չեմ կարող չնշել այն հեռավոր երեկոյի ընդհանուր բարյացակամ մթնոլորտը: Շատ լավ հնչեց Միրզոյանի «Լոռեցի Սաքոն» պոեմը: Ես նվագեցի Դաշնամուրային կոնցերտիս 2-րդ և 3-րդ մասերը, նվագեցի բավականին լավ, ինչպես ասում էին գործընկերներս:

Սարաջևի հետ ելույթ ունենալը միշտ հետաքրքիր էր: Բեմ դուրս գալուց առաջ դիմեց ինձ. «Աղավնյակս, ախր ինչո՞ւ չեք գործիքավորել Ձեր Կոնցերտի 1-ին մասը»: Պատասխանեցի, որ մախ ուզում էի գործիքավորման ավելի մեծ փորձ ձեռք բերել: Ծիծաղելով Կոնստանտին Սոլովոնովիչն ասաց. «Մի լավ ծեծի փորձ էր պետք...»: Նման «կատակից» հետո պիտի տրամադրվեի Կոնցերտի 2-րդ մասի լիրիկական սկիզբը նվագելու:

Պատերազմի տարիներին երիտասարդ ստեղծագործողներին համար Սարաջևի տունը երկրորդ կոմսերվատորիա էր դարձել: Չափազանց հարուստ երաժշտական գրադարան ուներ: Շատ հաճախ նրան միանալով՝ չորս ձեռքով

դաշնամուր էինք նվագում: Պարանոցը փոքր-ինչ ձգելով՝ Սարաջևը խորասուզվում էր պարտիտուրի մեջ և իր կառչուն, առաջին հայացքից ոչ «դաշնամուրային» մատներով ակնթարթորեն վերարտադրում էր ամենակարևորը: Ժամանակ առ ժամանակ կողքից ինձ էր նայում՝ կարծես ցանկանալով համոզվել, թե ինչ տպավորություն են գործում հարմոնիկ այս կամ այն զուգորդումները կամ մոդուլյացիաները:

Սարաջևի հետ Վագների օպերաների սիմֆոնիկ դրվագները նվագելիս մեծ դասեր էի առնում: Նրա շնորհիվ շատ բան սովորեցի Սկրյաբինի, Ստրավինսկու, Պրոկոֆևի և հատկապես Մյասկովսկու երաժշտության մասին, որի ստեղծագործության մեծ գիտակն էր ինքը: Երեք ժամ անընդմեջ նման վարժություններ անելուց հետո դաշնամուրի առջևից վեր էի կենում բառիս բուն իմաստով ուժասպառ եղած: Սարաջևի տիկինը՝ Ջոյա Բորիսովնան, որի բարի աչքերից ոչինչ չէր վրիպում, անմիջապես հրավիրում էր մեզ կարկանդակով թեյ ճաշակելու:

Մի անգամ Կոնստանտին Սոլովնովիչին հարցրի, թե արդյոք նրան ծանոթ է Ալեքսանդր Մոստովի ստեղծագործությունը: Այդ կոմպոզիտորի համբավն այն օրերին տարածված էր, սակայն ես ծանոթ չէի նրա երաժշտությանը: «Այժմ կպարզենք», – առեղծվածային ժպիտով պատասխանեց Սարաջևը և Ջոյա Բորիսովնային խնդրեց բերել Մոստովի պարտիտուրը:

Ջոյա Բորիսովնան փայլուն գիտեր, թե որ պահարանում և որ դարակի վրա են գտնվում այս կամ այն նոտաները: Մեկ բուպե չանցած՝ պարտիտուրը նոտակալի վրա էր: Կարդացի ստեղծագործության վերնագիրը՝ «Գործարան: Մեքենաների երաժշտություն: Սիմֆոնիկ դրվագ «Պողպատ» բալետից»: Սա Մոստովի հենց այն նույն ստեղծագործությունն էր, որն այդքան հակասական մեկնաբանությունների ու կարծիքների առիթ էր դարձել: Որքան մեծ եղավ զարմանքս, երբ 1929 թ. հրատարակված պարտիտուրի անվանաթերթի վրա տեսա, որ հեղինակն այն ձոնն է Կ.Ս.Սարաջևին՝ ստեղծագործության առաջին կատարողին ու քարոզչին: Պարտիտուրի մեջ իսկապես հետաքրքիր շատ բան կար ինձ համար:

Այսպիսով, Սարաջևի շնորհիվ կայացավ իմ ծանոթությունը տվյալ ժամանակաշրջանին առավել բնորոշ և, անկասկած, տաղանդավոր մի ստեղծագործությանը: Սարաջևն ինձ պատմեց գործարանում այդ ստեղծագործության կատարման հետ կապված մի դրվագ. ունկնդրումից հետո բանվորները նրան մի երկտող էին ուղղել. «Ո՞վ է ձեզ թույլ տվել երկարացնել մեր աշխատանքային օրը»: Այդպիսի զավեշտական դեպքեր էլ էին լինում...

1942 թ. հուլիսին Սարաջևն ինձ խնդրեց մեկնել Թբիլիսի, որտեղ ժամանակավորապես բնակվում էր էվակուացված Նիկոլայ Յակովլևիչ Մյասկովսկին: Նա մտադիր էր Երևանում կատարել Մյասկովսկու 21-րդ սիմֆոնիան և

ինձ հանձնարարել էր Թբիլիսից բերել դրա պարտիտուրը: Գիտեի, որ այդ երկու նշանավոր երաժիշտներին երկարամյա բարեկամություն էր կապում. Սարաջևը Մյասկովսկու բազմաթիվ սիմֆոնիաների առաջին կատարողն է եղել:

Սարաջևի խորհրդով հետս վերցրեցի իմ Դաշնամուրային կոնցերտի նոտաները, ինչպես նաև դաշնամուրի համար գրված Պրելյուդներն ու «Տի գովեն Խանդութ խանուն» երգը:

...Ն.Մյասկովսկին սիրալիր դիմավորեց ինձ և հրավիրեց մտնել մի սենյակ, ուր բացված սեղանի ողջ երկայնքով պարտիտուրի ձեռագիր էջերն էին դրված: Առաջարկեց նստել և, դանդաղ շարժվելով սեղանի մի ծայրից մյուսը, նոտաների թերթերի վրա սկսեց ինչ-ինչ ուղղումներ անել՝ միաժամանակ թեթևակիորեն շոյելով մորուքը:

Երբ նա գործն ավարտեց, դեմքի խիստ արտահայտությունը տեղի տվեց մեղմ ժպիտին: Ընթերցելով Սարաջևի՝ իրեն հասցեագրված նամակը, որում, ինչպես հասկացա, խոսքն իմ մասին էր, Մյասկովսկին հետաքրքրվեց՝ բերե՞լ եմ արդյոք իմ նոտաները: Բավական հուզված նստեցի դաշնամուրի առջև: Մյասկովսկին ուշադիր լսեց Կոնցերտը, ապա խնդրեց կրկնել դրա դանդաղ մասն ամբողջությամբ: Մի րոպե տևած լռությունից հետո ասաց. «Դե ինչ, այն ամենը, ինչ Դուք ինձ համար նվագեցիք, միանգամայն ներդաշնակ էր»: Հետագայում Արամ Խաչատրյանն ինձ բացատրեց, որ «միանգամայն ներդաշնակ» խոսքերը Մյասկովսկու դեպքում լիակատար հավանության նշան են:

Նիկոլայ Յակովլևիչն ինձ հարցրեց, թե ինչպես եմ վերաբերվում Մոսկվայում կատարելագործվելու գաղափարին: Պատասխանս դրական էր, թեև այն ժամանակ, պատերազմի թեժ օրերին, չէի էլ պատկերացնում՝ երբ և ինչպես հնարավոր կլիներ իրականացնել այդ ցանկությունը:

Արդեն Երևանում, Սարաջևի ղեկավարությամբ 21-րդ սիմֆոնիայի հրաշալի երաժշտությունը լսելիս, կրկին ու կրկին հիշում էի Ն. Մյասկովսկու հետ մեր զրույցը, գնացքի այն մթնեցված վագոնը, որով գնում էի Թբիլիսի՝ նրան հանդիպելու:

1942 թ. Կոնստանտին Սարաջևի ջանքերի շնորհիվ Երևանում օբևանց էվակուացված Կոնստանտին Նիկոլևսիչ Իզումնովը: Ականավոր դաշնակահար, պրոֆեսոր Իզումնովն այստեղ ապրեց մեկ տարուց քիչ ավելի, սակայն ամենար է գերազնահատել նրա ազդեցությունը հայկական դաշնամուրային կուլտուրայի վրա:

Այդ ուսումնական տարում Երևանի կոնսերվատորիայի Իզումնովի դասարանում են ուսանել Աննա Ամբակումյանը, Մարիա Ղամբարյանը, Մարջան Մխիթարյանը, Ելենա Տեր-Ղևոնդյանը, Առնո Բաբաջանյանը և այն ժամանակի մեր լավագույն երիտասարդ կատարողներից շատերը: Երևանում

Իգումնովի գտնվելուց մեծապես օգտվեցի նաև ես՝ հաճախելով նրա պարապմունքներին:

Չնայած պատերազմական ժամանակների բազում դժվարություններին՝ Կոնստանտին Նիկողաևիչը կլավիրաբեղմներ էր կազմակերպում: Հատկապես լավ էմ հիշում Չայկովսկու ստեղծագործություններից կազմված նրա համերգը: Այն տեղի ունեցավ Հայֆիլհարմոնիայի Փոքր դահլիճում, Իգումնովի 70-ամյակին նվիրված հանդիսավոր երեկոյից մի փոքր ավելի վաղ: Հիշում եմ՝ հորեյարին նվիրեցին հայ վարպետների մի ձեռագործ գորգ: Հայ հանդիսատեսի ջերմ ընդունելությունից խորապես հուզված՝ Իգումնովն այդ օրը առանձնահատուկ ոգեշնչմամբ նվագեց Չայկովսկու Կոնցերտը: Նվագախումբը ղեկավարում էր Սարաջևը:

Մի քանի օր անց, կրկին Իգումնովի հորեյարնի առիթով, Փոքր դահլիճում կայացավ նրա դասարանական համերգը: Այդ երեկո մեծ հաջողությամբ նվագեց Աննա Ամբակումյանը: Բալակիրևի «Իսլամեյի» տեխնիկական բարդությունների նկատմամբ փայլուն հաղթանակ տարավ Առնոն, որի կատարումից հետո Իգումնովը նրան ասաց. «Կարող ես համարել, որ «Իսլամեյից» հետո որևէ ստեղծագործություն չես համար դժվարություն չի ներկայացնի»: Հորեյարի պատվին ես գրել էի «Մեծ պրեյլուդը» դաշնամուրի համար, որը և կատարեցի նույն համերգի ժամանակ:

Եվս մի դրվագ՝ կապված Իգումնովի հետ: 1943 թ. Անդրկովկասում իր առաջին համերգային շրջագայությունն արեց Սվյատոսլավ Ռիխտերը: Երևանում առաջին անգամ նրա կատարմամբ հնչեց Պրոկոֆևի Յոթերորդ տոնատը՝ իր շատ յուրահատուկ ու հզոր ֆինալով: Հենց այդ ֆինալի կատարման ժամանակ իմ կողքին նստած Իգումնովը թեքվեց դեպի ինձ ու շնջաց. «Զգո՞ւմ եք, տանկերն են, տանկերն են գնում»: Ապշել էի այդ ճշգրիտ բնորոշումից, քանզի իսկապես այդ կատարման մեջ հստակ լսվում էր տանկերի դրոշյունը...

Պատերազմի վերջում Տաշքենդից, ուր տեղափոխվելուց հետո գտնվում էր Լենինգրադի կոնսերվատորիայի կոլեկտիվը, Երևան եկավ Քրիստափոր Քուչմարյանը: Այդ ականավոր տեսաբանի կյանքի երևանյան ժամանակահատվածը մեծապես նպաստեց մեր երաժշտական կուլտուրայի զարգացմանը: Կոնսերվատորիայում նա հանձն առավ պոլիֆոնիայի դասարանը, որի կազմում ընդգրկվեցինք Առնո Բաբաջանյանը, Էդվարդ Միրզոյանը և ես: Պարապում էինք անասելի ոգևորությամբ, ինչը «խիստ ակադեմիական» այդ առարկայի նկատմամբ կարողացավ մեզ ներարկել ինքը՝ Քուչմարյանը: Խիստ ոճի այս կամ այն հանձնարարությունը մեզ տալով՝ նա ամեն կերպ ջանում էր վեր հանել ու հարստացնել ստեղծագործելու մեր ձիրքը:

Միաժամանակ Քուշնարյանը մեզ օգնում էր կոմպոզիցիային վերաբերող արժեքավոր խորհուրդներով: Այդ օրերին Էդվարդ Միրզոյանը գրում էր իր Պարային սյուիտը, իսկ Առնոն՝ Դաշնամուրային կոնցերտը: Ես սկսել էի աշխատել «Կոնցերտային նախերգանքի» վրա:

Քուշնարյանի հետ շփվելը մեծ նշանակություն ունեցավ թե՛ կոմպոզիտոր ընկերներին, թե՛ ինձ համար: Գիտակցությանս մեջ վառ է մնացել այդ չափազանց կիրք ու հմայիչ մարդու կերպարը:

Ինձ համար անակնկալ էր Քրիստափոր Քուշնարյանի՝ «Ստալինեց» քերթում տպագրած հոդվածը (10.07.1946): Փաստորեն դա առաջին «անհատական» հրապարակումն էր իմ մասին: Իրեն հատուկ հստակ ու սեղմ արտահայտություններով նա անդրադարձել էր իմ ստեղծագործությանը՝ շեշտելով դրա կապը հայկական ժողովրդական երգարվեստի հետ: Այդ հոդվածում ես նկատեցի խոշորագույն երաժշտի մախանձելի խորաթափանցությունն ու իմ որոնումներին իր հեղինակավոր ու խելամիտ խոսքով սատար լինելու ձգտումը:

...Ստալինգրադյան ճակատամարտը բեկում մտցրեց պատերազմի ընթացքի մեջ, ու չնայած դեռ շատ ժամանակ պիտի անցներ մինչև հաղթանակի պանծալի օրը, նրա շունչը գնալով ավելի հստակ էր զգացվում: Տագնապով ու հույսերով լի որսում էինք ռազմաճակատներից ստացվող լուրերի յուրաքանչյուր բառը: Գիշերվա ժամերին մթության մեջ ընկղմված Երևանի Ստալինի պողոտայով անցնում էին զինվորական բեռնատարների՝ «ստուդեբեկերների» շարասյուները: Իրականացվում էր լենդլիզի, այսինքն՝ մեր դաշնակիցների հանրահայտ օգնության ծրագիրը:

1944 թվականն սկսվեց նշանակալի իրադարձությամբ. հունվարի վերջին Մոսկվայում հայկական երաժշտության համերգաշար էր կազմակերպվել: Այդ առիթով Մոսկվա մեկնեց հայ կատարողների մի խումբ, որի կազմում էին դիրիժորներ Սարաջևն ու Թավրիզյանը, երգիչներ Պավել Լիսիցյանը, Հայկանուշ Դանիելյանը, Տաթևիկ Սազանդարյանը, ջութակահար Ավետ Գաբրիելյանը, Սպենդիարյանի անվան կվարտետը և ուրիշներ: Հիշում եմ այն ջերմ ընդունելությունը, որին արժանացավ Հարո Ստեփանյանի «Սասունցի Դավիթ» օպերայի նախերգը (նվագախումբը ղեկավարում էր Թավրիզյանը): ԽՍՀՄ պետական նվագախմբի հետ (դիրիժոր՝ Սարաջև) ես նվագեցի իմ Դաշնամուրային կոնցերտի 2-րդ և 3-րդ մասերը: Մամուլում հայկական երաժշտության այդ համերգները բնութագրվում էին որպես հասարակական ու մշակութային կյանքի նշանավոր իրադարձություն:

Այդ նույն տարվա սկզբին ծնվեց Շեփորի կոնցերտին թեման: Հանրահայտ մենակատար-շեփորահար Յուլակ Վարդապարյանը, թեմայի իրական

հնչողությունը փորձելուց հետո, ասաց. «Տպավորությունս այն է, որ դու շեփորահար ես ծնվել, այնքան հարմար է գրված ու լավ է հնչում»: Ավա՛դ, կարճ ժամանակ անց Յուլյեղ գոհվեց ավտոմոբիլից: Այնքան ցնցված էի իմ ընկերոջ ու հիանալի երաժշտի մահվան բոթն: առնելով, որ հետագա 5-6 տարիների ընթացքում չէի կարողանում ստիպել ինձ անդրադառնալ Կոնցերտին ու շարունակել սկսված աշխատանքը:

1944 թ. Միութենական կառավարության որոշմամբ յուրաքանչյուր հանրապետության իրավունք տրվեց ունենալ սեփական դրոշը, զինանշանն ու օրհներգը: Այդ կապակցությամբ մրցույթ հայտարարվեց Հայաստանի օրհներգի ստեղծման համար: Երաժշտությունը պիտի գրվեր Մարմենի խոսքերով. վերջինս հաղթող էր ճանաչվել տեքստերի մրցույթում: Ես ու Առնո Բաբաջանյանը նույնպես ներկայացրինք համատեղ գրած մեր օրհներգը: Բնականաբար, «օպտիմալ» լուծման մեր որոնումների ժամանակ բազմաթիվ տարբերակներ էինք մշակել ու փորձել: Կրկներգի մասում կանգ առանք Առնոյի առաջարկած տարբերակի վրա:

Երիտասարդ էինք, ու, անկեղծ ասած, փայփայում էինք հաջողության փորք-ինչ միամիտ հույս, մամավանդ որ շատերն էին կամխատեսում մեր հաղթանակը...

Եզրափակիչ փուլ անցավ երկու ստեղծագործություն՝ մեր համատեղ օրհներգը և Արամ Խաչատրյանինը. նա մրցույթի վերջին օրերին նոտաները ուղարկել էր ու շուտով ինքն էլ Մոսկվայից եկավ Երևան:

Եզրափակիչ փուլը տեղի ունեցավ օպերային թատրոնում, ուր երկու օրհներգն էլ կատարվեցին տարբեր ձևերով (առանձին՝ նվագախմբի կատարմամբ, ապա՝ միայն երգչախմբի, և վերջապես՝ երգչախմբի ու նվագախմբի հնչեցմամբ): Այնուհետև տնօրենի աշխատասենյակում կայացավ ժյուրիի նիստը, որին մասնակցում էին հանրապետության ղեկավարները: Ներկա էին նաև օրհներգերի հեղինակները:

Լավ հիշում եմ ժյուրիի անդամների ելույթները: Չեմ մոռանում Առնոյի հուզմունքը: Հուլիսյան շոգ օր էր, նրա արտահայտիչ դեմքին. քրտինքի խոշոր կաթիլներ էին հայտնվել: Նախապատվությունը տրվեց Վարպետին...

Գրեթե հիսուն տարի Արամ Խաչատրյանի օրհներգը ծառայեց որպես Հայաստանի երաժշտական խորհրդանիշ, և ես անկեղծ ցավ ապրեցի, երբ 1990-ականների սկզբին, հասարակական նոր իրադրության պայմաններում, այն զրկվեց իր կարգավիճակից:

1944 թ. ամռան վերջում հայտնի դարձավ, որ ղեկտեմբեր ամսին Թբիլիսիում կազմակերպվելու է անդրկովկասյան հանրապետությունների

երաժշտության տասնօրյակ: Համերգների ընթացքում բացառիկ հաջողության արժանացավ Արամ Խաչատրյանի Երկրորդ սիմֆոնիան, որը հնչեց Միքայել Թավրիզյանի ղեկավարած Երևանի օպերային թատրոնի և Հայֆիլհարմոնիայի միացյալ նվագախմբի կատարմամբ: Հիանալի էր նաև Հարո Ստեփանյանի Առաջին սիմֆոնիան Գևորգ Բուդաղյանի ղեկավարությամբ: Փայլուն ելույթ ունեցավ Առնո Բաբաջանյանը՝ նվագելով իր Դաշնամուրային կոնցերտը: Սիմֆոնիկ երաժշտության երեկոներից մեկի ընթացքում հնչեց նաև իմ «Կոնցերտային նախերգանքը» Ռուբեն Ստեփանյանի ղեկավարությամբ: Ըստ էության, դա իմ առաջին «մարտական մկրտությունն» էր: Տասնօրյակի վերաբերյալ թրիլիսյան «Չարյա Վոստոկա» թերթում ընդարձակ հոդվածով (28.12.1944) հանդես եկավ ժամանակի ականավոր պատմաբան-երաժշտագետ Ալեքսանդր Շահվերդյանը: Հուզմունքով կարդացի դրանում տեղ գտած հետևյալ տողերը. *«Չափազանց հետաքրքիր կերպար է երիտասարդ Ալեքսանդր Հարությունյանը, որի խոշոր ստեղծագործությունները բնութագրում են նրան որպես բնածին սիմֆոնիստի. նա օժտված է լայնամասշտաբ մտածողությամբ, ունակ է տրամաբանորեն խորհելու և երաժշտական բեմաներին դիմամիկ զարգացում տալու: Այդ հատկությունների բերումով չի կարելի Հարությունյանին չդասել երիտասարդ ստեղծագործողների սերնդի տաղանդաշատ ու հետագա աճի առումով ամենախոստումնալից ներկայացուցիչների թվին»:*

Թրիլիսյան տասնօրյակին կայացավ իմ ծանոթությունն ու առաջին շփումը անդրկովկասյան հանրապետությունների կոմպոզիտորների ստեղծագործական նվաճումների հետ: Այստեղ ծանոթացա 20-ամյա Օթար Թաքաթաբիշվիլու հետ, որն այն ժամանակ արդեն Վրաստանի օրհներգի հեղինակն էր, Անդրեյ Բալանչիվաձեի, Ալեքսեյ Մաճավարիանու, Շալվա Մշվեիձեի հետ... Առաջին անգամ Թրիլիսիում տեսա տակավին երիտասարդ Կարա Կարակին, Ֆիլրեթ Ամիրովին, Թոֆիկ Կուլիևին, Նիյազուն...

Այսօր, դառնալով այն հեռավոր տարիների հիշողություններին, դառնությամբ մտածում եմ՝ մի՞թե հարևան հանրապետությունների մշակույթի գործիչների միջև հաստատված այն անկեղծ, բարեկամական հարաբերություններն առհավետ կորսված են մերօրյա դաժան քաղաքական խաղերի պատճառով, որոնց մեջ ներքաշվել են մեր ժողովուրդները:

Արդեն 1990 թ., Ադրբեջանում տեղի ունեցած տխրահռչակ իրադարձություններից հետո, Մոսկվայում անցկացվող Կոմպոզիտորների միության վերջին համագումարի ժամանակ, դեմ առ դեմ հայտնվեցի ադրբեջանցի կոմպոզիտոր Թոֆիկ Կուլիևի հետ, որն ամուր գրկեց ինձ ու արցունքն աչքերում ասաց. «Կոտիկ, սիրելի՛ս, այս ի՛նչ արին մեր ժողովուրդների հետ»: Այդ ջերմագին պոռթկման մեջ անկեղծություն զգացի...

1945 թվական... Մայիսի 9-ին՝ Հաղթանակի օրը, մարդիկ ցնծում էին ու արտասովում: Եռուզեռով լի Երևանի փողոցները դուրս գալով՝ տեսա երջանիկ ժպիտների ու դառն արցունքների այդ զարմամալի զուգորդումը: Ինձ համար այդ տարին անցնում էր մի տեսակ էյֆորիկ վիճակում կամ պայծառ հաղթանակի զարման ազդեցության, կամ էլ, երևի, այն պատճառով, որ սիրահարված էի կյանքիս ապագա ընկերուհուն՝ Իրինային:

...Իրինա Օդեոնովայի հետ ծանոթացել էի դրանից մեկ տարի առաջ: Այն ժամանակ նա սովորում էր երաժշտական ուսումնարանի դաշնամուրի դասարանում: Մենք սկսեցինք հայնդիպել, հաճախ համերգների ու օպերային ներկայացումների էինք զնում:

Այդ տարիներին ես ապրում էի մայրիկիս հետ մեկ սենյականոց բնակարանում: Հայրս դեռ 1935-ին փոխադրվել էր Թբիլիսի ծառայելու: Քույրս՝ Բեկան, ապրում էր նրա հետ: Իսկ ես ու մայրս չէինք կարող նրանց միանալ, քանի որ ուսանում էի Երևանի կոմսերվատորիայում: Ընդհանրապես, սկզբից եթե, իմ ուսման հարցերով փաստորեն զբաղվում էր մայրս, քանզի նույնիսկ Երևանում եղած շրջանում հայրս ի վիճակի չէր ընտանիքին շատ ժամանակ հատկացնելու:

1941 թ. հունիսին հայրս Երևան եկավ արձակուրդը մեզ հետ անցկացնելու, այս անգամ արդեն՝ Ռուսաստանից: Նրա գալը համընկավ իմ դիպլոմային քննությունների հետ: Մայրս կատակում էր. «Հայրիկդ նավից պարահանդես է ընկել: Երջանիկ մարդ է, չէ՞»:

Չգիտեմ՝ երջանիկ էր, թե ոչ, բայց սկսվեց պատերազմը, և նա ստիպված էր անմիջապես մեկնել Հայաստանից:

1945 թվականը ստեղծագործական առումով այնքան էլ բեղմնավոր չէր ինձ համար: Ծիշտ է, մի շարք ժողովրդական երգեր մշակեցի երգչախմբի համար՝ *a capella*, որոնք հնչեցին Ռադիոկոմիտեի և Ուսուցչի տան երգչախմբերի կատարմամբ: Հարկ է ավելացնել նաև «Ալազյազ» ժողովրդական երգի թեմայով թավջութակահարների անսամբլի և դաշնամուրի համար գրված պիեսը: Անսամբլի ղեկավարն էր տաղանդավոր թավջութակահար Գերոնտի Թալալյանը, և ստեղծագործությունն էլ նրա նախաձեռնությամբ էր կյանքի կոչվել:

Դա թավջութակի համար գրված իմ երկրորդ գործն էր. դեռ 1941 թ. սկզբին գրել էի «Էքսպրոնտը» թավջութակի և դաշնամուրի համար: Պիեսն ստեղծել էի նվիրյալ թավջութակահար Գուրգեն Ադամյանի խնդրանքով, որի հետ հետագայում բազմիցս կատարել եմ այդ ստեղծագործությունը:

Երբեմն ոչ մեծ ստեղծագործությունը հեղինակին շատ ավելի մեծ համբավ է բերում, քան խոշոր կտավի, շատ ավելի լուրջ երկը: Լինելով արտերկրի և ԽՍՀՄ-ի տարբեր քաղաքներում՝ ես «հանդիպումներ» էի ունենում իմ «Էքսպրոմտի» հետ ամենամասնական տեղերում: Օրինակ, Պրահայի օպերային թատրոնում նվագախմբի փոսին մոտենալով՝ հանկարծ լսեցի «Էքսպրոմտի» առաջին տակտերը... Թավջութակահարը ժպտող դեմքին ձեռքով արեց ինձ:

Տոկիոյի կոնսերվատորիայի պրոֆեսոր-թավջութակահարը 1957 թ. Մոսկվայում անցկացվող Դեմոկրատական երիտասարդության համաշխարհային փառատոնին ինձ հետ ծանոթանալուց հետո ասաց, որ ավելի քան 200 անգամ կատարել է «Էքսպրոմտը» Ճապոնիայում և մի շարք այլ երկրներում:

Շատ ավելի ուշ, Կրեմլի համագումարների դահլիճում այս պիեսը կատարեցին 60 պատանի թավջութակահարներ՝ մայրաքաղաքի տարբեր երաժշտական դպրոցներից: Համերգը կազմակերպվել էր կառավարական մակարդակով, և ինձ, որպես հեղինակի և նվագակցողի, հրավիրել էին մասնակցելու այդ ամուսնացույց երեկոյին:

1987 թ. չափազանց հետաքրքիր ուղևորություն ունեցա Իսպանիա, ուր մեկնել էի Ջավեն Վարդանյանի ղեկավարած կամերային նվագախմբի հետ: Ծրագրում ընդգրկված էր թավջութակի համար գրված «Էքսպրոմտը»՝ կամերային նվագախմբի համար կատարված իմ իսկ գործիքավորմամբ:

Կարող է զարմանալի թվալ, որ այսքան մանրամասն կանգ առա մի փոքրիկ պիեսի պատմության վրա: Սակայն հաճախ է լինում, որ ծնողն առավել քնքուշ սեր է տաժում հենց ամենափոքր զավակի հանդեպ...

1946 թ. սկզբին որոշում ընդունվեց Մոսկվայում, Հայաստանի Մշակույթի տանը կից գործող ստուդիայում մի խումբ երիտասարդ կոմպոզիտորների կատարելագործման ուղարկելու մասին: Արվեստի գործերի վարչության պետ Ջավեն Վարդանյանն իր մոտ հրավիրեց Առնո Բաբաջանյանին, Էդվարդ Միրզոյանին, Ադամ Խուդոյանին և ինձ, ապա հայտնեց, որ պատրաստվե՞նք ուղևորությանը (մեր ընկեր Ղազարոս Սարյանն այդ ժամանակ արդեն սովորում էր Մոսկվայի կոնսերվատորիայում):

...Մշակույթի տան՝ Մոսկվայի Արմյանսկի նրբանցքում գտնվող հանրակացարանում մեզ տրամադրեցին մի մեծ, առանձին սենյակ, որը շուտով կոչվեց «կոմպոզիտորական»: Այդ օրերին ստուդիայում իրենց վարպետությունն էին հղկում հայ մշակույթի բազմաթիվ երիտասարդ գործիչներ՝ գրողներ, ռեժիսորներ, երաժիշտ-կատարողներ, նկարիչներ և անգամ՝ պարուհիներ: Երկարուժիգ ընդհանուր միջանցքը տանում էր դեպի մեր բազմաժանր ընտանիքի ամենատարբեր անդամների համար օթևան դարձած սենյակները:

Ըստ նախնական մտահղացման, մենք՝ կոմպոզիտորներս, պիտի պարապեինք Արամ Խաչատրյանի դասարանում: Նա առաջին իսկ հանդիպման ժամանակ մեզ հետ հանգամանալից զրույց ունեցավ, հատուկ մշեց մեր գալու նշանակությունն ու ծայրաստիճան անհրաժեշտությունը և ասաց, որ «անգամ փողոցներում պատահող ազդագրերն այս կամ այն համերգի ու ներկայացման մասին օգտակար են լինելու մեզ համար»: Խաչատրյանը մեզ ծանոթացրեց գալիք «փողո՞ւթյունների» հարուստ տեսականուն և համբերություն մաղթեց մեր ուսման ընթացքում, որի ժամկետները չափազանց սեղմ էին (երկու տարի):

Առանձնապես լավ եմ հիշում Արամ Իլյիչի հետևյալ միտքը. «Մենք՝ հայերս, երաժշտություն գրելիս ուղղակիորեն ելնում ենք մեր զգացմունքներից: Դրանում ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմեր կան: Այդ զգացմունքները պայմանավորված են մեր ազգային խառնվածքով ու բնավորությամբ: Սակայն անհրաժեշտ է լրջորեն մտածել այն դերի մասին, որ ստեղծագործության մեջ ունի իմտելիկտը: Այդ իմաստով վատ չէր լինի ձեզ բոլորիդ մի փոքր պաղեցնել»:

Մեզ չհաջողվեց սովորել Ա. Խաչատրյանի մոտ՝ նրա ծայրաստիճան զբաղվածության պատճառով: Մեզ հետ պարապելու համար հրավիրվեց Մոսկվայի կոնսերվատորիայի պրոֆեսոր Գենրիխ Իլյիչ Լիտինսկին:

Եթե Լենինգրադում պոլիֆոնիայի դպրոցի առաջին դեմքն իրավամբ համարվում էր Քուլնարյանը, ապա Մոսկվայում նույն տիտղոսը կարելի էր շնորհիլ Լիտինսկուն: Ժամանակին կոնսերվատորիայում պոլիֆոնիայի նրա դասընթացն են անցել Ա.Խաչատրյանը, Գ.Կաբալակին, Տ.Խրեննիկովը, Ն.Չենքերջին և ակամավոր այլ կոմպոզիտորներ:

Պարապմունքների հենց սկզբից Գենրիխ Իլյիչն իրեն դրսևորեց աներևակայելի եռանդով, ճշտապահությամբ ու պահանջկոտությամբ: Սկսեցինք խիստ ոճի ոչ մեծ խնդիրներից: Սկզբնական շրջանում դժվարությամբ էինք առաջադիմում, քանի որ Լիտինսկու՝ այդ առարկան վարելու եղանակը տարբերվում էր Քուլնարյանի՝ մեզ արդեն ծանոթ մեթոդից: Սակայն դասից դաս ավելի էինք լծվում աշխատանքի, իսկ Լիտինսկին աստիճանաբար առարկան փոխադրում էր «ստեղծագործական ռելսերի» վրա: Հաճախ առաջադրանքի հիմքում դրվում էր ժողովրդական երգը, որի թեմայով գրվում էին ավելի ընդարձակ և բարդ աշխատանքներ:

Գենրիխ Իլյիչը մեծ ուշադրություն էր դարձնում արևմտաեվրոպական և ռուս կոմպոզիտորների (հատկապես Տանեևի) ստեղծագործությունների վերլուծությանը: Նա պարապմունքների էր գալիս բարեխղճորեն ու ըստ պատշաճի ընտրված նոտային օրինակներով զինված, և ես միշտ զարմանում էի, թե նա երբ էր հասցնում գտնել ու բերել հենց այն հատվածները, որոնք

լավագույնս կարող էին օգնել տվյալ պարապմունքն առավել արդյունավետ անցկացնելու:

Շատ հետաքրքիր էին անցնում նաև երաժշտական ձևի վերլուծության մեր պարապմունքները պրոֆեսոր Վիկտոր Աբրամովիչ Յուկերմանի դասարանում: Մատուցվող առարկան խորապես իմանալու հետ մեկտեղ նա օժտված էր արտառոց հիշողությամբ: Դասերի ժամանակ հարկ եղած դեպքում նա մոտենում էր դաշնամուրին և տեղում բազմաթիվ օրինակներ էր բերում Բեթհովենի սոնատներից կամ այլ ստեղծագործություններից, և չէմ հիշում զեթ մի դեպք, որ նա հույսը նուտաների վրա դներ: Յուկերմանի դասերին մասնակցում էինք ողջ խմբով:

Գործիքավորման տեսություն մեզ դասավանդում էր պրոֆեսոր Ալեքսանդր Մոխեսևիչ Վեպրիկը, որն իր առարկայի հիանալի գիտակ էր: Նրա հետ շփվելը չափազանց հետաքրքիր էր. ես ամբողջովին տարված էի այդ պարապմունքներով: Նախքան Վեպրիկը, նույն առարկան միառժամանակ վարում էր Դմիտրի Ռոմանովիչ Ռոզալ-Լևիցկին:

Մոսկվայում մեր գտնվելու առաջին իսկ օրերից մեզ բավական բարձր կարգով մթերաբաժիններ էին հատկացնում (պատերազմից հետո դեռ գործում էր քարտային համակարգը): Մեր խոհանոցը գտնվում էր ընդհանուր միջանցքի ապակե միջնորմի հետևում, և ամեն առավոտ հերթով նախաճաշ էինք պատրաստում: Այդ պարտականությունից Առնոն հաճախ փորձում էր զլուխն ազատել, և այդ դեպքերում նրա փոխարեն նախաճաշ պատրաստելը «անձնկիրաբար» հանձն էր առնում Ադան Խուդոյանը: Նախաճաշելուց հետո բաժանվում էինք ըստ մեր դասարանների և մինչև ճաշի ժամը պարապում Մշակույթի տանը: Ճաշում էինք Արվեստի աշխատողների կենտրոնական տան ռեստորանում՝ ներկայացնելով մեր կտրոնները: Այստեղ էին սնվում նաև ՄԽՍՏ-ի (Մոսկվայի գեղարվեստական ակադեմիական քատրոն) և Մեծ քատրոնի դերասաններից շատերը: Հիշում եմ երիտասարդ Նիկոլայ Խմենյովին, չքնաղ Ալլա Տարասովային, հանրահայտ երգիչներ Արթուր Էյզենին ու Ալեքսանդր Պիրոգովին... Հետաքրքիր էր տեսնել այդ հռչակավոր արվեստագետների առօրյա կյանքն ու նիստուկացը:

1946 թվականից սկսած ԽՍՀՄ Երաժշտական ֆոնդի այն ժամանակվա տնօրեն Լևոն Ատովյանի նախաձեռնությամբ կազմակերպվում էին «սինֆոնիկ հինգշաբթիներ», որոնք ամեն շաբաթ տեղի էին ունենում Մոսկվայի համալսարանի ակումբում (այդ նպատակով ներգրավվում էր Մեծ քատրոնի նվագախումբը): Յերեկային ժամերին անցկացվող այս «հինգշաբթիներին» առաջին անգամ յուրահատուկ փորձարկման էին ենթարկվում մոսկվացի կոմպոզիտորների նոր ստեղծագործությունները: Լիտինսկու գլխավորությամբ

մեր խումբը նույնպես մասնակցում էր այդ չափազանց օգտակար և ուսանելի կատարումներին:

«Հինգշաբթիներից» մեկի ժամանակ ես ծանոթացա Դմիտրի Շոստակովիչի հետ, ինչն ինքնին մեծ իրադարձություն էր ինձ համար: Ես նրան պատմեցի Յոթերորդ սիմֆոնիայի երևանյան պրեմիերայի և նրա վիթխարի հաջողության մասին: Դմիտրի Դմիտրիևիչը պատասխանեց, որ լսել է այդ կատարման մասին և շատ է ափնոսում, որ հնարավորություն չի ունեցել ներկա գտնվելու պրեմիերային:

...Այդպես սկսվեց իմ ծանոթությունը մեծ երաժշտի հետ:

Նախապատրաստական լուրջ աշխատանքից հետո կոմպոզիտորների մեր խումբը նույն Լիտինսկու ղեկավարությամբ անցավ կոմպոզիցիային առնչվող կոնկրետ հանձնարարությունների: Ես սկսեցի աշխատել Պոլիֆոնիկ սոնատիս վրա: Շարքի երեք մասերը (Ինվենցիա - Խորալ - Ֆուգա) կառուցեցի հակադրության սկզբունքով: Իմ կարծիքով, Պոլիֆոնիկ սոնատն իր բնույթով դաշնամուրային է, թեև բավական բարդ է պոլիֆոնիկ էության բացահայտման առումով: Սոնատի վրա իմ աշխատանքը շատ օգտակար եղավ. այն սովորեցրեց պոլիֆոնիայի իմաստով ավելի ազատ մտածել, և ես այդ երկը համարում եմ ինձ համար էտապային նշանակություն ունեցող ստեղծագործություն:

Սոնատի կատարմամբ ես հանդես եկա Մոսկվայի ռադիոյի ուլիդ եթերում: Երևանում նրա առաջին կատարողը դարձավ պրոֆեսոր Վլյիխ Սարգսյանը, որից հետո այն նվագել են միջազգային մրցույթների դափնեկիրներ Անահիտ Ներսիսյանն ու Սվետլանա Նավասարդյանը, նաև մի շարք օտարերկրյա դաշնակահարներ:

Լիտինսկու դասերին ոչ միշտ, բայց և հաճախ ներկա էին մեր «կոմպոզիտորական թիմի» բոլոր անդամները: Նրա դիտողությունները միշտ դիպուկ էին ու հստակ: Որպես կանոն, ստիպված չէինք լինում արմատական փոփոխություններ կատարել, սակայն մեր ուսուցչի առաջարկությամբ ստեղծվում էին առանձին հատվածների տարբերակներ: Թերևս, ասվածն ամենից քիչ վերաբերում էր Առնոլդին. նրա գրվածքները գործնականում որևէ փոփոխության չէին ենթարկվում: Այդ ժամանակահատվածում է նա ստեղծել իր հիասքանչ, պայծառ Պոլիֆոնիկ սոնատը, որը 1947 թ. Պրահայում անցկացված Երիտասարդության համաշխարհային փառատոնին արժանացավ 1-ին մրցանակի:

Մեր աշխարհայացքի հարստացմանը այն տարիներին զգալիորեն նպաստեց համերգների, օպերային բեմականացումների և դրամատիկական թատրոնների ներկայացումների հաճախելը: Հիշում եմ այն անջնջելի տպավոր-

րությունը, որ գործեց Պրոկոֆևի «Ռոմեո և Ջուլիետ» բալետը. այս գործը բեմականացրել էր Լեոնիդ Լավրովսկին Ջուլիետի դերակատար Գալինա Ուլանովայի հետ: Հիշողությանս մեջ չի խունացել նաև ՄԽՍՏ-ում բեմադրված Չեխովի «Բալետու ալգին»:

Տպավորվել է նաև կոմսերվատորիայի Մեծ դահլիճում Ջորջե Էնեսկուի ելույթը: Այդ հրաշալի կոմպոզիտորը նույնքան հրաշալի դիրիժոր էր և ջութակահար: Համերգի ընթացքում նա հանդես եկավ որպես իր ստեղծագործություններից կազմված ծրագրի դիրիժոր, ինչպես նաև նվագեց ջութակի համար գրված իր ինքնատիպ Կոնցերտը:

Բոլորովին այլ կարգի հիշողությունների հետ է կապված Մոցարտի Ռեքվիեմի՝ Նիկոլայ Մեմյոնովիչ Գոլովանովի կատարումը: Բանն այն է, որ Գոլովանովը Մոցարտի պարտիտուրի մեջ լրացուցիչ պղնձյա փողայիններ էր մտցրել, որի պատճառով արժանացել էր ականավոր մի շարք երաժիշտների պարսավանքին: Համերգից տուն դառնալու ճանապարհին խորհում էի այն մասին, որ Մոցարտին «շտկել» անթույլատրելի է բոլորի համար:

Եվ ի հակադրումն ասվածի, ահա մեկ այլ օրինակ, որ շատ ավելի մոտ է մեր օրերին. Դիլիջանի Ստեղծագործական տանը, Մստիսլավ Ռոստրոպովիչի խնդրանքով, Դ. Շոստակովիչը նորովի գործիքավորեց Շումանի Թավջութակի կոնցերտը: Ստեղծագործական տան մերձակայքում գրոսնեյխ ինձ հանդիպելով՝ Դ-միտրի Դ-միտրիևիչն ասաց. «Գիտե՞ք, Կոտիկ, Սլավայի խնդրանքով ես գործիքավորեցի Շումանի Կոնցերտը, քանի որ երաժշտության ողջ հանճարեղության հետ մեկտեղ պարտիտուրը մի փոքր «կաղում էր»: Կարծես թե վատ չի ստացվել»:

Հանրահայտ է Շոստակովիչի հսկայական ներդրումը Մուսորգսկու օպերաների նոր գործիքավորման հարցում: Ակամա հիշելով Ռեքվիեմի հետ կապված դեպքը՝ մտածեցի. «Ահա երկու տարաբնույթ խնդիր, միանգամայն տարբեր երկու մոտեցում...»:

Հայաստանի Մշակույթի տանը կատարելագործվելու տարիներին ես ու Իրինան մշտական նամակագրության մեջ էինք: Հաճախ մեր «վստահված փոստատարի» դերում էր հայտնվում Գրիգորի Սավելևիչ Դոմբաևը, որն այն ժամանակ Հայաստանի կառավարությանը կից գործող Արվեստի գործերի վարչության պետն էր: Ի պաշտոնե նա հաճախ էր լինում Մոսկվայում. լուր ստանալով, որ Դոմբաևն ինձ համար նամակ է բերել, ես գլխապատառ սուրում էի հյուրանոց և հենց նրա համարում գրում պատասխան ուղերձն Իրինային:

Դոմբաևը շատ սրամիտ մարդ էր: Մի անգամ իր համարում հերթական նամակս գրելիս հարցրեցի նրան՝ քանի՞ «ֆ»-ով է գրվում «էֆեկտ» բառը:

Պատասխանեց. «Եթե ուզում ես էֆեկտը շահտ լինի, կարող ես նույնիսկ երեք «ֆ»-ով գրել»:

1946 թ. մայիսի 12-ին Մշակույթի տան հանրակացարանում նշում էինք Էդվարդ Միրզոյանի 25-ամյակը: Կենաց առաջարկելով՝ Դոմբասն ասաց. «Խմում եմ ձեր՝ երիտասարդ կոմպոզիտորներիդ ընկերության կենացը. կարծում եմ, որ այն նոր ժամր է հայ երաժշտության մեջ»: Նա նկատի ուներ մեր հնգյակի ընկերությունը, քանի որ, ինչպես արդեն նշել եմ, Ղազարոս Մարյանն այն ժամանակ ուսանում էր Մոսկվայի կոնսերվատորիայում, և մենք առաջվա պես անբաժան էինք:

1946 թ. ամռանը Լիտինսկին որոշեց մեզ հանգստի հնարավորություն տալ, և առաջին անգամ օդանավ մատեցինք ու եկանք Երևան:

Որքան էլ մեծ էին Մոսկվայի հետ կապված տպավորությունները, տանն ավելի լավ էր: Երջանիկ էի, որ կրկին մորս կողքին եմ, մանավանդ մենության մեջ մնալով՝ նա անչափ կարոտել էր ինձ: Ամբողջ սեպտեմբերը Երևանում անցկացրինք, իսկ Իրինայի 20-ամյակի կապակցությամբ նրանց տանն անցկացրած երեկոն ուղղակի անմոռանալի էր: Հիմա էլ չեմ դադարում զարմանալ այդ օրը տիրող այն անբռնազբոս ուրախության վրա, որի պատճառն, անշուշտ, մեր երիտասարդ լինելն էր: Ինչպես միշտ, ուշադրության կենտրոնում Առնոն էր...

Նոր սկսված 1947 թվականն իր հետ ստեղծագործական թարմ մտահղացումներ բերեց: Կոմիտասի անվան քառյակի գործունեությունն ինձ հուշեց Լարային կվարտետի ստեղծման միտքը: Դրա վրա աշխատելիս շատ օգտակար էր պոլիֆոնիկ հմտությունը, որ ձեռք էի բերել Լիտինսկու դասարանում: Կվարտետում օգտագործել եմ պոլիտոնայության միջոցներ՝ միաժամանակ պահպանելով երեք մասերից յուրաքանչյուրի հիմնական տոնայական ոլորտը: Կվարտետը նշանավորեց իմ երաժշտական զարգացման ուղու ևս մի փուլը: Առաջին անգամ այդ ստեղծագործությունը կատարեց ԽՍՀՄ Կոմպոզիտորների միությանը կից գործող՝ Յուրի Միլանտևի քառյակը: Այն նվագել են նաև Կոմիտասի անվան քառյակի մեր երաժիշտները:

Ինձ հետ զուգահեռ սեփական կվարտետների վրա էին աշխատում նաև իմ կոմպոզիտոր ընկերները: Մեծ ճանաչման արժանացավ Էդվարդ Միրզոյանի Կվարտետը («Թեմա և վարիացիաներ»):

1947 թ. հուլիսին Մոսկվա հասավ մեր սիրելի ուսուցչի՝ Վարդգես Տալյանի անժամանակ մահվան բոթը: Մինչև կյանքի վերջին օրը նա տեղյակ էր մեր բոլոր գործերին, ուշադիր հետևում էր մեր հաջողություններին ու նվաճումներին...

Խնամքով պահպանում են 1946 թ. հունիսի 23-ին գրված նրա նամակը, որում, ի մասնավորի, ասվում է հետևյալը. «*Ինձ մեծապես ոգևորում է իմ հանդեպ ձեր վերաբերմունքը և այն միտքը, թե հայ երաժշտության ասպազան ձեզ է պատկանելու՝ իմ սաներին: Ուրախ եմ, որ հիմա, երբ ձեզ այնքան մեծ սիրով ու խնամքով ուսուցանել ու մեծացրել եմ, հրաշալի վարպետների ձեռքերում եք*»:

Ականավոր երաժշտի ու չափազանց համեստ, նրբանկատ անձնավորության ձեռքով գրված այս տողերը շատ բան են ասում...

Մեր մոսկովյան հանրակացարանի մի առանձին սենյակում մոր հետ ապրում էր նշանավոր երաժիշտ, Կոմիտասի անվան քառյակի առաջին ջութակահար Ավետ Գաբրիելյանը: Հայաստանի Մշակույթի տան դահլիճում նա հաճախ ջութակի երաժշտության երեկոներ էր կազմակերպում: Մի անգամ դիմեց ինձ ջութակի համար կոնցերտային պիես գրելու առաջարկով, ինչը և հարմար առիթ դարձավ ջութակի ու դաշնամուրի համար իմ «Պարի» ստեղծմանը: Երբ սկսեցինք փորձերը, նա հայտնեց իր գոհունակությունը ջութակի բնույթը ճշգրտորեն ըմբռնելու կապակցությամբ: «Պարի» առաջին կատարումը տեղի ունեցավ Մշակույթի տան դահլիճում: Շատ էի հուզվում, երբ նվագակցում էի Ավետ Կարապոլիչին: Ստեղծագործությունը հետագայում իր տեղը գտավ նրա համերգացանկում: Այն նվագել են նաև Հակոբ Վարդանյանը, Ջոյա Պետրոսյանը, Վիլլի Մոկացյանը, Ռուբեն Ահարոնյանը և բազմաթիվ այլ ջութակահարներ:

Ջութակի համար այս պիեսը գրելուց հետո, կրկին անցա սիմֆոնիկ երաժշտության: Ծնվեց փոխադարձաբար միմյանց լրացնող երկու պիեսների՝ «Հանդիսավոր ներբողի և Քայլերգի» ստեղծման գաղափարը: Երբ լարված աշխատանքն արդեն ավարտին էր մոտենում, Լիտինսկին ինձ հայտնեց, որ Համաիտեմական ռադիոն մրցույթ է հայտարարել սիմֆոնիկ նվագախմբի լավագույն ստեղծագործության համար և առաջարկեց «Ներբողի և Քայլերգի» նոտաները տանել Ռադիոկոմիտե: Անկեղծ ասած՝ առանձնապես լուրջ չմտեցա այդ մտքին: Այնժամ Լիտինսկին ինքը տարավ իմ նոտաները, իսկ մեկ շաբաթ անց ոգևորությամբ լի հայտնեց, որ Ռադիոյի սիմֆոնիկ մեծ նվագախմբի գլխավոր դիրիժոր Ն.Ս. Գոլովանովը, ներկայացված բազում ստեղծագործություններից ծանոթանալով, ուշադրություն է դարձրել իմ երկի վրա և հայտարարել, որ ամենայն հավանականությամբ կկատարի այն:

...Եվ ահա եկավ այն օրը, երբ անվատահորեն բացելով դուռը՝ մտա Ռադիոյի տան մեծ ստուդիան: Դիրիժորական վահանակի առջև նստած էր Գոլովանովը: Ընթանում էր Բորոդինի «Դյուցազնական սիմֆոնիայի» փորձը: Ընդմիջման ժամանակ ինձ ծանոթացրեցին Նիկոլայ Մեմյոնովիչի հետ, իսկ

վերջինս՝ ներկայացրեց ինձ նվագախմբին, որի՝ անդամները ջերմորեն ողջու-
նելով ինձ՝ նվագեցին «Ներբողն ու Քայլերգը»: Իր տեղում նստած՝ Գոլովանովը
ցանկություն հայտնեց, որ «Ներբողի» միջնամասում ես պղնձյա գործիքներ
ավելացնեմ: Այդ առաջարկն ինձ մեծ շփոթմունքի մեջ գցեց, քանի որ այդ
դեպքում կկորչեր միջին մասի նուրբ դրվագի ողջ իմաստը: Սակայն, լսած
լինելով այդ խոշոր երաժշտի անհանդուրժող բնավորության մասին, զիջեցի և
զիշերը հանրակացարանում պարտիտուրի մեջ պղնձյա գործիքներ ավելացրի
(ճիշտ է՝ նվագագույն չափով): «Ներբողն ու Քայլերգը» կատարվեցին 1947 թ.
նոյեմբերի 7-ին Մոսկվայի կոնսերվատորիայի Մեծ դահլիճում (իմ
երաժշտությունն առաջին անգամ էր հնչում այդ դահլիճում): Մի քանի անգամ
ստիպված եղա բեմ դուրս գալ՝ խոնարհվելու: Գոլովանովն արդեն փորձա-
սենյակում, ինձ իր կողքին նստեցնելով, ստեղծագործության հաջողությունն
ամմիջապես վերագրեց պղնձյա գործիքների ավելացմանը: Հարկ չհամարեցի
վիճաբանության մեջ մտնել...

Հաջորդ օրը Գոլովանովն ինձ հրավիրեց իրենց տուն (ինչպես ինձ
ասացին՝ նրա դեպքում մնան բան հազվադեպ էր լինում): Նրա ընդարձակ
բնակարանի պատերին ռուս նկարիչների բնօրինակներ էին կախված:
Չիրկիզովը պահարանի կողպեքով փակվող առանձին սենյակում մա ինձ
ցուցադրեց սրբապատկերների իր հոյակապ հավաքածուն:

Տնային պայմաններում Գոլովանովը շատ բարեհամբույր մարդու
տպավորություն էր գործում, իսկ իմ բերած կոնյակից խմելով՝ բարեկամաբար
գրկեց ինձ ու հաջողություն մադթեց հետագա աշխատանքում:

Որոշ ժամանակ անց, հիշելով «Ներբողի և Քայլերգի» մասին, Նիկոլայ
Մեյնոնովիչը գրել է. «Այդ ստեղծագործությունը ես ընտրեցի տոնական հա-
մերգի համար հայտարարված մրցույթին ներկայացված բազմաթիվ սիմֆոնիկ
ստեղծագործություններից: Իր երաժշտական լեզվով հիրավի ազգային այս
երկն արտացոլում է կոմպոզիտորի հոգևոր ուժը, նրա անսահման սերը իր
Հայրենիքի նկատմամբ» («Կոմունիստ» թերթում հրատարակված հոդվածից,
30.09.1990):

«Ներբողն ու Քայլերգը» հնչեցին մաև Երևանում մշահավոր դիրիժոր
Միքայել Մալունցյանի ղեկավարությամբ, որը հետագայում դարձավ մաև իմ
մյուս սիմֆոնիկ ստեղծագործությունների կատարողը:

1948 թվականն սկսվեց Վանո Մուրադեյի «Մեծ բարեկամություն»
օպերայի մասին ՀամԿ(Բ)Կ Կենտրոնական կոմիտեի տխրահռչակ որոշումից:
Նրա հիմնական հարվածն ուղղված էր Պրոկոֆևի, Շոստակովիչի և Խա-
չատրյանի դեմ: Հայկական մամուլում երևաց համանման մի որոշում, որում
հիշատակվում էին կոմպոզիտորական մեր քառյակի անդամների անունները:

Դեռևս 1947 թ. աշնանը Հայաստանի Կոմպոզիտորների միությունում մեր «մուկովյան» ստեղծագործությունների ունկնդրումից հետո ծավալված քննարկումների ընթացքում կարծիք արտահայտվեց, որ «մեր մեջ եղած ազգային ամեն բան դուրս է մղվել»: Ըստ երևույթին, մեր ներկայացրած ստեղծագործությունները որոշ մարդկանց համար չափազանց անսովոր էին: Ա.Բաբաջանյանը, Է.Միրզոյանը, Ա.Խուրդյանն ու նա ակնհայտորեն զգում էինք այդ կարգի քննադատության անարդարությունն ու կանխակալությունը: Մոսկվայում մեր հետագա ուսումն ընդհատելու վտանգ առաջացավ: Սակայն ճակատագիրն ավելի բարյացակամ գտնվեց մեր հանդեպ...

1948 թ. ապրիլին Մոսկվայում կայացավ ԽՍՀՄ կոմպոզիտորների Առաջին համագումարը: Հայաստանը ներկայացնող պատվիրակության կազմում էր նաև կոմպոզիտորների մեր քառյակը: Համագումարը Կոմպոզիտորների միության գլխավոր քարտուղարի պաշտոնում միաձայն ընտրեց եռանդուն, գործունյա և չափազանց բարյացակամ մի մարդու՝ Տիխոն Նիկոլանիչ Խրեննիկովին: Նա հաջողությամբ գլխավորեց Կոմպոզիտորների միությունը հետագա չորս տասնամյակների ընթացքում և, ի թիվս այլոց, շատ բան արեց Հայաստանի ստեղծագործողների կազմակերպության համար:

Այդ տարին մեզ համար հիշարժան էր նաև երաժշտագետ և կոմպոզիտոր, ակադեմիկոս Բորիս Վլադիմիրովիչ Ասաֆևի հետ հանդիպման շնորհիվ: Հանդիպման նախաձեռնողը գրող Աշոտ Արզումանյանն էր, որ այդ շրջանում աշխատում էր հայ-ռուսական հարաբերություններին առնչվող իր գրքի վրա: Ասաֆևի տանն անցկացրիմք մոտ երկու ժամ: Բորիս Վլադիմիրովիչը մտած էր խորը բազկաթոռի մեջ: Որոշ ժամանակ առաջ նա ծանր հիվանդություն էր տարել, սակայն դա նրան չխանգարեց աշխույժ ու չափազանց բովանդակալից գրույց վարել մեզ հետ:

Հայաստանի Մշակույթի տանը կատարելագործվելուն զուգընթաց, Առնո Բաբաջանյանը հաջողությամբ շարունակում էր իր պարապմունքները Մոսկվայի կոմսերվատորիայի դաշնամուրի դասարանում Կ.Ն.Իգումնովի ղեկավարությամբ: 1948 թ. ամռանը նա փայլուն հանձնեց պետական քննությունը՝ բավականին բարձր ծրագրով հանդես գալով կոմսերվատորիայի Փոքր դահլիճում (կարելի է բավարարվել Տանենի հազվադեպ կատարվող Պրելյոդ և ֆուգայի հիշատակմամբ): Դահլիճը լեփ-լեցուն էր, նկատելի աշխույժով լի, քանի որ կոմսերվատորիայում Առնոյի անունը մեծ համբավ ու բարձր համարում ուներ: Համերգը վիթխարի հաջողություն ունեցավ: ⁴

Մեր պարապմունքները ստուղիայում շարունակվում էին: Գեներիխ Իլյիչի հետ քննարկում էինք մեր ապագա ստեղծագործությունների բովանդակությունն ու համապատասխանաբար՝ ժանրը: Ես ու Է. Միրզոյանը կանգ առանք

վոկալ-սիմֆոնիկ երաժշտության ժանրի վրա: Սկսեցի աշխատել «Կանտատ Հայրենիքի մասին» ստեղծագործության վրա:

Մշակույթի տան գրադարանից հայ հեղինակների բանաստեղծությունների ժողովածուներ վերցնելով, մանրագնին «գտումից» հետո, կանգ առա Մարմենի և Աշոտ Գրաշու բանաստեղծությունների վրա, որոնք իրենց պարզությամբ հարմար էին երաժշտությանը: Կանտատը գրվում էր բնագրի լեզվով: Հարկ էր լինում Լիտինսկուն ներկայացնել ընտրված բանաստեղծություններից յուրաքանչյուրի բովանդակությունը: Կանտատի հնգամաս կառուցվածքի («Կենաց երգ», «Բարդիներ», «Աշխատանքային», «Օրորոցային», «Փառք Հայրենիքին») վերլուծումների ժամանակ խորհում էի ստեղծագործության մեջ մոր կերպարն արտացոլելու շուրջ, որն ի կատար անվեց 4-րդ մասի լիրիկական երաժշտության միջոցով: Կանտատի գործիքավորման վրա աշխատելիս առաջնորդվում էի Նիկոլայ Իվանովիչ Պեյկոյի բանիմաց խորհուրդներով:

Այնպես ստացվեց, որ Կանտատի առաջին կատարումը պիտի տեղի ունենար Մոսկվայում: Տեքստը ռուսերեն թարգմանելու հարց ծագեց:

Գրականագետ և փորձառու թարգմանիչ Ալեքսանդր Յակովլևիչ Գայամովը (Գայամյան), որ այն ժամանակ մեր ստուդիայի ուսումնական մասի վարիչն էր, կարճ ժամանակամիջոցում թարգմանեց Կանտատի խոսքերը: Սակայն, ի տարբերություն հայերեն բնագրի, մի շարք տեղերում հայտնվեց Մտալինի անունը: Նա փորձում էր ինձ համոզել, որ «այդպես է պետք»: Բնականաբար, տվյալ ժամանակաշրջանում ու պայմաններում ես չէի կարող հրապարակավ հայտնել իմ անհամաձայնությունը:

«Հայրենիք» կանտատն առաջին անգամ հնչեց 1948 թ. նոյեմբերին՝ Մոսկվայի Ռադիոյի տան մեծ ստուդիայում կազմակերպված ԽՍՀՄ Կոմպոզիտորների միության պլենումի համերգին: Այն կատարեցին Համամիութենական ռադիոյի երգչախումբն ու նվագախումբը Արրամ Մտասևիչի ղեկավարությամբ, Զարա Դոլուխանովայի և Վլադիմիր Զախարովի մենակատարումներով:

Հիշում եմ Ռ.Մ.Գլինի, Ս.Ն.Վասիլենկոյի, Տ.Ն.Խրեննիկովի ջերմ շնորհավորանքները... Կատարումից հետո ինձ մոտեցան Արամ Իլյիչն ու Մյասկովսկին. վերջինս իր հավանությունն արտահայտեց ինձ արդեն ժանոթ «միանգամայն ներդաշնակ է» խոսքերով, ապա՝ կասկածի տակ առավ 1-ին մասի շեփորները ֆինալում կրկնելու նպատակահարմարությունը: Սակայն անմիջապես ավելացրեց. «Գուցեև սխալվում եմ»:

Կանտատի առաջին պաշտոնական գնահատականը տրվեց «Պրավդա» թերթում տպագրված՝ Խրեննիկովի ելույթում (4.01.1949). «Պլենումի ընթացքում բարձր գնահատականի արժանացավ Ալ.Հարությունյանի «Կանտատ Հայրենիքի մասին» ստեղծագործությունը, որը խորապես հայրենասիրական է

իր բովանդակությամբ, կոտև և ամբողջական է իր ձևով և գրված է երաժշտական բարձր ու արտահայտիչ լեզվով»:

Կանտատի երկրորդ պրեմիերան կայացավ Երևանում հայերեն լեզվով: Դիրիժորն էր Միքայել Մալունցյանը, մասնակցում էր Թաթուլ Ալբունյանի երգչախումբը:

1949 թվականին «Հայրենիք» կանտատն արժանացավ Ստալինյան 1-ին կարգի մրցանակի: Այդ ժամանակ ես 29 տարեկան էի:

Հենց այդ ստեղծագործությունն էլ եզրափակեց իմ կյանքի մոսկովյան շրջանը: Հետագայում Կանտատը հնչել է միութենական շատ հանրապետություններում, ինչպես նաև արտասահմանյան երկրներում (Չեխոսլովակիա, Ռումինիա, Հունգարիա, Բուլղարիա, Չինաստան, Հունաստան և այլն): 1950 թ. «Պրահայի երաժշտական գարուն» փառատոնին նրա կատարմանը մասնակցեցին Ջարա Դոլուխանովան և Պավել Լիսիցյանը: Այն հրատարակվել է, թողարկվել են ձայներիզներ ստեղծագործության տարբեր մեկնաբանումներով: Ստորև դեռ առիթ կունենամ անդրադառնալու Կանտատի որոշ կատարումներին:

1949 թ. ինձ ընտրեցին Կոմերիտմիության համամիութենական 11-րդ համագումարի պատվիրակ (թեև տարիքի բերումով արդեն դուրս էի եկել կոմերիտմիության շարքերից): Այդ առիթով առաջին անգամ հայտնվեցի Կրեմլի մեծ պալատում: Երիտասարդ էինք, անկեղծորեն հավատում էինք կոմունիստական ապագայի լուսավոր իդեալներին, և համագումարում տեղի ունեցող ամեն բան շատ բնական էր համարվում բոլոր մասնակիցների կողմից:

Մոսկվայի Եվգենի Վախթանգովի անվան դրամատիկական թատրոնի գլխավոր ռեժիսոր Ռուբեն Նիկոլասիչ Միմոնովն ինձ առաջարկեց երաժշտություն գրել Կրեմլյովի «Ամբողջ Վոլգայի վրա» պիեսի համար: Այդ առաջարկը մեծ պատասխանատվությամբ ընդունեցի, քանի որ բարձր էի գնահատում թատրոնի բեմականացումների մակարդակը: Պրեմիերան կայացավ 1949 թ., և ներկայացումը բավական երկար կյանք ունեցավ թատրոնի խաղացանկում: Դա իմ առաջին փորձն էր թատերական երաժշտության բնագավառում:

Նույն տարում համեմատաբար կարճ ժամկետում ստեղծվեց իմ «Տոնական մախերգանքը»: Այն գրված է սոնատային ձևում, սակայն ավանդական մշակման բաժնի փոխարեն այստեղ ներկայացված է բազմաբնույթ դրվագների յուրօրինակ հերթագայություն, մի բան, որ, իմ կարծիքով, տեղին է տվյալ ոճի ստեղծագործություններում: Նախերգանքն առաջին անգամ հնչել է 1949 թ. նոյեմբերին, Լենինգրադի ֆիլիարմոնիայի Մեծ դահլիճում Եվգենի Մրավինսկու ղեկավարությամբ: Այդ երեկո, նույնպես առաջին անգամ, հնչեցին

Բաբաջանյանի Ջուրակի կոնցերտը Լենինոյ Կոզանի կատարմամբ և Շուստակովիչի ամենալուսավոր ստեղծագործություններից մեկը՝ «Երգ անտառների մասին» օրատորիան: Դահլիճը լեփ-լեցուն էր:

Մեկ ամիս անց այդ երեկոյի ողջ ծրագիրը կրկնվեց Մոսկվայի կոնսերվատորիայի Մեծ դահլիճում, ԽՍՀՄ Կոմպոզիտորների միության հերթական պլենումին նվիրված համերգի ընթացքում: Կրկին հանդես եկավ վաստակավոր կոլեկտիվ, Լենինգրադի ֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախումբը Մրավինսկու ղեկավարությամբ: «Սովետսկոյե իսկուստվո» թերթում հրատարակած իր գրախոսականում կոմպոզիտոր Յու.Ա. Շապորինը, առանձնանշելով իմ Նախերգանքի արժանիքները, այն «բազմաթեմային» է համարել, մի բան, որից, նրա կարծիքով, ստեղծագործությունը տուժել է:

Ավելի ուշ, այդ մասին պատմեցի Շուստակովիչին, որ այդ ժամանակ Երևանում էր Կոմիտասի անվան քառյակի մասնակցությամբ իր հեղինակային համերգների կապակցությամբ: Շուստակովիչին ճանապարհում էինք երևանյան երկաթուղային կայարանում: Կանգնած էր գնացքի իր խցիկում՝ պատուհանից զրույթ մի փոքր դուրս հանած: Հանկարծ կառանատույցի բարձրախոսներից հնչեց «Կարմեն» օպերայի նախերգանքը: Չարաճճի ժպիտը դեմքին Դմիտրի Դմիտրիևիչն ասաց. «Տեսնո՞ւմ եք, Կոտիկ, ահա բազմաթեմային նախերգանքի ևս մի նմուշ»: Որից հետո ծիծաղեց, հասկացնելով, թե հիշում է մեր խոսակցությունը:

«Տոնական նախերգանքն» այնուհետև հրատարակվեց. այն բազմիցս կատարել են ամենատարբեր նվագախմբեր նշանավոր դիրիժորների ղեկավարությամբ: Երևանյան «Կոմունիստ» թերթը (17.10.1965) գրել է. «Մերօրյա ակամավոր դիրիժոր Կառլո Յեկկին Հայֆիլհարմոնիայում կայացած մամլո ասուլիսում Ալ. Հարությունյանի «Տոնական նախերգանքի» մասին լույս մի բառ ասաց. «Հոյակա՛պ»:

1950-ին ստեղծվեց ձայնի և նվագախմբի Կոնցերտը, որը գրել են Գոհար Գասպարյանի համար: Այդ հիանալի երգչուհին նոր էր հայրենադարձվել Եգիպտոսից և արդեն հասցրել էր հայ երաժշտասերներին ներկայացնել իր առաջին փայլուն գեղարվեստական հայտը: Նույն թվին մա կատարեց ստեղծագործությունը Երևանում:

Պիտի խոստովանեմ, որ նշված Կոնցերտը ստեղծելիս մի էական սխալ են գործել. բանն այն է, որ մեներգչի պարտիան գրել են ոչ թե վոկալիզի սկզբունքով, այլ՝ բոլոր երեք մասերում ներմուծելով բանաստեղծական տեքստը (Աշոտ Գրաշու ստեղծագործություններից), ինչը, բնականաբար, սահմանափակել է կոլորատուրային սուպրանոյի զուտ կոնցերտային հնարավորությունների

բացահայտումը: Կարծում եմ՝ հենց այդ թերության պատճառով էլ ստեղծագործությունը շատ երկար բեմական կյանք չունեցավ:

Այդ Կոնցերտը Մոսկվայում կատարել է մահ Համաձայնությանն առնող հայտնի մեներգչուհի Գալինա Սախարովան՝ ռուսերեն թարգմանված տեքստով:

Մի օր ինձ ու Առնո Բաբաջանյանին իր մոտ հրավիրեց Արվեստի գործերի վարչության մոր պետ Գևորգ Հովհաննիսյանը (Կինիկ): Հայտնելով, թե մախատեալում է կառավարական մեծ համերգ կազմակերպել, մա մեզ առաջարկեց այդ առիթով մի ստեղծագործություն գրել երգչախմբի և նվագախմբի համար (հավանաբար հիշում էր օրհներգի հետ կապված մեր համատեղ աշխատանքը):

Սակայն մեզ գլխովին գրավեց 2 դաշնամուրի համար պիեսի ստեղծման գաղափարը: Առնոյնց տուն գնալով՝ սկսեցինք քննարկել գրվելիք ստեղծագործության ձևը ու որոշեցինք, որ այն երկմաս է լինելու՝ դանդաղ և արագ հատվածների հերթագայությամբ: Առնոյի հայրը՝ Հարություն Յակովլևիչը, երաժշտական մեծ ընդունակությունների տեր լինելով, մեզ խորհուրդ տվեց դանդաղ հատվածի հիմք դարձնել «Ա՛յ բաղմանչի, բաղմանչի» ժողովրդական երգի մեղեդին:

Աշխատում էինք առանձին, յուրաքանչյուրս իր տանը, ապա հանդիպում էինք կոմսերվատորիայում, երկու դաշնամուրով դասարանում: Նվագելով մյուսը՝ միասին փնտրում էինք և՛ կառուցվածքային, և՛ թեմայի զարգացման լուծումներ՝ միաժամանակ ձգտելով, որ երկու գործիքն էլ հավասար իրավունքներ պահպանեն: Հիշում եմ՝ ես միանգամից առաջարկեցի արագ հատվածի բանվածքը, իսկ Առնոն իմպրովիզացիայի միջոցով «գտավ» թեման: Հետո ամեն ինչ ավելի հեշտ ստացվեց, և մոտ տասն օր անց աշխատանքն ավարտված էր, իսկ մեր համատեղ ջանքերի պտուղն ստացավ «Հայկական ռապսոդիա» անվանումը: Առնոյի հետ աշխատելը չափազանց հետաքրքիր էր: Իհարկե, պատահում էին և վիճաբանություններ, երբեմն մույնիսկ՝ թեժ, սակայն դրանք էլ բնական լուծման էին հանգում:

Մեր Ռապսոդիան առաջին անգամ նվագեցինք վերոհիշյալ կառավարական համերգի ժամանակ օպերային թատրոնի դահլիճում: 1950 թվականի մարտ ամիսն էր: Կատարումից հետո թատրոնի տնօրենի առանձնասենյակում մեզ շնորհակալություն հայտնեց Անաստաս Իվանովիչ Միկոյանը, որի ժամանման կապակցությամբ էլ կազմակերպվել էր համերգը: Հաճելի էր ընդունել համերգին ներկա գտնվող Մունդուկյանի անվան թատրոնի հանրահայտ դերասաններ Ավետ Ավետիսյանի և Դավիթ Մալյանի շնորհավորանքը...

Մեր այդ դուետում Առնոն ինձ ինչ-որ անբացատրելի լիցք էր հաղորդում, ինչը և բնորոշում էր մեր կատարման որակը՝ պատշաճ երանգների առկայությամբ ու լուսաստվերի խաղով:

Առնոյի հետ տասնյակ անգամներ նվագել ենք Ռապսոդիան տարբեր երկրների ամենահեղինակավոր դահլիճներում: Ստեղծագործությունը լայն ճանաչման արժանացավ և ընդգրկվեց թե՛ համերգային, թե՛ ուսումնական նվագացանկերում: Որոշ ժամանակ անց «Հայկական ռապսոդիան» հրատարակվեց Հայաստանում, իսկ 1996-ին՝ Ճապոնիայում:

Ինչպես նշվեց, 1944 թ. պատերազմի թեժ օրերին ձևավորվեց Շեփորի կոնցերտի թեմատիկ նյութը: 1950 թ. այն աչքի անցկացնելիս համոզվեցի, որ այդ նյութը ժամանակի ընթացքում չի խումացել: Դեռ ավելին, դրանում հայտնաբերեցի նոր հնարավորություններ, որոնք կարող էին աշխատանքը շարունակելու հիմք ծառայել: Կանգ առա մեկ մասամի կոնցերտի ձևի վրա (սոնատային ակզորո և դանդաղ լիրիկական դրվագ՝ մշակման բաժնում): Ինձ մղում էր շեփորի, որպես համերգային վառ գործիքի բազմակողմանի հնարավորությունները ցուցադրելու ցանկությունը:

Կոնցերտի վրա աշխատելու ընթացքում խորհրդակցում էի հայտնի մենակատար-շեփորահար Հայկազ Մեսիայանի հետ: Հենց նա էլ առաջինը նվագեց Կոնցերտը Մոսկվայի Չայկովսկու անվան համերգային դահլիճում ԽՍՀՄ Պետական նվագախմբի հետ, որի դիրիժորն էր Կառլ Էլիասբերգը:

Շեփորի կոնցերտի առաջին գրախոսը հայտնի քննադատ Ինկեյնտի Պոպովն էր, որը «Սովետսկոյե իսկուստվո» թերթում (16.12.1950) գրեց. «Ալեքսանդր Հարությունյանի Կոնցերտը շեփորի և նվագախմբի համար ստիպում է հիշել նրա հանրահայտ «Հայրենիք» կանտատը: Կոնցերտն ու կանտատը միավորում են երաժշտության երանգավորման կենսուրախությունը, վառ հուզականությունը, որոնք կոմպոզիտորի ստեղծագործական գործունեության բնորոշ գծերն են: Կոնցերտի երաժշտությունն աչքի է ընկնում մեղեդիական արտահայտչականությամբ ու գունագեղությամբ, նվագախմբային մերկապնակը թեթև է ու թափանցիկ: Դրա ֆոնի վրա առանձնապես վառ ու հստակ է հնչում շեփորի փրտուտը ու ազդեցիկ մենանվագը»:

Իմ այս Կոնցերտի մեծագույն ջատագով դարձավ Տիմոֆեյ Դոկչիցերը: Այդ նրբակիրթ ու բարձրարվեստ երաժիշտը, որի կատարողական տեխնիկան ու հնչյունային մերկապնակի հարստությունը հայտնի են բոլորին (իզուր չէ, որ նրան «շեփորի Օյատրախ» են անվանում), հիրավի գրավեց ինձ իր հմայքով ու մեծ կուլտուրայով: Հենց այն ժամանակից ի վեր մեզ միավորում են ընկերական և ստեղծագործական բարեկամության սերտ կապերը: Դոկչիցերը պատմում էր, որ Կոնցերտը նվագել է ավելի քան 30 երկրներում: 1977 թ. Տ.Դոկչիցերը

Կոնցերտի համար կադենցիա գրեց: Ստեղծագործության հիմնական թեմաների վրա կառուցված լինելով՝ այն ըստ արժանվույն պատկույն է Կոնցերտը:

Այս ստեղծագործությանը ծանոթացան Եվրոպայի բազմաթիվ երկրների, Հարավային և Հյուսիսային Ամերիկայի, անգամ Ճապոնիայի երաժշտասերները: Այն բազմիցս վերահրատարակվել է Մոսկվայում և արտասահմանյան երկրներում (Գերմանիա, Իսպանիա, Շվեյցարիա, Ճապոնիա, ԱՄՆ): Կոնցերտը ներառվել է մի շարք միջազգային մրցույթների ծրագրերում որպես 3-րդ փուլի պարտադիր ստեղծագործություն: Այն թողարկվել է ձայներիզներով և կոմպակտ դիսկերով տարբեր ֆիրմաների կողմից բազում մենակատարների մասնակցությամբ: Կարելի է անվանի երաժիշտներից հիշատակել ֆրանսիացիներ Մորիս Անդրեին, Բեռնար Սուստոյին, կուբացի Արտուրո Սանդովալին, Տիմոֆեյ Դոկչիցերին... Որպես դիրիժորներ հանդես են եկել հիանալի երաժիշտներ Կիրիլ Կոնդրաշինը, Կուրտ Մազուրը, Վասիլի Սինայսկին և ուրիշներ:

Հաճախ Կոնցերտի կատարումից հետո, որպես յուրահատուկ բիսային համար, հնչում էր նաև շեփոքի համար 1955 թվականին գրված իմ «Սկերցոն»:

Տարիներ են անցել... Այժմ էլ հիշում եմ Կոնցերտի վերաբերյալ բազմաթիվ ու բազմապիսի արձագանքները: Գրում էին թղթակիցները, հրատարակիչները, երաժիշտ-կատարողները, շարքային ունկնդիրները: Մեծ հուզմունքով կարդացի Տիմոֆեյ Դոկչիցերի նամակի (16.05.1991) այս տողերը. «Միրելի Ալեքսանդր Գրիգորիչ: Ստեղծագործե՛ք, Ձեր երաժշտությունն ուրախություն է բերում, ամոքում է մարդկանց հոգիները, երջանկություն է պարզում: Մեկական մաշկիս վրա եմ դա զգացել, այն էլ բազում անգամներ, և տեսել եմ Ձեր երաժշտությունն ունկնդրողների աչքերում»:

1950 թվականին ես ու Իրինան ամուսնացանք: Նույն տարում ինձ երկու-նյականոց բնակարան հատկացրեցին նորակառույց շենքում: Ամուսնությունից քիչ ժամանակ անց մեկնեցինք Մոսկվա, ուր Իրինան առաջին անգամ էր լինում: Ամառ էր, բայց, միևնույն է, մայրաքաղաքի թատերական կյանքը շլացրել էր նրան:

Այն տարիներին մենք բավական շատ էինք շփվում հայ մշակույթի գործիչների հետ: Հաճախ լինում էինք Մարյանների տանը, որտեղ հավաքվում էին մտավորականության ակնառու ներկայացուցիչները: Դեռ մանկուց այդ հյուրընկալ տունն այցելելը պայմանավորված էր Ջարիկի՝ Ղազարոս Մարյանի հետ մեր ընկերությամբ:

Ինձ միշտ հիացրել է Մարտիրոս Մարյանը թե՛ իր հոյակերտ դիմապատկերներով, թե՛ անմահ բնակարչությամբ: Մարյանի՝ 1951 թվականին

նկարած իմ դիմապատկերը այժմ էլ գտնվում է մեր տանը՝ հիշեցնելով մեծն Վարպետի հետ շփման հրաշալի պահերը:

Այնքան վառ են մնացել բանաստեղծ Ավետիք Իսահակյանի հետ իմ հանդիպումները: 1936 թ., երկարատև բացակայությունից հետո, նա վերադարձավ Հայրենիք: Այն ժամանակ դեռ պատանի էի և անսահման հիացմունքով ու ակնածանքով էի նայում «Կենդանի» Իսահակյանին: Դեռ պատերազմից առաջ էի անձամբ ճանաչում նրան:

Այսօրվա պես հիշում եմ Իսահակյանի հետ հանդիպումն այն օրը, երբ մեր ընտանիքում տեղի ունեցավ հիանալի մի իրադարձություն՝ 1951 թ. ապրիլի 10-ին ծնվեց մեր առաջնեկը՝ Նարինեն: Մեղքս ինչ թաքցնեմ՝ շատ էի ուզում տղա ունենալ և, իմանալով, որ աղջիկ է ծնվել, փոքր-ինչ տրտմեցի: Նույն օրը փողոցում տեսա Ավետիք Իսահակյանի շուրջը խմբված մի քանի կոմպոզիտորների: Բանաստեղծի խորաթափանց հայացքից աննկատ չմնաց իմ տրամադրությունը, և նա հարցրեց դրա պատճառը: Պատասխանս լսելով՝ սրտանց ծիծաղեց ու ասաց. «Տուն գնա, սեղանին գինի դիր ու ուրախացիր, որովհետև աղջիկը հարստություն է»:

Նարինեի ծնվելու օրը համընկավ Էմիլ Գիլելսի Երևան ժամանելու հետ. ֆիլիհարմոնիայի Փոքր դահլիճում կայացան նրա երկու համերգները: Կոմերվատորիայի դաշնամուրային ամբիոնը դաշնակահարի պատվին բարեկամական ընթրիք կազմակերպեց «Արարատ» ռեստորանում: Այնտեղ զրույցի ընթացքում Գիլելսին հիշեցրեցի 30-ականների վերջերին Երևան կատարած այցելությունը: Իմանալով Նարինեի ծննդյան մասին՝ նա ջերմորեն շնորհավորեց ինձ ու տեղնուտեղը մի երկտող գրեց Իրինային՝ առողջություն մաղթելով նրան և մեր նորածին դստերը:

Այդ նույն ընթրիքի ժամանակ Գիլելսը ցանկություն հայտնեց, որ ես դաշնամուրի և նվագախմբի համար մի նոր ստեղծագործություն գրեմ: Ի դեպ, այդ շրջանում ես արդեն իսկ մտորում էի նման ստեղծագործության մասին: Պատկերացնում էի, որ այն իր ձևով պետք է սեղմ լիներ, տրամադրությամբ՝ լուսավոր, իսկ կառուցվածքով՝ թափանցիկ: Շուտով ծնվեց իմ Կոնցերտինոն դաշնամուրի և նվագախմբի համար: Այդ երկի վրա աշխատելը զարմանալի հաճույք էր ինձ պատճառում, և նյութն, ինչպես ասում են, ինքն իրեն էր առաջ գնում ու զարգանում:

Առաջին անգամ ես նվագեցի Կոնցերտինոն նույն տարվա հունիսին Երևանում Մ. Մալունյանի ղեկավարած նվագախմբի հետ: Դեկտեմբեր ամսին կատարեցի այն Մոսկվայում Նիկոլայ Անտոլի ղեկավարած ԽՍՀՄ Պետական նվագախմբի հետ:

Երկու տարի անց, Մոսկվայում եղած ժամանակ, զանգահարեցի Գիլելսին և խնդրեցի, որ հանդիպենք: Բանն այն է, որ դաշնամուրային բանվածքի առու-

մով Կոնցերտինոն ինձ լիովին չէր բավարարում, և միայն նոր խմբագրումից հետո ցանկացա այն ցույց տալ հռչակավոր դաշնակահարին: Գիլելան ինձ ընդունեց իր տանը և հավանեց նոր խմբագրումը, միաժամանակ 2-3 շափազանց օգտակար առաջարկություն արեց ստեղծագործության վերաբերյալ:

Կոնցերտինոն պատվով դիմացավ ժամանակի փորձությանը և այսօր, ավելի քան 40 տարի անց, դարձել է յուրատեսակ «քրեստոմատիական» ստեղծագործություն: Այն նվագում են ինչպես համերգային գործունեությամբ զբաղվող դաշնակահարները (նշեմ, օրինակ, Կետտի Մալխասյանի հիանալի կատարումը), այնպես էլ երաժշտական դպրոցների ավագ դասարանների աշակերտները: Հիշում եմ 1964 թ. Թբիլիսիի N 10 երաժշտական դպրոցի աշակերտների ժամանումը Երևան, որոնցից երկու վրացի աղջնակներ ինձ անակնկալ մատուցեցին. Ջեմալ Գոկիելու ղեկավարած Հայֆիլհարմոնիայի նվագախմբի հետ նրանցից մեկը նվագեց Կոնցերտինոյի 1-ին, իսկ մյուսը՝ 2-րդ և 3-րդ մասերը: Ստեղծագործությունը կատարվել է նաև արտերկրում:

1951 թ. հնարավորություն ունեցա ներկա գտնվելու մի շարք միութենական հանրապետությունների ստեղծագործական կազմակերպությունների պլենումներին: Դ-ա, հիրավի, արտակարգ առիթ էր ծանոթանալու իմ գործընկերների նոր աշխատանքներին:

Այդ տարին ինձ համար հիշարժան է նաև արտասահման (Ռումինիա) կատարած իմ առաջին ուղևորությամբ: Մեպտեմբեր ամսին այնտեղ անց էր կացվում Ռումինական պրոֆեսիոնալ երաժշտության յոթնօրյակ: Բացի ինձանից, պատվիրակության կազմում ընդգրկված էին հանրահայտ կոմպոզիտորներ, երգահաններ Վ. Ջախարովն ու Վ. Մոլոլյով-Մեդոյը: Երբ ինքնաթիռն սկսեց վայրէջք կատարել, օդանավակայանի շենքի մոտ նկատեցինք մարդկանց հոծ բազմություն: «Մեզ այստեղ լավ են դիմավորում», - ուրախությամբ ասաց Մոլոլյով-Մեդոյը: Սակայն օդանավին մոտեցած սանդուղքով իջնելիս լսեցի հայերեն լեզվով ողջույնի խոսքեր և իմ ազգանունը: Իմ հայրենակիցներն էին, որ եկել էին ինձ դիմավորելու: Նրանց հետ էր այն ժամանակի բալկանյան երկրների հայության հոգևոր հովիվը, իսկ հետագայում Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը: Դեռ այն ժամանակ նա ինձ վրա մեծ տպավորություն բողեց թե՛ իր խելքով, թե՛ շփման անմիջականությամբ:

Չեմ կարող չասել այն մասին, թե որքան ցավ են ինձ պատճառել ողջ աշխարհով մեկ ցիրուցան եղած հայ ժողովրդի ճակատագրի շուրջ խոհերը: Հետագայում էլ, բազմաթիվ արտասահմանյան ուղևորությունների ընթացքում ինձ հանգիստ չէր թողնում այդ զգացումը:

Ռումինական երաժշտության յոթնօրյակի եզրափակիչ համերգը նվիրված էր խորհրդային կոմպոզիտորների ստեղծագործությանը: Առաջին բաժնում

Ջորջե Ջորջեսկուի ղեկավարությամբ հիանալի հնչեց Արամ Խաչատրյանի Երկրորդ սիմֆոնիան: Երկրորդ բաժնում Բուխարեստի կոմսերվատորիայի դաշնակահարուհի-պրոֆեսորը նվագեց Պրոկոֆևի Երրորդ կոնցերտը, իսկ վերջում հնչեց իմ «Հայրենիք» կանտատը: Այն Թեոդոր Ռոզալսկու ղեկավարությամբ ռումիներեն լեզվով կատարեց Ռադիոյի և ֆիլիարմոնիայի միացյալ երգչախումբը: Որպես մեներգիչներ հանդես եկան Ջենաիդա Պալլին (որը հետագայում դարձավ երևանյան երաժշտասերների սիրելին) և հոյակապ բարիտոնով օժտված Պ. Ստեֆանեսկու-Գոանգան: Իմ հանդեպ հատուկ վստահություն դրսևորելով՝ Գոանգան նկատելի հպարտությամբ հայտնեց ինձ, որ Վագների օպերաներում իր դերերգերի համար Հիտլերը պարզևատրել էր իրեն ադամանդներով զարդարված Մեծ խաչով...

Ռումինիայից վերադառնալուն պես, Խրեննիկովի խնդրանքով ստիպված եղա մեկնել Մոլդավիա՝ Կոմպոզիտորների միության պլենումին մասնակցելու: Տուն վերադարձա միայն հոկտեմբերի վերջին:

50-ականներին Համամիութենական ռադիոյի երաժշտական հաղորդումների ղեկավարն էր Սերգեյ Բալասանյանը: Մոսկվայում մի առիթով նա ինձ հրավիրեց իր աշխատասենյակ և առաջարկեց որևէ սիմֆոնիկ ստեղծագործություն գրել երեխաների համար: Որոշեցի սյուիտ գրել և անվանել «Հայաստանի պարերը»: Ռադիոյի գեղարվեստական խորհրդի միտին ներկայացված պարտիտուրը քննեցին Սերգեյ Բալասանյանն ու դիրիժոր Գեննադի Ռոժդեստվենսկին, որն այդ տարի էր ավարտել Մոսկվայի կոմսերվատորիան: Հենց նրա մեկնաբանմամբ էլ առաջին անգամ հնչեց իմ սյուիտը: Այն հեռարձակվեց Համամիութենական ռադիոյի ուղիղ եթերում 1952 թ. դեկտեմբերին: Դատելով բազմաթիվ նամակներից, որոնք ստացվում էին ռադիոունկնդիրներից, պատանի երաժշտասերներին դուր եկավ այդ ստեղծագործությունը:

1952 թվականն ինձ համար դարձավ «մանկական երաժշտության տարի»: Համամիութենական ռադիոյի մանկական երգչախմբի համար գրեցի մի շարք երգեր («Մենք եկել ենք Մոսկվա», «Հրաժեշտ ենք տվել դպրոցին», «Մըրնթաց բազեն»), որոնք նույն այդ ժամանակ հնչեցին Վ. Լոկտևի ղեկավարած Համամիութենական ռադիոյի մանկական երգչախմբի կատարմամբ:

Դրանից մեկ տարի առաջ Երևանում կազմակերպել էի տղամարդկանց վոկալ քառյակ (տե՛նորներ՝ Սերգեյ Բարխուդարյան և Գևորգ Բաղդասարյան, բարիտոն՝ Սերգեյ Գալստյան և բաս՝ Մուրեն Շահիջանյան): Այդ խմբի համար էին գրվել մասնավորապես «Երգ Սևանի մասին» և «Գարնանային» ստեղծագործությունները: Շուտով այդ անսամբլը գտավ իր ունկնդրին և բավական հարուստ երգացանկ ձևավորեց: Բացի ինձանից, քառյակի համար երգեր էին գրում նաև այլ հայ կոմպոզիտորներ՝ Վահագն Արարատյանը, Վարդան

Տիգրանյանը, Կարո Չաքարյանը, Ստեփան Ջրբաշյանը... Խումբն արժանացավ Հայաստանի Կոմպոզիտորների միության պլենումի հյուրերի ուշադրությանը, և այդ մասին իր ելույթում մասնավորապես խոսեց Նիկոլայ Պեյկոն: Անսամբլը գոյատևեց մինչև 1955 թ.:

50-ականների սկզբի իմ ստեղծագործություններից կուլենայի հիշատակել բառ ձայնի և դաշնամուրի համար գրված «Գիշերային բալլադը», որի հիմքում ընկած է Աշոտ Գրաշու բանաստեղծություններից մեկը («Երագում տեսա...»): Բալլադը հրատարակվեց Մոսկվայում, «Մովեսկայա: մուզիկա» ամսագրի նոտային հավելվածում: Այն առաջին անգամ կատարեց Երևանի օպերային թատրոնի մեներգիչ Սուրեն Շահիջանյանն իմ մասնակցությամբ:

1953 թ. առաջին անգամ «ուժերս փորձեցի» երաժշտական կոմեդիայի ժանրում: Այն տարիներին բավական աշխույժ գործունեություն ծավալած Երևանի երաժշտական կոմեդիայի թատրոնը ղեկավարում էր տաղանդավոր ռեժիսոր և մեծ ժողովրդականություն վայելող դերասան Թաթևիկ (Թադևոս) Սարյանը: Այդ շրջանում թատրոնի կոլեկտիվն սկսել էր աշխատել Գարրիել Մուհրոկյանի գրեթե մոռացության մատնված «Բաղնիսի բոխչա» և «Օսկան Պետրովիչն էն կինքումը» զավեշտախաղերի բեմականացման վրա: Նախատեսվում էր ներկայացումը մատուցել սուր գրոտեսկային ոճով, հետևաբար պահանջվում էին համապատասխան լուծումներ: Շատ ոգևորված էի այդ աշխատանքով, թեև նեղվում էի նվագախմբի փոքր կազմով պայմանավորված սահմանափակումներից:

Թաթևիկ Սարյանի փայլուն բեմականացումներն ապացուցեցին իրենց թատերական կենսունակությունը: Այդ կապակցությամբ «Կոմունիստ» թերթում (29.11.1953) տպագրված հոդվածում Մարիետա Շահինյանը մատնանշեց *«դերասանական ողջ կազմի կատարողական բարձր մակարդակը և Ալեքսանդր Հարությունյանի հաջողված երաժշտությունը, որում նրբորեն վեր են հանվում և հստակորեն վերարտադրվում են անցյալ դարի կեսերի քաղբեմիական կենցաղի առանձնահատկությունները»:*

Շատ եմ ափսոսում, որ ժամանակին այդ երաժշտության հիման վրա հաներգային կատարման համար նախատեսված սիմֆոնիկ սյուիտ չստեղծեցի:

Երևանում էի, երբ տարածվեց Մտալինի մահվան լուրը: Այդ իրադարձությունը ցնցեց մեր ողջ հասարակությունը: 1937 թ. ստալինյան հետապնդումների հետևանքով սիրելի քեռուս կորցնելուց հետո (իսկ նման զոհերի թիվը հարյուր հազարների էր հասնում), ես էլ էի մոլորվել...

Ստալինի մահվան օրը՝ 1953 թ. մարտի 5-ին, կյանքից հեռացավ մեր հանճարեղ ժամանակակից Սերգեյ Պրոկոֆևը։ Ստալինի մահվան կապակցությամբ հայտարարված համաժողովրդական սուգի օրերին Պրոկոֆևին հողին հանճանեցին գրեթե անկատ. վշտից ցնորված Մոսկվան ի վիճակի չէր հիշել մեծ երաժշտին հրաժեշտ տալու մասին։

Պրոկոֆևի անվան հետ կապված մի դրվագ կուզենայի հիշել։ 50-ականների կեսերին մեզ՝ ԽՍՀՄ Կոմպոզիտորների միության վարչության անդամներիս, հրավիրեցին Կենտկոմի քարտուղար Վենիամին Անդրեևիչ Շեպիլովի մոտ։ Զննարկվում էր Խրեննիկովի զեկուցումը, որով նա պիտի հանդես գար ԽՍՀՄ Կոմպոզիտորների միության հերթական համագումարին։ Իր զեկուցման մեջ Տիխոն Եփկովաևիչը բարձր գնահատական էր տալիս Պրոկոֆևի և Շոստակովիչի ստեղծագործությանը՝ առանձնանշելով մշակույթի զարգացման գործում նրանց հսկայական ներդրումը։ Ձեկուցման քննարկմանը մասնակցում էր «Սովետսկայա մուզիկա» ամսագրի գլխավոր խմբագիր Ե.Ա.Գրոշևան, որը, անդրադառնալով Պրոկոֆևի ստեղծագործությանը, հայտարարեց. «Նույնիսկ «Պատերազմ և խաղաղություն» օպերայում հեղինակին չի հաջողվել ձերբազատվել ֆորմալիստական հակումներից»։ Զգիտեմ ինչու, չկարողացա ինձ զսպել և հենց տեղիցս կտրուկ բացականչեցի. «Լսե՛ք, հանգիստ թողե՛ք այդ մեծագույն մարդու ոսկորները»։ Վեր կացա և դուրս եկա միջանցք։ Նույն թույնին ինձ մոտեցան քաղաքացիական հագուստով երկու մարդ և ասացին, որ հավանաբար մոռացել եմ, թե որտեղ եմ գտնվում և որ իմ վարքագիծն անընդունելի է։ Հասկանալով, թե ում հետ գործ ունեմ, չկորցրեցի ինձ և հայտարարեցի. «Լեւնինը մեզ սովորեցնում էր սկզբունքային քննարկումներում կրքոտ ու ջերմեռանդ լինել»։ Հետո վկայակոչեցի Երկերի լիակատար ժողովածուի պատահական հատորն ու էջը։

Իմ «հակահարձակումը» պատշաճ ներգործություն ունեցավ, և այդ երկուսը, զգալիորեն քնաթափ լինելով, նահանջեցին։ Երեկոյան Կարա Կարաևը հյուրանոցում միանգամայն լրջորեն ինձ ասաց, թե կասկածում էր, որ կվերադառնամ։

1953 թ. մայիսին Երևանում պատրաստվում էին Հայֆիլհարմոնիայի համերգային Մեծ դահլիճի բացմանը։ Նախնական քննարկմանը ներկա էր ՀԿԿ Կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար Գ.Ա. Հարությունյանը։ Կոմպոզիտորներից մասնակցում էին Առնո Բաբաջանյանը, Էդվարդ Միրզոյանը և ես։

Շինության կիսաշրջանի ձև ունեցող պատերը դահլիճի ակուստիկայի որակի առումով ինձ որոշ մտահոգություն պատճառեցին։ Գրիգորի Արտեմևիչը կարծիք հայտնեց, որ այդ դահլիճում անց են կացվելու զուտ ակադեմիական

ոճի համերգներ: Երբ հետաքրքրվեցինք, թե ինչպես է լուծվելու ժողովրդական և էստրադային կոլեկտիվների հարցը, նա հիշեցրեց մշակույթի տներում համապատասխան դահլիճների գոյության մասին: Ցավում եմ, որ Հարությունյանի պաշտոնաթողությունից հետո նրա կարծիքն անտեսվեց:

Համերգային դահլիճի բացմանը կատարվեց նաև իմ «Հայրենիք» կանտատո: Ակուստիկայի վերաբերյալ իմ կանխատեսումներն արդարացան: Հետագայում Հունգարիայից ակուստիկայի մասնագետներ հրավիրվեցին, որոնք ջանացին զանազան հնարքներով դրությունը փրկել: Սակայն չեմ կարող ասել, թե նրանց ջանքերը մեծ հաջողություն ունեցան:

1953 թ. իմ ընտանիքում ևս մի կարևոր իրադարձություն տեղի ունեցավ. ծնվեց մեր որդին՝ Սուրենը: Ընտանիքը մեծանում էր, նոր հոգսեր էին առաջանում: Այդուհանդերձ, շարունակում էի աշխատել. այդ ընթացքում ստեղծեցի մի քանի պիես փայտյա փողայինների համար: Դրանք, կարծես, յուրօրինակ «փորձ» լինեին, որոնց արդյունքում գրեցի հինգ փողային գործիքների Կոնցերտ-ֆանտազիան:

1954 թ. ինձ առաջարկեցին երաժշտություն գրել օգոստոսին Մոսկվայում անցկացվելիք ֆիզկուլտուրիկների համամիութենական շքերթի համար: Վիթխարի տոնախմբություն էր լինելու. միայն Հայաստանից մասնակցելու էին 300 պատանիներ և աղջիկներ: Շքերթի փորձերն անց էին կացվում Երևանի հանրապետական մարզադաշտում փողային նվագախմբի մասնակցությամբ, որի ղեկավարն էր իմ ընկեր, օպերային թատրոնի տաղանդաշատ դիրիժոր Հակոբ Ոսկանյանը:

Շքերթի համար գրած երաժշտությունը կառուցված էր մի շարք համարներից բաղկացած սյուիտի ձևով: Այդ երաժշտության հնչյունների ներքո մարզիկները բարդ վարժություններ էին կատարում, որից հետո յուրատեսակ «բուրգ» էր կառուցվում, և հանդիսությունը եզրափակվում էր տոնական շքերթով:

Ֆիզկուլտուրիկների այդ հանդիսավոր միջոցառումը տեղի ունեցավ Մոսկվայի «Դինամո» մարզադաշտում: Հայկական պատվիրակության ելույթը բավական հետաքրքիր էր: Դրա ավարտին օդում մի ուղղաթիռ հայտնվեց, որի տակ «օղակներից» կախված էր հանրահայտ մարզիկ, օլիմպիական չեմպիոն Ալբերտ Ազարյանը: Նա հազարավոր հանդիսականներին ցուցադրեց իր հռչակավոր «խաչը»: Տպավորությունն ուղղակի ցնցող էր:

Իմ Սպորտային քայլերգն արժանացավ ԽՍՀՄ ֆիզկուլտուրայի և սպորտի կոմիտեի հատուկ մրցանակի: Այդ քայլերգը հետագայում մույնպես բազմիցս կատարվել է հանրապետական մարզական շքերթների ժամանակ:

Ֆիզկուլտուրիկների շքերթի երաժշտության ստեղծմանը գրեթե զուգահեռ գրում էի հետագայում մեծ տարածում գտած «Երգիր ինձ համար» երգը

Հովհաննես Դուկասյանի բանաստեղծության հիման վրա: Առաջին անգամ այն հնչեց Տաթևիկ Մազանդարյանի փայլուն կատարմամբ: Նվագախմբի դիրիժորը Նիյազին էր, որը Երևան էր ժամանել ֆիլիարմոնիայում կայանալիք սիմֆոնիկ համերգին մասնակցելու:

Կարճ ժամանակ անց, մի խումբ հայ կոմպոզիտորներ մեկնեցին Բաքու, որտեղ սիմֆոնիկ համերգի ընթացքում Տաթևիկ Մազանդարյանը երգեց այդ երգը կրկին Նիյազու ղեկավարությամբ: Նույն համերգի ժամանակ Ադրբեջանի սիմֆոնիկ նվագախմբի հետ, որ ղեկավարում էր Սիբայել Մալունցյանը, նվագեցի իմ Կոնցերտինոն:

1954 թ. «Հայֆիլմ» կինոստուդիայի գեղխորհրդի նիստից հետո կինոռեժիսոր Ստեփան Կևորկովը ծանոթացրեց ինձ «Ստվերները հեռանում են լեռներից» խորագրով իր ապագա ֆիլմի սցենարին (ֆիլմի սյուժեն կապված է Հայաստանում հայտնաբերված ուրանի հանքի շուրջ օտարերկրյա պետության լրտեսական գործունեության հետ): Ֆիլմում նկարահանվում էին մեր լավագույն դերասանները Հրաչյա Ներսիսյանի գլխավորությամբ: Ընդունեցի այդ կինոնկարի համար երաժշտություն գրելու առաջարկը: Պիտի խոստովանեմ, որ գրված երաժշտությունը (գուցե ֆիլմի ժանրի ազդեցության տակ) ավելի շուտ նկարագրական է և հոգեբանական խորությամբ առանձնապես աչքի չի ընկնում: Ու թեև քննադատաբար էի տրամադրված ամբողջ ֆիլմի որակի նկատմամբ, բայց երբ այն դուրս եկավ համամիութենական էկրան, բավական մեծ հաջողություն ունեցավ հանդիսատեսի շրջանում:

1954 թ. մոյեմբերին ինձ վստահվեց Հայկական ֆիլիարմոնիայի գեղարվեստական ղեկավարի պաշտոնը: Դրանով իսկ իմ կյանքում կտրուկ շրջադարձ կատարվեց. չէ՞ որ մինչ այդ ես, ըստ էության, որևէ տեղ չէի աշխատում և մեծ հնարավորություններ ունեի զբաղվելու միայն ստեղծագործական գործունեությամբ: Իսկ այժմ պիտի գլխավորեի հանրապետության խոշորագույն, փաստորեն միակ համերգային կազմակերպությունը, որն արդեն իսկ ուներ իր ավանդույթները, նվաճումներն ու, քնականաբար, նաև թերությունները: Ընդհանուր կտորի տակ գոյակցում էին սիմֆոնիկ նվագախումբը և գուսանական երգի անսամբլը, լարային քառյակն ու էստրադային նվագախումբը... Այդ բոլորի հետևում տեսնում էի հարյուրավոր մարդկանց՝ իրենց մասնագիտական ու կենցաղային հիմնախնդիրներով, որոնք անհրաժեշտ էր լուծել, շատ հաճախ՝ առանց հապաղելու: Այդ ժամանակից ի վեր, գրեթե քառասուն տարի, իմ կյանքը սերտորեն կապված է եղել ֆիլիարմոնիայի հետ: Չափազանց երկար ժամանակ էին խլում գեղխորհրդի նիստերը, գեղարվեստական կոլեկտիվների ներկայացրած ծրագրերի ունկնդրումները (իսկ դրանց քննարկումների

ժամանակ երբեմն իսկական «պատերազմ» էր սկսվում): Եվ այդ ամենի հետ միասին հարկ էր շարունակել ստեղծագործական աշխատանքը՝ միաժամանակ ստիպված լինելով հաճախակի մեկնել Մոսկվա, միութենական հանրապետություններ և արտասահման:

Զեմ կարող ևս մեկ անգամ չարտահայտել իմ երախտագիտությունը գործընկերներին, հատկապես ֆիլիարմոնիայի տնօրենների նկատմամբ, որոնք ըմբռնումով էին մոտենում իմ ծանրաբեռնվածությանը և հանձին ինձ առաջին հերթին կոմպոզիտորի տեսնելով՝ ջանում էին հնարավորին չափ զերծ պահել ֆիլիարմոնիայի գործունեության բազմաթիվ «ընթացիկ» հարցերից:

Իմ նշանակման հետ միաժամանակ Հայֆիլիարմոնիայի տնօրենի տեղը զբաղեցնելու հրավեր ստացավ Գուրգեն Հայրապետյանը, որը գործնական ու վարչական ղեկավարման լավ փորձ ուներ: Մեր համատեղ աշխատանքի ընթացքում ես դիմեցի Հայաստանի նախարարների խորհրդի նախագահ Ա.Ե.Քոչինյանին՝ ֆիլիարմոնիան վերակազմավորելու և նախընտրությունը «ակադեմիական» ուղղվածություն ունեցող կոլեկտիվներին տալու խնդրանքով: Սակայն հանրապետության ղեկավարությունը չանսաց իմ առաջարկություններին:

Գ. Հայրապետյանին փոխարինած Գեորգի Ասատրյանն արդեն կազմակերպչական աշխատանքի զգալի փորձ էր կուտակել: Մասսայական միջոցառումների գաղափարով տարված՝ նա մի շարք գալա-համերգներ կազմակերպեց ինչպես Հայաստանում, այնպես էլ Խորհրդային Միության հանրապետություններում:

Այդ համերգներն անցնում էին Սպորտի պալատների լեւի-լեցում դահլիճներում: Նրա ջանքերի շնորհիվ այդ համերգներին մասնակցում էին այնպիսի արվեստագետներ, ինչպիսիք են Գոհար Գասպարյանը, Տաթևիկ Մազանդարյանը, Պավել Լիսիցյանը, Սուրեն Քոչարյանը, Արթուր Այդինյանը և ժողովրդականություն վայելող մի շարք անսամբլներ, մի բան, որ չէր կարող ունկնդրին անտարբեր թողնել:

Արգասաբեր էր ֆիլիարմոնիայի տնօրենի պաշտոնում կոմպոզիտոր Վլադիլեն Բալյանի աշխատանքը: Նրա նախաձեռնությամբ ու աջակցությամբ այդ ժամանակահատվածում կազմավորվեցին մի շարք նոր ֆիլիարմոնիկ անսամբլներ, այդ թվում՝ Հայաստանի կամերային անսամբլը, ԽՍՀՄ-ում և արտերկրում անց էին կացվում հայկական երաժշտության տասնօրյակներ և շաբաթներ:

Շարադրանքիս ընթացքում դեռ առիթներ կույնենամ անդրադառնալու ֆիլիարմոնիայի տարբեր կոլեկտիվների և նրանց ղեկավարների աշխատանքին: Իսկ այժմ կրկին դառնամ իմ ստեղծագործական գործունեությանը:

1956 թ. երևան եկավ կինոերաժշտության ժամրում իմ հերթական փորձի արդյունքը՝ դարձյալ «Հայֆիլմ» ստուդիայի հետ կապված: Ռեժիսոր և սցենարի հեղինակ Գրիգոր Մելիք-Ավագյանն այստեղ նկարահանում էր «Միրտն է երգում» կինոնկարը: Այն պատմում է երգչի մասին, որը, Հայրենիք վերադառնալով, ճանաչում է գտնում, նաև՝ երջանկություն սեփական ժողովրդին ծառայելու մեջ: Այդ ֆիլմի նախատիպն ու զլխավոր դերակատարն այն ժամանակ մեծ համբավ վայելող երգիչ Արթուր Այդինյանն էր, որը շատ բնական «ներհյուսվեց» ֆիլմի գործողության մեջ:

Կինոնկարի համար երաժշտությունը գրում էի տաղանդավոր կոմպոզիտոր Կոնստանտին Օրբելյանի հետ: Նա քիչ ավելի վաղ ստանձնել էր Հայաստանի էստրադային նվագախմբի զեղարվեստական ղեկավարի պարտականությունները: Օրբելյանի հետ աշխատելը շատ հետաքրքիր էր: Ֆիլմում հնչող երգերը զարմանալի հեշտությամբ են գրվել: Նվագախմբային դրվագները հիմնված են երգերի թեմաների վրա, և կինոնկարի երաժշտական դրամատուրգիան, կարծում եմ, պահպանել է թեմատիկ ամբողջականությունը: Կինոնկարը լայն ճանաչման արժանացավ և ջերմորեն ընդունվեց հանդիսատեսի կողմից:

Նույն՝ 1956 թ., Մոսկվայում կայացավ հայ գրականության և երաժշտության երկրորդ տասնօրյակը: Երևանի օպերային թատրոնի ներկայացումների հետ մեկտեղ բազմաթիվ համերգներ տրվեցին Հայֆիլմարձնոհայի շնորհալի մենակատարների ու երաժշտական կոլեկտիվների մասնակցությամբ: Տասնօրյակն ավարտվեց Մեծ թատրոնում կազմակերպված եզրափակիչ համերգով, որի ծրագրում ընդգրկված էին նաև իմ ստեղծագործություններից մի քանիսը՝ որոշ երգեր, «Տոնական նախերգանքը», «Հայկական ռապսոդիան», վերջինս հնչեց Առնոյի ու իմ կատարմամբ:

1957 թ. գրաքննադատ Վ. Երմիլովի հետ ուղևորվեցինք Ալբանիա՝ մասնակցելու Ստեղծագործողների ընդհանուր միության համագումարին (նրա կազմում ընդգրկված էին կոմպոզիտորներ, նկարիչներ, գրողներ): Երկրին ծանոթանալու ընթացքում բազում անջնջելի տպավորություններ ստացանք: Տիրանայում մեզ ընդունեց երկրի ղեկավար Էմվեր Խոջան, որն ինձ մասնավորապես առաջարկեց մնալ իրենց երկրում և աշխատել իրենց կոմպոզիտորների հետ: Նման վստահության համար հայտնելով իմ շնորհակալությունը՝ պատասխանեցի, որ հանգամանքները թույլ չեն տալիս ընդունել այդ գայթակղիչ առաջարկը: Կարո՞ղ էի արդյոք բառերի միջոցով բացատրել նրան, թե իմ կյանքն ուղղակի չեմ պատկերացնում Հայաստանից դուրս, որի հետ ինձ կապում են աշխատանքը, ստեղծագործությունը, ընկերները, իմ մերձավորներն ու ողջ շրջապատը...

Նույն տարում կրկին անդրադարձա երաժշտական կոմեդիայի ժանրին: Կոմստանտին Օրբեյանի հետ սկսեցինք երաժշտություն գրել Ալեքսանդր Արաքսմանյանի երգիծական սուր ոճով ստեղծված «Փիղը պարում է» պիեսի համար: Առանց երկմտանքի կարող եմ ասել, որ պիեսի շրջանակներում տեղ գտած երաժշտական համարները բավական բարձրորակ էին: Ցավոք, Երևանի երաժշտական կոմեդիայի քատրոնի այդ բեմականացումը բառացիորեն պրեմիերայի նախօրեին հանվեց քատրոնի խաղացանկից: Ըստ երևույթին, պիեսի երգիծական ուղղվածությունը դուր չէր եկել բարձր ղեկավարությանը:

Օրբեյանի հետ ինձ կապում էր նաև իմ աշխատանքը Հայաստանի էստրադային նվագախմբում, որտեղ, ճիշտ է, մի կարճ ժամանակ, կատարում էի գեղարվեստական խորհրդատուի պարտականություններ: Այդ կոլեկտիվի համար գրվեց «Զարավան» երաժշտական պատկերը, որի կլարնետի մե-նամվագն, ի դեպ, մեծ վարպետությամբ էր կատարում Հարություն Անսուրյանը: Էստրադային երաժշտության ժանրում իմ ստեղծած հատուկեմտ գործերից մեկն է սա, որում փորձել եմ արտացոլել իմ մտորումները ողբերգական իրադարձությունների բերումով օտարության մեջ հայտնված հայի ճակատագրի մասին:

50-ականների կեսերից հասունանում էր լայնամասշտաբ ու ծանրակշիռ ստեղծագործության՝ Սիմֆոնիայի ստեղծման միտքը: Լավ հասկանալով իմ առջև ծառայած խնդրի պատասխանատվությունը՝ դեռևս 1955 թ. սկսեցի ի մի բերել նյութը. աշխատանքս շարունակվեց մինչև ստեղծագործության պրեմիերան, որը կայացավ Երևանում 1957 թ. դեկտեմբերի 21-ին: Հայաստանի ֆիլիարմոնիկ նվագախմբի հետ այն ունկնդրին ներկայացրեց Միքայել Մալունցյանը: Նա անչափ մեծ բարեխղճությամբ ու նվիրվածությամբ էր վերաբերվում իր աշխատանքին:

Սիմֆոնիայում ես ձգտել եմ մարմնավորել մեր ժամանակակցի ընդ-հանրացված կերպարը՝ նրա մղած պայքարով, որոնումներով ու տվյալտանը-ներով, նվաճումների հրճվանքով: Հիշողությանս մեջ թարմ էին և՛ հարազատ ժողովրդիս պատմության ողբերգական էջերը, և պատերազմական դառը տարիները, երբ Երևանում, Լենինի հրապարակում, հայկական դիվիզիաները երդման արարողության էին մասնակցում ու անմիջապես մեկնում ռազմա-ճակատ: Հավանաբար հենց դրանով է պայմանավորված Սիմֆոնիայի 1-ին մասի և նրա մյուս դրվագների դրամատիզմը: Հանուն ժողովրդի բարօրության իրենց կյանքը զոհաբերած հերոսների ողբը փորձել եմ արտահայտել 2-րդ մասի երաժշտության մեջ: Նրա հիմքում ընկած է հայկական հայրենասի-րական «Երբ ալեկո՞ծ ծովի վրա» երգի թախժոտ մեղեդին: 3-րդ մասի սկերցոյին հաջորդող ֆինալի ավելի լուսավոր պատկերներն, ըստ մտահղացման, գալիս

են հաստատելու աներեր հավատը վեհի ու բարու հաղթանակի նկատմամբ: Սակայն Սիմֆոնիայի ավարտը հենու է կաղապարային, ցուցադրական շքեղությունից: Գոսերի կվարտային զարկերի ֆոնի վրա հնչում են 2-րդ մասի քախմախի թեմայի «բեկորները»:

Սիմֆոնիան անմիջապես ուշադրության արժանացավ: ԽՍՀՄ Կոմպոզիտորների միության քարտուղար Սերգեյ Վասիլևիչ Ակսյուկը «Կոմունիստ» թերթում (27.12.1957) տպագրված իր հոդվածում գրում է. «Չեն հիշում վերջին տարիներին երևան եկած մեկ այլ սիմֆոնիա, որն ունենար այնպիսի հոգեհարազատ գրավչություն, մարդկային զգացմունքների ջերմություն, արդիականության թեմայի վերարտադրման խորություն, ինչպիսին առկա է Ալ. Հարությունյանի Սիմֆոնիայում: Այդ իմաստով նա իր արժանի տեղն ունի Ս. Պրոկոֆևի 7-րդ և Ն. Մյասկովսկու 27-րդ սիմֆոնիաների կողքին: Սիմֆոնիայի ազգային բնույթը միայն ուժեղացնում է նրա ազդեցությունը: Այստեղ կան գծեր, որոնք մոտ են բեթովեյան սիմֆոնիզմին: Սա մարդկային մեծ ու հզոր զգացմունքի սիմֆոնիա է, նաև՝ նոր աշխարհի, որ ներկայացված է հեղինակի հարուստ վերարտադրմամբ»:

«Սիմֆոնիայի դրամատիզմը, նրա մասշտաբայնությունը, հուզական վիճակների հակադրումները շատերին ցնցեցին, – ավելի ուշ գրել է երաժշտագետ Մարինա Բերկուն:– Սիմֆոնիան հզոր, նշանակալի ստեղծագործություն է: Այն յուրովի շարունակում է խաչատրյանական սիմֆոնիզմի ուղղությունը» («Սովետսկայա մուզիկա» ամսագիր, 1990, N 11):

ԽՍՀՄ տարբեր քաղաքներում Սիմֆոնիայի կատարումներից մի քանիսին առաջիկայում դեռ առիթներ կունենան անդրադառնալու: Արտասահմանում այն մեծ հաջողությամբ հնչել է Պրահայում Վացլավ Սմետաչեկի ղեկավարությամբ:

1958 թ. կինոռեժիսոր Յուրի Երզնկյանն ինձ առաջարկեց երաժշտություն գրել իր «Իմ ընկերոջ մասին» ֆիլմի համար: Կինոնկարը պատմում է ազգությամբ հայ երկու ընկերների մասին, որոնք սովորում են Լենինգրադի գեղարվեստի ակադեմիայում: Նրանք սիրահարված են Կատյա անունով միևնույն աղջկան: Սկսվում է Հայրենական մեծ պատերազմը: Չոհվում է ընկերներից նա, ում հավանում էր Կատյան: Մյուս ընկերը միայնակ վերադառնում է Հայաստան: Չկա մտերիմ ընկերը... Յրվում են պատրանքները...

Աշնանը մեկնեցի Լենինգրադ՝ նկարահանող խմբին ավելի մոտ լինելու համար: Ֆիլմի երաժշտական դրամատուրգիայի ձևավորման ընթացքում օգտագործել են լայտթեմատիզմի սկզբունքը: Լենինգրադի բարբարոսական ոմբակոծման դրվագը փորձել են հնչյունավորել ոչ ստանդարտ ձևով. լարային գործիքների և գոսերի ֆոնի վրա հնչում է Բեթովեյանի «Լուսնի սոնատի» 1-ին

մասի երաժշտությունը (իմ իսկ կատարմամբ): Այդ յուրօրինակ «հոգեբանական հանդիպահյուսության» ներգործության ուժը գերազանցեց մեր սպասելիքները, դրանում համոզվել եմ հետագայում՝ քանիցս ներկա գտնվելով ֆիլմի ցուցադրմանը:

Թվում էր՝ ամեն ինչ արված է. երաժշտությունը Լենինգրադում հաջողությամբ ձայնագրեց Արվիդ Յանսոնն իր նվագախմբի հետ: Եվ հանկարծ Երզնկյանն ինձ մի նոր անակնկալ է մատուցում՝ հայտարարելով, թե մի վալս էլ է պետք՝ Գեղարվեստի ակադեմիայում ավարտական երեկոյի դրվագի համար: Առաջարկեցի օգտագործել ռուս դասականների որևէ վալս, սակայն Երզնկյանը կտրականապես հրաժարվեց հետևել այդ խորհրդին:

Ֆիլմը հանձնելու ժամանակը մոտենում էր, հարկ էր անմիջապես գործի անցնել: Եկանք Մոսկվա, որտեղ 3-4 օրում գրեցի Վալսի պարտիտուրը, որը միառժամանակ հետո Մոսկվայում ձայնագրվեց կինեմատոգրաֆիայի նվագախմբի կատարմամբ:

Այնուհետև Վալսն իր սեփական համերգային կյանքն ունեցավ: Ավելի ուշ, «Կոմունիստ» թերթին 5.08.1980 թ. ուղղած իր նամակում Դ.Բ.Կաբալակին գրում էր. «Ալ. Հարությունյանի Կոնցերտային վալսում լիովին բացահայտվում են ռուս դասական, ապա և խորհրդային երաժշտության ավանդույթները: Հիշենք Չայկովսկու, Գլազունովի, Ռախմանինովի, ինչպես նաև Պրոկոֆիի, Խաչատրյանի, Կարա Կարակի լայնածավալ սիմֆոնիկ վալսերը: Կարելի է միայն ասիտաս, որ մեր օրերում չափազանց քիչ է ծնվում այսպիսի, բառիս ամենաբարձր իմաստով ժողովրդական երաժշտություն»:

Բոլոր այդ տարիներին չէի դադարում մասնակցել Հայաստանի Կոմպոզիտորների միության աշխատանքին, որի վարչության անդամն էի: Թեև շենքի պայմանները բավականաչափ հարմար չէին (մեր միության շենքն այն ժամանակ գտնվում էր Ստալինի պողոտայում), աշխատանքը լի էր աշխույժով, իսկ մթնոլորտն իսկապես ստեղծագործական էր: Հիշարժան է Բաբաջանյանի Տրիոյի վիթխարի հաջողությունը դեռ 1952 թվականին, ինչպես նաև այն միաձայն ու ջերմ ընդունելությունը, որին արժանացավ Է. Հովհաննիսյանի Դաշնամուրային կվինտետը: Ավագ սերնդի կոմպոզիտորները և տաղանդավոր երիտասարդ ստեղծագործողներն աշխատում էին կողք-կողքի՝ բեղմնավոր համագործակցության մթնոլորտում:

1957 թ. հունվարին Կոմպոզիտորների միությունը տեղափոխվեց Դեմիրճյան 25 հասցեում գտնվող վարչական-բնակելի շենքը: Այդ տանը բնակարան ստացա նաև ես: Իմ բնակարանի շքապատշգամբից հիանալի երևում են Արարատի գագաթներն ու ողջ քաղաքը: Նայելով մինչև հորիզոն

ձգվող քաղաքային բնապատկերին՝ հիշում եմ մեր հարազատ հին Երևանը՝ իր նեղլիկ փողոցներով ու մրգատու այգիներով...

Հայաստանի Կոմպոզիտորների միությունը բազմաթիվ հանդիպումներ էր ունենում աշխատավորության և մասնավորապես գյուղի աշխատողների հետ: Համերգային խմբերում ընդգրկվում էին մի քանի կոմպոզիտոր ու կատարող, որպես կանոն մասնավորապես՝ մի երաժշտագետ-համերգավար: Հեռավոր շրջանների ունկնդիրների, նրանց կենցաղի մեծամասամբ պահպանված ավանդակա-նության ու բնության հետ շփվելը զգացմունքների աննկարագրելի ներդաշնակություն էին պարգևում և, անկասկած, լուրջ գործոն էին ներքին հարստացման համար:

Հիշում եմ այն օրը, երբ 30-ականներին հայրս ինձ տարավ Էջմիածնի շրջան, ուր գործուղված էր ծառայության բերումով: Գյուղերի խղճուկ տեսքը ծանր տպավորություն բողեց ինձ վրա: Տարիներ անց մույն շրջանում կառուցապատված գյուղերն ու ավանները տեսնելով՝ անչափ ուրախանում էի, որ տեղի բնակիչների հոգևոր զարգացման պահանջները նկատելիորեն աճել են. գյուղերում պարտադիր էր դպրոցների (հաճախ մաս երաժշտական) առկայությունը, ձևավորվում էր տեղական մտավորականությունը, որի միջուկը գյուղական ուսուցիչներն էին կազմում:

Վաղուց արդեն քննարկվող՝ կոմպոզիտորների միութենական նշանակության Ստեղծագործական տան բացման գաղափարն իրական տեսք ընդունեց 1959 թվականին, երբ սկսվեցին դրա շինարարության համար հարմար տեղի որոնումները: Էդվարդ Միրզոյանի և Հայաստանի երաժշտական ֆոնդի տնօրեն Բաբկեն Սոսյանի հետ մեկնում էինք Աղվերանի, Սևանի ուղղությամբ, ապա ավելի հեռու՝ Դիլիջանի շրջան, հասնելով Պարզ լիճ:

Վերջապես մի հարմար տեղ գտնվեց լեռներում՝ Երևան-Թբիլիսի մայրուղու դիլիջանյան հատվածի մոտակայքում: Որոշ ժամանակ անց, երբ արդեն պատրաստ էր Նախարարների խորհրդի նախագահ Ա.Քոչինյանի որոշումը և ճարտարապետական նախագիծը, իրեն հատուկ եռանդով Սոսյանն սկսեց «Դիլիջան» Ստեղծագործական տան շինարարությունը, որի առաջին համալիրը (10 առանձնատներն ու ճաշարանը) շահագործման հանձնվեց 1963 թվականին:

Այդ հսկայական նախագծի իրականացման ընթացքում բացառիկ դեր ունեցավ Էդվարդ Միրզոյանը: Այդ մեծատաղանդ կոմպոզիտորը, բազմաթիվ հիանալի երաժիշտներ դաստիարակած մանկավարժը երկար տարիներ գլխավորում էր Հայաստանի Կոմպոզիտորների միությունը, ընդ որում՝ աշխատում էր

գերագույն, անմնացորդ նվիրվածությամբ, հաճախ՝ ի վնաս սեփական ստեղծագործական գործունեության: Կազմակերպչական փայլուն ունակությունների ու լայն մտահորիզոնի շնորհիվ նա իրավամբ դասվեց խորհրդային մշակույթի ականավոր գործիչների թվին: Նրա ղեկավարության տարիներին նկատելիորեն աճեց Հայաստանի Կոմպոզիտորների միության հեղինակությունը. այդ միության ստեղծագործական նվաճումներն ըստ արժանվույն գնահատվեցին թե՛ մեր երկրում, թե՛ արտասահմանում:

1960 թվականի իմ ստեղծագործություններից կուզենայի նշել դաշնամուրի համար գրված «Երաժշտական երեք պատկերը»: Ինձ թվում է, որ «պատկեր» բառն առավել ստույգ է բնորոշում այդ պիեսների ժանրը, որոնց թեմատիկ բովանդակությունն արտացոլված է դրանց վերնագրերում («Հովը փչեց լեռներում», «Երեկոն Արարատյան հովտում», «Սասունցիների պարը»):

Երաժշտագետ Շուշանիկ Ափոյանը «Սովետական արվեստ» ամսագրում (1966, N 5) նշում է.— *«Երեք պատկերների» երաժշտությունը հիրավի ժողովրդական է իր ոգով: Նուրբ արվեստագետ լինելով՝ Հարությունյանն ընկալել է մեր ժամանակի շունչը, որը և արտացոլվել է նորարարությամբ լի նրա երաժշտական լեզվի մեջ: Բոլոր երեք մասերին հատուկ են բանաստեղծականությունը, «պատկերավորությունը», ազգային երանգավորումը, երաժշտության զարգացման հնարքների ընդհանրականությունը:*

«Պատկերների» իմ կատարումների ժամանակ մշտական էր ամենատարբեր մակարդակի, այդ թվում նաև արտասահմանյան ունկնդիրների աշխույժ արձագանքը:

Այդ պիեսները նվագել եմ, օրինակ, 1960 թ. ապրիլին Արաբական Միացյալ Հանրապետություն կատարած այցի ժամանակ: Դա թվով երրորդ իմ արտասահմանյան ուղևորությունն էր, որին մասնակցում էր նաև հայտնի հնագետ պրոֆեսոր Բաբկեն Առաքելյանը: Հիշում եմ Կահիրեի Եգիպտա-խորհրդային բարեկամության տանը կայացած հանդիպումը: Դահլիճում հոծ բազմություն էր հավաքվել: Հաճույքով պատասխանում էինք մեզ տրվող բազմաթիվ հարցերին (հիարկե, թարգմանչի օգնությամբ): Բ.Առաքելյանը պատմում էր Հայաստանի, նրա ճարտարապետական վեհաշուր կոթողների մասին, իսկ ես՝ մեր երկրի երաժշտական մշակույթի: Վերջում, «Երեք պատկերներից» հետո նվագեցի «Կռունկ» երգի թեմայով իմ իմպրովիզացիա-ֆանտազիան, ապա՝ Սպենդիարյանի «Ղայթարման» ու «Էնզելին»: Մեր ելույթների այս նույն տարբերակը պահպանում էինք նաև հետագա հանդիպումների ընթացքում:

Կահիրեի համալսարանն այցելելուց հետո գնացքով մեկնեցինք Լուստր, որտեղ դիտեցինք Մեռյալների հովիտը, դամբարաններն ու տաճարները: Եղանք նաև Ալեքսանդրիայում, ուր ևս հայկական համայնք կա: Մինչև օրս

աչքերիս առջև է լռակյաց, վեհաշուք բուրգերի ֆոնի վրա մայր մտնող արևի
հսկայական սկավառակի աներևակայելի տեսարանը...

Յոթերորդ օրը թռանք Դամասկոս, որտեղ մեզ դիմավորելու էին եկել
սիրիացի հայերը. նրանք մեծ ափսոսանքով ընդունեցին այն լուրը, որ չենք
կարող գոնե մի երկու օր մնալ իրենց մոտ, քանի որ ծրագրված էր մահ
այցելություն Լիբանան: Եվ ահա մեքենաների շարքն ուղևորվեց դեպի Բեյրութ:
Քիչ անց արդեն մտանք «արևելյան Փարիզ», ինչպես կոչում են իրենց քաղաքը
բեյրութցիները:

Շատ հուզիչ էր «Բաղրամյան» երիտասարդական կազմակերպության
անդամների հետ հանդիպումը: Համեմատաբար փոքր դահլիճում տեղ չգտնվեց
բոլոր ցանկացողների համար: Շատ մարդիկ լսում էին համերգը՝ բեմի
հարևանությամբ գտնվող պատուհանների ճաղերից այն կողմ կանգնած:
Այնքան լավ են հիշում կարոտով լի այդ դեմքերը, աչքերը... Նվագելու
ընթացքում վնասեցի բութ մատս, սակայն չէի կարող կանգ առնել: Գործիքը
շատ հիմ էր, և մատս կտրեցի կտրոված ստեղներից մեկի սուր ծայրով:

Ամենազարմանալիմ դեռ առջևում էր. համերգից հետո մի քանի
երիտասարդ մտեցան դաշնամուրին և սկսեցին պոկոտել ստեղները, որոնց
վրա մնացել էին արյան հետքեր (երևի որպես «հիշատակ»): Առանց այն էլ
«հալից ընկած» դաշնամուրն այդպիսով վերջնականապես կործանվեց...

Հայկական ընկերությունում կազմակերպված պաշտոնական ընդու-
նեություն ժամանակ ինձ հանձնվեց ոսկե մեդալ, որը խմամբով պահում են
մինչև օրս:

Կուզենայի պատմել «անմիջական մթնոլորտում» անցկացված մի
հանդիպման մասին, որ կազմակերպել էր Նիկիտա Սերգեևիչ Խրուշչովը
Մոսկվայի մերձակայքում գտնվող «Սեմյոնովկա» կառավարական ամա-
ռանոցում՝ ստեղծագործող մտավորականության ներկայացուցիչների համար:
Այդ հանդիպմանը մասնակցում էինք ես ու տիկինս:

Արևոտ օր էր, ամեն ինչ կարծես տրամադրում էր անհոգության ու
ուրախության: Հյուրեր էին գալիս միութենական բոլոր հանրապետու-
թյուններից, այստեղ էր խորհրդային մտավորականության ողջ սերունդը՝
Էրենբուրգ, Շուլխով, Բոնդարչուկ, Օւլովա և Ալեքսանդրով, Գերասիմով և
Շահինյան... Բացի Խրուշչովից, հանդիպմանը ներկա էին մահ Միկոյանը և
կառավարության այլ անդամներ: Շատրվանների խշշոցին զուգահեռ
անկաշկանդ զրույցներ էին ծավալվում հյուրերի և երկրի ղեկավարների միջև:

Այդ ամենն ավարտվեց հատուկ տաղավարում կազմակերպված,
ամմտորեն ճոխ ճաշով. մատուցողների մի շարքն անընդմեջ նոր ուտեստներով
լի սինիներ էր բերում, իսկ մյուսը՝ տանում էր դատարկները, և այդ

«հոսքագիծը» ոչ մի վայրկյան կանգ չէր առնում: Չգիտեմ՝ եզիպտական փարավոններն արժանանո՞ւմ էին նման սպասարկման...

Ճաշից առաջ, դիմելով ներկա գտնվողներին, Խրուշչովը գրականության և արվեստի գործիչներին կոչ արեց ժողովրդի համար ստեղծել սոցիալիստական ռեալիզմի ոգուն հավատարիմ գործեր...

Խնջուլքի թեժ պահին բացօթյա բեմ ելավ ինքը՝ Սվյատոսլավ Ռիխտերը, և դանակ-պատառաքաղների ու բաժակների աներևակայելի զրնգոցի մեջ հնչեց Ռախմանինովի աստվածային երաժշտությունը: Այնուհետև, ճաշատեսակների անվերջ հերթափոխությանը զուգընթաց ելույթ ունեցավ այն ժամանակ տակավին երիտասարդ պարուհի Եկատերինա Մաքսիմովան...

Այդ ամենն ուղղակի զարհուրելի էր: Տուն էի վերադառնում ընկճված տրամադրությամբ...

Առնոն վաղուց արդեն խոսում էր 2 դաշնամուրի համար ևս մի ստեղծագործություն գրելու մասին: Մենք այն ստեղծեցինք 1962 թ. Հայաստանի Կոմպոզիտորների միությունում իրար հանդիպելով, քանի որ երկու գործիք էր պետք: Նոր երկը կոչեցինք «Տոնական»։ այն բավական կարճ էր տևողությամբ, սակայն աշխույժ ու թրթռուն: Ի տարբերություն մեր «Հայկական ռապսոդիայի», այստեղ հարվածայինների ոչ մեծ խմբի մասնակցություն էր նախատեսված: Ստեղծագործության մեղեդիական ոլորտը և մետրառիթմիկան որոշ չափով շեշտադրված էին:

«Տոնականն» առաջին անգամ հնչեց Հայաստանի Կոմպոզիտորների միության դահլիճում: Հետագայում Առնոյի հետ բազմիցս նվագել ենք այդ ստեղծագործությունը տարբեր քաղաքներում:

Միտքս է գալիս 1972 թ. Ալմա-Աթայում Ասիայի երկրների երաժշտությանը նվիրված համաժողովը: Մենք պիտի ելույթ ունենայինք այդ նշանակալի միջոցառման ծրագիրը եզրափակող համերգի վերջում: Նվագում էինք «Հայկական ռապսոդիան», ապա՝ «Տոնականը» (հարվածային գործիքներով հանդես եկան մեզ հետ Հայաստանից ժամանած երաժիշտները): Հաջողությունն ակնհայտ էր. համերգից հետո արտիստական սենյակում մեզ շրջանի մեջ առան երաժշտության սիրահարները: Միրունատես մի տիկին, որ, ինչպես պարզվեց, Ղազախստանի մշակույթի նախարարի տեղակալն էր, մեզ ներկայացրեց Ստամբուլի կոմսերվատորիայի ռեկտորին, որը թարգմանչի միջոցով մեզ բառացիորեն ասաց հետևյալը. «Կարո՞ղ էի արդյոք պատկերացնել, որ փոքրիկ Հայաստանն ի գորու է ծնելու այսպիսի առաջնակարգ կոմպոզիտորներ ու հիանալի կատարողներ: Ուզում եմ արտահայտել իմ անկեղծ հիացմունքը»: Ապա մեզ տվեց իր այցեքարտը, նշելով, որ ամեն պահի ուրախ կլինի մեզ տեսնել Ստամբուլում՝ իր տանն ու կոմսերվատորիայում:

Այդ տարիների արտասահմանյան ուղևորությունները, տպավորություններն ու խոհերը քիչ դեր չունեցան իմ նոր՝ «Ասք հայ ժողովրդի մասին» վոկալ-սիմֆոնիկ շարքի ստեղծման հարցում: Այդ քառամաս պոեմի յուրաքանչյուր հատվածին նախորդում է ասնունքողի կողմից ներկայացվող մի քառյակ (Ս. Կապուտիկյանի և Գ. Էմինի բանաստեղծություններից):

1-ին մասը («Լքված օջախներ») վերարտադրում է ժողովրդի տառապանքը: Այդ մասի բանաստեղծական տեքստը հանգում է «Վայ, լե» ողբերգական բացականչության, որը ժողովրդի վշտի յուրահատուկ խորհրդանիշ է: 2-րդ մասը («Կրակի բովով») գուտ նվագախմբային միջնամվագի ձև ունի: Նրա զարգացումը լի է դինամիզմով և արտահայտում է բողոքի, պայքարի, ժողովրդի անսասան ոգու գաղափարը: Այդ դրվագում օգտագործել են հայկական ժողովրդական «Մանիր, մանիր իմ ճախարակ» երգի ինտոնացիաները: 3-րդ մասում («Պանդուխտի երգը») անօթևան ճամփորդը երգում է իր մենության, հայրենիքի կարոտի մասին: 4-րդ, եզրափակիչ մասը «Երգ հայրենի երկրի» են կոչել: Լուսավոր երաժշտությունն այստեղ ծառայում է հայրենիքի գովերգման գաղափարին:

Այն ժամանակ մասերի նշված հարաբերակցումն ինձ օրինաչափ էր քվում, սակայն այսօր այդ բեմային թերևս փոքր-ինչ այլ կերպ կմոտենայի՝ չտրոհելով պոեմն առանձին դրվագների:

«Ասք հայ ժողովրդի մասին» շարքն առաջին անգամ կատարվել է 1961 թվին Երևանում Մ. Մալունցյանի ղեկավարությամբ: Հաջորդ տարվա փետրվարին այն հնչեց Հայաստանի Կոմպոզիտորների միության Հինգերորդ համագումարում: «Կոմունիստ» թերթին տված իր հարցազրույցում (22.02.1962) Օթար Թաքթաբիշվիլին նշել է. «Ամենամեծ տպավորությունս կապված է Ալ. Հարությունյանի «Ասք հայ ժողովրդի մասին» պոեմի հետ: Կյանքով լի, տաղանդավոր, խորունկ երաժշտության անզուգական էջեր պարունակող ստեղծագործություն է»:

1962 թ. մարտին պոեմը հնչեց Մոսկվայի կոնսերվատորիայի Մեծ դահլիճում, ԽՍՀՄ Կոմպոզիտորների միության Երրորդ համագումարի շրջանակներում կազմակերպված համերգի ընթացքում: Դիրիժորն էր Աբրամ Ստասկիչը: Իր երգչախմբի հետ մեծ աշխատանք էր տարել Ալեքսանդր Յուլյովը: «Պանդուխտի երգը» հիանալի կատարեց Վահան Միրաքյանը: Մեծ հաջողությամբ հանդես եկան բոլոր երաժիշտները:

Համագումարի ժամանակ Դ.Շոստակովիչն իր ելույթում մասնավորապես ասաց. «Շատ հավանեցի Ալ. Հարությունյանի «Ասք հայ ժողովրդի մասին» վոկալ-սիմֆոնիկ պոեմը: Ստեղծագործությունն աչքի է ընկնում իր հուզականությամբ, այն հետաքրքիր է և գրված է սրտից բխող անհուն ջերմությամբ,

ակնհայտ վարպետությամբ: Մա մեծ քայլ է Ալ. Հարությունյանի ստեղծագործական գործունեության մեջ» («Պրավդա», 30.03.1962):

«Ասքի» հետագա կատարումներից չեմ կարող չառանձնացնել մեկը, որն ինձ հատկապես մեծ հուզմունք պատճառեց: 1967 թ. Հայաստանում անց էր կացվում բուլղարաբնակ հայերի ինքնագործ արվեստի տասնօրյակը: Բուլղարական Ռուսե քաղաքի 200 հոգուց բաղկացած երգչախումբը Հայաստանի սիմֆոնիկ նվագախմբի հետ հաջողությամբ կատարեց Պոեմը: Դիրիժորի վահանակի առջև էր բուլղարացի հանրահայտ երաժիշտ Ալեքսանդր Վլադիգերովը: Նույն տարում «Ասքը» հնչեց նաև Բուլղարիայում Հայկական երաժշտության օրերին նվիրված համերգներից մեկի ժամանակ:

Սակայն դառնամ 60-ականների սկզբին:

1961 թ. աշնանը հայ երաժիշտների և կոմպոզիտորների մի խումբ մեկնեց Հունգարիա՝ հայկական երաժշտության օրերին մասնակցելու: Խմբի կազմում էին Կոմիտասի անվան քառյակը, երգիչներ Գոհար Գասպարյանն ու Նար Հովհաննիսյանը, դաշնակահարուհի Էլեոնորա Ոսկանյանը, Առնո Բաբաջանյանն ու ես: Խմբի ղեկավարը Մամսոն Գասպարյանն էր:

Մեկնումից մեկ օր առաջ ես ինձ վատ էի զգում, բայց, նշանակություն չտալով դրան, որևէ մեկին ոչինչ չասացի: Բուդապեշտի ֆիլհարմոնիայի դահլիճում առաջին համերգից հետո վիճակս է՛լ ավելի վատացավ և ինձ հիվանդանոց տարան: Չափազանց տհաճ էր դա, մանավանդ որ հաջորդ օրը պիտի կատարվեր «Հայրենիք» կամուտաղ:

Ինձ այցելության եկած Առնոն պատմեց, թե Կամուտաղը հունգարերեն էր երգել Չուլտան Կոդայի անվան երգչախումբը և համերգին ներկա էր եղել ինքը՝ Կոդայը, որը հարցրել էր իմ մասին և ցավել պատահածի համար:

Իմտենսիվ բուժումից հետո, հիմնգերորդ օրը դուրս գրվեցի հիվանդանոցից, և մեր համերգները շարունակվեցին Հունգարիայի մյուս քաղաքներում:

Այդ շրջագայության ընթացքում մի այսպիսի դեպք էլ եղավ: Հերթական համերգից առաջ, փորձասենյակում դաշնամուրի առջև նստած Առնոն մի հատված էր նվագում իր նոր հորինած «Կամուրջներ, կամուրջներ» երգից: Այդ պահին դռան հետևից հայտնվեց շիկակարմիր մազերով ու դեմքի չափազանց տհաճ արտահայտությամբ մի տղամարդ: Ես արագ մոտեցա դռանը, նա հարցրեց. «Բաբաջանյանն այստե՞ղ է»: «Այդ ազգանունը ձեզ ինչո՞ւ է հետաքրքրում»,— նրա հարցին հարցով պատասխանեցի ես: «Ուզում եմ իմանալ, արդյոք Բաբաջանյանը այն մարշալ Բաբաջանյանի ազգականն է, որն իր տանկային զորամասերով դաժանաբար ճնշեց Բուդապեշտի ապստամբությունը»:

Անմիջապես հասկացա, թե Առնոյի գլխին ինչ ամպեր են կուտակվում և պատասխանեցի՝ ոչ, նա ընդամենը ազգամկակից է: «Փառք Աստծո, որ այդպես է», – ասաց այցելուն ու հեռացավ:

Անկասկած, Առնոն զերծ մնաց շատ մեծ տհաճություններից, քանի որ ընդամենը հինգ տարի էր անցել մեզ համար տազմապալի ու ամոթալի իրադարձություններից, իսկ մարշալ Բաբաջանյանն իսկապես նրա հեռավոր ազգականն էր:

Այդ միջադեպի ընթացքում ոչ մի բան չկասկածող Առնոն շարունակում էր նվազել...

ԽՍՀՄ-ում և արտասահմանում ուղևորությունների ընթացքում սիրով օգտագործում էի պատկերասրահներ այցելելու բոլոր առիթները: Գեղանկարչության նկատմամբ իմ սերն առաջացել էր դեռևս Սարյանի տան հաճախակի այցելություններից: Բաց չէի թողնում նաև Երևանում հայ նկարիչների բազմաթիվ ցուցահանդեսները:

Բնականաբար, իմ շրջապատում կային նկարիչներ, որոնց հետ առանձնապես հաճախ էի շփվում:

Դեռևս Մոսկվայում մեր կատարելագործման տարիներին հանրակացարան մեզ հյուր էր գալիս Երվանդ Քոչարը՝ տաղանդավոր նկարիչ, քանդակագործ և շատ ինքնատիպ մի անձնավորություն: Չնայած տարիքային տարբերությանը՝ մենք ընկերացանք: Հետաքրքիր շատ բան էր պատմում իր կյանքի փարիզյան ժամանակահատվածի մասին: Եվ ամեն անգամ մեր սենյակում հնչում էր նրա հետևյալ արտահայտությունը. «Անիծվի՛ այն օրը, երբ գնացի Փարիզ, նաև այն օրը, երբ հետ եկա Փարիզից»... Երբ 1959 թ. կայացավ նրա «Սասունցի Դավիթ» արձանի՝ այդ անմահ, վեհապանծ կոթողի բացումը, նրա արվեստանոցում եղածու ժամանակ ասացի, թե մնան զլուխգործոց նա կարող էր ստեղծել միայն հայկական հողի վրա:

Բախտ են ունեցել պատկերվելու Քոչարի ձեռքով: Նրա մահից մի քանի տարի առաջ էր: Շուտ էր հոգնում. դիմանկարը պատրաստ էր 20 սեանսից հետո միայն: Իմ կարծիքով, այդ դիմանկարը հետաքրքիր է ոչ այնքան արտաքին մանուկամբ, որին ոմանք առաջնահերթ նշանակություն են տալիս, որքան կատարման զեղանկարչական վարպետությամբ: Այժմ այդ նկարը Լոնդոնում է, աղջկա՝ Նարինեի, տանը:

Չեմ կարող չհիշել տաղանդավոր փորագրանկարիչ Վլադիմիր Այվազյանին, որի հետ ծանոթացել եմ դեռևս 1939 թ.: Այն ժամանակ նա ապրում էր կիսանկուղային սենյակում, ծանր կարիքի մեջ: Իսկ 60-ականների վերջերին նրա աշխատանքները ցուցադրվում էին Սիուրյան ողջ տարածքում:

Նրա փորագրանկարները գրավում են կենսականությամբ ու մի տեսակ առանձնահատուկ բանաստեղծականությամբ:

Մինասի հետ ծանոթացա, երբ նոր էր տարածվում նրա համբավը: Հանրածանոթ են բալետային ներկայացումների համար ստեղծված նրա էսքիզները: Ինձ միշտ զարմանք է պատճառել Ջաջուռի գեղջկական ընտանիքից սերած այդ տղան, որն այդքան կարճ ժամանակահատվածում համընդհանուր ճանաչման արժանացավ: Մինասն աստվածատուր երևույթ է՝ միայն իրեն հատուկ կոլորիտի զգացողությամբ: Շատ էր սիրում երաժշտություն և հաճախակի գալիս էր սիմֆոնիկ համերգների:

Մի անգամ ֆիլիարմոնիայի ճեմասրահում նա մոտեցավ ինձ ու ցանկություն հայտնեց ստեղծելու իմ դիմանկարը: Ի տարբերություն մյուս նկարիչների, նկարում էր լուռ, առանց հարցեր տալու: Երեք սեանսից հետո դիմանկարը պատրաստ էր, և Մինասն այն նվիրեց ինձ: Այդ նկարն իմ աշխատասենյակի զարդն է մինչև օրս:

Ընկերություն էի անում նաև նկարիչ Խաչատուր Եսայանի՝ կիրթ ու շատ անմիջական, երաժշտասեր մի մարդու հետ: Նրա նկարչությունը նորարարության չէր հավակնում, սակայն դրանում որոշակի տրամադրության առկայությունը ինձ շատ հոգեհարազատ էր: Ծնունդով կարսեցի էր, հաճախ էր հիշում իր հայրենի հողը, և նրա արվեստանոցում Կարսի ամրոցը պատկերող նկարներ էի տեսնում:

Ուզում եմ հիշատակել նաև օժտված նկարիչ Ալեքսանդր Գրիգորյանի հետ ինձ համար միշտ հաճելի շփումների մասին (Դեմիորձյան փողոցի մեր տները կողք-կողքի են կանգնած): Իմ կնոջ՝ Իրինայի դիմանկարը, ըստ իս, Ալեքսանդր Գրիգորյանի հիանալի ստեղծագործություններից է:

1963 թ: հունվարին Մոսկվայում Խրեննիկովի քարտուղարուհուց տեղեկացա, որ Ստանիսլավսկու և Նեմիրովիչ-Ղանչենկոյի անվան երաժշտական թատրոնում անցկացվելու է Շոտակովիչի «Կատերինա Իվնայովա» օպերայի նոր բեմականացման դիտում: 1935 թվականի տխրահռչակ «Երաժշտության փոխարեն՝ խառնաշփոթ» հոդվածից հետո, այդ օպերան (որ այն ժամանակ հայտնի էր որպես «Մցենի գավառի լեդի Մակբեթ») հանվել էր խաղացանկից և փաստորեն արգելված էր: Իսկ այժմ պիտի նոր կյանքի իրավունք ստանար...

Եվ ահա նստած եմ թատրոնի դահլիճում: Սկսվում է երաժշտական գործողությունը... Չեմ պատրաստվում վերարտադրել այդ ստեղծագործության զարգացման բոլոր փուլերը: Կասեմ միայն, որ օպերայի երաժշտական մարմնավորման աշխատանքն ամենաբարձր մակարդակով իրականացրել էր դիրիժոր Գեմադի Պրովատորովը: Կատերինայի դերերգը կատարում էր թատրոնի առաջատար երգչուհի Է. Անդրեևան: Ժամանակը ցույց տվեց, որ նա այդ

ղերերգի լավագույն կատարողներից մեկն էր թե՛ վոկալի, թե՛ բեմական մատուցման առումով: Իսկ երբ օպերայի վերջում հնչեց քարոյալների հոգեցունց խմբերգը, անհնար էր գապել արցունքները: Իմ կողքին նստած Լիտինսկին ժամանակ առ ժամանակ կրկնում էր. «Հանճարեղ է, հանճարեղ...»:

Հենց դահլիճում տեղի ունեցավ բեմականացման քննարկումը, որը վարում էր Դ.Կաբալսակին: Հեղինակի հասցեին գովասանքի խոսքեր էին հնչում: Շոտսակովիչի դեմքն արտացոլում էր նրա ապրումները, և նա հաճախ ծածկում էր այն ձեռքով: «Այսպես կարող է զգալ ծնողն իր սիրելի զավակի երկրորդ ծննդյան ժամանակ», – մտածեցի ես: Հետո խոսք խնդրեցի: Միգուցե իմ ելույթը չափից ավելի պոռթկուն էր ու զգացմունքային: Այն ավարտեցի հետևյալ հարցով. «Ինչպե՞ս կարելի էր նման մարգարիտը պահել այդ նողկալի որոշման գոմաղբի մեջ»: Մինչև օրս աչքերիս առջև են ներկաների երկյուղած հայացքները. «Հանկարծ էլի մի բան չպատահի...»:

Շոտսակովիչը քննարկման ժամանակ զուսպ էր՝ հավանաբար բարոյական մեծ ջանքերի շնորհիվ: Բոլորին շնորհակալություն հայտնելով ելույթների համար՝ ասաց. «Երախտապարտ եմ բարեկամներիս ու գործընկերներիս, որոնք եկան օպերայի կենսակոչման այս ուշացած արարողությանը մասնակցելու»:

Ներքևում, հանդերձարանում մոտեցա Շոտսակովիչին, գրկեցի ու համբուրեցի նրան, իսկ նա թե՛ «Կոտիկ, սիրելիս, ես անչափ շնորհակալ եմ Ձեր ելույթի համար, բայց արդյոք չափից ավելի համարձակ չէի՞ն Ձեր խոսքերը»: Պատասխանեցի, որ քնավորությունս չեմ կարող փոխել:

Ինչպես արդեն նշել եմ, 1963 թ. իր դռները բացեց Դիլիջանի Ստեղծագործական տունը: Դրան մեծապես նպաստեցին ԽՍՀՄ Կոմպոզիտորների միության ղեկավարությունը, անձամբ Տիխոն Խրեննիկովն ու նրա տեղակալ Սերգեյ Ակսյուկը: Եվ իհարկե՝ Էդվարդ Միրզոյանն ու Բաբկեն Սոսյանը:

Առաջին իսկ ամռանը այստեղ հանգստանալու և աշխատելու եկավ Դմիտրի Շոտսակովիչը: Նրան հատկացվեց N 8 առանձնատունը՝ ճաշարանի հարևանությամբ: Այդ տարի իմ ընտանիքի հետ Ստեղծագործական տանն էի մաս ես, աշխատում էի «Մայաք-Նովա» օպերայի 1-ին գործողության վրա: Մեծանուն աշուղին և բանաստեղծին մվիրված օպերա ստեղծելու միտքը վաղուց էի փայփայում: Երիտասարդ տարիներիս ինձ մեծ հուզմունք էին պատճառում նրա երգերը, հատկապես Արմենակ Տեր-Աբրահամյանի անկրկնելի կատարմամբ:

Մի առիթով Խաչատրյանն ինձ ասաց, թե մտադիր է օպերա գրել Մայաք-Նովայի մասին, և այդ պահին հասկացա, որ պիտի հրաժարվեմ իմ երազանքից: Իսկ երբ Արամ Իլյիչն սկսեց աշխատել «Սպարտակի» վրա, մի

անգամ հարցրի նրան՝ իսկ «Մայաթ-Նովան»: Հետևեց նրա կարճ պատասխանը.— «Սպարտակը» հաղթեց:

Ապա ավելացրեց. «Մտածում եմ՝ գուցե դո՞ւ գրադվես այդ թեմայով»:

Անցավ մի քանի տարի: Գրում էի նորանոր ստեղծագործություններ, սակայն օպերայի մասին միտքը հանգիստ չէր տալիս: Հույս ունեի, որ վոկալ կանտատային-օրատորիալ և սիմֆոնիկ ժանրերում, ինչպես նաև թատերական և կինոերաժշտության բնագավառներում ձեռք բերած իմ փորձը բավարար հիմք կդառնա օպերայի առանձնահատուկ ժանրին դիմելու համար:

Մեծագույն հուզմունքով ու հոգու թրթռով սկսեցի աշխատել օպերայի վրա: Շատ լավ էի հասկանում այդ խնդրի ողջ բարդությունն ու պատասխանատվությունը: Օպերայի ստեղծման ընթացքում փորձել եմ վերարտադրել երկարուձիգ տարիների իմ խոհերը, որոնումներն ու հույսերը: Ձգտելով գտնել Մայաթ-Նովայի երգերի ընդհանուր ոգուն, բնույթին, ոճին առավել համապատասխանող ինտոնացիոն լեզու, հարմոնիաներ, թեմատիկ զարգացման եղանակներ՝ բազմաթիվ ու բազմապիսի տարբերակներ եմ մշակել:

Իմ լիբրետիստն էր շնորհալի երաժիշտ և գրող Հակոբ Խանջյանը: Երկար տարիներ նա օպերային թատրոնի նվագախմբի կոնցերտմայստերն էր և հիանալի գիտեր օպերային խաղացանկը: Նրա լայն մտահորիզոնն ու նկատելի գրական օժտվածությունն ինձ վստահություն էին ներշնչում կատարված ընտրության ճշտության նկատմամբ: Պիտի ասեմ, որ այլ լիբրետոներ էլ էին առաջարկվել, սակայն դրանք, ցավոք, շատ հեռու էին օպերայի ժանրային առանձնահատկությունից:

... Իլիլջանում աշխատում էինք չխանգարել Շոտակովիչի հանգիստն ու ամենօրյա աշխատանքը: Ջրոսնելիս երբեմն ինքն էր առաջարկում մի փոքր հեռու՝ անտառի կողմը գնալ: Դուրս էր գալիս տնից մարզական կոշիկներով, քայլելիս հենվում էր ծառից պոկված ամուր ճյուղի վրա: Այդպիսի հանդիպումներից մեկի ժամանակ նա ասաց, թե լսել է օպերայի վրա աշխատելու մասին և ցանկություն հայտնեց ծանոթանալու արդեն արվածին:

Իրեն ներկայացված նյութը (1-ին գործողությունը և նոր սկսված պարտիտուրի մի քանի էջերը) դուր եկավ նրան: Իմ այն հարցին, թե օպերայի հյուսվածքի մեջ Մայաթ-Նովայի երգերի ներմուծումն արդյոք «հեշտ ուղու ընտրություն» չի համարվի, նա առարկեց. «Նայած թե ստեղծագործական ինչ մոտեցմամբ դա կիրականացվի»: Ապա մի շարք օրինակներ բերեց դասականներից:

Շոտակովիչին հայտնեցի, որ Մայաթ-Նովայի 250-ամյակին նվիրված հանդիսավոր նիստ է ծրագրվում անցկացնել և որ Կոմկուսի Կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար Յա. Ջարոբյանը նպատակահարմար է գտել իմ օպերայի 1-ին գործողությունը ներկայացնել նիստի մասնակիցներին:

Շոտակովիչը կտրականապես դեմ արտահայտվեց այդ գաղափարին, համեմատելով դա այն գրքի հետ, որի միայն առաջին գլուխն է գրված, իսկ թե ինչ է լինելու հետո, հայտնի չէ: «Խորհուրդ չեմ տալիս Ձեզ նման բան անել», — ասաց նա:

Բայց, ըստ երևույթին, թեկուզ 1-ին գործողությունը կենդանի հնչողությամբ, դեկորացիաներով և բեմական զգեստներով տեսնելու գալթակղությունը դիմանալն ուժերիցս վեր էր: Եվ ահա, մեծ աշտուղի հորեյանին նվիրված հանդիսավոր նիստի օրը՝ 1963 թ. հոկտեմբերի 27-ին, տեղի ունեցավ դրա ցուցադրումը, որը ուղիղ հեռարձակմամբ հաղորդվեց հեռուստատեսությամբ: Ներկայացման մեջ հանդես եկան Վահան Միրաքյանը (Մայաթ-Նովա), Տաթևիկ Սազանդարյանը (Աննա) և առաջատար այլ արտիստներ, դիրիժոր Արամ Զաքանյանը:

Հազար անգամ իրավացի էր Շոտակովիչը: Ինքս էլ զգացի մեկ, ընդհանուրից մասնատված գործողության ցուցադրման աննպատակահարմարությունը. այն կարծես «օդում կախված» լիներ: Այդ անբավարարվածությունը պատճառ դարձավ, որ դրան հաջորդած մի քանի տարիներին չանդրադառնամ իմ այդքան սիրելի թեմային:

Նույն 1963 թ. Ֆրանսիայում անցկացվեցին հայաստանյան օրեր և այդ կապակցությամբ Ֆրանսիա մեկնեց տարբեր ժամերը ներկայացնող արտիստների մի մեծ խումբ, որի կազմում էին Առնո Բաբաջանյանը, Վահան Միրաքյանը, Ժան Տեր-Մերկերյանը, Արև Բաղդասարյանը և ուրիշներ: Առաջին համերգը կայացավ նոյեմբերի 7-ին Փարիզի հանրահայտ «Պլեյել» դահլիճում: Ունկնդիրների ճնշող մեծամասնությունը տեղաբնակ հայեր էին, որոնք առանձնահատուկ ջերմությամբ էին ընդունում յուրաքանչյուր համարը: Նոյեմբեր ամսվա ընթացքում եղանք Ֆրանսիայի 16 քաղաքներում, իսկ եզրափակիչ համերգը կրկին կայացավ Փարիզում, 3000 տեղանոց «Մյուտյուալիտե» դահլիճում: Ու նորից՝ անմոռանալի հանդիպումներ հայրենիքից հեռու ապրող մեր հայրենակիցների հետ: Անկեղծ երախտագիտությամբ պիստի հիշատակեմ Ադասի Դարբինյանին՝ ձայնասկավառակների խանութի սեփականատիրոջը, նրբանկատ, ուշադիր մի մարդու, որը մեզ դիմավորեց Փարիզում և մեր հավատարիմ ուղեկիցն էր ողջ շրջագայության ընթացքում:

Ֆրանսիայի այս այցելությունը չափազանց օգտակար էր նրա պատմությանը և հարուստ մշակույթին ծանոթանալու իմաստով: Իհարկե, այն տարիներին չէի կարող ենթադրել, թե այդ երկրի հետ իմ կապերը խորանալու են՝ ամեն անգամ լցվելով նոր բովանդակությամբ:

60-ականները Հայֆիլիհարմոնիայի գործունեության նոր վերելք նշանավորեցին: Կազմակերպվում էին բազմաթիվ փառատոներ, հայկական

երաժշտության տասնօրյակներ և շաբաթներ ինչպես Հայաստանում, այնպես էլ ԽՍՀՄ հանրապետություններում: Հիշատակելի են 1964 թ. Էստոնիայում հայաստանյան օրերին նվիրված խոշոր միջոցառումները: Էստոնիայի Կոմկուսի կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար Ի. Կեքինը Տալլինում ջերմորեն ողջունեց «լեռնային հրաշք-երկիր Հայաստանի պատվիրակներին»: Այստեղ Օհան Դուրյանի ղեկավարած նվագախմբի հետ ես նվագեցի իմ Կոնցերտինոն: Եղանք նաև Տարտուում, այն համալսարանում, ուր սովորել էր Խաչատուր Արովյանը:

1967 թ. հունվարին Լիտվայում կազմակերպված հայաստանյան օրերը վերածվեցին լիտվական հողում արվեստի իսկական մեծարման ու տոնախմբության: Մեծ տպավորությունների հետ է կապված նաև 1968 թ. ամռանը Մոլդավիայում Հայկական օրերի հիմնալի միջոցառումը:

Հաճախ ինքս ինձ հարցնում եմ՝ արդյոք այդքան անհրաժեշտ էին այդ կարգի «մշակութային փոխներթափանցման հանդիսությունները» (դրանք այն ժամանակ հենց այդպես էին կոչվում): Եվ կրկին ու կրկին համոզվում եմ, որ դրանք, անկասկած, հարստացնում էին բոլորին, նույնքան անհրաժեշտ էին, ինչպես արյան բնական շրջանառությունը, առանց որի կենդանի օրգանիզմը չի կարող զարգանալ:

60-ականների սկզբին սկսեց գործել Երևանի «Դպրոցականի ֆիլիարմոնիան», որի աշխատանքի արդյունքում հազարավոր աշակերտներ հնարավորություն ստացան ծանոթանալու երաժշտությանը՝ նրա բոլոր տատեսակներով հանդերձ: Այդ գործում չափազանց կարևոր էր «Դպրոցականի ֆիլիարմոնիայի» տնօրեն Իզաբելա Ղարազյոզյանի ներդրած հսկայական աշխատանքը, ստեղծագործական հմարամտությունը և հոգու ջերմությունը: Համերգ-զեկուցումները վարում էին փորձառու մասնագետներ Եվգենյա Գիլինան, Արաքսի Սարյանը, Իրինա Տիգրանովան, Ժաննա Զուրաբյանը, Արմեն Բուդաղյանը... Բազմիցս առիթ եմ ունեցել մասնակցելու այդ համերգներին: Մանկական լսարանը երախտագիտությամբ ու մշտական նրբազգացությամբ էր արձագանքում մեր ելույթներին:

1964 թ. կայացավ նոր կոլեկտիվի՝ «Երևան» փողային նվագախմբի դերյուտը, որի ղեկավարվեստական ղեկավարն էր Հայկազ Մեսիայանը: Նրա ծրագրերի լրջության մասին էր վկայում, օրինակ, Չայկովսկու Չորրորդ սիմֆոնիայի ֆինալի կամ «Պիկովայա դամա» օպերայի նախանվագի կատարումը: Անսամբլի նվագացանկում տեղ գտան նաև իմ ստեղծագործությունները՝ Շեփորի կոնցերտը և Կոնցերտ-ֆանտազիան հինգ փողայինների համար: Սիմֆոնիկ պարտիտուրների փոխադրումը փողային նվագախմբի համար իրականացրել է Հ. Մեսիայանը:

1964 թ. մայիսին առաջին անգամ կազմակերպվեց իմ հեղինակային սիմֆոնիկ համերգը: Այն կայացավ Կիևում, Լիսենկոյի անվան ֆիլիարմոնիայի Սյունազարդ դահլիճում: Կիևի ֆիլիարմոնիայի նվագախումբը դեկավարում էր Օհան Դուրյանը: Նա մեծ հուզականությամբ ու խորությամբ կատարեց իմ Սիմֆոնիան և զգացմունքային նկատելի վերելքով՝ «Տոնական նախերգանքը»: Իմ երգերը կատարեց օպերային քատրոնի մեներգչուհի Ելենա Սիբայեյանը՝ արժանանալով ունկնդիրների ջերմագին ընդունելությանը: Ես կատարողական լավ վիճակում էի և բավական հաջող նվագեցի իմ Կոնցերտինոն: Կիևում առաջին անգամ էի լինում և բոլոր այդ օրերին Ուկրաինայի հոյակերտ մայրաքաղաքի ու նրա բարյացակամ ունկնդիրների ջերմ ընդունելության տպավորության տակ էի:

1965 թ. փետրվարին Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինն ինձ հրավիրեց Էջմիածին: Վաղուց ջերմ հարաբերություններ էին հաստատվել մեր միջև: Տիկնոջս հետ ինձ հաճախ հրավիրում էր վեհարան, և մեր զրույցներում մեծ տեղ էր տրվում երաժշտությանն ու արվեստին: Վազգեն Ա-ի վսեմ տեսքը միշտ տրամադրում էր անկաշկանդ շփման: Չնայած հոգևորականի իր բարձր կարգին՝ նրան հատուկ էին աշխարհիկ մարդու գծեր:

Իջնում էր ձմեռային վաղ մթնշաղը, երբ մտա կաթողիկոսարան: Մեր զրույցի ընթացքում նա հիշեցրեց, թե մոտենում է Մեծ Եղեռնի 50-ամյա տարելիցը և ցանկություն հայտնեց, որ այդ առիթով երգչախմբային ստեղծագործություն գրեմ: Այա աշխատասենյակ հրավիրեց մի քահանայի, որն ինձ համար երգեց 11-րդ դարի «Նահատակաց երգը»՝ «Գթա, Տե՛ր»-ը: Ես անմիջապես գրի առա այն նոտային թերթի վրա:

Հաջորդ օրը գործի անցա՝ օգտագործելով մեղեդու թե՛ եղանակը, թե՛ տեքստը: Հարկ է նշել, որ հայկական ոչ բոլոր եկեղեցական երգերն են հեշտությամբ հարմարեցվում երգչախմբային վերարտադրմանը, և տվյալ դեպքում գերդժվար խնդրի առջև հայտնվեցի: Ի վերջո, սակայն, լուծման եղանակը հաջողվեց գտնել: Մեղեդու կառուցվածքը հուշում էր պոլիֆոնիկ հնարքների օգնությանը դիմել, որոնք, իմ կարծիքով, չէին խախտում նրա բնական զարգացումը: Հիմնական նյութի շարադրանքը սկսվում և ավարտվում էր իմ կողմից գրված նախանվագով ու վերջաբանով (ժողովրդական ողբի դարձվածքներ պարունակող երգչախմբային վոկալիզ):

Ստեղծագործությունը Ռեքվիեմ անվանեցի, թեև այն արձատապես տարբերվում է եվրոպական երաժշտության մեջ ընդունված ավանդական բովանդակությունից ու կառուցվածքից: Իմ Ռեքվիեմը պատկերացնում էի որպես ողբի արտահայտություն հարյուր հազարավոր հայերի զոհվելու կապակցությամբ:

Ստեղծագործությունը ներկայացրի Կաթողիկոսին: Նա հայտնեց իր գոհու-
նակությունը և առաջարկեց անցնել Ռեքվիեմի կատարման կազմակերպմանը:

Եկավ ապրիլ ամիսը... Այդ տարիների կարգերի պայմաններում Եղեռնի
մասին հիշատակումն անգամ արգելված էր: Սակայն, ի պատիվ Կենտկոմի
առաջին քարտուղար Զարոբյանի (հետագայում նա ստիպված եղավ պատաս-
խան տալ այդ քայլի համար), օպերային թատրոնում այդ ողբերգական օրվան
նվիրված միտ կայացավ: Ապրիլի 24-ին Էջմիածնի մայր տաճարում պատա-
րագ մատուցվեց ի հիշատակ Եղեռնի զոհերի: Ներկա էին մտավորականու-
թյան բազմաթիվ ներկայացուցիչներ: Հիշում եմ՝ ինչ-որ մեկի փոքրիկ, փոշոտ-
ված մեքենայով եկավ Պարույր Սևակը... Պատարագի վերջում հնչեց իմ Ռեք-
վիեմը: Տաճարից դուրս գալիս տեսա Մարտիրոս Սարյանին, որն ինձ ջերմորեն
ողջունեց: Հաջորդ օրը հրավիրեց անցնել արվեստանոց և իր աշխատանքներից
մեկն ինձ նվիրեց՝ ասելով ընդամենը երկու բառ՝ «Ռեքվիեմի համար»:

Շուտով այդ ստեղծագործությունը հրատարակվեց «Էջմիածին»
ամսագրում:

1965 թ. ուշագրավ իրադարձություններից էր անգլիացի ականավոր կոմ-
պոզիտոր Բենջամին Բրիտտենի ժամանումը Հայաստան հայտնի երգիչ
Պիտեր Պիրսի ուղեկցությամբ: Նրանց հետ եկան նաև Մստիսլավ Ռոստրո-
պովիչը, Գալինա Վիշնևսկայան և կոնցերտմայստեր Ազա Ամինտաևան:
Օգոստոս ամիսը նրանք անցկացրին Դիլիջանի Ստեղծագործական տանը:
Նույն ժամանակ ես էլ էի Դիլիջանում և Էդվարդ Միրզոյանի խնդրանքով
մասնակցում էի հյուրերի ընդունելության հետ կապված բազմաթիվ հարցերի
լուծմանը:

Հյուրերը ժամանեցին օգոստոսի 5-ին: Կանչեցի Ստեղծագործական
տանը հանգստացող երեխաներին ու բոլորս միասին՝ դաշտային ծաղիկների
փնջերով ուղևորվեցինք դեպի դիլիջանյան ճանապարհի առաջին ոլորանը՝
դիմավորելու ավտոմեքենաների թափորը: Բրիտտենն ու Պիրսը շատ
բարեհամբույր ու ժպտադեմ էին և միանգամից դուր եկան մեզ:

Գալստյան երրորդ օրը Բրիտտենն ու Պիրսը իրենց առանձնատանը
«պաշտոնական ճաշկերույթ» կազմակերպեցին, որին մասնակցում էր կոմ-
պոզիտորների ոչ մեծ խումբ: Բրիտտենը ցանկություն հայտնեց ծանոթանալու
մեր ստեղծագործություններին: Հենց տեղում իմացանք, որ Բրիտտենը վոկալ
շարք է գրում Պուշկինի խոսքերով, ընդ որում՝ բնագրի լեզվով, մի բան, որ ինձ
շատ զարմացրեց: Այդ շարքը նա նվիրեց Գալինա Վիշնևսկայային:

Եղանակը բարենպաստ էր, և, առանց երկար-բարակ մտածելու, ճամփա
ընկանք դեպի աղբյուրից այն կողմ գտնվող լեռները և մի հարմար տեղում
ավանդական խորոված պատրաստեցինք մեր հյուրերի համար:



Ռնտանեկան լուսանկար: 1937 թ.: Չախից՝ Ալեքսանդր Հարությունյանը, մայրը՝ Էլենորա Ալեքսանդրովնան, քույրը՝ Իգաբեկան, հայրը՝ Գրիգորի Պետրովիչը:




Երևանի կոնսերվատորիայի կոմպոզիցիայի դասարանում: 1934 թ.: Չախից առաջին շարքում՝ Ղազարոս Սարյան, Առնո Բաբաջանյան, Ալեքսանդր Հարությունյան: Երկրորդ շարքում՝ Վարդգես Տալյան, Սարգիս Բարխուդարյան, Քրիստափոր Քուչնարյան: Երրորդ շարքում՝ Ալեքսանդր Հովհաննիսյան, Աշոտ Սաթյան, Ազատ Շիշյան:



Դաշնամուրի առջև: 1934 թ.:




Ունկնորում Երևանի կոմսերվատորիայի դաշնամուրի ամբիոնում: 1939 թ.: Աջից խորքում մանկավարժներ Ալեքսանդր Դուրխանյանը, Օլգա Բարսայանը, Ռոբերտ Անդրեասյանը և Աննա Մնացականյանը:




Երևանի կոնսերվատորիայի կոմպոզիցիայի դասարանում: 1939 թ.: Չախից նստած՝ Էդվարդ Միրզոյան, Լյուսյա Սաֆարյան, Ալեքսանդր Հարությունյան, Վ.Գ.Տալյան: Կանգնած՝ Արամ Մերանգույան, Սերգեյ Քյուսայան, Արտաշես Խաչատրյան:



Երևանի կոնսերվատորիայի Կ.Ն.Իգումնովի դաշնամուրի դասարանում: 1943թ.: Չախից նստած՝ Օֆելյա Պետրոսյան, Աննա Ամբակունյան, Կ.Ն.Իգումնով, Էլզա Ապրեսովա, Աննո Բաբաջանյան: Կանգնած՝ Ելենա Տեր-Ղևնդյան, Լիլիկ Շամխոռյան, Ալեքսանդր Հարությունյան, Մարիա Ղամբարյան, Յուլիա Պապովյան, Արևիկ Ավդալբեկյան, Մարջան Մյսիֆարյան:



Պրոֆեսոր Կ.Ս. Սարաջևի աշխատասենյակում: 1946 թ.: Զախից՝ Ադամ Խուրդյան, Էդվարդ Սիրգոյան, Կ.Ս. Սարաջև, Արամ Սարունց, Ալեքսանդր Հարությունյան:



КОНЦЕРТНЫЙ ЗАЛ
АРМФИЛХАРМОНΙΑ

2

СИМФОНИЧЕСКИЙ КОНЦЕРТ

Дирижор-засл. деят. иск проф.

Н. С.

САРАДЖЕВ


СОЛЖИТ КОМПОЗИТОР
Н. АРУТЮНЯН

В Программе: Бородин Симф. „Богатырская“
Мотси Арутюнян Ф-п концерт №2, вальс
Э. Морзель...симф., поэма „Лордеса Сала“

Нач в 9 ч. веч.

Билеты проданы

Մինֆոնիկ նվագախմբի հետ Ալեքսանդր Հարությունյանի առաջին ելույթի ազդագիրը: 2 մարտի, 1942 թ.:



1946 թ.: Մոսկվայում Հայաստանի մշակույթի տանը: Չախից՝ Լեվարդ Սիրգոյան, Ալեքսանդր Հարությունյան, Ա.Ի. Խաչատրյան, Առնո Բաբաջանյան, Ադամ Խուդոյան:



1947 թ.: «Ներքող և Քայլերգի»
պրեմիերայից հետո: Դիրիժոր
Ն.Ս.Գուլովանովի հետ:



1947 թ.: Մոսկվայում Հայաստանի մշակույթի տանը: Պրոֆեսոր
Գ.Ի. Լիսինսկու հետ:



Մոսկվա, 1948 թ.: «Հայրենիք» կանտատի պրեմիերայից հետո: Զախից՝
Տ.Ն.Խրեննիկով, Ա.Գ.Հարությունյան, երգչուհի Զարա Դոլուխանովա, դիրիժոր Աբրամ
Ստասևիչ, խմբավար Մարիա Բոնդար:

ЦЕНТРАЛЬНАЯ ГОСУДАРСТВЕННАЯ ОРГАНИЗАЦИЯ ТЕАТРАЛЬНОГО ИСКУССТВА
ФИЛАРМОНИЯ
Р. Фридриха, 8 БОЛЬШОЙ ЗАЛ Тел. 2-10-10

ВТОРНИК **3** МАЯ 1949 г.

Лауреат Сталинской премии **Александр АРУТЮНЯК**

„КАНТАТА О РОДИНЕ“

для хора, солистов и симфонического оркестра

ПОДРОБНОСТИ В АФИШАХ

Լենինգրադում «Հայրենիք» կանտատի կատարման հայտարարությունը: 1949 թ.:



Մոսկվա, 1949 թ.: Ալեքսանդր Ֆադեևը Ստալինյան մրցանակի դափնեկրի դիպլոմ է հանձնում Ալ. Հարությունյանին:



Իրինա Օղենովա: 1940-ականների լուսանկար:



ВТОРНИК
15
НОЯБРЯ 1949 г.

ЛЕНИНГРАДСКАЯ ГОСУДАРСТВЕННАЯ ОРДЕНА ТРУДОВОГО КРАСНОГО ЗНАМЕНИ

ФИЛАРМОНИЯ

Большой зал

ВТОРНИК
15
НОЯБРЯ 1949 г.

ВНЕАБОНЕМЕНТНЫЙ КОНЦЕРТ

СИМФОНИЧЕСКИЙ ОРКЕСТР ФИЛАРМОНИИ

МРАВИНСКИЙ

ЛЕНИНГРАДСКАЯ ГОСУДАРСТВЕННАЯ АКАДЕМИЧЕСКАЯ КАПЕЛЛА

Г. А. ДМИТРЕВСКИЙ

Дирижер-хормейстер Е. П. КУДРЯВЦЕВА

ХОР МАЛЬЧИКОВ ХОРОВОГО УЧИЛИЩА КАПЕЛЛЫ

Руководитель — заслуженный артист СССР П. А. БОГДАНОВ

ЛЕОНИД КОГАН

В. В. ИВАНОВСКИЙ

И. Н. ТЯТОВ

ДРУТОН И БАБАДЖАНИЯ ШОС АНОВИЧ

Праздничная увертюра

Концерт для скрипки с оркестром

Оратория „Лесик о лесях“

Начало концерта ровно в 8 час. 45 мин. вторично

Выпуск программы в 10 час. 30 мин. продолжительность 1 15 час. 30 мин. до 2 час. 15 мин. в 10 часов 30 минут

Լենինգրադ, 1949 թ.: «Տոնական մախերգանքի» պրեսինդրայից հետո: Դիրիժոր Ե.Ա.Մրավինսկու հետ:



Շեփորի կոմպերտի առաջին կատարող Հայկազ Մեսիայանի հետ:

MARCOPHON CD914-2

Scherzo Virtuoso


L. MOZART
HUMMEL
ARUTIUNIAN
SANDOVAL

Timofei Dokshitser: Trompete
Sergej Solodovnik: Klavier

ARTURO SANDOVAL
The Classical Album

LONDON SYMPHONY ORCHESTRA
LUIS HAZA

Շեփորի կոմպերտի կոմպակտ-դիսկերի կազմը: Աջից՝ շեփորահարուհի Տիմոֆեյ Դոկշիցերը և Արտուրո Մանդովկալը:



Պրահա, 1966 թ.: Հնչում է «Հայկական ռապսոդիան» հեղինակներ Առնո Բաբաջանյանի և Ալեքսանդր Հարությունյանի կատարմամբ:

СОЮЗ СОВЕТСКИХ КОМПОЗИТОРОВ СССР	КОНЦЕРТНЫЙ ЗАЛ ДОМА КУЛЬТУРЫ АРМЯНСКОЙ ССР <small>Կոմպոզիտորների և երաժիշտների միություն</small>	ДОМ КУЛЬТУРЫ АРМЯНСКОЙ ССР
Четверг 19 февраля	АВТОРСКИЙ ВЕЧЕР Лауреаты Сталинской премии, композиторы АЛЕНСАНДР	Четверг 19 февраля
АРУТЮНЯН АРНО БАБАДЖАНЯН		
<small>Исполнитель: Молчанов</small> Игорь МОЛЧАНОВ		
Д-р ОЙСТРАХ	С-тислав НИШЕВИЦКИЙ	Я-н СЛОБОДИН
В-ладимир ЗАХАРОВ	А-лександр САБАДАШЕВ	
Г-алина САХАРОВА	В-ладимир ЦАРСКИЙ	
<small>Начало в 8 час. 30 мин. вч.</small>	<small>Вход свободен. В 8 и 10 часов концерты проводятся в зале Дома культуры Армянской ССР. Вход свободен.</small>	

Մտակվայում Ալ.Հարությունյանի և Ա.Բաբաջանյանի հեղինակային երկերի ազդագիրը: 1953 թ.:




Անոն Բարսեղյանի և մարշալ Հ.Բ.Բաղդամյանի հետ:
Երևան, 1964 թ.:



Ավետիք Իսահակյանը հյուրընկալում է գիտության և մշակույթի գործիչներին: 1957թ.:
Չախից՝ Վիկտոր Համբարձումյան, Ալ.Հարությունյան, Վաղարշ Վաղարշյան, Ավետիք
Իսահակյան, Հովհաննես Զարդարյան, Տաթևիկ Մազանդարյան, Մարտիրոս Մարյան:



Մոսկվա, 1962 թ.: Ն.Ս. Խրուշչովի հետ Կրեմլի Գեորգիևսկան դահլիճում:



Մոսկվա, 1957 թ.: ԽՍՀՄ Կոմպոզիտորների միության համագումարում: Չախից Նստամ՝ Գրիգոր Եղիազարյան, Դմիտրի Շոստակովիչ, Առնո Բաբաջանյան, Ալեքսանդր Լարոբյունյան: Կանգնած՝ Ադամ Խուդոյան, Էդվարդ Միրզոյան, Կարեն Խաչատրյան, Էդգար Հովհաննիսյան:



Դիլիջան, 1965 թ.: Բենջամին Բրիտտենի (աջից) և Պիտեր Պիրսի հետ:


 МОСКОВСКАЯ ГОСУДАРСТВЕННАЯ ФИЛАРМОНИЯ
БОЛЬШОЙ ЗАЛ КОНСЕРВАТОРИИ
 АБОНЕМЕНТ № 1

21
 НОЯБРЯ

АРУТЮНЯНИ СИМФОНΙΑ
ТАНТАКИШВИЛИ - ПОЩЕРТ ДЛЯ ФОРТЕПЬЯНО
 С ОРКЕСТРОМ

ГОСУДАРСТВЕННЫЙ
СИМФОНИЧЕСКИЙ ОРКЕСТР
СОЮЗА ССР

Музыкальный артист Арменко А. Г. Г.

Михаил МАЛУЦЯН
Отар ТАКТАКИШВИЛИ

Сопрано - Заслуженный артист РСФСР, артистка

Яков ЗАК

Начало в 8 часов вечера. Билеты в кассе.

3 **ФИЛАРМОНИЯ** 3
 МАЯ 1948 Г. БОЛЬШОЙ ЗАЛ МАЯ 1948 Г.

9-й КОНЦЕРТ ТРЕТЬЕГО АБОНЕМЕНТА
БЕТХОВЕН . АРУТЮНЯНИ
 Третья симфония "Лянтате в Редзин", для фортепьяно и оркестра

СИМФОНИЧЕСКИЙ ОРКЕСТР ФИЛАРМОНИИ
 Директор-художественный руководитель **КАРЛ ВЕМАР**

ЭЛИАСБЕРГ
 ГОСУДАРСТВЕННАЯ АКАДЕМИЧЕСКАЯ КАПЕЛЛА

Г. А. ДМИТРЕВСКИЙ
 Дирижер-хормейстер **Е. П. КУДРЯВЦЕВА**

З. А. ДОЛУХАНОВА, В. П. ЗАХАРОВ

Начало концерта в 8 часов 20 минут. Билеты в кассе.

Տարբեր տարիներին
աղաղղեր:

СОЮЗ КОМПОЗИТОРОВ АРМЕНИИ
 КИСЛОВСКАЯ ГОСУДАРСТВЕННАЯ ФИЛАРМОНИЯ
НАВСТРЕЧУ 50-ЛЕТИЮ ВЕЛИКОГО ОКТЯБРЯ


НЕДЕЛЯ АРМЯНСКОЙ СОВРЕМЕННОЙ МУЗЫКИ
КАМЕРНЫЙ ОРКЕСТР
АРМЯНСКОЙ ФИЛАРМОНИИ

ХУДОЖЕСТВЕННЫЙ РУКОВОДИТЕЛЬ **З. СААКЯНЦ**
 в исполнении

А. Арутюняни - СИМФОНИКЕТТА
Ц. Болларян - КОНЦЕРТ ДЛЯ КАМЕРНОГО ОРКЕСТРА
З. Хаггарян - СИМФОНИЯ № 2

РОМАНЫ И ПЬЕСЫ АРМЯНСКИХ КОМПОЗИТОРОВ
 В которых принимают участие солисты Армянской Филармонии **С. ЗАХАРЯН**

Начало в 8 часов.



Ծորանի Վանու! Կուր օրես ուրբեքս և քան
սեղ օրքս «ՇԱՅՄ-ՈՒՅԱՆ» Իր քան քան
ստանալիս և քան.
Շնորհակալութեամբ ԱՐԱՄ ԿԱՐԱՆՅԱՆ 19.17.69.

Արամ Խաչատրյանի հետ: 1969 թ.:

Էդվարդ Միրզոյանը Բրիտտենին ու Պիրսին տարավ Չանգեզուր: Այնտեղից վերադարձան վառ տպավորություններով: Հասավ իմ հերթը. իմ մեքենայով հյուրերին տարա Կիրովական – Բզովդալի լեռնանցք – Հերեր – Քոլագերան կայարան, ապա հետ՝ Դիլիջան: Հյուրերը ծանոթացան Հովհաննես Թումանյանի հայրենի Լոռվա բնաշխարհին, հիրավի ցնցված էին Քոլագերանի վիթխարի կիրճի մասշտաբներով: Բնականաբար, այցելեցինք նաև այն վայրը, որտեղ Պուշկինը տեսել է Գրիբոյեդովի դիակը:

Մտտենում էր Դիլիջանից մեր հյուրերի մեկնելու ժամանակը: Բայց շատ ավելի վաղ՝ ծրագրվել էր անցկացնել «Բրիտտենի օրերը Հայաստանում» փառատոնը (հենց այդ կապակցությամբ էլ Հայաստան էին եկել Բրիտտենն ու Պիրսը):

Որոշ հանգամանքների բերումով փառատոնի սիմֆոնիկ համերգի ծրագիրը կրճատվեց: Փոխարենը՝ Հայֆիլհարմոնիայի Մեծ դահլիճում կազմակերպված կամերային երաժշտության համերգն անցավ փայլուն հաջողությամբ: Առաջին բաժնում Պիտեր Պիրսն ուղղակի հիանալի, հուզիչ անկեղծությամբ կատարեց Շուբերտի երգերը, իսկ երկրորդ բաժնում հոյակապ ելույթ ունեցավ Գալինա Վիշնևսկայան՝ ունկնդրին ներկայացնելով նորաստեղծ «Պուշկինյան շարքը»: Առնոն, որի հետ նստած էինք տնօրենի օթյակում, զմայլված էր գործիքի առջև նստած Բրիտտենի դաշնամուրային վարպետությամբ և հնչյունների արտաբերման տեխնիկայով...

Հետագա տարիներին Դիլիջան՝ Կոմպոզիտորների ստեղծագործական տուն, արտերկրից հանգստամալու և աշխատելու էին գալիս մշակույթի բազմաթիվ գործիչներ, այդ թվում՝ լեհ կոմպոզիտոր Գրաժինա Բանկիչը, գերմանացի գրող Աննա Ջեզերսը և այլք: Սակայն հիշողությանս մեջ առանձնապես վառ են մնացել Բրիտտենի հայաստանյան օրերը:

1965 թ. պրոֆեսոր Միքայել Տերյանի խնդրանքով (նախկինում նա Կոմիտասի անվան քառյակի պլուսհար էր, իսկ 60-ականներին ղեկավարում էր Մոսկվայի կոնսերվատորիայի կամերային նվագախումբը) գրեցի “Allegro” կոչվող ընդարձակ կոնցերտային պիեսը: Ստեղծագործության վրա աշխատում էի բարձր տրամադրությամբ. թվում էր, թե երկն ինքն իրեն է շունչ առել ու առաջ է սլանում: Որոշ ժամանակ անց Տերյանի նվագախումբն այն կատարեց Մոսկվայի կոնսերվատորիայի Փոքր դահլիճում, ուր ներկա էի՝ նաև ես: Հետագայում նվագախումբը հնչեցնում էր այդ ստեղծագործությունն իր ելույթների եզրափակիչ մասում: Արտասահմանյան ուղևորություններից հետո (որոնք բավական հաճախակի էին) Տերյանը Մոսկվայից զանգահարում էր ինձ՝ “Allegro”-ի հերթական հաջողության մասին պատմելու:

Ինչպես արդեն նշել են, Երևանում ստեղծվել ու իր գործունեությունն էր ծավալել Հայաստանի կամերային անսամբը: Այդ կոլեկտիվը կարճ ժամանակամիջոցում արժանացավ լայն ճանաչման Խորհրդային Միությունում և արտասահմանում: Նրա ղեկավարը՝ տաղանդավոր, չափազանց կիրթ երաժիշտ Ջարեհ Սահակյանը, մի անգամ գրույցի ընթացքում ցանկություն հայտնեց, որ ես իր անսամբի համար որևէ ստեղծագործություն գրեմ: Ընդ որում, ասաց, որ Տերյանի նվագախմբի կատարմամբ Մոսկվայում լսել և շատ հավանել է “Allegro”-ն: Ջարեհ Սահակյանց ինձ առաջարկեց քառամաս շարք գրել, ապա իրեն հատուկ գրավիչ ու չարածճի ժպիտով ավելացրեց. «Ֆինալն արդեն ունեք» (ակնարկում էր “Allegro”-ն):

Այդ հրաշալի երաժիշտն օժտված էր ևս մի զարմանալի հատկությամբ. նա կարողանում էր ոգևորել և իր խանդավառությամբ վարակել զրուցակցին: Աչքերը փայլեցնելով՝ նա պարզեց ձեռքը, որը ես սեղմեցի ի նշան «փոխադարձ համաձայնության»:

Սահակյանցի հետ պայմանավորվեցինք, որ ամեն շաբաթ մեկական մաս կհանձնեմ իրեն: Այդ ստեղծագործության, այսինքն՝ Միմֆոնիետի վրա աշխատում էի 1966 թ. ամռանը Դիլիջանի Ստեղծագործական տանը: Բացի Շեփորի կոնցերտից, իմ ստեղծած երկերի մեջ չեմ հիշում գեթ մեկը, որ գրած լինեի այդքան կարճ ժամանակամիջոցում և այդպիսի հեշտությամբ (խոսքն, իհարկե, չի վերաբերում այն հեշտությանը, որի մասին ընդունված է մտածել):

Մեկ շաբաթ անց 1-ին մասը (Պրեյլուդ) պատրաստ էր, և դրա պարտիտուրն անմիջապես Երևան տարավ հատուկ այդ նպատակով ժամանած, Կամերային անսամբի տեսուչ Բենիամին Գինոսյանը: Նույն ձևով, պատրաստ լինելուն պես, Սահակյանցին ուղարկվեցին 2-րդ (Արիոգո) և զուսպ տեմպով, յուրատեսակ սկերցոյի ձևով գրված 3-րդ մասը (Ինտերմենտ-պիցկիատո): Ապա զանգահարեցի Սահակյանցին և հարցրի՝ արդյոք հարկ չկա՞ 4-րդ մասն էլ գրելու: Նա պատասխանեց, թե այդ հարցը հնարավոր կլինի լուծել միայն ողջ շաբթի կատարումից հետո (այդ թվում “Allegro”-ի՝ որպես ֆինալի): Շատ ավելի վաղ գրված “Allegro”-ն ոճի առումով զարմանալիորեն ձուլվեց առաջին երեք մասերին՝ ապահովելով ստեղծագործության ամբողջականությունը: Կամերային անսամբի կոլեկտիվը ջերմորեն ընդունեց իրեն նվիրված իմ այդ ստեղծագործությունը:

Նույն՝ 1966 թ. սեպտեմբերին Միմվոդի շրջանում անցկացվեց Հայկական երաժշտության շաբաթ, որի բացման արարողությունից հետո, սիմֆոնիկ երաժշտության երեկոյին հնչեց իմ Շեփորի կոնցերտը շնորհալի երաժիշտ Յուրի Բայլանի մենակատարմամբ:

Այստեղ՝ Եսենտուկիում, Հայաստանի կամերային անսամբլն առաջին անգամ հնչեցրեց նաև Միմֆոնիետը: Այդ կատարումը վերին աստիճանի հղկված էր. այդպիսին էր Ջարեհ Սահակյանցի աշխատածն ընդհանրապես:

Շուտով Միմֆոնիետը Սահակյանցի ղեկավարությամբ հնչեց նաև Մոսկվայում: Այդ առիթով ջերմորեն արձագանքեց Արամ Խաչատրյանը. «Ալ. Հարությունյանի Միմֆոնիետը տաղանդավոր ստեղծագործություն է, այն ինձ համար որոշ իմաստով հայտնություն էր: Մեծ հուզականության հետ մեկտեղ նրան հստակ են ինտելեկտուալությունն ու պայծառ ազգային ինքնատիպությունը» («Կոմունիստ», 14.12.1966):

Ավելի վաղ «Մովետսկայա կուլտուրա» քերթում (19.11.1966) կոմպոզիտոր և երաժշտագետ Ս.Ակսյուկը գրել էր. «Հարությունյանի Միմֆոնիետը հիրավի արդիական ստեղծագործություն է և ի զորու է մեծապես ու տևականորեն հուզելու ունկնդիրներին, դաստիարակելու նրանց զգացմունքները, բարձրացնելու նրանց հույզերի կուլտուրան: Ընդ որում, որքան համարձակ է ու անսպասելի: Շատ ավելի համարձակ, քան երաժշտության արհեստական արդիականացման բոլոր փորձերը»:

1969 թ. ուշ աշնանը նամակ ստացա Դ.Շոստակովիչից, որ այդ ժամանակ պառկած էր հիվանդանոցում (Միմֆոնիետը լսել էր ռադիոյով): Այդ նամակն ինձ անչափ հուզեց: Այնտեղ մասնավորապես ասված է հետևյալը. «...Ինձ դուր եկավ այդ ստեղծագործությունը: Չարմանալի պարզություն, մաքրություն կա դրա մեջ: Թեմատիկան հրաշալի է: Ամեն ինչ շատ լավ է հնչում: Թվում է, թե պարզ է, սակայն միևնույն ժամանակ շատ հնարամիտ է ու հետաքրքիր:

Գրավոր խոսքով (թերևս՝ նաև բանավոր) չեմ կարողանում արտահայտել հիացմունքս: Մի բան կարող եմ ասել՝ Ձեր Միմֆոնիետը շատ ու շատ դուր եկավ ինձ...» (22.11.1969):

Հինք չունեն գանգատվելու Միմֆոնիետի հետագա համերգային ճակատագրից: Այն հնչել է ԽՍՀՄ հանրապետություններում, ԱՄՆ-ում, Անգլիայում, Արգենտինայում, Չեխոսլովակիայում, Լեհաստանում, Ֆրանսիայում և այլ երկրներում հայրենական և արտասահմանյան ամենատարբեր կողեկտիվների կատարմամբ: Հատկապես լավ են հիշում մի կատարում. 1984 թ. Հայֆիլհարմոնիայի համերգային Մեծ դահլիճում այն նվագեցին համատեղ ելույթ ունեցող երկու կողեկտիվներ՝ «Մոսկվայի վիրտուոզներ» անսամբլը Վլադիմիր Սպիվակովի ղեկավարությամբ և Հայաստանի կամերային անսամբլը Ջարեհ Սահակյանցի ղեկավարությամբ: Համերգի ընթացքում որպես դիրիժոր հանդես եկավ Վլադիմիր Սպիվակովը: Հաջողությունը գերազանցեց բոլորիս ակնկալիքները:

1966 թ. աշնանը Հայկական երաժշտության օրեր անցկացվեցին Չեխոսլովակիայում: Առանց որևէ չափազանցության կարող եմ ասել, որ չեխոսլովակ նրբազգաց ունկնդիրը հիացմունքով էր ընդունում հայ երաժիշտների ելույթները: Պրահայում կայացած բացման համերգին և Կոշիցեի եզրափակիչ համերգին Առնոյի հետ նվագեցինք մեր «Հայկական ռապսոդիան»:

Նույն քվին մեկնեցինք Լեհաստան՝ «Վարշավյան երաժշտական աշուն» փառատոնին մասնակցելու: Այստեղ լիաթոք հնչեցին Վ.Լյուտոսլավսկու, Կ.Պենդերեցկու, Գ.Բացկիչի և այլ երկրների ավանգարդի ներկայացուցիչների ստեղծագործությունները: Պիտի խոստովանեմ, որ նրանց երկերում շատ բաներ ինձ համար հայտնություն էին:

1967 թ. գարնանը կրկին այցելեցի Լեհաստան, այս անգամ՝ որպես Հենրիկ Վենյավսկու անվան միջազգային մրցանակաբաշխության համար նախատեսված, ջութակի և նվագախմբի լավագույն «պարտադիր» ստեղծագործության կոմպոզիտորների մրցույթի ժյուրիի անդամ: Այդ աշխատանքը, վերին աստիճանի լարվածությամբ հանդերձ, ինձ համար շատ հետաքրքիր էր:

1967-ից սկսած վերստին անդրադարձա «Սայաթ-Նովա» օպերային: Ծարունակվեց Հակոբ Խանջյանի հետ մեր համագործակցությունը. նա շատ հարցերում ընդունում էր իմ առաջարկությունները և, որ ամենակարևորն է, լավ էր ըմբռնում լիբրետոյի երաժշտական առանձնահատկությունները:

Սայաթ-Նովայի կերպարը պատկերացմում էի երեք հիմնական կտրվածքներով՝ Սայաթ-Նովա և ժողովուրդ, Սայաթ-Նովա և արքայական պալատ, Սայաթ-Նովա և մենաստան: Մեծ ջանքերի գնով կարողացա ստեղծել օպերայի միասնական երաժշտական հիմքը: Մասնավորապես ինձ հուզում էր ստեղծագործության մեջ Սայաթ-Նովայի ինքնաստեղծ մեղեդիների օգտագործման հարցը (անգամ յուրօրինակ լայտթեմաների տեսքով): Կանգ առա «Դուռն էն գլխեն» երգի վրա, որը, նախերգանքից սկսած, որպես հիմնական թեմա պիտի հնչեր ողջ օպերայի ընթացքում: Երաժշտության մեջ ներառելու նպատակով Սայաթ-Նովայի ևս չորս մեղեդի ընտրեցի այնպես, որ դրանք համապատասխանեն կատարվող գործողությանը: Խմբերգային դրվագներում մեծ աշուղի մեղեդիները չեն օգտագործվել, բացառությամբ Հերակլ Երկրորդի պալատում աղջիկների երգ ու պարի դրվագի:

Այդ ամենի համար նախապատրաստական մեծ աշխատանք էր պահանջվում: Անհրաժեշտ էր «ներթափանցել» Սայաթ-Նովայի պոետական աշխարհը, նրա երգերի լադային և ինտոնացիոն ոլորտը: Կարևոր էր նաև գտնել «վրացական տեսարանի» (Հերակլ արքայի պալատ) ինտոնացիոն ճիշտ բովանդակությունը: Այս դեպքում ձգտում էի պահպանել վրացական կոլորիտը՝ միաժամանակ զերծ մնալով ոճական պարզունակ մանակումից: Իրանցի

աշուղի համար էլ պետք է գտնվեր ինքնատիպ, ձայնագարրումներով հարուստ ու նրբին, Արևելքին բնորոշ ինտոնացիոն ոլորտ... Եվ այդ ամենը պետք է սահուն անցներ մի ոլորտից մյուսը այնպես, որ կապակցող դրվագներում չնմանարվեին «ճերմակ թելերը»: Շատ էի խորհում մաս երաժշտական արտասանության՝ ասերգի խնդրի շուրջ, որ ընդհանուր առմամբ օպերային երաժշտության կարևորագույն բաղադրիչն է:

Տվյալ ժամանակահատվածում բոլոր մտքերս կենտրոնացրել էի օպերայի վրա՝ ձգտելով օրգանապես ընկալել պատկերների ու տրամադրությունների այդ չափազանց բարդ աշխարհը: Շատ օգտակար խորհուրդներ էր ինձ տալիս բեմադրող ռեժիսոր Վարդան Աճեմյանը (նրա հետ աշխատում էր ռեժիսոր Ռաֆայել Ջրբաշյանը): Իրենց ունակությունները հիանալի դրսևորեցին դիրիժոր Արամ Զաքարյանը, նկարիչ Ռոբերտ Նալբանդյանը, զգեստների նկարիչ Ելենա Դոնցովան: Նախարարների Խորհրդի ղեկավարներից մի բանիսի «առատածեռության» շնորհիվ դրականորեն լուծվեց մաս բեմականացման ֆինանսավորման հարցը:

Հերակլ Երկրորդի պալատում տեղի ունեցող տեսարանի համար զգեստները կարվեցին Թբիլիսիում. այնտեղ մեզ շատ օգնեց իմ վրացի գործընկեր, հիանալի կոմպոզիտոր և անձնավորություն Ալեքսանդր Թորաձեն: Թբիլիսիում մա ինձ ու Ռոբերտ Նալբանդյանին տարավ օպերային թատրոնի արհեստանոցները: Դրանց տնօրենն իր ընկերն էր, մա վստահեցրեց, որ կապահովվի աշխատանքի բարձր որակը, և շուտով մենք դրանում համոզվեցինք:

Կարծում եմ՝ հարկ չկա անդրադառնալու օպերայի բեմականացմանն առնչվող բարդ ու աշխատատար պրոցեսի բոլոր մանրամասներին: Նրանք, ովքեր երբևէ գործ են ունեցել օպերային թատրոնի հետ, կհասկանան ինձ: Այն ժամանակ կոմպոզիտոր Գևորգ Արմենյանի գլխավորած թատերախումբը մեծ ոգևորությամբ էր գործի լծվել: Ներկայացման մեջ ներգրավված էին Վահան Միրաքյանն ու Արտաշես Հայրյանը (Մայաթ-Նովա), Տաթևիկ Սազանդարյանն ու Օլգա Գաբայանը (Աննա), Բորիս Գրեկովը (Հերակլ Երկրորդ), Դավիթ Պողոսյանը (Իրանցի աշուղ) և մեր մյուս լավագույն երգիչները: Իր գործին մեծ պատասխանատվությամբ մոտեցավ խմբավար Ռուբեն Այվազյանը:

Բեմականացման աշխատանքներն սկսելուց առաջ, 1968 թ. մարտին օպերան ներկայացրեցին Սպենդիարյանի անվան թատրոնի գեղարվեստական խորհրդին: Դաշնամուրի առջև նստած՝ հեքթով նվագում ու երգում էի բոլոր դերերգերը: Կարծես յոթերորդ զգայարանով ընկալում էի ներկաների սևեռուն ուշադրությունը: Զննարկման ժամանակ օպերան արժանացավ իմ գործընկերների մեծ մասի բարձր գնահատականին, և հավանություն տրվեց նրա բեմականացմանը:

Պրեմիերան կայացավ 1969 թ. մայիսի 13-ին և 15-ին: Օպերան գրավեց հասարակայնության ուշադրությունը: «Սովետական մուզիկա» ամսագրում տպագրված իր բովանդակալից հոդվածում (1970, N 1) դոկտոր-պրոֆեսոր Գ.Տիգրանովը բարձր գնահատեց օպերան, նրա երաժշտությունը և բեմադրող խմբի ու երգիչների աշխատանքը. «Պահպանելով իր անհատական ձեռագրի ինքնատիպությունը, իր հարմոնիաները, պոլիֆոնիկ կերտվածքի իր հնարները՝ Հարությունյանը միաժամանակ մերժեցնում է դրանք Սայաթ-Նովայի երաժշտության լադախնտոնացիոն առանձնահատկություններին, նրա բանաստեղծական խոսքին»:

Այժմ արդեն ստեղծագործությունն ինքը պետք է ապացուցեր իր կենսունակությունը: Որոշ ժամանակ անց, էական կրճատումներից հետո օպերան թատրոն ներկայացրեցի նոր խմբագրմամբ. իմ կարծիքով, կատարված փոփոխություններից շահում էր երկի ընդհանուր դրամատուրգիան: Դատելով ներկայացումների հաճախելիությունից՝ հանդիսատեսի արձագանքը դրական էր: Դահլիճում գտնվելիս փորձում էի օպերան դիտել ոչ թե հեղինակի, այլ հանդիսատեսի տեսանկյունից:

1972 թ. «Սայաթ-Նովա» օպերայի համար ինձ շնորհվեց Հայաստանի Պետական մրցանակ:

Հաջողությամբ բռնելով ժամանակի քննությունը (100-ից ավելի ներկայացումներ)՝ օպերային թատրոնի երկարատև վերակառուցումից հետո «Սայաթ-Նովա» օպերան այլևս չհայտնվեց նրա խաղացանկում:

1969 թ. նշանակալի իրադարձությունների շարքում հատուկ տեղ էին գրավում Կոմիտասի և Հովհաննես Թումանյանի 100-ամյա հոբելյաններին նվիրված հանդիսությունները:

Կոմիտասի հոբելյանի օրերին Երևանի օպերային թատրոնում կայացած հանդիսավոր նիստից հետո սկսվեց տոնական մեծ համերգը: Ի թիվս այլոց, հիանալի ելույթ ունեցավ Գևորգ Աճեմյանի ղեկավարած Հեռուստառադիոյի ջութակահարների անսամբլը, որը նվագեց Կոմիտասի հիշատակին նվիրված իմ Պրեյլուդը. հոբելյանի կապակցությամբ այն գրել էի հենց այդ անսամբլի համար: Սա մեր համագործակցության առաջին դեպքը չէր. 1967 թ. նույն անսամբլի համար գրվել էր «Փոքրիկ նախերգանքը», որն իր հաստատուն տեղն էր գտել նրա նվագացանկում: Ինձ միշտ հիացրել է տվյալ ժանրի ըմբռնման այն ճշգրտությունը, որ հատուկ էր ջութակահարների անսամբլն այդքան մեծ սիրով ու նվիրվածությամբ ստեղծած Աճեմյանին:

Կոմիտասյան հանդիսություններից հետո է՛լ ավելի մեծ շուքով նշվեց Հովհաննես Թումանյանի հոբելյանը: Այդ կապակցությամբ ես մի ծավալուն երգ գրեցի Թումանյանի «Հայրենիքիս հետ» բանաստեղծության հիման վրա:

Հատկանշական է, որ բանաստեղծն այդ հիասքանչ քերթվածը գրել է Մեծ Եղեռնի՝ 1915 թվին, իր ժողովրդի ապագայի հանդեպ հավատով լի:

Օպերային քատրոնում կայացած եզրափակիչ համերգին հնչելով՝ այդ երգը, կարծես, հանդիսության վերջաբանը դարձավ: Ելույթ ունեցան հանրահայտ երգիչներ Լուսինե Չաքարյանը և Հենրիկ Ալավերդյանը, Ակադեմիական կապելլան և օպերային քատրոնի նվագախումբը: Կատարումը հրաշալի ղեկավարեց Հովհաննես Չեքիջյանը: Դահլիճում ներկա էին բազմաթիվ հյուրեր միութենական հանրապետություններից և արտասահմանյան երկրներից:

Թումանյանի 100-ամյակի կապակցությամբ նույն թվին Երևանի օպերային քատրոնը մեկնեց Մոսկվա՝ ԽՍՀՄ Մեծ քատրոնում «թումանյանական» երկու ներկայացումները՝ Սպենդիարյանի «Ալմաստ» և Տիգրանյանի «Անուշ» օպերաները ցուցադրելու նպատակով: Այդ «փոքր տասնօրյակի» ծրագրում ընդգրկված էր նաև «Սայաթ-Նովա» օպերան:

Այս անունների զուգորդումը շատ խորհրդանշական է. չէ՞ որ հենց Հովհաննես Թումանյանն էր Սայաթ-Նովային նվիրված հանդիսությունների մախաձեռնողը, որոնք ամեն տարի անց էին կացվում Թբիլիսիում: Իմ օպերայի գործողությունն էլ կապված է այդ քաղաքի հետ, որտեղ անցել է Թումանյանի կյանքը...

Առանձնահատուկ պատասխանատվությամբ էի սպասում մոսկովյան ունկնդիրների հետ այդ հանդիպմանը, առավել ևս այն պատճառով, որ իմ օպերան պետք է հնչեր հայկական դասական օպերային արվեստի երկու գլուխգործոցների կողքին: «Սայաթ-Նովայի» մոսկովյան ներկայացումները տեղի ունեցան հոկտեմբերի 7-ին և 8-ին: Ներկա էին Մոսկվայի երաժշտական հասարակայնության, հայ մտավորականության ներկայացուցիչները: Ինձ համար հատկապես հուզիչ էր Դ.Շոտսակովիչի, Ա.Խաչատրյանի, Դ.Կաթալևսկու, Ս.Քոչարյանի, Մարշալ Հ.Բաղրամյանի և բազմաթիվ այլ ականավոր գործիչների ներկայությունը:

Ներկայացումը մեծ հաջողություն ունեցավ և տեղիք տվեց մի շարք ջերմ հրապարակումների: «Մովետսկայա կուլտուրա» քերթում (9.10.1969) լույս տեսավ Ս. Ակայուկի հոդվածը, որում նա գրում էր. «...Այլ. Հարությունյանի «Սայաթ-Նովա» օպերան ընկալվում է որպես պոեմ սիրո և արիության մասին: Օպերայի առաջին հնչյուններից մինչև ֆինալ, միևնույն հունով մեկ սահուն, մեկ բուռն հոսում է մեղեդու գետը, իսկ ինքը՝ հեղինակը, աշուղ է դառնում, ժամանակակից պրոֆեսիոնալ դպրոցի աշուղ: Հարությունյանի մեղեդայնությունը բարդ ու հազվագյուտ բաղադրություն ունի, այն աչքի է ընկնում արտառոց ճկունությամբ: Օպերայում «դատարկ» տարածություն չկա, ամեն ինչ լի է բարձրարվեստ մեղեդայնությամբ. ընդ որում, իրենց նշանակությամբ ու գեղեցկությամբ հավասարաթեք են նաև մենակատարների դերերգերը,

*անսամբլները և նվագախմբային դրվագները: Հազվագյուտ, նախանձեղի
ներդաշնակ ստեղծագործություն է»:*

Հետագայում, Լենինգրադում Սպենդիարյանի անվան քատրոնի հյուրախաղերի ժամանակ, օպերայի գլխավոր դերում փայլուն համդես եկավ երգիչ Գեղամ Գրիգորյանը, ինչը, բնականաբար, մեծապես նպաստեց ներկայացման հաջողությանը:

1970 թվականին լրացավ իմ հիսուն տարին: Անդրադառնալով անցած ուղուս՝ փորձում էի ինքս ինձ համար պարզել՝ դա քի՞չ է, թե՞ շատ: Մտաբերում էի թե՛ ակնհայտ թվացող ձեռքբերումները, թե՛ այն ժամանակը, որն, ավա՛ղ, ծախսվել էր ոչ կարևոր, երբեմն էլ՝ աննպատակ գործերի վրա...

Հոբելյանիս առիթով ինձ շնորհվեց ԽՍՀՄ ժողովրդական արտիստի պատվավոր կոչումը: Այն օրերին որևէ կերպ, թեկուզ հեղինակային համերգով, չնշեցի այդ տարելիցը, սակայն հանրապետական, միութենական, անգամ արտասահմանյան մամուլում բավական շատ հողվածներ տպագրվեցին այդ առթիվ:

Բազում արձագանքներ էի ստանում հոբելյանական տարեդարձիս կապակցությամբ: Ծննդյանս օրվա վաղ առավոտյան ստացա Շոստակովիչի ջերմ շնորհավորանքներով հեռագիրը: Հիշում եմ՝ հուզվեցի, երբ հեռագրում կարդացի Շոստակովիչի՝ նրա արտասովոր ճշտապահությանն այնքան բնորոշ հետևյալ նշումը. «Հանձնել առավոտյան ժամը 8-ին»:

1970 թ. ես աշխատում էի «Հուշարձան մայրիկիս» վոկալ շարքի վրա, որի հիմքում ընկած էին Հովհաննես Շիրազի համանուն ժողովածուի բանաստեղծությունները:

Շիրազին հիշում եմ դեռ 1939 թվից, երբ մեր պոեզիայի հորիզոնում վառ փայլատակեց նրա անունը: Նա մեկն էր տաղանդավոր բանաստեղծների այն համաստեղծությունից, որոնց թվին եմ դասում նաև այդ պայծառ սերնդի ներկայացուցիչներ Սիվա Կապուտիկյանին, Պարույր Սևակին, Գևորգ Էմինին, Վահագն Դավթյանին:

Շիրազի «Հուշարձան մայրիկիս» ժողովածուն իսկապես զարմանահրաշ գիրք է. այն սեր է ճառագում և մոր կերպարը բացահայտում է ամենատարբեր դրսևորումների ամբողջականության մեջ: Բանաստեղծություններն իրենք են գիտակցությանդ մեջ երաժշտական արձագանք գտնում:

Ժողովածուից ընտրել եմ կոմտրաստային բովանդակությամբ վեց բանաստեղծություն: Շարքն առաջին անգամ հնչեց 1971 թ. հունվարին Հայաստանի Կոմպոզիտորների միության դահլիճում: Այն հուզիչ անկեղծությամբ կատարեց Արտաշես Հայրյանը, նրան լիովին հաջողվեց վեր հանել իմ երգերի կերպարային բովանդակությունը:

Լենինգրադցի հայտնի երաժշտագետ, պրոֆեսոր Անատոլի Նիկողիմովիչ Դմիտրիևը 1974 թ. նոյեմբերի 20-ի իր նամակում գրում է. «...Կարող եմ ասել, որ այդ նովելներն ուղղակի սքանչելի են: Մոր մասին Դուք իսկապես շատ խորունկ և նուրբ եք գրել... Ինչ լավ եք մտածել, որ դասական բազմաշերտ պոլիֆոնիայի եղանակով գրված առաջին համարից հետո, որն անմիջապես տրամադրում է լուրջ խոհերի, հաջորդում է գեղեցիկ օրորոցայինը, ապա և բոլոր մյուս համարները՝ մեկը մյուսից լավ»:

Այդ վոկալ շարքը ես նվիրել եմ մորս՝ Էլենոնրա Ալեքսանդրովնային: 1967 թվականին նա հեռացավ այս աշխարհից...

1971 թ. գարնանը Վրաստանի Կոմպոզիտորների միության հրավերով ես մեկնեցի Թբիլիսի, որտեղ պիտի կայանար իմ թվով երկրորդ հեղինակային համերգը: Այստեղ էին ժամանել նաև իմ կատարողները՝ Վիլի Սարգսյանը, Գերոնտի Թալալյանը, Օլգա Գաբայանը, Արտաշես Հայրյանը, ինչպես նաև Ջարեհ Սահակյանցի Կամերային անսամբլը:

Հեղինակային երեկոն տեղի ունեցավ Ռուսավելու անվան քատրոնի հիանալի ակուստիկայով համերգասրահում: Ներածական խոսքով հանդես եկավ պրոֆեսոր Պավել Խուչուան, որը մեծ ջերմությամբ արտահայտվեց իմ ստեղծագործական գործունեության մասին: «Երաժշտական երեք պատկերների» կատարմամբ հիանալի ելույթ ունեցավ դաշնակահար Ռոման Գորելաշվիլին: Հնչեցին նաև «Պոլիֆոնիկ սոնատը» Վիլի Սարգսյանի հետաքրքիր մեկնաբանմամբ, ինչպես նաև «Երգ Ալագյազ սարի մասին» և «Էքսպրոնտ» ստեղծագործությունները Գերոնտի Թալալյանի կատարմամբ: Օլգա Գաբայանն ունկնդրին ներկայացրեց հատվածներ «Սայաթ-Նովա» օպերայից, իսկ Արտաշես Հայրյանը կատարեց «Հուշարձան մայրիկիս» վոկալ շարքը (բոլոր մենակատարներին ինքս էի նվագակցում): Առանձահատուկ հաջողություն ունեցավ Ջարեհ Սահակյանցի ղեկավարած անսամբլը, որն ուղղակի փայլուն նվագեց Սիմֆոնիետը:

Չեմ կարող չնշել այն իսկապես ջերմ ընդունելությունը, անկեղծության ու անմիջականության այն մթնոլորտը, որը հաստատվել էր դահլիճում երեկոյի հենց սկզբից:

Համերգից հետո հրավիրված էինք բարեկամական ընթրիքի: Այն զուտ վրացական ճոխությամբ կազմակերպված էր նկուղային փոքրիկ ու հարմարավետ «Դարյալ» ռեստորանում: Ինձ համար շատ հաճելի էր իմ վրաց գործընկերների՝ Օթար Թաքաբաիշվիլու, Սուլխան Յինցաձեի, Սուլխան Նասիձեի, հանրահայտ «Թբիլիստ» երգի հեղինակ Ռևազ Լագիձեի և մյուսների ներկայությունը: Ապա «Վեչերնի Թբիլիսի» թերթում լույս տեսավ Ալեքսանդր Շավերգաշվիլու հողվածը իմ հեղինակային համերգի մասին:

Նույն քվին ծրագրված էր իմ ուղևորությունը ԱՄՆ՝ Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի կոմիտեի գծով: Այդ ուղևորությանը մասնակցում էին նաև Ժան Տեր-Մերկերյանը, Գոհար Գալաշյանը, Մերգեյ Դամիեյանը, Վահան Միրաքյանը և Ջեմֆիրա Բարսեղյանը: ԱՄՆ-ում առաջին անգամ էի լինում և, իհարկե, ցնցված էի այդ երկրի կյանքի մասշտաբներով ու քափով: Նյու Յորքում, Բոստոնում, Սան Ֆրանցիսկոյում և այլ քաղաքներում կազմակերպված համերգները ջերմ ընդունելության էին արժանանում, և դա բնավ զարմանալի չէր, քանի որ առաջնակարգ արվեստագետներ էին մասնակցում այդ համերգներին:

ԱՄՆ-ից Երևան վերադառնալով՝ իմացա, որ պիտի անմիջապես նորից ճանապարհ ընկնեմ, այս անգամ՝ Լիբանան, ուր արդեն մեկնել էր մեր կոմպոզիտորների և կատարողների խումբը: Սակայն Բեյրութում պարզվեց, որ նույն օրը մեր պատվիրակությունը հասցրել էր մեկնել Սիրիա: Ես նրանց հասա արդեն Դամասկոսում, հյուրանոցներից մեկում իրենց ընթրիքի ժամին: Նրանք բուռն ողջունեցին ինձ և անմիջապես առաջարկեցին մի շատ համեղ կերակրատեսակ փորձել: Ինչպես պարզվեց քիչ հետո, ամենախսկական գորտի տոտիկներից էր պատրաստված... Դեմքիս արտահայտությունը պատճառ դարձավ բոլոր ներկաների ընդհանուր հեռոցին:

Խմբի կազմում էին կոմպոզիտորներ Էդվարդ Միրզոյանը, Ղազարոս Սարյանը, Էդվարդ Բաղդասարյանը, Էդգար Հովհաննիսյանը, Ռոբերտ Ամիրխանյանը, իսկ կատարողներից՝ Մեղեա Աբրահամյանը, Ռուբեն Ահարոնյանը, Ռ-աիսա Մկրտչյանը, Ռուբեն Մաթևոսյանը և ուրիշներ:

Ինձ զարմացրեց այն հանգամանքը, որ Սիրիայի մայրաքաղաքում համերգային դահլիճ չկար, և մեր ելույթը տեղի ունեցավ մի ընդարձակ կինոդահլիճում: Հերթական համերգներն արդեն Հալեպում էին անցկացվում, որտեղի հայկական համայնքը ոչ մեծ, բայց հարմարավետ դահլիճ ուներ: Այստեղ տվեցինք ութ համերգ, բոլորն էլ արժանացան ունկնդիրների բուռն ծափողջույններին ու ջերմագին ընդունելությանը:

Մերձավոր Արևելքի հայերը չափազանց հյուրասեր են: Առաջին իսկ համերգից հետո ետմաբեմ եկավ մի ընտանիք՝ Հարությունն ու Ժակլինը իրենց հիասքանչ երեխաների հետ, որոնց ազգանունն էլ իմի նման Հարությունյան էր: Նրանք բառացիորեն «զավթեցին» ինձ (հավանաբար, ազգանունս էր դուր եկել): Այդ հյուրասեր ընտանիքը մի քանի անգամ ճաշի հրավիրեց մեր խմբի բոլոր անդամներին: Հետագայում Հարությունյանների ընտանիքն այցելեց Հայաստան, և մեր միջև բարեկամական ջերմ հարաբերություններ հաստատվեցին:

...Հալեպից մեկնելով՝ Լաթաքիայի ծովեզրով կրկին ուղևորվեցինք Լիբանան: Բեյրութում մեր եզրափակիչ համերգից հետո Միջերկրականի ափին

գտնվող բացօթյա ռեստորանում հարյուրից ավելի հայեր էին հավաքվել, որպեսզի արտահայտեն իրենց հարգանքը, ինչպես իրենք էին ասում, «Հայրենիքի պատվիրակների» հանդեպ:

1971 թ. մեծ շուրջով նշվեց Ալեքսանդր Սպենդիարյանի ծննդյան 100-ամյակը: Երևան էին ժամանել բազմաթիվ հյուրեր: Ներկայացվեց «Ալմաստ» օպերայի նոր բեմականացումը, որի դիրիժորն էր Օհան Դուրյանը: Հյուրերի հետ միասին այցելեցինք մեծ կոմպոզիտորի տուն-թանգարանը, և բացօթյա համերգի ժամանակ նվագեցի Սպենդիարյանի «Երևանյան էտյուդները»՝ ինչպես 1927 թվի այն հեռավոր ամռանը, որի մասին պատմում էի իմ շարադրանքի սկզբում:

Այն տարիներին Մոսկվայում բավական հաճախ էին կազմակերպվում մշակույթի և արվեստի զարգացման հարցերին նվիրված խորհրդակցություններ: Միտքս է գալիս դրանցից մեկը, որը կայացավ 1972 թ. նոյեմբերին Կրեմլում: Ելույթ ունեցողների մեջ էր նաև Դ.Շոստակովիչը: Ընդմիջման ժամանակ տեսա նրան՝ հեռուստալրագրողներով շրջապատված:

«Յուպիտերների» կուրացնող լույսի ճառագայթների տակ քրտինքի մեջ կորած՝ նա փորձում էր ազատվել ջանասեր լրագրողներից: Իսկույն «գործողության ծրագիր» կազմեցի Շոստակովիչին այդ «գերությունից» դուրս բերելու համար: Խմբին մոտենալով՝ բարձրաձայն կանչեցի. «Դ-մի'տրի Դ-միտրիևիչ: Ձեզ խնդրում եմ անհապաղ անցնել նախագահության սենյակ»: Շրջանը բացվեց: Շոստակովիչը դուրս եկավ լրագրողների օղակից, դավադրաբար ժպտաց և ասաց, որ ես իրեն փրկեցի: Հաջորդ օրվա համար հրավեր ստացա իրենց տանը թեյ խմելու և, ինչպես ինքն ասաց, վերջին բառերը շեշտելով՝ «Էլի ինչ-որ բան»: Ստիպված էի ներողություն խնդրել, քանի որ մյուս օրվա համար Երևան վերադառնալու տոմս ունեի:

Պահպանվել է Գեորգիևյան դահլիճում մեր այդ հանդիպման լուսանկարը, որ արել է Շոստակովիչին օղակի մեջ առած լրագրողներից մեկը:

1973 թ. ապրիլ ամսին կազմակերպված էր հայաստանցի մի խումբ կոմպոզիտորների և երաժիշտ-կատարողների ուղևորություն դեպի հեռավոր Արգենտինա: Մեզանից առաջ այստեղ եղել էին երգչուհի Ջարա Դուլվիսանովան և Արամ Խաչատրյանն իր հեղինակային համերգներով: Փաստորեն, մեր այցելությունը հայ երաժիշտների՝ Արգենտինայում լինելու երրորդ դեպքն էր:

Բունոնու Այրեսում վարձակալվեց այսպես կոչված «Իտալական» դահլիճը, որտեղ մենք 15 համերգ տվեցինք: Համերգները բավական ուշ էին սկսվում՝

երեկոյան ժամը 9.30-ին, քանի որ տեղի հայերը մեծամասամբ ունեին իրենց բիզնեսը և համերգի էին գալիս աշխատանքն ավարտելուց հետո:

Համերգներ ունեցանք նաև Կորդովայում, Ռոսարիոյում, Բարիլոչեում և մի շարք այլ քաղաքներում: Բոլոր ելույթները լայնորեն լուսաբանվում էին մամուլում: Արգենտինայում մեծ հաջողություն ունեցան մեր կոմպոզիտորները՝ Է.Սիրգոյանը, Ղ.Սարյանը, Է.Բաղդասարյանը, Է.Հովհաննիսյանը, Ռ.Ամիրխանյանը, և կատարողները՝ Ռուբեն Ահարոնյանը, Մեդեա Աբրահամյանը, Լուսինե Ջաքարյանը, Հենրիկ Ալավերդյանը և մյուսները: Անչափ ուշադիր էր մեր նկատմամբ Արգենտինայում բնակվող մեր հայրենակցուհի, կոմպոզիտոր Ալիս Թերզյանը: Համերգներին ներկա էր նաև հանրահայտ երգչուհի և կինոդերասանուհի Լոլիտա Տորեսը, որը մեզ ճաշի հրավիրեց: Մեծ հոգատարությամբ էր մեզ վերաբերվում նաև արքեպիսկոպոս Բաբկեն Ապատյանը՝ բացառիկ հմայքի տեր մի մարդ և, իմիջիայլոց, քավական աշխարհիկ:

Պարանա գետի վրայով օդանավը մոտ 30 բուպետով մեզ հասցրեց Ուրուգվայի մայրաքաղաք Մոնտեվիդեո: Եվ կրկին՝ մեր հայրենակիցների ջերմ գրկախառնություններ, ծով ծաղիկներ, ժպիտներ, ուրախության արցունքներ: Հատկապես լավ եմ հիշում պարոն Ռուբինյանին: շատ անմիջական, ինչ-որ իմաստով նաև անսովոր մարդ էր: Նա իր սեփական ռադիոկայանն ուներ, որով հաղորդվում էին մեր համերգները: Ուրուգվայում գտնվելու ողջ ընթացքում նա պատրաստակամորեն հովանավորում էր մեզ:

Մոտենում էր հայրենիք վերադառնալու ժամանակը: Սակայն նախօրեին ստացանք ԽՍՀՄ մշակույթի նախարար Ե.Ֆուրցևայի կառավարական հեռագիրը, որով նա մեզ տեղեկացնում էր Լ.Բրեժնևի Ամերիկա կատարելիք այցելության մասին և խնդրում, որ մեր խումբը ևս ուղևորվի ԱՄՆ:

Նյու Յորքում մեզ դիմավորեց ՄԱԿ-ում ԽՍՀՄ-ի մշտական ներկայացուցիչ Յակով Մալիկը: Նա շեշտեց այն նշանակությունը, որը տրվում էր մեր գալստյանը: Համերգներ կայացան Լոս Անջելեսում, Սան Ֆրանցիսկոյում, Դետրոյտում, Ֆիլադելֆիայում... Բոստոնի հսկայական, լեփ-լեցուն դահլիճում սիմֆոնիկ նվագախումբը Արթուր Ֆրիշմանի և Ռուբեն Գրիգորյանի ղեկավարությամբ կատարեց Արամ Խաչատրյանի «Դիմակահանդեսի» սյուիտը, Գևորգ Արմենյանի Ֆլեյտայի և նվագախմբի կոնցերտը, իմ «Տոնական նախերգանքը» և Սիրգոյանի «Պարային սյուիտը»: Նյու Յորքի Կարնեգի Հոլ դահլիճում կայացած համերգին ներկա էին մեր անվանի հայրենակիցներից շատերը՝ կոմպոզիտոր Համբարձում Բերբերյանը, Կոմիտասի աշակերտ Հակոբ Ասատուրյանը, երգչուհիներ Լիլի Չուբասզյանը, Լուսին Ամարան, դաշնակահարուհի Լյուսի Իշխանյանը...

Մեր խմբի համերգները շարունակվում էին: Վերջին ելույթը պիտի կայանար Նյու Յորքում հունիսի 15-ին, ՄԱԿ-ի շտաբ-կացարանի դահլիճում

խորհրդային աշխատակիցների և օտարերկրյա դիվանագետների համար: Սակայն ես ստիպված եղա ընդհատել իմ ուղևորությունը և մեկնել Բաքու, որտեղ ծրագրված էր «Մայաթ-Նովա» օպերայի պրեմիերան:

...Ադրբեջանում իմ օպերայի նկատմամբ վաղուց էր հետաքրքրություն առաջացել: 1972 թ. աշնանը օպերային ծանոթանալու նպատակով Երևան ժամանեց Ադրբեջանի օպերային թատրոնի գլխավոր ռեժիսոր Ֆիրուզին Մաֆարովը: Ես մանրամասնորեն ներկայացրի ստեղծագործությունը, և նա արագ յուրացրեց օպերայի նյութը:

Մայիլովյան թատրոնի դահլիճը (այդպես են հիմ բաքվեցիները կոչում իրենց օպերային թատրոնը՝ այն կառուցած հայի անունով) լավ ակուստիկա ունեւ: Փորձերի ընթացքում Մաֆարովը դրսևորեց մասնագիտական հիանալի հատկություններ: Դա հատկապես վերաբերում էր մասսայական տեսարանների բեմականացմանը: Ավելին էի ակնկալում նվագախմբի կատարումից. նրա հնչողությունը միշտ չէ, որ հարթ էր:

Օպերան բեմականացվում էր ադրբեջաներեն, Բաղաբեյլու թարգմանությամբ: Լեզվին չտիրապետելով՝ այնուամենայնիվ զգում էի, որ շեշտադրական համակարգն իր տեղում էր:

Եթե երևանյան բեմականացման մեջ գլխավոր դերում փայլեց Վահան Սիրաբյանը, ապա Բաքվում հարկ էր պատշաճը հատուցել նախ և առաջ Լյուտֆիյար Իմանովին, որը գերազանց կատարեց իր դերերգը թե՛ վոկալի, թե՛ բեմական մարմնավորման առումով: Հետագայում, հյուրախաղերի գալով Երևան, Իմանովը համոզեա էր գալիս «Մայաթ-Նովա» օպերայում, ադրբեջաներեն լեզվով կատարելով գլխավոր դերերգը:

Մայաթ-Նովայի մեկ այլ դերակատար էր վոկալիստ ու հիանալի դաշնակահար, Ադրբեջանի կոնսերվատորիայի դաշնամուրի մասնագիտական դասարանի պրոֆեսոր Ռաֆիկ Ատակիչիևը: Ես մտերմացել էի երկու կատարողների հետ էլ, եղել եմ նրանց տանը, ուր ինձ անկեղծ ջերմությամբ են հյուրընկալել:

Բաքվում օպերայի բեմականացման համար միջոցներ չէին խնայել: Իմ առաջարկությամբ որպես նկարիչներ հրավիրվել էին նույն Ռ. Նալբանդյանն ու Ե. Դոնցովան:

Մոտենում էր պրեմիերայի օրը: Այդ օրերին կոնսերվատորիայի պետական քննությունների կապակցությամբ Բաքվում էր գտնվում արվեստագիտության դոկտոր, Լենինգրադի կոնսերվատորիայի պրոֆեսոր և օպերային դրամատուրգիայի խոշոր գիտակ Անատոլի Նիկողիմովիչ Դմիտրիևը: Օպերայի հանձնման օրը նա պետք է վերադառնար Լենինգրադ, սակայն մեկնումից առաջ, բառացիորեն ճամպուրկը ձեռքին, եկավ ներկայացման:

Ունկնդրությանը հաջորդած քննարկման ժամանակ խոսքը տրվեց Դմիտրիևին: Ինձ մեծապես զարմացրեց, թե նրան ինչպես հաջողվեց մեկ ունկնդրու-

մից հետո փայլուն վերլուծել օպերան և ներկայացնել նրա ամբողջական երաժշտադրամատուրգիական կառուցվածքը, անգամ մանրամասների ընդգրկմամբ: Գիտե՞նալով, որ օպերայում օգտագործված են Սայաթ-Նովայի մեղեդիները, նա ասաց. «Գնահատելի է նյութի զարմանալի ոճական միասնականությունը, ուր աշուղի երգերն օրգանապես միահյուսվում ու ձուլվում են ընդհանուր կառուցվածքի մեջ՝ յխախտելով ստեղծագործության երաժշտական զարգացման տրամաբանությունը»: Մեծ երախտագիտությամբ ընդունեցի նրա այդ բարձր գնահատականը: Ապա Դմիտրիևն անմիջապես ճամփա ընկավ օդանավակայան՝ խնդրելով իրեն գրել պրեմիերայի մասին: Հետագայում մեր միջև մամակագրական կապ հաստատվեց:

Պրեմիերան անցավ գերլեցուն դահլիճում: Աղբյեջանի մշակույթի նախարար Բաղիրովը, որ այդ օրերին Մոսկվայում էր, հատուկ վերադարձավ Բաքու, որպեսզի ներկա լինի ներկայացմանը: Երևանից եկան կինս ու որդիս (աղջիկս իր ամուսնու հետ արդեն Անգլիայում էր բնակվում):

Ինչ խոսք, այդ բոլոր արտասահմանյան ուղևորությունները, «Սայաթ-Նովայի» պրեմիերան Բաքվում չափազանց հուզիչ էին և շատ ժամանակ խլեցին, բայց և ծառայեցին որպես ստեղծագործելու նոր խթան: 1973 թ. գրեցի Վարիացիաները շեփորի և նվագախմբի համար: Շեփորի կոնցերտի ստեղծման ժամանակից անցել էր 23 տարի, և բազմաթիվ երաժիշտ-կատարողներ դիմում էին ինձ իրենց գործիքի համար նոր ստեղծագործություն գրելու խնդրանքով:

«Թե՛մա և վարիացիաներ» երկի վրա աշխատել են մոտ երեք ամիս: Ստեղծագործության թե՛ման բավական լայն է և հետագայում՝ ճանաչելի: Նրան հաջորդում են չորս վարիացիաներ, որոնք կառուցված են կոմտրաստի սկզբունքով: Շարքն ավարտվում է սլացիկ վերջաբանով: Ընդհանուր առմամբ, շեփորի ձայնածավալի օգտագործումն այստեղ ավելի ընդարձակ է ու հարուստ, քան Շեփորի կոնցերտում: Համեմատաբար բարդ ու սուր է ստեղծագործության հարմոնիկ լեզուն:

«Վարիացիաների» վրա աշխատելիս խորհրդակցում էի հիանալի շեփորահար Յուրի Բալյանի հետ, նա էլ դարձավ երկի առաջին կատարողը:

Որոշ ժամանակ անց «Թե՛մա և վարիացիաները» իրեն հատուկ վարպետությամբ ու փայլով նվագեց Տիմոֆեյ Դոկչիցերը Մոսկվայում, Չայկովսկու անվան համերգային դահլիճում. նրան նվագակցում էր Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախումբը Վալերի Գերգիևի ղեկավարությամբ, վերջինս նրա գլխավոր դիրիժորն էր:

Այդ ստեղծագործության կապակցությամբ «Մովետսկայա մուզիկա» ամսագրում տպագրված հոդվածով (1980, N 12) համոզես եկավ երաժշտագետ

Ռ-աֆայել Ստեփանյանը: «Իր ստեղծագործության ընթացքում Հարություն-
յանը երբեք հետամուտ չի եղել արտաքին էֆեկտների, երբեք չի տարվել կոմ-
պոզիտորական տեխնիկայի անհարկի բարդացման հնարներով: Նա միշտ
ստեղծել է պարզ, բոլորին հասկանալի, երգեցիկ ու դինամիկ, լիրիզմով ու
դրամատիզմով լի երաժշտություն՝ հավատարիմ մնալով ինքն իրեն, իր հավա-
տամբին՝ լինել անկեղծ միևնչ վերջ, ամենից վեր դասել արտահայտման անկեղ-
ծությունն ու զգացմունքային ուժը, գովերգել մարդու հոգևոր գեղեցկությունը:

Հարությունյանի «Թեմա և վարիացիաները» մարդկային կյանքի պատում
է: Միայն փորձառու վարպետը ծայրահեղ համեստ միջոցների օգտագործմամբ
կարող էր հաջողությամբ ու համոզությամբ լուծել այսչափ մեծ ու բովան-
դակային իմաստով տարողունակ խնդիր:

«Թեմա և վարիացիաներ» ստեղծագործության մեջ կարելի է ընկալել
արգասաբեր առնչությունն այնպիսի ականավոր վարպետների երաժշտության
հետ, ինչպիսիք են Դ. Շոստակովիչը և Ս. Պրոկոֆևը»:

«Վարիացիաներին» հաճախ է իր նամակներում անդրադառնում Տիմոֆեյ
Դոկչիցերը: «Շարունակում եմ Ձեր Վարիացիաների «ցավերը քաշել»: Ինձ
համար միանգամայն պարզ է, որ այդ ստեղծագործությունը դեռ պետք է հաս-
կանանք թե՛ ես, թե՛ իմ գործընկերները: Անհրաժեշտ է ըմբռնել այդ
երաժշտության ողջ խորությունն ու հմայքը»,— գրում է նա իր 26.02.1982 թ. նա-
մակում: Մեկ այլ առիթով կիսում է իր ուրախությունը. «Գնացել էի Պրահա՝
հյուրախաղերի, և ուզում եմ ուրախալի լուր հայտնել Ձեզ. ինձ հաջողվեց ձայ-
նագրել Ձեր «Վարիացիաները» չեխական Ռադիոյի նվագախմբի հետ Վասիլի
Մինայսկու ղեկավարությամբ: Իմ կարծիքով, լավ է ստացվել: Ամեն դուբլից
հետո նվագախումբը ծափահարում էր Ձեր երաժշտությանը:

Ես հոգեկան մեծ վերելք եմ ապրում Ձեր Վարիացիաները նվագելիս և
անհամբեր սպասում եմ, որ մարդիկ այն լսեն: Շնորհակալ եմ Ձեզանից: Ձեր
տաղանդի երկրպագու՝ Տիմոֆեյ Դոկչիցեր» (նամակը թվագրված է 20.01.1985):

«Թեմա և վարիացիաները» բազմիցս կատարել են տարբեր երկրների
մենակատար-շեփոհարմեր և սիմֆոնիկ նվագախմբեր: Ստեղծագործության
նոտաները հրատարակված են, գոյություն ունեն ձայնագրություններ
սկավառակների և կոմպակտ դիսկերի վրա:

Ես ու Առնոն ֆուտբոլի մեծ սիրահարներ էինք, և «Արարատ» քիմի 1973
թվականի փայլուն հաղթանակը ԽՍՀՄ չեմպիոնատում, ապա նույն տարվա
ընթացքում ԽՍՀՄ ֆուտբոլի գավաթի նվաճումը չէին կարող չուրախացնել մեզ:
Հիշում եմ «Արարատի» «ոսկե գույզի» պատվին Մուղուկյանի անվան բառ-
րոնում կազմակերպված երեկոն: Այդ առիթով ես ողջույնի երգ գրեցի, որն իմ
նվագակցությամբ կատարեց տղամարդկանց վոկալ օկտետը: Հետագայում

այդ երգը բարձրախոսների միջոցով հաղորդում էին նորակառույց «Հրազդան» մարզադաշտում մրցախաղերից առաջ:

Որպես երաժշտի, ինձ բոլորովին չէր նեղում օպերայի և մասսայական երգի նման «գոյակցությունը»:

Իմանալով, թե ֆուտբոլի ինչպիսի մեծ երկրպագու է Շոստակովիչը, առաջին իսկ առիթով նրան պատմեցի «ֆուտբոլային» երգիս մասին: Նա սևեռուն հայացքով նայեց ինձ, ապա իրեն այդքան բնորոշ շարժումով ուղեց ակնոցը և ասաց. «Հիանալի է, ուղղակի հիանալի, որ Դուք պատշաճն եք հատուցել Չեր սիրելի թիմին»:

Հիշեցի 1946 թ. մայիսը, երբ «Լոկոմոտիվ» մարզադաշտի տրիբունայում տեսա Շոստակովիչին և կոմպոզիտոր Յուրի Լևիտինին: Անձրևոտ եղանակ էր: Շոստակովիչը նստել էր՝ թիկնոցը զլխի վրա գցած և ուշադիր հետևում էր խաղին: Մրցախաղից հետո բոլորս միասին շարժվեցինք դեպի մետրո...

Դեռ 1965 թ., Հայաստան գալով Ռուսական երաժշտության տասնօրյակի կապակցությամբ, ականավոր թավջութակահար Մստիսլավ Ռոստրոպովիչը գրում էր. «Հայաստանի կոմպոզիտորների ստեղծագործական կազմակերպությունը, իմ կարծիքով, առավել գորեղների թվին է պատկանում: Եվ հայ ստեղծագործողներից ես ակնկալում եմ թավջութակի համար գրված նոր երկեր, որոնք մեծագույն հաճույքով կընդրակեն իմ համերգացանկում»: («Կոմունիստ», 6.06.1965): Ինքն իրեն «երաժշտական ստեղծագործություններ որսացող» անվանելով՝ Ռոստրոպովիչն իր խոսքին հավատարիմ մնաց. նրա նվագացանկում հայտնվեցին Առնո Բաբաջանյանի Թավջութակի կոնցերտը, Էդվարդ Միրզոյանի Թավջութակի սոնատը, Էլ չասած՝ Արամ Խաչատրյանի Կոնցերտո-ռապսոդիայի մասին:

1973թ. Երևանում հսկայական հաջողությամբ անցան Արամ Խաչատրյանի հեղինակային համերգները, որոնց մասնակցում էր նաև Ռոստրոպովիչը: Միաժամանակ Հայֆիլհարմոնիայի Փոքր դահլիճում նա մենահամերգ տվեց, որի ծրագրում հնչեց նաև Միրզոյանի Սոնատը հեղինակի մասնակցությամբ:

Համերգից հետո արտիստական սենյակում, բոլորի ներկայությամբ, Ռոստրոպովիչը դիմեց ինձ՝ իր համար իմ նախընտրած ձևի և բովանդակության ստեղծագործություն գրելու խնդրանքով:

Այդ խոշոր երաժշտի առաջարկությունը պարտավորեցնող էր: Ռոստրոպովիչի Երևանում գտնվելու կարճ ժամանակամիջոցում հասցրեցի որոշ բաներ ուրվագծել իմ ապագա Պոեմի համար և իսկույն ցույց տվեցի նրան: Իրեն հատուկ խանդավառությամբ նա հավանություն տվեց այդ նյութին:

Իմ Պոեմը, որի տևողությունը մոտ տասնչորս րոպե է, զարգանում է ազատորեն, լիաշունչ: Նրա հիմքում ինքնաստեղծ թեմատիկան է, բացառությամբ մի դրվագի, ուր հնչում է դեռ պատերազմի տարիներից հիշողության մեջ մնացած անպաճույճ ժողովրդական մեղեդին:

Պոեմի վրա աշխատելու ընթացքում խորհրդակցում էի մեր հիասքանչ թավջութակահարուհի Սեդեա Աբրահամյանի հետ:

1974 թ. գարնանը տիկնոջս հետ մեկնեցի Մոսկվա՝ ինձ հետ վերցնելով գրեթե պատրաստ ստեղծագործության կլավիրը, բացի եզրափակիչ մասից: Ռոստրոպովիչը, որի տանը եղա մայիսի 10-ին, չափազանց ջերմ ընդունեց Պոեմը, իսկ նրա ավարտը խորհուրդ տվեց աստիճանական մարման ձևով լուծել, որպեսզի երաժշտությունը հանգչի, «տարրալուծվի անեության մեջ», ինչպես ինքն արտահայտվեց:

Չորս օր անց Ռոստրոպովիչն իր ընտանիքի հետ ստիպված եղավ մեկնել Խորհրդային Միությունից: Այդ դառը պատմությունը բաջ հայտնի է բոլորին. հավանաբար այստեղ հարկ չկա դրա մանրամասներին անդրադառնալու:

Երևանում Պոեմի առաջին կատարողը դարձավ Սեդեա Աբրահամյանը: Նա հանդես եկավ Դավիթ Խանջյանի ղեկավարած ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ, նվագեց պոեմը հուզիչ անկեղծությամբ և շատ ջերմ ընդունելության արժանացավ: Չափազանց հաջող էր նրա կատարումը Մոսկվայում Ջանսուդ Կախիձեի ղեկավարած ԽՍՀՄ պետական նվագախմբի հետ:

Սեդեա Աբրահամյանը տարբեր համերգների և հանդիպումների ժամանակ բազմիցս նվագել է Պոեմը նաև իմ նվագակցությամբ (թավջութակի և դաշնամուրի համար փոխադրմամբ):

Պոեմի վրա աշխատելուն զուգահեռ խորհում էի դաշնամուրի և նվագախմբի համար ոչ մեծ ստեղծագործություն գրելու մասին, որը հիմնված պիտի լիներ 19-րդ դարի վերջին տարածված հայկական հայրենասիրական երգերի նյութի վրա: Իմ նոր Ռապսոդիան անվանեցի «Մեր հին երգերը»՝ դրանով իսկ տուրք տալով վաղուց անցած ժամանակներին: Այդպես է լինում, երբ թերթում ես հին լուսանկարներով ալբոմը, որի մեջ պահպանվում են սրտիդ մոտ ու թանկագին մարդկանց լուսանկարները, մարդիկ, որ ապրել են իրենց անկրկնելի կյանքը:

Ռապսոդիան ես գրել եմ միանգամից պարտիտուրի տեսքով՝ ձգտելով պահպանել արտահայտման առավելագույն սեղմությունը: Կանգ առա նվագախմբի լարային կազմի և հարվածայինների վրա: Ստեղծագործության մեջ դաշնամուրի մենանվագի և լարայինների զուգորդման ընթացքում օգտագործել եմ բազմատոնայության հնարներ, որոնք, իմ կարծիքով, Ռապսոդիային յուրատեսակ արտահայտչականություն են հաղորդում:

Նույն տարում ես կատարեցի Ռապսոդիան ֆիլհարմոնիայի Մեծ դահլիճում Դավիթ Խանջյանի ղեկավարած նվագախմբի հետ: Մոսկվայում եղած ժամանակ Առնոյի խնդրանքով նրան ցույց տվեցի այդ ստեղծագործությունը: Ունկնդրումից հետո Առնոյի արձագանքը բուռն էր ու անկեղծ, ինչը շատ բնորոշ էր նրան: Հին ընկերոջս գնահատականը ինձ համար շատ քանկ էր, բայց կային և այլ, հակառակ բովանդակության կարծիքներ: Նման դեպքերում ես միշտ ապավինում եմ ամենաարդարացի ու խիստ դատավորին՝ ժամանակի գործոնին:

1974 թ. դեկտեմբերին կրկին Մոսկվայում էի՝ Էմմա Ծատուրյանի ղեկավարած Հայաստանի երգչախմբային ընկերության կոլեկտիվի համերգների առնչությամբ: Ծրագրում տեղ էին գտել նաև իմ ստեղծագործությունները:

Հյուրանոցից զանգահարեցի Շոստակովիչին, որը դեռ Դիլիջանում եղած ժամանակ խնդրել էր այցելել իրեն:

Դմիտրի Դմիտրիևիչի հետ պայմանավորվեցինք հանդիպել ցերեկվա ժամը 12-ին: Ծանոթ լինելով նրա ճշտապահությանը՝ 12-ին երեք րոպե պակաս սեղմեցի նրա դռան զանգի կոճակը: Ջրուցում էինք մոտ հիսուն րոպե, ընդ որում, ավելի շատ ես էի խոսում, իսկ նա ուշադիր լսում էր: Իմանալով, որ նոր Ռապսոդիան եմ գրել, արտահայտեց իր անկեղծ գոհունակությունը:

Շոստակովիչի համար Երևանից 1902 թ. շուստովյան կոնյակ էի բերել: Եշի պիտակի վրա նկատելով «1902» տարեթիվը՝ Դմիտրի Դմիտրիևիչն ասաց. «Այս կոնյակն ինձանից չորս տարով մեծ է...»:

Չէի կամենում չարաշահել նրա ժամանակը և խնդրեցի ինձ տալ նրա Տասնհինգերորդ սիմֆոնիայի պարտիտուրը, որն արդեն չկար վաճառքում: Իր մոտ եղած երկու օրինակներից մեկը նվիրեց ինձ իր ջերմ մակագրությամբ:

Խոսքի մեջ Շոստակովիչն ասաց, որ իր տանը փորձելու են Տասնհինգերորդ կվարտետը: Այս ավելացրեց. «Գիտե՞ք, Կոտիկ, ես Չեզ հաճույքով կառաջարկեի մնալ այդ փորձին, սակայն Չեր ներկայությամբ անհարմար կզգամ նվագողներին դիտողություններ անել»:

Պարտիտուրի վրա դնելով ամսաթիվը՝ 10-ը դեկտեմբերի 1974 թ., նա ասաց. «Հիմա դեկտեմբերն է: Պուշկինի խոսքերով ու Չայկովսկու երաժշտությամբ ասած՝ գալիք տարին ինձ ի՞նչ է պատրաստում»: Այդ պահին չէի մտածում նրա բառերի ճակատագրական իմաստի մասին...

Մի քանի ամիս անց Դմիտրի Դմիտրիևիչը հեռացավ մեզանից: Այդ մասին իմացանք 1975 թ. օգոստոսին Դիլիջանում, «Ամերիկայի ձայնով»: Արտասահմանում այդ ողբերգական իրադարձությանը առաջիններից մեկն արձագանքեց «Վաչինգտոն Պոստ» թերթը, որը մեծ սիմֆոնիստի մահվան լուրը հաղորդելով՝

նրա անունը դասում էր Մոցարտի, Բեթհովենի, Շուբերտի, Շումանի, Բրամսի կողքին:

Այդ լուրը մեծագույն կակիծով ընդունեցի՝ զգալով այն անդառնալի կորուստը, որ կրեց համաշխարհային երաժշտական մշակույթը:

Որոշվեց, որ Հայաստանից հուղարկավորությանը մասնակցելու կմեկնենք ես և Էդվարդ Միրզոյանը: Սակայն Միրզոյանին այդ մասին հաղորդել չհաջողվեց (նա մեկնել էր ծովափ՝ հանգստանալու): Ժամանակ չէր մնում, և ինձ հետ Մոսկվա թռավ երաժշտագետ Գևորգ Գյոդակյանը:

Հայաստանի մշտական ներկայացուցչությունը հսկայական պսակ էր պատվիրել, և մենք այն դրեցինք մեծ կոմպոզիտորի դագաղի մոտ, Մոսկվայի կոնսերվատորիայի Մեծ դահլիճում: Կոմպոզիտորի աճյունի կողքին նստած էին Շոստակովիչի հարազատներն ու մերձավորները: Աչքի էր ընկնում Արամ Խաչատրյանի վշտաբեկ կերպարանքը: Հիշում եմ՝ մի տարեց ռուս մարդ քարձրացավ դագաղի մոտ և համբուրեց մեծ կոմպոզիտորի ձեռքը:

Իր ցանկությանը համապատասխան նա հողին հանձնվեց Նովոդևիչե գերեզմանոցի մի համեստ անկյունում՝ իր առաջին կնոջ կողքին:

Գերեզմանոցի դարպասներից դուրս գալիս մտածում էի. «Ճակատագրի ինչքան հարվածներ տարավ այս մեծ մարդը և ինչքան չքնաղ ստեղծագործություններ թողեց մարդկանց: Ուրեմն, որքան հզոր էր նրա ոգին»:

1975 թ. մայիսին կոմպոզիտոր Ալեքսանդր Աճեմյանի հետ մենք հրավիրված էինք այն ժամանակ Գ-Դ-Հ-ում ավանդական դարձած երաժշտական փառատոնին՝ Բեռլինյան բիեննալեին: Ծրագրում տեղ գտած մեր Սիմֆոնիետների կատարմամբ փառատոնին մասնակցելու նպատակով այնտեղ մեկնեց նաև Հայաստանի կամերային անսամբլը Կոնստանտին Բաղդասարյանի ղեկավարությամբ:

Աճեմյանը չափազանց հաճելի ուղեկից էր: Բեռլինում մեզ մի հիանալի համար տրամադրեցին հենց նոր կառուցված հյուրանոցում:

Առաջին բանը, որ ապշեցրեց ինձ (թեև մինչև այդ էլ գիտեի այդ մասին), այն անհեթեթ ու անճոռնի պատն էր, որ բաժանում էր հսկայական այս քաղաքը երկու մասի: Նաև ստիպում էր խորհել մի ժողովրդի ճակատագրի մասին, որը չափազանց հարուստ պատմություն է ունեցել և աշխարհին բազում մեծագույն անուններ է տվել: Եվս մի կարևոր մանրամասն՝ մեր բիեննալեն կազմակերպված էր հիտլերյան Գերմանիայի դեմ տարած հաղթանակի 30-ամյակի տոնակատարության շրջանակներում: Դժվար չէր պատկերացնել մեզ շրջապատող գերմանացիների զգացմունքների բախումն ու հակասականությունը:

Երկուսիս ստեղծագործությունները հնչեցին նույն երեկոյի ընթացքում չափազանց հարմար կամերային դահլիճում և մեծ հաջողության արժանացան: Համերգից հետո Ունտեր դեն Լինդենով զբոսնելիս մտածում էի. «Ինչե՛ր ասես չի տեսել Բեռլինի այս հանրահայտ գլխավոր փողոցն իր գոյության ընթացքում...»:

1976 թ. սեպտեմբերին Հայֆիլհարմոնիայի Փոքր դահլիճում առաջին անգամ հնչեց իմ «Վեց տրամադրություն» դաշնամուրային շարքը: Այն գրվել էր պրոֆեսոր Վիլյի Սարգսյանի մախաձեռնությամբ, որը և դարձավ նրա առաջին մեկնաբանը: Ես միշտ բարձր եմ գնահատել այդ նուրբ ու խորաթափանց դաշնակահարին և կարծում եմ՝ նա պիտի շատ ավելի հաճախ ուրախություն պատճառի մեզ իր ելույթներով:

Մշակութային կյանքի նշանակալի իրադարձություն դարձան 1976 թ. սեպտեմբերի 1-ից 17-ը Մոսկվայի Կրեմլի համագումարների պալատում կայացած Երևանի օպերային թատրոնի հյուրախաղերը: Դրանք սկսվեցին Էդգար Հովհաննիսյանի «Մասունցի Դավիթ» օպերա-բալետի ցուցադրմամբ, այն մեծ հաջողություն ունեցավ (ըստ իս, սա մեր տաղանդավոր կոմպոզիտորի լավագույն ստեղծագործություններից մեկն է):

Այնուհետև, հենց հաջորդ օրը՝ սեպտեմբերի 2-ին, ունկնդրին ներկայացվեց իմ «Մայաթ-Նովան»: Արամ Խաչատրյանը, որը դիտել էր ներկայացումը, այդ առիթով ինձ հղեց անչափ հուզիչ այս նամակը.

«Թանկագին Կոտիկ,

Այս նամակը գրում եմ «Մայաթ-Նովա» ներկայացումից անմիջապես հետո: Շնորհավորում եմ քեզ Մոսկվայում ունեցած քո մեծ հաջողության կապակցությամբ: Ներկայացումն ուղղակի հիանալի էր: Շատ տաղանդավոր, շատ անկեղծ երաժշտություն է՝ մեծ վարպետությամբ գրված:

Դու հավերժացրիր և՛ քեզ, և՛ Մայաթ-Նովային: Նրան ազատ արձակեցիր «սազանդարների» ձեռքերից:

Այդ բանաստեղծական երգեցողությունը դու հասցրել ես աներևակայելի բարձրության: Զո այս նվաճումը պատմական հսկայական արժեք ունի: Կարծում եմ՝ հայկական օպերային արվեստի պատմության մեջ քո օպերան կգրավի ամենատառաջին տեղերից մեկը: Այն երգեցիկ է, նրա լեզուն նրբաճաշակ է, գործիքավորումն անչափ նուրբ ու հնարամիտ է: Դատարկ տեղեր բոլորովին չկան, չկա ջուր, չնայած երբեմն համեղ ջուրն անհրաժեշտ է: Թեև խոսում եմ Մայաթ-Նովայի մեղեդիների մասին, այս ամենն ամբողջովին քոնն է, սայաթնովյան մեղեդիների ոչ մեծ բաղադրությունը տարրալուծված է քո ամբողջական ու հարուստ երաժշտության մեղեդայնության մեջ: Շնորհավորում եմ քեզ և ուրախանում մեր երաժշտության համար, ուրախանում եմ, որ

մեզանում կան այնպիսի հիասքանչ ստեղծագործություններ, ինչպիսին «Մայաթ-Նովան» է: Հաղորդիր Արամին¹, որ նա չափազանց նրբազգաց ու տաղանդավոր դիրիժոր է: Հիանալի հասկանում է քո օպերայի պարտիտուրը: Վահան Միրաքյանին հաղորդիր իմ ողջույնն ու շնորհավորանքները: Նրա թովիչ երգը հոգեցունց էր, անգամ չկարողացա զսպել արցունքս: Քնքշորեն գրկում եմ քեզ՝ Խորհրդային Միության նշանավոր կոմպոզիտորներից մեկիդ: Միրով՝ Ա. Խաչատրյան: 2.9.76թ.»:

Կարճ ժամանակ անց «Կոմունիստ» թերթի հատուկ թրթակից Վ.Կարապետյանի խնդրանքով Արամ Իլյիչը պատմեց Մոսկվայի Համագումարների պալատում Երևանի օպերային թատրոնի հյուրախաղերից ստացած իր տպավորությունների մասին: Հարցազրույցի ընթացքում նա մասնավորապես ասաց. «Ինչ վերաբերում է տաղանդավոր կոմպոզիտոր Ալ.Հարությունյանի «Մայաթ-Նովա» օպերային, ապա ես առաջին անգամ չեմ այն լսում: Օպերան ինձ առաջ էլ դուր էր գալիս: Հետաքրքիրն այն է, որ ժամանակը հիանալի չափանիշ է պարզելու համար, թե արդյոք արվեստի ստեղծագործությունը կդիմանա նույն այդ ժամանակի ազդեցությանը: Եվ պիտի ուրախությամբ ասեմ, որ այժմ ավելի շատ հավանեցի այդ ստեղծագործությունը...»:

1977 թ., բավական մեծ ընդմիջումից հետո, կրկին անդրադարձա կինո-երաժշտության ժանրին: Այս անգամ բախտ ունեցա աշխատելու տաղանդավոր, չափազանց հետաքրքիր ռեժիսոր Հենրիկ Մալյանի հետ (որն, ավա՛ղ, շուտ հեռացավ այս կյանքից): Նրա «Նահապետ» կինոնկարի հերոսը հասարակ աշխատավոր է, որի բոլոր ազգականները 1915 թ. Մեծ Եղեռնի զոհ են դարձել և որն իր շրջապատի մարդկանց հոգատարության և ուշադրության շնորհիվ կրկին դառնում է աշխատանքային կյանքի՝ նրա առօրեական հոգսերով, դժվարություններով և ուրախություններով: Հիանալի դերասան Սոս Սարգսյանի կերտած կերպարը, կարծես, ինքն էր թելադրում երաժշտության ձևն ու բովանդակությունը: Միաժամանակ զգում էի, որ ֆիլմը կինեմատոգրաֆիական իր հագեցվածությամբ թերևս երաժշտության մեծ ծավալի կարիքը չուներ: Այդ զգացողությունից ելնելով՝ ընտրեցի այս կամ այն դրվագում երաժշտություն ներմուծելու եղանակը՝ չխաթարելով դրամատուրգիայի ամբողջականությունը և ավելի ցայտուն դարձնելով համապատասխան հոգեբանական իրավիճակը: Ֆիլմի յուրահատուկ լայնմոտիվն է «Դեյն յաման» ժողովրդական մեղեդին: Համարում եմ, որ սա ինձ համար առավել հետաքրքիր և բեղմնավոր աշխատանքներից մեկն էր: Կինոնկարն արժանացավ 1978 թ. Համամիութենական կինոփառատոնի գլխավոր մրցանակի:

¹ Ներկայացման դիրիժոր Արամ Քաթանյանը (խմբ.):

1977 թ. մարտ ամսին Ֆրանսիայում գործող “Quatra” հայկական երաժշտական ընկերությունը մի խումբ կոմպոզիտորների՝ Բաբաջանյանին, Միրզոյանին, Խուրդյանին և ինձ, հրավիրեց Փարիզ, որի թանգարաններից մեկի համերգային դահլիճում կայացավ մեր ստեղծագործություններից կազմված երեկո: Որոշված էր, որ կվարտետների կատարմամբ հանդես են գալու տեղի երաժիշտները, որոնց հետ ստիպված եղանք բավական լուրջ աշխատել՝ պատշաճ որակի հասնելու համար: Հատկապես շատ էր նյարդայնանում Առնոն... Ի վերջո, ամեն ինչ իր տեղն ընկավ և համերգը հաջողությամբ ընդունվեց: Ավարտին Առնոյի հետ նվագեցինք «Հայկական ռապսոդիան»:

Նույն ամսին լրանում էր Մստիսլավ Ռոստրոպովիչի 50-ամյակը. իմանալով, որ նա Փարիզում է ապրում, հատուկ նրա համար Երևանից բյուրեղապակյա շշով կոնյակ էինք բերել: Սակայն Փարիզ գալուց հետո տեղեկացանք, որ Ռոստրոպովիչը քիչ ավելի վաղ մեկնել էր ԱՄՆ՝ իր հորեյանն այնտեղ նշելու: Ես անչափ տխրեցի, քանի որ ուրախությամբ ու անհամբերությամբ սպասում էի այդ չափազանց հետաքրքիր մարդու հետ հանդիպմանը...

Մեր համերգին ներկա էր ծագումով հայ ֆրանսիացի հանրահայտ նկարիչ Գառզուն (Գառնիկ Ջուլյանյան): Նա ցանկություն հայտնեց մեզ տեսնել իր տանը: «Չարաբաստիկ» կոնյակի հարցը լուծվեց հոգուտ Գառզուի: Նրա տանը հիանալի ժամանակ անցկացրինք, թևածում էին ուրախ կատակները, երաժշտությունը... Հրածելտի պահին նա մեզ նվիրեց իր նկարներից՝ ընծայագրերով:

Վերը առիթ են ունեցել պատմելու իմ մասին, որպես բնիկ երևանցու, և թերևս պատահական չէ, որ 1977 թ., ավանդական դարձած «Էրեբունի-Երևան» տոնակատարության օրերին մեր քաղաքի մի շարք այլ հարգված գործիչների հետ մեկտեղ ես արժանացա Երևան քաղաքի Պատվավոր քաղաքացու կոչման: Այդ կոչումը համարել ու հիմա էլ շարունակում եմ չափազանց պատվավոր համարել ինձ համար:

1978 թ. ծագեց «Մայաթ-Նովա» օպերան Թբիլիսիում բեմադրելու հարցը: Տեքստը Երևանում թարգմանվեց վրացերեն, ընդ որում, հենց վրացիների կարծիքով այդ թարգմանությունը բարձր որակի էր:

Այնուհետև մեկնեցի Թբիլիսի՝ օպերային թատրոնի ստեղծագործական խմբի հետ հանդիպման: Ներկա էին նաև Վրաստանի մշակույթի նախարար Օթար Թաթթաբաշիվիլին, նախարարության երաժշտական բաժնի պետ Անտոն Ծուլուկիձեն, մի շարք կոմպոզիտորներ և երաժշտագետներ: Թեև օպերայի ձայնագրված տարբերակ ունեի, որոշեցի դաշնամուրով սեփական կատարումս ներկայացնել, ինչպես դա ժամանակին արել էի Երևանում: Պիտի նշեմ, որ

վրաց գործընկերներս մեծ ուշադրությամբ ու հետաքրքրությամբ էին լսում այդ «միանձնյա» ներկայացումը:

Զննարկման ժամանակ խոսք խնդրեց Մշակույթի նախարարը (թեև ըստ էտիկետի՝ նա պետք է եզրափակեր այդ քննարկումը): Բարձր գնահատական տալով կատարված աշխատանքին ու երաժշտական նյութի որակին՝ նա հայտնեց իր զարմանքը և ափսոսանքն այն կապակցությամբ, որ մեյդանի տեսարանի երաժշտական լուծման մեջ բացակայում են վրացական ինտոնացիաները և գերիշխում են հայկականները: Օթար Վասիլիչն այդպիսով ակնարկում էր, որ լավ կլիներ մի փոքր «վրացականացնել» այդ տեսարանը:

Զննարկմանը մասնակցող կին-երաժշտագետը (որի ազգանունը, ցավոք, չեմ հիշում), թերթերով օպերայի կլավիրը և անգամ նվագելով նրա առանձին հատվածները, մասնագիտական մեծ հմտությամբ վերլուծեց ստեղծագործությունը՝ համոզիչ փաստարկներ բերելով հոգուտ նրա ակնկալվող բեմականացման:

Այնուհետև ելույթ ունեցավ Անտոն Ծուլուկիձեն, որը կասկած հայտնեց Սայաթ-Նովայի հանդեպ չերակլ Երկրորդի քրոջ՝ Աննայի տածած սիրո փաստի պատմական հավաստիությանը...

Ցանկություն չունեի կետ առ կետ պաշտպանել իմ դիրքորոշումը և հակընդդեմ փաստարկներ բերել, թեև դրա համար մեծ ջանքեր չէին պահանջվի: Բաժանվեցինք, ինչպես ասում են, «բազմակետի» փուլում, սակայն զգում էի, որ իմ օպերան չի հայտնվելու թբիլիսյան բեմեգրի լույսերի առջև: Այդպես էլ եղավ...

Ավելի ուշ, երբ Օթար Թաքթաբիշվիլին Երևան եկավ իր «Մինդիա» օպերայի բեմականացմանը մասնակցելու (այն առաջադրվել էր Լենինյան մրցանակաբաշխության), հետաքրքրվեց՝ արդյոք «շտկումներ» մտցրե՞լ են իմ օպերայի մեջ և սրտնեղեց, որ «այն ժամանակ մի տեսակ լավ չստացվեց»: Բավական զարմացավ, երբ խնդրեցի նրան չափից ավելի չվշտանալ այդ կապակցությամբ...

1978 թ. օգոստոս ամսին Լոնդոնում կազմակերպվել էր հայկական երաժշտության հիմնախնդիրներին նվիրված փառատոն և համաժողով: Դրա նախաձեռնողն էր Լորիս Ճգնավորյանը: Ելույթ ունեցած երաժշտագետների մեջ աչքի ընկավ Ռոբերտ Աթայանը, նա հետաքրքիր զեկուցում կարդաց հայկական խազերի նոտագրական համակարգի մասին: Ջուզահեռաբար ընթանում էին ոչ մեծ նվագախմբի ուժերով կազմակերպված համերգներ, որոնց մասնակցում էին տեղացի երաժիշտներ ԱՄՆ-ից ժամանած դիրիժոր Ռուբեն Գրիգորյանի ղեկավարությամբ: Ծրագրում հնչեցին Միրզոյանի Միմֆոնիան, Կոմիտաս-Ասլանազյանի պիեսներից, իմ Միմֆոնիետը և մի շարք այլ ստեղ-

ծագործություններ: Մեր ունկնդիրները հիմնականում հայեր էին: Ներկա էին նաև անգլիացի լրագրողներ:

Անգլիայից հետո մեկնեցի ԳՖՀ, որտեղ 1978 թ. հոկտեմբերին ծրագրված էր երկշաբաթյա համերգային շրջագայություն Հայաստանի կամերային անսամբլի մասնակցությամբ: Ծրագրի մեջ տեղ էր գտել նաև իմ «Մեր հին երգերը» ռապսոդիան (անսամբլն ինձ նվագակցում էր «լարային տարբերակով», առանց հարվածային գործիքների):

Գերմանացի ունկնդիրները, ետմաբեմ գալով, հետաքրքրվում էին Ռապսոդիայի թեմատիկ նյութով և ուշադրությամբ լսում էին իմ բացատրությունները: Շատ ջերմ մթնոլորտում անցավ Գերմանա-խորհրդային բարեկամության ընկերության շենքում կայացած մեր հանդիպումը, իսկ Բյուլնում եզրափակիչ համերգից հետո մեծ ընդունելություն կազմակերպվեց մեր պատվին: Ուշագրավ էր այդ երկրի բարձր կենսամակարդակը: ԳՖՀ-ի տնտեսական ընդհանուր վերելքն այն տարիներին «Ադենաուերի հրաշք» էին անվանում:

Ավա՛ղ, 1978 թվականը ոչ միայն ուրախալի իրադարձություններով նշանավորվեց: Մայիսի 1-ին Մոսկվայում վախճանվեց Արամ Իլյիչ Խաչատրյանը: Երբեք չեմ դադարել հիանալ այն արիությամբ, որով նա դիմակայում էր դեռ երիտասարդ տարիներից իրեն տանջող հիվանդությանը:

Խաչատրյանի մահվան հետ ավարտվեց այն նշանակալի դարաշրջանը, որ կապված էր նրա անկրկնելի անհատականության և հիասքանչ ստեղծագործության հետ: Նա երջանիկ, երաժշտական իրադարձություններով հագեցված կյանք ապրեց: 50-ականներին, յուրացնելով նաև դիրիժորական ձողիկի կախարհական հատկությունները, նա շրջեց բազմաթիվ երկրներում՝ իր ստեղծագործությունները ներկայացնելով աշխարհի առավել հեղինակավոր համերգասրահներում: Նրա ստեղծագործությունները հաստատուն տեղ գրավեցին համաշխարհային երաժշտական մշակույթի գանձարանում: Հանրահայտ է նրա դարակազմիկ նշանակությունը հայ երաժշտության պատմության համար...

Արամ Խաչատրյանի հուղարկավորությունը Երևանում վերածվեց իսկական համաժողովրդական սուգի: Սգո թափորի շարժման ողջ երթուղին ծածկված էր գարնանային ծաղիկներով: Ժողովուրդն իր սիրո և երախտագիտության տուրքն էր մատուցում իր նշանավոր գավակին:

Արամ Իլյիչի վախճանն ինձ ստիպեց անորոշ ժամանակով հետաձգել իմ մասին պատրաստվող ծավալուն հեռուստահաղորդումը: Այն եթեր դուրս եկավ միայն 1979 թ. գարնանը՝ Հայֆիլիհարմոնիայի Մեծ դահլիճում իմ հեղինակային սիմֆոնիկ համերգի առիթով: Վերջինիս կապակցությամբ, «Հորիզոնի հեռու-

ներ» կոչվող իր ընդարձակ գրախոսականով հանդես եկավ կոմպոզիտոր Էդգար Հովհաննիսյանը և իրեն հատուկ լակոնիզմով բնութագրեց իմ ստեղծագործական գործունեությունը: «Նոր աշխարհի երգիչ, վերածնված ժողովրդին, ծաղկող երկիրը գովերգող ռոմանտիկ բանաստեղծ՝ այսպիսին է Հարությունյանի ընտրած գեղարվեստական առաքելությունը, որը թելադրված է իր իսկ տաղանդի բնույթով, և իր հայտնաբերած երաժշտական արտահայտչամիջոցները հավատարմորեն ծառայում են կոմպոզիտորի գեղագիտական իդեալներին: Հարությունյանի ստեղծագործությունն իր բնույթով ժողովրդական է, դեմոկրատական. բարու և լուսավորի մասին պատմելով՝ այն իր մեջ հումանիստական մեծ լիցք է պարունակում:

Հարությունյանի արվեստն իր եիմնական գծերով ինձ ներկայանում է որպես միանգամայն թարմ, խորապես նորարարական երևույթ: Իր ստեղծագործություններով կոմպոզիտորը շատերին է ստիպել ըմբռնել այսպես կոչված «պարզ միջոցների» չխունացող թարմությունը:

Կոմպոզիտորի լավագույն երկերը նշանավորել են հայ երաժշտության որոշակի, բեղմնավոր փուլերը՝ երբեմն էլ վերածվելով ոճի, ձևի կամ հուզական կերտվածքի յուրատեսակ «օրենսդիրների»: Այսպես, «Հայրենիք» կանտատը, «Տոնական նախերգանքը» կամ թավջութակի համար գրված «Էքսպրոմտը» Հայաստանում և նրա սահմաններից դուրս բազում տարիների ընթացքում ներագդել են համապատասխան ժանրային-ոճական ուղղությունների զարգացման վրա:

...Հասունության ցնծություն՝ այսպես կարելի է որակել Ալեքսանդր Հարությունյանի հեղինակային համերգի ծրագիրը: Երաժիշտ-կատարողների փայլուն մի համաստեղություն՝ երգչուհիներ Լուսինե Չաքարյանը, Գոհար Գալաչյանը, Օլգա Գաբայանը, երգիչներ Լյուտֆիյար Իմանովը, Բորիս Գրեկովը, շեփորահար Յուրի Բայանն ըստ արժանվույն ներկայացրին Ալ. Հարությունյանի ստեղծագործությունները, նա ինքն էլ հանդես եկավ համերգի ընթացքում որպես հիանալի դաշնակահար: Ոգեշունչ վարպետությամբ համերգային ծրագիրը ղեկավարեցին դիրիժորներ Հովհաննես Չերիջյանն ու Ռաֆայել Մանգասարյանը:

Համերգի ընթացքում հնչած ստեղծագործությունները ևս մեկ անգամ հաստատեցին, որ Հարությունյանը ստեղծագործական լավ վարժավիճակի մեջ է, որ նա ներշնչանքի, մշտական ստեղծագործական աշխատանքի մարդ է:

Ալեքսանդր Հարությունյանի հեղինակային համերգը ես ընկալեցի որպես անցած ուղու մասին հուզիչ խոստովանանք, որպես ստեղծագործական նոր հրճվանք ապրելու ձգտման վկայություն»: («Կոմունիստ», 12.06.1979):

Կուզենայի մի քանի խոսքով անդրադառնալ իմ մանկավարժական գործունեությանը: Դեռևս 1948 թ. ամռանը, երբ Մոսկվայում էի, նամակ ստացա Երևանի կոնսերվատորիայի ռեկտոր Սարաջևից, որում նա առաջարկում էր ինձ ստանձնել Վարդգես Տայյանի մասից հետո թափուր մնացած կոմպոզիցիայի դասարանը: Սակայն ես չկարողացա ուսումնական տարվա սկզբին Երևան գալ, քանի որ լրջորեն աշխատում էի «Կանտատ Հայրենիքի մասին» ստեղծագործության վրա:

Շատ տարիներ անց, 1965 թ. նույնանման առաջարկություն ստանալով կոնսերվատորիայի ռեկտոր Ղազարոս Մարյանից՝ ես գործի անցա Երևանի կոնսերվատորիայի կոմպոզիցիայի ամբիոնում, որի առաջատար պրոֆեսորներն էին Գ. Եղիազարյանը, Է. Սիրզոյանը և Ղ. Մարյանը:

Չեմ քաքցնի, որ մանկավարժական աշխատանքն ինձ ստիպեց խորհել բազմաթիվ հարցերի մասին և նորովի մոտենալ ստեղծագործական պրոցեսին: Չնայած իմ ուսման ժամանակից շատ տարիներ էին անցել, հիշողության մեջ վառ էին Տայյանի և Լիտինսկու մանկավարժական մոտեցումները: Ստեղծագործող երիտասարդության հետ պարապմունքների ընթացքում ինքս էլ ձգտում էի հետևել այդ սկզբունքներին՝ հիմնվելով նաև ստեղծագործական աշխատանքի իմ սեփական, բավականին հարուստ փորձի վրա:

Իմ առաջին շրջանավարտներից են՝ Արամ Սաթյանը, Էդուարդ Մադոյանը, Կարինե Կարապետյանը, Գևորգ Մանասյանը, Դավիթ Ազարյանը, Սերգեյ Բաղդասարյանը, Աշոտ Ղազարյանը, Աննա Գարսոյանը, Լիլիթ Սիմոնյանը... Նրանցից յուրաքանչյուրը թանկ է ինձ համար: Բոլորն էլ այսօր օգտակար աշխատանք են կատարում երաժշտական ստեղծագործության և մանկավարժության բնագավառներում:

Նրանցից ոմանք կոնսերվատորիա են եկել բավական լավ գիտելիքներով, որոնք ձեռք էին բերել Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում, Էդուարդ Բաղդասարյանի և Գրիգոր Հախինյանի դասարաններում, կամ Չայկովսկու անվան մասնագիտական երաժշտական դպրոցում, որտեղ կոմպոզիցիայի դասարանը վարում էր Ստեփան Ջրբաշյանը: Նման ուսանողների հետ շատ ավելի դյուրին էր աշխատել ու շփվել մեր բարդ մասնագիտության ոլորտում:

Հայտնի է, որ հնարավոր չէ կոմպոզիցիա սովորեցնել: Կարելի է լուրջ փորձել ճիշտ ուղղություն տալ ուսանողի օժտվածությանը՝ նրան հաղորդելով կոմպոզիցիայի տեխնիկայի հիմունքները: Այդ իսկ պատճառով չափազանց կարևոր է, թե ո՞վ է մտնում ստեղծագործական դասարան, ինչպիսի՞ն է նրա աշխարհայացքը և ստեղծագործական պաշարը...

Մեծ նշանակություն են տալիս ապագա կոմպոզիտորների ընդհանուր զարգացմանը: Փորձում են նրանց ուշադրությունը հրավիրել ինչպես մասնագիտական, այնպես էլ ընդհանուր գրականության ուսումնասիրման վրա:

Մանկավարժական գործունեությունը միշտ է ինձ գրավել, թեև գերիշխողը չէ իմ գործունեության մեջ:

Հիրավի, մանկավարժական գործունեության անցնելուց հետո միայն կարողացա ամբողջությամբ գնահատել իմ սիրելի ուսուցիչների աշխատանքը: Հետևելով նրանց օրինակին՝ ձգտում եմ յուրաքանչյուր ուսանողի հանդեպ կիրառել անհատական մոտեցում, ներշնչել սեր և հավատ ընտրված մասնագիտության նկատմամբ, նաև (թող ասածս բարձրագույն չքվա)՝ հասարակության առջև պատասխանատվության զգացում:

1980 թվականը, երբ լրացավ իմ 60-ամյակը, անցած ուղու բեղմնավորության վերլուծման և իմաստավորման առիթ դարձավ: Չէի կամենում շեշտը դնել գրված ստեղծագործությունների քանակական կողմի վրա: Խորհում էի դրանց գեղարվեստական արժեքի, ինչպես նաև այն մասին, թե այս կամ այն ստեղծագործությունն որքանով է գրավիչ կատարողների և, իհարկե, ունկնդիրների համար:

Հորեյանական այդ տարվա ընթացքում է գրվել Ֆլեյտայի, լարային նվագախմբի և տավղի համար իմ Կոնցերտը: Այն ստեղծելիս նկատի ունեի մուկվացի հայտնի ֆլեյտահար Ալեքսանդր Կոռնենի կատարողական վարպետությունը, և պատահական չէ, որ հենց նա էլ դարձավ այդ ստեղծագործության առաջին մեկնաբանը: Կոնցերտի պրեմիերան տեղի ունեցավ Տայիմում և հնչեց Ֆուատ Մանսուրովի ղեկավարությամբ: Հետագայում Ֆլեյտայի կոնցերտը Մոսկվայում ու Երևանում հնչեցրել են տարբեր մենակատարներ և կամերային նվագախմբեր:

1980 թ. ամռանը Կիսլովոդսկում հանգստանալիս սկսեցի աշխատել «Պոեմ երգի մասին» վոկալ-սիմֆոնիկ պատկերի վրա: Սուպրանոյի, երգչախմբի և նվագախմբի համար գրված այս ստեղծագործության հիմք է ծառայել «Նահապետ» ֆիլմի իմ երաժշտությունը:

Նույն թվին Կիսլովոդսկի հայտնի Կուրորտային դահլիճում տեղի ունեցավ իմ հորեյանական հեղինակային համերգը: Ֆիլհարմոնիայի նվագախումբը ղեկավարում էր Ռոստոփի սիմֆոնիկ նվագախմբի գլխավոր դիրիժոր, հիանալի երաժիշտ Սեմյոն Կոզանը: Համերգի ընթացքում իր բովանդակալից մեկնաբանություններով հանդես եկավ մոսկվացի հանրածանոթ երաժշտագետ Ռաիսա Գլեզերը:

Այդ օրերին Կիսլովոդսկում էր հանգստանում նաև Դմիտրի Կաբալակին: Նա ներկա էր համերգին և իր կարծիքն արտահայտեց երևանյան «Կոմունիստ» թերթին ուղղված հոդվածում: Ստորև ներկայացվում է մի հատված այդ հոդվածից, որն, իմ կարծիքով, առաջին հերթին արտացոլում է նաև Կաբալակու գեղագիտական աշխարհայացքը:

«Իսկապես մեծ էր հաջողությունը:

Ալեքսանդր Հարությունյանն այս Միմֆոնիայում իր տաղանդի իրական ուժն ու խորությունն ի հայտ է բերել: Առաջին անգամ այդ երաժշտությունը լսելուս պահից անցել է 20 տարուց ավելի: Այժմ զգացի, որ այն ոչ միայն չի խունացել ժամանակի ներգործությունից, այլև ավելի մեծ տպավորություն է գործում:

Այդ երաժշտությունը գերում է իր անկեղծ մարդկայնությամբ, իսկական դրամատիզմով, մեղեդային շնչառության ազատությամբ, արտացոլված զգացմունքների գեղեցկությամբ ու ճշմարտացիությամբ: Որքան հաճախ է մեր օրերում զգացվում նշված հատկությունների պակասը, հատկություններ, որոնց տեղը չի կարող գրավել «գերարդիական» ոչ մի նորամուծություն, տեխնիկական վարպետության ոչ մի հնարք...

Ինձ համար այժմ հենց այսպիսի հայտնություն դարձավ Հարությունյանի Միմֆոնիան:

Համերգի երկրորդ բաժնում ուղղակի ցույց լուսաշող ու կենսուրախ «Տոնական նախերգանքը»: Ապա Հովհաննես Բաստաջյանը կատարեց Հարությունյանի երգերից երեքը: Հատկապես հաջող էր Սայաթ-Նովայի «Մուտքի երգը» համանուն օպերայից. վերջինիս հիանալի կատարումը Մոսկվայում երևանյան օպերային թատրոնի հյուրախաղերի ժամանակ մոսկվացի երաժշտասերները լավ են հիշում:

Այնուհետև հնչեց երկրորդ բաժնի ամենահետաքրքիր ու պայծառ ստեղծագործությունը: Բեն ելավ հեղինակը՝ Ալեքսանդր Հարությունյանը և հիանալի կատարեց «Մեր հին երգերը» կոչվող, դաշնամուրի և նվագախմբի համար գրված Ռասպտոդիայի դաշնամուրի մենամկազը: Այդ սեղմ, վարպետորեն հորինված ստեղծագործության մեջ մեկ ցնծությամբ, մեկ քնարականությամբ, մերթ ուրախ, մերթ տխուր, մերթ՝ քայլերգայնության ոլորտին մերձենալով, հնչում են Հայաստանի հիմնավոր ժողովրդական երգերը:

Ի վերջո, համերգի ավարտին նվագախումբը հնչեցրեց պայծառ «Կոնցերտային վալսը»:

Ահա այսպես մեզ ներկայացավ Ալեքսանդր Հարությունյանը այդ երեկո՝ սկսած իր Սիմֆոնիայի ողբերգականությամբ լի բախումներից մինչև Վալսի դյուբիշ պտույտները՝:

Կիսավոդոսկի համերգից հետո նույն ծրագրով իմ հեղինակային համերգը տեղի ունեցավ Դոնի Ռոստովում: Նրա նախածոնողը կրկին Սեմյոն Կոզանն էր, որն այս անգամ *իդիսկ* նվագախմբի հետ լուրջ աշխատանք էր կատարել և ողջ ծրագիրն ունկնդրին հրամցրեց պատշաճ մակարդակով:

Իմ հոբելյանական հեղինակային երեկոների շարքում ուզում եմ առանձնացնել Դավիթ Խանջյանի ղեկավարությամբ Երևանի ֆիլհարմոնիայի Մեծ դահլիճում կայացած համերգը: Նրա ծրագրում ընդգրկված էին Սիմֆոնիան, դստերս՝ Նարինեի կատարմամբ Դանյամուրի կոնցերտինոն, Շեփորի կոնցերտը, որի մենակատարն էր Մոսկվայից հատուկ ժամանած Տիմոֆեյ Դոկչիցերը, «Պոեմ երգի մասին»-ը Լուսինե Ջաբարյանի կատարմամբ և «Հայրենիքիս հետ» խմբերգը (ելույթ ունեցավ Հայաստանի ակադեմիական երգչախումբը): Ներածական վառ, բովանդակալից խոսքով հանդես եկավ երաժշտագետ Արաքսի Սարյանը:

Դ. Խանջյանն ամենայն մանրակրկիտությամբ հղկել էր համերգային ծրագիրը. այն ուղղակի հիանալի հնչեց: Ասվածն առանձնապես վերաբերում է Սիմֆոնիայի մեկնաբանմանը. վերջինս ի հայտ բերեց ստեղծագործության մի շարք նոր կողմեր: Թերևս, դա իմ Սիմֆոնիայի լավագույն կատարումներից մեկն էր:

Մամուլը նկատելի աշխուժությամբ արձագանքեց համերգին: Երեկոյի ընդհանուր մթնոլորտն իսկապես տոնական էր: Ներկա էին Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը և Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Կ. Դեմիրճյանը:

Համերգի ավարտից հետո ես բեմ բարձրացա, շնորհակալություն հայտնեցի բոլոր ներկաներին և կատարողներին՝ Դավիթ Խանջյանին անվանելով «իմ հեղինակային համերգի հեղինակ»:

Խորը ցավով եմ հիշում, որ որոշ ժամանակ անց, 1981 թ. փետրվարին Խանջյանն այլևս մեզ հետ չէր: Նա իր հետ տարավ բազմաթիվ հրաշալի, բայց, ավա՛ղ, չիրականացված մտահղացումներ: Սեր ողջ մշակույթի համար նրա անժամանակ մահը հսկայական կորուստ էր:

Հանրապետության հրաշալի կատարողական կոլեկտիվների մասին խոսելիս չեմ կարող չանդրադառնալ Պետական ակադեմիական երգչախմբին և

¹ Կաբալևսկու հողվածը չի հրապարակվել: Այն պահպանվում է Ա. Հարությունյանի արխիվում (խմբ.):

ճրա տաղանդաշատ ու փորձառու ղեկավար Հովհաննես Չեքիջյանին: Լինելով եվրոպական, ռուսական և խորհրդային խմբերգային համերգացանկի գործուն պրոպագանդիստ՝ այդ կոլեկտիվը դարձավ նաև հայ կոմպոզիտորների բազմաթիվ ստեղծագործությունների առաջին մեկնաբանը: Նրա կատարմամբ բազմիցս հնչել են իմ «Կանտատ Հայրենիքի մասին» և «Ասբ հայ ժողովրդի մասին» երկերը, Եղեռնի զոհերին նվիրված Ռեքվիեմը, Հայաստանի՝ Ռուսաստանի կազմի մեջ մտնելու 150-ամյակի, Հովհաննես Թումանյանի, Ավետիք Իսահակյանի հորեյրանների կապակցությամբ գրված իմ երգերը և այլ ստեղծագործություններ (հաճախ դրանք եզրափակում էին Կրեմլի համազույգների պալատում, ԽՍՀՄ Մեծ թատրոնում կամ Երևանի օպերային թատրոնում կազմակերպված հանդիսավոր երեկոները):

Կարծում եմ, որ այդ տարիներին իր ծաղկման շրջանն ապրող այդ կոլեկտիվի կատարողական արվեստը 1982 թ. ինձ հուշեց Խմբերգային սիմֆոնիայի ստեղծման միտքը (երգչախումբը երգում է առանց խոսքի, հարվածային գործիքների նվագակցությամբ): Ակադեմիական երգչախումբը Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ փայլուն կատարեց այդ ստեղծագործությունը: «Միմֆոնիան շատ լավ ձեռքերում է,– ինձ ուղղված նամակում գրել է մոսկվացի երաժշտագետ Կոնստանտին Սակվան:– Չեքիջյանի նման երաժիշտների թիվը մեր երկրում (երևի թե մյուս երկրներում էլ) մեծ չէ: Եվ էլի մի բան, որն իհարկե ամենակարևորն է՝ պետք է գրել շատ գեղեցիկ երաժշտություն: Իսկ Դուր կարողանում ու սիրում եք այդ աներ» (29.05.1982):

Մոսկվայում ԽՍՀՄ մշակույթի նախարարության կոլեգիայում Միմֆոնիայի ունկնդրումից հետո երաժշտագետ Իրինա Շեխունինան ինձ ուղղած իր 30.07.1982 թ. նամակում գրել է. «Չեք Խմբերգային սիմֆոնիան նշանակալի, հետաքրքիր ստեղծագործություն է, որն արժանի է հնչելու Մոսկվայում՝ և արտասահմանում»:

Երկրորդ խմբագրմամբ Խմբերգային սիմֆոնիան ստացավ «Խմբերգային տրիպտիխ» անվանումը և հետագայում կատարվել է հենց այդ անվամբ:

1983 թ. ստեղծվեց եռամսա “Retro” Սոնատը ալտի և դաշնամուրի համար: Այդ գործիքն իր առանձնահատուկ հնչերանգով վաղուց էր ինձ հրապուրում: Սոնատի անունն էլ պատահական չէր: Նրա երաժշտությունը, կարծես, տանում է անցած-գնացած տարիների, ինձ համար թանկ մարդկանց մասին հիշողությունների գիրկը: Այդ իմաստով հատկապես ցայտուն է դանդաղ 2-րդ մասը: Սոնատը տպագրվեց Մոսկվայի «Մովետսկի կոմպոզիտոր» հրատարակչության կողմից, իսկ հետագայում ձայնագրվեց Ռադիոյում Կոմիտասի անվան քառյակի ավտահար Ալեքսանդր Կոսեմյանի և իմ կատարմամբ:

Նույն տարվա գարնանը ԱՄՆ-ի Կենտուկի նահանգի Երաժշտական ընկերությունն ինձ հրավիրեց Օլենսբորո քաղաքում կայանալիք՝ շեփորի

համար իմ գրած «Թեմա և վարիացիաների» առաջին կատարմանը: Շեփոքի մեծանվագով հանդես եկավ ամերիկացի երաժիշտ Հարրի Դիլտոբը: Նվագախմբի ղեկիժորն էր Լևոն Գրիգորյանը (ամերիկացի ղեկիժոր Ռուբեն Գրիգորյանի որդին): Գրեթե ամբողջությամբ ամերիկացի ունկնդիրներից կազմված լսարանն ինձ չափազանց ջերմ ողջունեց:

Ամերիկայի այս այցելությունը կազմակերպված էր ինձ «Օրփեոսի դիպլոմ» («*Orpheus Award*») շնորհելու կապակցությամբ (որի հանձնաժողովը գտնվում է Կենտուկի նահանգում): Դիպլոմի հանձնման արարողության մթնոլորտը շատ հանդիսավոր էր: Հայտարարվեց, որ դիպլոմը շնորհվում է կոմպոզիտորին «ԱՄՆ-ում նրա երաժշտության ժողովրդականության համար»: Իմ ժամանումը համընկավ խորհրդա-ամերիկյան հարաբերությունների ընդհանուր ջերմացման հետ. տեղական թերթերում ինձ «խաղաղության պատվիրակ» էին անվանում:

1983 թ. ամռանը Դիլիջանի Ստեղծագործական տանը հանգստանում և աշխատում էր Առնո Բաբաջանյանը: Նրա հետ շփումը, ինչպես միշտ, ուրախալի էր բոլորիս համար: Հիշում եմ, թե ինչպես դիլիջանյան իմ նախորդ այցերից մեկի ժամանակ Չինգիզ Այթմատովի Դիլիջանում գտնվելու առիթով սեղանի շուրջ էինք հավաքվել իմ առանձնատանը: Ներկա էր նաև Առնոն. այդ երեկո նա առանձնահատուկ տրամադրության մեջ էր և իր անզուգական դերասանական վարպետությամբ տարբեր զվարճալի պատմությունների ու դրվագների սեփական «բեմադրություններով» ստիպում էր արտասվելու չափ ծիծաղել...

Հաճախ եմ մտածել, որ Առնոն հռչակավոր դերասան կդառնար, եթե չընտրեր երաժշտի մասնագիտությունը:

Այս, ավանդ, վերջին անգամ Դիլիջանում լինելով՝ Առնոն լի էր կենսուրախությամբ, աշխատում էր, կատակում, և կարծես չկար գալիք դժբախտության և ոչ մի նշան:

Այդ տարվա սեպտեմբերին իմ ծննդյան կապակցությամբ մեր տուն եկող հյուրերին մենակ էի ըմբռնում (Իրինան հիվանդանոցում էր, խնամում էր ծանր հիվանդ իր մորը): Ուղիղ կեսգիշերին հայտնվեց Առնոն, մինչ այդ հեռուստատեսային ստուդիայում էր: Մոտավորապես ժամը 2-ին մոտեցավ դաշնամուրին և սկսեց նվագել Ռախմանինովի պրելյուդները: Նվագում էր յուրահատուկ ոգեշնչմամբ ու հուզմունքով: Մտքովս էլ չէր անցնի, որ իմ տանը վերջին անգամ եմ նրան տեսնում...

Հոկտեմբերի 20-ից հետո Առնոյի վիճակը վատացավ: Գանգատվում էր կրծքավանդակի շրջանում ցավերից, կասկածում էր, որ միջկողային ներազիս

է: Նա շատ էր տառապում, և հոկտեմբերի վերջին ստիպված էր պառկել հիվանդանոց:

Հոկտեմբերի կեսերին մահացավ Իրինայի մայրը: Նրան հողին հանձնելուց հետո, նոյեմբերի սկզբին Իրինային առաջարկեցի տաան օրով մեկնել Գագրա՝ մի փոքր ցրվելու և ուշքի գալու: Մեկնումից առաջ այցելեցի Առնոյին և ասացի, որ կարճ ժամանակով եմ բացակայելու: Կարող էի ենթադրել, որ վերջն այդքան մոտ է...

Գագրա գալուց մեկ շաբաթ անց ստացանք Առնոյի մահվան լուրը և ամմիջապես վերադարձանք Երևան: Պարզվեց, որ ներալգիա չէր, այլ հիվանդություն, որից քչերն են փրկվում:


Առնոյի՝ հուղարկավորությունը, առանց չափազանցության, իսկապես համաժողովրդական վշտի անկեղծ դրսևորման վերածվեց: Անընդհատ հնչում էին հրաժեշտի հուզումնալից խոսքեր, իսկ ես մի տեսակ մթագնության մեջ էի ու այդ խոսքերի իմաստը չէի ընկալում: Այդ դառը թուպեներին աչքերիս առջև պլացավ համատեղ ապրած մեր ողջ կյանքը...

Առնոյի մահվան հետ կապված ծանր տրամադրությունն իր հետքը թողեց Երևանի կոնսերվատորիայի 60-ամյակի առթիվ մի քանի օր անց տեղի ունեցած տոնակատարության վրա: Հիշում եմ, ինչպես օպերային թատրոնում կայացած հորեյանական երեկոյի ընթացքում մի քանի թուպեով դահլիճի լուսավորումը խունացավ և լուռության մեջ հնչեց Առնոյի վերջին ձայնագրություններից մեկը՝ նրա «Էլեգիան» Արամ Խաչատրյանի հիշատակին...

Չեմ կարող չանդրադառնալ այն հրատարակչին, որի հետ ինձ կապում են վերջին 17 տարիների սերտ գործնական հարաբերությունները: Խոսքը շվեյցարական “BIM” հրատարակչության տնօրեն Ժան-Պիեռ Սատեի մասին է: Նա պատվիրում և հրատարակում է հիմնականում փողային գործիքների համար նախատեսված ստեղծագործություններ:

Չանգահարելով Երևան՝ Մատեն առաջարկեց հանդիպել պայմանագրի կնքման նպատակով: Մեր հանդիպումը կայացավ Լոնդոնում, 1982 թվականին. նա ինձ խնդրեց տրոմբոնների քառյակի համար երկու պիես գրել, ինչը և արեցի համեմատաբար կարճ ժամանակամիջոցում և նուտաները ուղարկեցի Շվեյցարիա:

Երևան գալուց հետո նրանից ստացա հաջորդ պայմանագիրը՝ պղնձյա փողայինների (2 շեփոր, գալարափող, տրոմբոն և տուբա) հնգյակի համար ստեղծագործություն գրելու առաջարկությամբ: Պայմանագիրը ստորագրված էր, սակայն Առնոյի մահվան տարում ի վիճակի չէի որևէ բան ստեղծելու և միայն 1984 թ. գրեցի «Հայկական էսքիզներ» կոչվող քառամաս սյուիտը («Առավոտ», «Կենաց», «Սգո երգ», «Հարսանյաց քայլերգ»): Իրեն հատուկ արագա-



Սի դրվագ «Սայաթ-Նովա» օպերայից: Առջևի պլանում՝ Արտաշես Հայրյանը Սայաթ-Նովայի դերում: Երևան, 1969 թ.:




«Սայաթ-Նովա» օպերայի բեմադրող խումբը և գլխավոր դերակատարները: Երևան, 1969 թ.:




Դմիտրի Շոստակովիչի հետ:
Մոսկվա, 1972 թ.:

Լիբրալի ինտելեկտի
 Գրեգորի Բրեժնևի
 (Կոչար) ի հանդեպ
 ընդհանուր զրույց
 Մոսկվայում Զ. Շոստակովիչի
 10 XII 1944 թ. Մոսկվա

Դ. Շոստակովիչի ընծայագիրը
 Տասնհինգերորդ սիմֆոնիայի պար-
 տիտուրի վրա:



Գեորգի Սվիրիդովի հետ:
 Մոսկվա, 1982 թ.:



Հորիզոնային կոնցերտ, Մարտի 1969 թ. 12.8.19

Դմիտրի Կաբալակովու հետ: Մոսկվա, 1969 թ.:

ЧЕТВЕР 11
 Пятница 11

НАЦИОНАЛЬНЫЙ ЗАЛ им. М. В. ЛУКСИНА
 1254 00000

Абонементы № 17 та № 21

Авторский симфонический концерт
 народного артиста Владимирского РСР, лауреата Государственной премии СССР

ОЛЕКСАНДРА ГРИГОРОВИЧА АРУТЮНЯНА

ПРОГРАМА

Симфония 20 номер
 Концертный для фортепиано и оркестра
 Пять частей

Получил: 1968. 12.18.1969
 Состояние: удовлетворительно

УЧАСТИЕ ВЗЯЛИ:

ДЕРЖАВНИЙ ЗАКОННОСТІ СІМФОНІЧНИЙ ОРКЕСТР УРСР
 Директор оркестра: Владимир Александрович Шендерович

ОГАН ДУРЯН
 дирижер

АВТОР
 Владимир Григорович Арутюнян


ОЛЕНА МИХАЕЛЯН
 концертмейстер

Выпуск: 4. 19. 1969. 90 стр.

1960-ականների ազդագրերից:



Մատիսլավ Ռոստրոպովիչի (կենտրոնում) և Գերոնտի Թալալյանի հետ: 1973 թ.:



Մարտիրոս Սարյան: Ալեքսանդր
Հարությունյանի դիմանկարը: 1951 թ.:



Մինաս Ավետիսյան: Ալեք-
սանդր Հարությունյանի դի-
մանկարը: 1964 թ.:



Երևանի կոնսերվատորիայի կոմպոզիցիայի դասարանի ուսանողների հետ: Չախից կանգնած՝ Է.Սաղոյան, Ա.Գարսոյան, Գ.Քյոսայան, Ա.Ղազարյան, Ս. Բաղդասարյան: Նստած՝ Գ.Մանասյան, Ալ.Հարությունյան, Ա.Նազարյան, Ա.Սաթյան: Առջևի պլանում՝ Դ.Ազարյան:



Կոմիտասի անվան քառյակի հետ: Չախից՝ Յակով Պապյան, Ֆելիքս Սիմոնյան, Ալ.Հարությունյան, Սուրեն Հախնազարյան և Էդուարդ Թադևոսյան:

Gewandhaus zu Leipzig

Mittwoch, den 28. September 1965, 19.30 Uhr - Folge A
Donnerstag, den 29. September 1965, 19.30 Uhr - Folge B
Konzertstätte

2. Anrechtskonzert

Dirigent: Ogan Durjan, SU

Solist: Kurt Hillawsky

Arutjunjan: Fest-Ouvertüre

Mozart: Klarinettenkonzert A-Dur, KV 602

Berlioz: Phantastische Sinfonie, op. 14

Karte in der Gewandhausdirektion Dresden (Hilfenstr. 5, Postfach 1400, Post- und Fernämter)
10. Verkaufsstelle: Gewandhaus zu Leipzig

COMITETUL PENTRU ARTA
COMITETUL DE RADIO
DE PE LANGA CONSILIUL DE MINISTRI

ATENEUL R.P.R.

Joi 4 Octombrie 1951, ora 20

CONCERT SIMFONIC DE MUZICA SOVIETICA

PROGRAM:

ARUTIANIAN: Cantata Patriei
Solist: P. STEFANESCU-OGANDA (solist)

ZENaida PALLY (solist)

Orchestra Simfonică Radio

Carul Comitetului de Radio și Carul Filarmonei de Stat

Dirijor: TEODOR ROGALSKI

PROKOFIEV: Concertul No. 3 pentru pian și orchestră
Solist: SILVIA SERESCOU

HACIATURIAN: Simfonia No. 3
Orchestra Filarmonei de Stat
Dirijor: GEORGE GEORGESCU

Biletete se găsesc la Agenția „AGEȘ” Bd. 4 Martie, No. 6. Tel. 345.75

Տարբեր տարիների ազդագրեր:

АРМКОНЦЕРТ

ДСМ КАМЕРНОЙ МУЗЫКИ

29

СЕНТЯБРЯ 1960 г.



АВТОРСКИЙ КОНЦЕРТ

Народная артистка СССР, лауреата Государственных премий СССР и Арм. ССР, профессора

АЛЕКСАНДРА АРУТЮНЯНА

(к 60-летию со дня рождения)

УЧАСТВУЮТ:

Государственный **Камерный ансамбль Армонии**,
худ. руководитель - засл. арт. Арм. ССР **КОНСТАНТИН ВАГДАСЯН**

Народная артистка Арм. ССР, лауреат Гос. премии Арм. ССР **МЕДЕЯ АБРАМЯН** (виолончель)

Народная артистка Арм. ССР **АНЖЕЛА АРУТЮНЯН** (скрипка)

Заслуженная артистка Арм. ССР, лауреат международных конкурсов: **СВЕТЛАНА НАВАСАРЯН** (ф-но)

Заслуженные артисты Арм. ССР **ВИЛАИ САРКИСЯН** (ф-но), **АРТАШЕС АЙРЯН** (баритон).

НЕЛИ ДАНИЭЛЬ-БЕК (ф-но), **ГЕОРГИЙ КУЗАНОВ** (ф-но)

Начало в 20 час.


Билеты продвосты



Տիկնոջ՝ Իրինա Օդեմովայի
հետ:




Դստեր՝ Նարինեի հետ:




Որդու՝ Սուրենի հետ:



«Օրփեոսի դիպլոմի» հանձնումը: Բաղար Օվենսբորո (ԱՄՆ), 1983 թ.:



«Օրփեոսի դիպլոմը»:



Երևանի պատվավոր քաղաքացու կոչումը շնորհելու արարողությունը: 1977 թ.:



Ղազարոս Սարյանի, Էդվարդ Միրզոյանի, Առնո Բարաջանյանի, Հովհաննես Փարաջանյանի հետ: 1981 թ.:



Երգչուհի Զարա Դուրխանովայի հետ: 1981 թ.:



Դիրիժոր Վալերի Գերգիևի հետ: Լենինգրադ, 1990 թ.:




Ալ. Հարությունյանը՝ պղնձյա փողային հնգյակների միջազգային մրցույթի ժյուրիի նախագահ: Ք.Նարբոն (Ֆրանսիա), 1990 թ.:




Ալ.Հարությունյանը «Ռեկեմցե-Բրաս» փողային հնգյակի արտիստների հետ՝ Իտոն քաղաքում (Անգլիա) կայացած համերգից հետո: Չախից՝ Իրինա Օդենովան բոնիկների հետ:



Փարիզի Գավո դակիճում շեփորի համար «Թեմա և վարիացիաների» կատարումից հետո: 1988 թ.: Մենակատար՝ Բեռնար Սուստրո, դիրիժոր՝ Ժան-Ժակ Վեռներ:



Ֆինլանդիայի Լախտի քաղաքում Տուբայի կոնցերտի փորձի ժամանակ:



“BIM” ֆիրմայի հրատարակիչ Ժան-Պիեռ Մատեի հետ: Ըվեյցարիա, 1990 թ.:

Le Salon Musical de Paris GAVEAU

45-47, RUE DE LA BOÉTIE - 75008 PARIS
J.M. FOURNIER PRODUCTIONS



CONCERTS QUATRA 89



VENDREDI 3 MARS A 20 H 30

CYCLE GRANDS ET JEUNES SOLISTES

ALEXANDRE HAROUTIUNIAN

Rhapsodie pour piano et orchestre sur des chants arméniens

L'auteur au piano (première audition en France)

STEPHEN HACIKYAN - CAROLE SUE MUKHALIAN - HASMIG SURMELIAN

HÄENDEL - MOZART - HOVHANNES

L'Orchestre Jeune Philharmonie

Direction. JEAN-JACQUES WERNER

Location : QUATRA (42.60.7478) - GAVEAU (45.63.20.30)

Գավո դահլիճում տեղի ունեցած համերգի ազդագիրը: 1989 թ.:



Ռուբեն Ահարոնյանը, Գրիգոր Համբարձումյանը, Նարինե Հարությունյանը և Ալեքսանդր Հարությունյանը Գավո դահլիճում տեղի ունեցած համերգից հետո: 1990 թ.:

ALEXANDER ARUTIUNIAN
TUBA PART

THEME AND
VARIATIONS

for Trumpet and Orchestra
Piano Reduction

ARUTIUNIAN

CONCERTO

FOR TRUMPET AND PIANO

(ROGER VOISIN)



INTERNATIONAL MUSIC COMPANY
New York City

ARUTIUNIAN




ARUTIUNIAN

TRUMPET

Alexander ARUTIUNIAN

CONCERTO

for Trumpet and Orchestra
Piano and Piano
(reduction)

Editions  Bim
CH-1650 BULLE (SWITZERLAND)

Վերջին տարիների արտասահմանյան հրատարակումներից:

NEW YORK PHILHARMONIC

FOUNDED IN 1842

KURT MASUR, Music Director

EVERY FISHER HALL
HOME OF THE NEW YORK PHILHARMONIC

LINCOLN CENTER FOR
THE PERFORMING ARTS

Thursday Evening, February 9, 1995, at 8:00
Friday Evening, February 10, 1995, at 8:00
Saturday Evening, February 11, 1995, at 8:00
Tuesday Evening, February 14, 1995, at 7:30

11:30AM, 11:30PM, 12:30AM,
and 12:30PM Concerts

Kurt Masur, Conductor
Philip Smith, Trumpet

"A Tour Through Europe"

BRITANNIA Overture to *The Bartered Bride*

LISZT Hungarian Rhapsody No. 2nd
(orch. Liszt/Doppel)

ARUTUNIAN Concerto for Trumpet and Orchestra
Andante—Allegro energico—Menu mosso—
Allegro (Trumpet)

Intermission

JOHANN STRAUSS, JR. Overture to *The Gypsy Baron*

MONUSIEKO Mazurka from *Halka*

BEETHOVEN March from *Fidelio*

BEETHOVEN March No. 1 in F major for Military Band,
WoO 18 ("For the Bohemians")

SIBELIUS Finlandia, Tone Poem, Op. 26, No. 7

RAVEL *La Valse*

*Announced by the New York Philharmonic and currently available

This concert series is dedicated to CDbank in grateful appreciation
for its steadfast support of the New York Philharmonic.

The John F. Kennedy Center for the Performing Arts

JAMES D. WOLFENSON, Chairman
LAWRENCE J. WILKER, Managing Director

The John F. Kennedy Center
for the Performing Arts
presents the

National Symphony Orchestra

MSTISLAV ROSTROPOVICH, Music Director
SIXTY-SECOND SEASON, 1992-1993

Thursday Evening, January 21, 1993, at 8:00
Friday Evening, January 22, 1993, at 8:00
Saturday Evening, January 23, 1993, at 8:00

MSTISLAV ROSTROPOVICH, Conductor
WILLIAM HARTGUTUNIAN, Violoncello
LOREN KITT, Clarinetist
PAVEL PEKARSKY, Violinist
LEV PEKARSKY, Violinist
CHARLES WETHERSDEE, Violoncello

MERCEDES CELEBRITY SERIES

ALEXE *Rivers End* from Symphony "RiverRun"
In memoriam

ARUTUNIAN Concerto for Violin and String Orchestrand
Andante sostenuto
Allegretto
Adagio—Ritardando
Allegro molto
William Hartsgutunian

MAKIS "Intrigues," for Clarinet and Orchestrand
Love kit

SARASATE "Navarra," for Two Violins and Orchestra,
Op. 33
Pavel Pekarsky
Lev Pekarsky

Intermission

The taking of photographs and the use of recording equipment are not allowed in the auditorium.
The John F. Kennedy Center for the Performing Arts is pleased to announce that the National Symphony
Orchestra will be performing at the Kennedy Center in the summer of 1993.

Կտրտ Մագորի (ձախից) և
Մախիսլավ Ռոստրոպովիչի ղեկա-
վարած համերգների ծրագրերը:

THE MAKING OF A MEDIUM — VOL. 5

THE
VERDEHR
TRIO



Alexander Arutunian, Suite—Thomas Christian David, Triple Concerto
Peter Sculthorpe, Dream Tracks—Peter Schickele, Serenade for Three

Վերդեր-տրիոյի կատարմամբ
դաշնամուրի, կլարնետի և
ջութակի Տրիոյի կոմպակտ-դիսկի
կազմը: 1996 թ.:

• ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ • ԿՄԵՐԳԱՍՏՐԱ
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶՈՒՄԱՐՈՒԿ ԿՎԻԿԻՈՒՄԻԿ ԵՎ ԱՐԶԱՌՈՒՄԸ
 ԵՆԿՆԵՐԻ ԻՆՆ ՁՄԵ ԻՆՆ
 ԻՐԱՎԻՐՈՒՄ Է

ՏՈՆԱԿԱՆ ՀՈՒՔԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՄԵՐԳԻ ԿՎԻԿՎԱՍԻՎ

ԿՄԵՐԳՈՒՄ **ԱԼԵՔՍԱՆԴԻՐ**
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ
75-ՍՄՅԱԿԻՆ
 Փրագրու՝

ԱԼԵՔՍԱՆԴԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

• ՏՈՆԱԿԱՆ ԿՈՒՆԿՐԱՆԵՐ • ԽՈՒՅՈՒՄԻ (ԶԻՐ ՄԱՍ)

ԿՈՒՆԵՐՑ ԵՆԳՈՒՄ ԵՎ ԿՎԻԿՈՒՄԻՐ ՀԱՍՏՈՒՄ


• ՄԵՐ ՀՈՒ ԱՐԿՐԻՐ • ԵՐԶՈՒՄԻ ԿՈՒՄՍՈՒՄԻ ԿՐԵՄԻՆԻՆԻ ԵՎ
 ՀԵՐԵՆԵՆԻՆԻ ՀԵՐԸ

ՎՈՒՄ - ՍՄԵՐՈՒԿ ԳՈՒՄ • ԱՐԻ ՀՈՅ ԿՐԵՄԻՆԻ ՄԱՍԻՆ •
 1. ՁԵՆԿԱՍ ԵՆԿՆԵՐ 2. ԱՍԻ ՄԻՆԱ 3. ԳԱՆՏՈՒՄ ԱՐԻ
 1. ԱՐԻ ԿՐԵՄԻՆԻ ՄԱՍԻՆ

• ՀԱՄԵՐՆԻՔԻ ՇԵՏ •

ՀԵՐԻՔԻՆ ՄԵՐԿՈՒՄԻ ԵՎ ԵՆԿՐԵՐԵՐԸ
 ԵՆԿԻ ՔՈՒՅԱՆ ԿՐԵՐ ԵՆԿՆԵՐԱՆ ԵՄՑ ԿՈՒՄՍՈՒՄԻ
 ԳՈՒՄԻՆ ԿՐԵՐՍՈՒՄԸ ԱՄՆԱՆ ԿԱՐԳԵՑՅԱՆԸ
 ԵՄՍՈՒՆՈՒՄ՝ ՎԼԱԳԻՄԻՐ ԱԲԱԶՅԱՆ
 ԽՈՒՅՈՒՄ՝ ԳԵՎՈՐԳ ՄՈՒՐԱԳՅԱՆ

ԿՄԵՐԳՈՒՄ **ԼՈՐԻՍ ՃԳԻՆԱՎՈՐՅԱՆ**



1990-ականների լուսանկար:

շարժությամբ Մատեն հրատարակեց սյուիտը, և տարբեր երկրների երաժշտական կոլեկտիվներ սկսեցին այն կատարել: 1989 թ., տիկնոջս հետ Լոնդոնում եղած ժամանակ հրավեր ստացանք ներկա գտնվելու Իտոն քաղաքում կայանալիք բրաս-կվինտետի (պղնձյա փողայինների կվինտետի) համերգին: Ծրագրում հնչեց նաև իմ «Հայկական էսքիզներ» սյուիտը, որի կատարումն անբերի էր: Այս կատարման նախածեռնողը նույնպես Ժան-Պիեռ Մատեն էր:

«Հայկական էսքիզները» որոշ արտասահմանյան մրցույթների նշված կազմի անասմբլների համար կազմված պարտադիր ծրագրի մեջ մտան: 1990թ. բրաս-կվինտետների նման մրցույթներից մեկին, որն անցկացվեց Ֆրանսիայի հարավում գտնվող Նարբոն քաղաքում, մասնակցում էի նաև ես որպես ժյուրիի նախագահ: Մեր ժյուրիի աշխատանքն արժանացավ մեծ դրվատանքի և բնութագրվեց իբրև անաչառ, խիստ ու միաժամանակ բարյացակամ:

Մրցույթը բավական յուրօրինակ էր. մրցութային փուլերին զուգահեռ կազմակերպվում էին տարբեր փողային գործիքներով հանդես եկող մենակատարների համերգներ: Բոլոր կատարողները առաջնակարգ երաժիշտներ էին: Որպես օրինակ արժե հիշատակել մի տուրահարի մենահամերգը, որի ընթացքում այդ առաջին հայացքից «ծանրաբաշ» գործիքով հնչեց Ռիմսկի-Կորսակովի «Բողի թռիչքը» (կարծում եմ, մեկնաբանություններն ավելորդ են): Հնարավոր է, որ հենց այդ երեկոյի ազդեցությամբ ծնվեց տուրայի համար կոմպոզիտ գրելու իմ մտահղացումը:

Կոմպոզիտորների հերթական համամիութենական համագումարին մասնակցելու նպատակով 1984 թ. մեկնեցիմք Մոսկվա: Համագումարը, սակայն, տեղի չունեցավ, քանի որ այդ օրերին վախճանվեց ԽՍՀՄ Կենտկոմի գլխավոր քարտուղար Կ.Չերնենկոն: Փաստորեն, երկրի տարբեր ծայրերից ժամանած հարյուրավոր պատվիրակներինս երեք օր պահեցին «Ռոսիա» հյուրանոցում, բառացիորեն՝ փակի տակ: Եվ միայն կառավարական թաղման արարողությունից հետո հայտարարվեց, որ համագումարը հետաձգվում է հաջորդ տարվա:

1985 թվին կայացած այդ համագումարը վերջինն էր Խորհրդային Միության կոմպոզիտորների ստեղծագործական կազմակերպության պատմության մեջ: Տեղի ունեցան սիմֆոնիկ և կամերային երաժշտության մի շարք համերգներ: Մոսկվայի կոնսերվատորիայի Փոքր դահլիճում հնչեցին իմ «Հայկական էսքիզները» ԽՍՀՄ Մեծ թատրոնի առաջատար երաժիշտների կատարմամբ: Ստեղծագործությունը մեծ հետաքրքրությամբ ընդունվեց, իսկ դահլիճում ներկա գործընկերներս զնահատեցին բավականին հազվադեպ հանդիպող գործիքային այդ կազմին անդրադառնալուս հանգամանքը:

Նույն թվին գրեցի իմ Սոնատ-պոենը ջութակի և դաշնամուրի համար: Մեկ մասից բաղկացած այս ստեղծագործությունը մի շնչով է ծավալվում (կոնտրաստային է միջին դանդաղ դրվագը): Սոնատ-պոենի վրա աշխատել եմ հայտնի ջութակահար Էդուարդ Թադևոսյանի հետ. նա դարձավ նաև ստեղծագործության առաջին կատարողը:

Սոնատ-պոենը հետագայում ընդգրկվեց իմ հեղինակային համերգի ծրագրի մեջ, որն ունկնդրին ներկայացրին Կոմիտասի անվան քառյակի երաժիշտներն իմ մասնակցությամբ: Առաջին բաժնում Ֆելիքս Սիմոնյանը նվագեց քավջութակի համար գրված Պոենը, այնուհետև Յակով Պաայանի կատարմամբ հնչեց “Retro” սոնատը ավտի համար: Երկրորդ բաժնում Էդուարդ Թադևոսյանը նվագեց Սոնատ-պոենը, որին հաջորդեց դեռևս 1947 թ. Մոսկվայում գրված Կվարտետը: Համերգի եզրափակիչ մասում մենք կատարեցինք «Երեք պատկերից» մեկը՝ «Սատուցիների պարը», դաշնամուրային կվինտետի համար իմ փոխադրմամբ: Պիտի ասեմ, որ համերգի նման կառուցվածքը, ուր քառյակի երաժիշտները հնարավորություն ունենին հանդես գալու թե՛ մենակատարի, թե՛ անսամբլի անդամի դերում, գրավիչ էր ինձ թվում:

Մոտավորապես նույն ծրագրով համերգ կայացավ նաև 1987 թվականին Ռիգայում: Այդ հեղինակային համերգը կազմակերպված էր դաշնակահար Բաֆֆի Խարաջանյանի նախաձեռնությամբ, որը ծրագրի վերջում Նորա Նովիկի հետ դուետ կազմելով՝ կատարեց «Հայկական ռապսոդիան»: Համերգի ընթացքում հնչեց նաև փայտյա փողայինների համար գրված իմ Կվինտետը՝ Ռիգայի սիմֆոնիկ նվագախմբի մենակատարների փայլուն մեկնությամբ:

Իմ և համերգի բոլոր մասնակիցների նկատմամբ ցուցաբերված ջերմ ընդունելությունը չէր կարող քողարկել այն տարիներին մերժաբլթյան երկրներում պարզորոշ զգացվող ընդհանուր լարվածությունը: Ավելի ու ավելի ցայտուն էին դառնում դժգոհության այն դրսևորումները, որոնք պայմանավորված էին, ինչպես ռիգացիներն էին արտահայտվում, «իրենց երկրի զավթման փաստով»:

1987 թ. ԽՍՀՄ Կոմպոզիտորների միության վարչության արտագնա պլեումումներից մեկը պետք է կայանար Լենինգրադում, սակայն միանգամայն անսպասելիորեն դրա անցկացման վայրը տեղափոխվեց Կեմերովո՝ Կուզբասի մայրաքաղաք, ինչպես հայտնի դարձավ հետագայում, կոմկուսի Գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովի անձնական նախաձեռնությամբ: Ծրագրի մեջ տեղ էր գտել նաև իմ Սոնատ-պոենը ջութակի և դաշնամուրի համար. քանի որ Էդուարդ Թադևոսյանն այդ ժամանակ Կոմիտասի անվան քառյակի կազմում հյուրախաղերի էր մեկնել, ես ստիպված էի ինձ հետ ելույթ ունենալու խնդրանքով դիմել մեկ այլ ջութակահարի՝ Համամիտեբնական մրցույթի 1-ին մրցանակի դափնեկիր Մովսես Պողոսյանին:

Կենտրոնը քաղաքը հաճելիորեն զարմացրեց ինձ իր համերգային դահլիճներով, քատրոններով և հատկապես իր ունկնդիրներով, որոնք մեծ հետաքրքրությամբ էին լցված ժամանակակից երաժշտության նկատմամբ ու աշխուժորեն հաճախում էին բոլոր համերգներին:

Մոնատ-պոենի կատարումը մեծ հաջողություն ունեցավ: Երիտասարդ ջութակահարը լավագույնս դրսևորեց իրեն և արժանացավ տեղական մամուլի դրվատանքին: Չանդրադառնալով կայացած համերգների մանրամասներին՝ կուզենայի նշել, որ Կենտրոնում տեղի ունեցած պլենումն իր կազմակերպման տեսակետից արժանի էր ամենաջերմ գնահատման, ինչը, իմ կարծիքով, մեծապես պայմանավորված էր տեղական իշխանությունների հոգատար ու պատասխանատու վերաբերմունքով:

Պլենումից քիչ ավելի ուշ Մոսկվայից ստացա հայ կոմպոզիտորների ստեղծագործության նկատմամբ մշտական հետաքրքրություն ցուցաբերող երաժշտագետ Վլադիմիր Չակի նամակը, որում նա մասնավորապես գրում էր. «*Հաճախ եմ հիշում Կենտրոնը և այն համերգը, որի ընթացքում հնչեց Չեր Մոնատը ջութակի և դաշնամուրի համար: Այն անմոռանալի է: Մեծ Ներշնչանքով ջերմացած ճշմարիտ արվեստի գործ է, որը հիրավի մեր պլենումի գարդը դարձավ: Ուզում եմ նաև հայտնել Չեզ իմ անկեղծ շնորհակալությունը կենտրոնյան պլենումի ամբիոնից Չեր հուզիչ, հրապարակախոսական կրթոտությամբ լի ելույթի համար... Չարմանալիորեն բազմակողմանի է Չեր տաղանդը, և ես ցանկանում եմ, որ ծաղկեն Չեր հրաշալի օժտվածության բոլոր կողմերը» (21.12.1987):*

1987 թվականին հաջորդող տասնամյակի հասարակական ցնցումների ուղղակի նախանշաններ դեռևս չկային, թեև Երևանի Մարգահամերգային համալիրում Հոկտեմբերյան հեղափոխության 70-ամյակին նվիրված հանդիսավոր նիստի ժամանակ բարձրաստիճան ղեկավարներից մեկի հետ զրուցելիս նրա խոսքում ես ինչ-որ տազնապալի երանգ զգացի՝ կապված Լեոնային Ղարաբաղի հիմնախնդրի հետ: Այդ խոսակցությանն այդ պահին մեծ նշանակություն չտվեցի, սակայն տուն էի վերադառնում անհամգիստ հոգեվիճակում:

Իսկ 1988 թ. փետրվարին Երևանի Թատերական հրապարակում տեղի ունեցան առաջին զանգվածային ցույցերը: Այդ բազմամարդ հավաքները հիշելիս այսօր էլ ապշում եմ դրանց տարերայնության և միևնույն ժամանակ բացառիկ ներքին կազմակերպվածության վրա: Դա հսկայական հոգևոր վերելքի, ազգային ինքնագիտակցության զարթոնքի ժամանակաշրջան էր: Ինչպես ցույց տվեց ժամանակը, ԽՍՀՄ կենտրոնական ղեկավարությունը բոլորովին պատրաստ չէր դեպքերի մման զարգացման և հայտնվել էր ակնհայտ շփոթվածության վիճակում: Նա անընդունակ եղավ հստակ, կոնստրուկտիվ որոշումներ ընդունելու:

Դրանով եմ ես բացատրում նաև զանգվածային լրատվության միջոցների, իմ կարծիքով, չափազանց անարդարացի դիրքորոշումը և «պիտակներ կայցնելու» արատավոր գործելակերպը:

Առանց այն էլ թեժ մթնոլորտը է՛լ ավելի շիկացրին իրենց աներևակայելի դաժանությամբ ցնցող սունգայիթյան դեպքերը: Դրանց արձագանքեց ողջ աշխարհը: Սակայն, ինչպես և կարելի էր ենթադրել, այդ արյունալի ոճրագործությունների կազմակերպիչներն ու անմիջական կատարողներն անպատիժ մնացին մինչև օրս:

ԽՍՀՄ հանրապետությունների միջև սովորական դարձած մշակութային կապերն այն ժամանակ դեռ չէին խզվել: Մարտին, ճիշտ է, բոլոր այդ ցնցումներից հետո ծանր տրամադրության մեջ լինելով, մեկնեցի Ռ-իգա, որտեղ ծրագրված էր Ֆորեի Ռ-երվիեմի հետ նույն համերգի ընթացքում հնչեցնել նաև իմ Տրիպտիխը երգչախմբի և հարվածային գործիքների համար (այդ ստեղծագործությունը հիանալի կատարեց Ռ-իգայի տղաների երգչախումբը): Համերգից հետո արտիստական սենյակ եկան մեծամուն երաժիշտներ և շարքային ունկնդիրներ՝ արտահայտելու իրենց համերաշխությունն ու կարեկցանքը սունգայիթյան դեպքերի կապակցությամբ:

1988 թ. մայիս ամսին Փարիզի Գալո դահլիճում կայացած համերգի ընթացքում հնչեցին իմ Վարիացիաները շեփորի և նվագախմբի համար ֆրանսիացի շեփորահար Բեռնար Սուստրոյի չափազանց յուրօրինակ կատարմամբ: Ես ներկա էի այդ երեկոյին Ադամ Խուդոյանի հետ, որի Թավջութակի կոնցերտը նույնպես ընդգրկված էր ծրագրի մեջ (այն հիանալի կատարեց Կարինե Գեորգյանը): Նվագախմբի կազմում հանդես եկան Փարիզի Հայկական երաժշտական ընկերության նախածեռնությամբ հրավիրված ֆրանսիացի երաժիշտները:

Մեկ տարի անց նույն համերգասրահում ևս մի հանդիպում ունեցա փարիզյան ունկնդրի հետ. հայկական երաժշտության համերգի ժամանակ Ժան-Ժակ Վեռների ղեկավարած տեղական ուսանողական նվագախմբի և իմ մասնակցությամբ հնչեց «Մեր հին երգերը» ռապսոդիան:

1988 թվականի դեկտեմբերը ճակատագրական էր Հայաստանի համար:

...Երկրաշարժի լուրն ինձ հասավ Լոնդոնում, ուր հյուրընկալվում էի դատերս տանը: Ողջ աշխարհը ցնցված էր այդ ողբերգությունից: Մոլորակի բոլոր ծայրերից օգնության էին գալիս Հայաստան: Այդ օրերին Սստիսլավ Ռոստրոպովիչը համերգ տվեց այդ կործանիչ տարերային աղետից տուժածների օգտին:

Նվագագույնի հասցնելով Լոնդոնում իմ գտնվելու ժամկետը՝ վերադարձա Երևան և մի քանի օր անց կոմպոզիտորներ Ադամ Խուդոյանի, Վաղարշակ

Կոտոյանի, Էդուարդ Բաղդասարյանի և Գրիգոր Հախնյանի հետ ՌԱՖ-ով մեկնեցինք աղետի գոտի՝ ձգտելով տուժածներին մեր ուժերի սահմաններում բարոյական և նյութական օժանդակություն ցույց տալ:

Սպիտակի պատկերն ուղղակի սուկալի էր: Քաղաքը հավասարվել էր հողին: Կիրովականում բազմաթիվ տներ վթարային վիճակում էին, սակայն մարդիկ ստիպված շարունակում էին դրանցում ապրել: Աղետի գոտում էր հայտնվել նաև Ստեփանավանը, որի հետ են կապված Վարսենիկ տատիս տանն անցած իմ մանկության անմոռանալի հուշերը: Այստեղ էլ բազմաթիվ շենքեր էին վնասվել, սակայն մեծ զարմանքով պարզեցի, որ դեռևս 1908 թվին Վրաստանում բնակվող գերմանացիների կառուցած մեր այդ տունը ոչ մի ճար չէր տվել:

Հայաստանը բազմիցս է տառապել սարսափելի երկրաշարժերից: Սակայն այս անգամ այն հատկապես դաժան եղավ...

Այդ աղետալի տարվա տպավորություններից սկիզբ առավ իմ Ջուրակի կոնցերտը, որ հայտնի է նաև «Հայաստան-88» ենթավերնագրով: Նրա երաժշտության մեջ փորձել են վերարտադրել ոչ միայն իմ ծանր խոհերն ու ապրումները, այլև հավատս հայ ժողովրդի ոգու անսասանության և արիության նկատմամբ:

Այդ քառամաս Կոնցերտը նախատեսված է ջութակի և լարային նվագախմբի համար: Ստեղծագործությունը գրել են Ռուբեն Ահարոնյանի նախաձեռնությամբ և մվիրել նրան: Կոնցերտի առաջին կատարումը տեղի է ունեցել 1989 թ. ապրիլին Հայաստանի Կոմպոզիտորների միության հերթական պլենումին Ռուբեն Ահարոնյանի մենակատարմամբ և Հայաստանի կամերային անսամբլի մասնակցությամբ: Երաժշտագետ Մարինա Բերկոն այդ կապակցությամբ գրել է «Սովետսկայա մուզիկա» ամսագրում (1990, N 11). «Ըստ իս, ջութակի և լարային նվագախմբի համար գրված Կոնցերտը ազգային երաժշտության վառ նմուշ է: Դրանում ի մի են բերվել վարպետի լավագույն հատկությունները: Սիմֆոնիկ մասշտաբայնությունն ու կամերային նրբագեղությունն են որոշում այս ստեղծագործության պատկերային սահմանները: Զգիտես, թե ինչին տաս նախապատվությունը՝ ժողովրդական էպիկական ողբերի եղերական խստությամբ, ջութակի պոետական մենախոսության հոգեբանական հարստությամբ, թե՞ հարությունյանական անմար ժպիտին, որն ի հեճուկս բոլոր դժվարությունների սփոփում և օգնում է վերագտնել կյանքի հրաշալիքների նկատմամբ հավատը...»:

Ջուրակի կոնցերտի չափազանց հետաքրքիր ու յուրօրինակ մեկնաբանմամբ հանդես եկավ Մոսկվայի կոնսերվատորիայի կամերային նվագախմբի ղեկավար, ջութակահար Լևոն Համբարձումյանը 1990 թ. ապրիլին իր կոլեկտիվի հետ Երևանում եղած ժամանակ: Կամերային երաժշտության տանը

կայացած այդ համերգն ինձ համար հաճելի անակնկալ էր: Այդ ելույթի առիթով երաժշտագետ Սվետլանա Սարգսյանը գրում է. «Առանձնապես ուշագրավ էր Ալ. Հարությունյանի ստեղծագործության մեկնաբանությունը... Հարությունյանի Կոնցերտը Լևոն Համբարձումյանի և Մոսկվայի կամերային նվագախմբի մատուցմամբ ներկայացավ միանգամայն նոր, անծանոթ հատկություններով, բովանդակային նոր երանգներով, նոր տեմպերով, ձևի հավասարակշռությամբ, հնչողության հղկվածությամբ... Աչքի էր ընկնում կատարման արտառոց հուզականությունը, բոլոր մասերում նուրբ եղերականության արտահայտումը, դրա հետ մեկտեղ՝ հայոց ողբերգության նկատմամբ հյուրերի դրսևորած վերաբերմունքը» («Կոմսոմոլց», 12.05.1990):

1990 թ. մայիսի 4-ին Փարիզի Գավո համերգասրահում տեղի ունեցավ իմ հեղինակային համերգը Հայաստանի կամերային նվագախմբի մասնակցությամբ: Այն կազմակերպել էր Ֆրանսիայի Հայկական երաժշտական ընկերությունը և նրա ղեկավար Գրիգոր Համբարձումյանն իմ 70-ամյակի կապակցությամբ: Բոլոր մասնակիցների ճանապարհածախսի իստուցումն իր վրա էր վերցրել Հայաստանի մշակույթի նախարարությունը: Համերգին հնչեց «Մեր հին երգերը» ռապսոդիան (մենակատարի դերում ես հանդես եկա), իմ երգերից մի քանիսը Հասմիկ Հացագործյանի կատարմամբ, Միմֆոնիետը և Ջութակի կոնցերտը, որ մեծ վարպետությամբ նվագեց այդ երեկոյի ընթացքում կատարված բոլոր ստեղծագործությունների ղեկավար Ռուբեն Ահարոնյանը: Ինչպես համերգից հետո նշեցին դահլիճում ներկա գտնվող ֆրանսիացիները, Հայաստանի կամերային նվագախմբի ելույթը մեծ հայտնություն էր իրենց համար: Նրանք, ըստ երևույթին, նկատի ունեին մեր երաժիշտների կատարողական բարձր մակարդակը, որով և պայմանավորված էին ունկնդիրների այդչափ վառ տպավորությունները:

Շատ չանցած, 1990 թ. հուլիսին նորից պիտի մեկնեի արտասահման, այս անգամ՝ Մյունխենից ոչ հեռու գտնվող Բադվերիսհոֆենում միջազգային երաժշտական փառատոնին մասնակցելու: Այստեղ հրավիրված էի տիկնոջս հետ, հանրահայտ դաշնակահար Իվո Պոգորելիչի նախածեռնությամբ, որի գործուն աջակցությունն ակնհայտ էր փառատոնի ողջ ընթացքում:

Պոգորելիչի հետ ծանոթացել էի դեռ Լոնդոնում, աղջկաս տանը: Հենց այդ ժամանակ էլ նրա համար նվագեցի Ջութակի կոնցերտս: Պոգորելիչին հետաքրքրեց այդ երկը, և նա ընդգրկեց այն փառատոնի ծրագրի մեջ: Կոնցերտը հնչեց Էդուարդ Վուլֆսոնի և Ս.Սոնդեցկիսի ղեկավարած՝ Լիտվայի կամերային նվագախմբի կատարմամբ:

Համերգասրահ եկած երաժշտասերների մեծ մասը Մյունխենից էր, սակայն քիչ ավելի ուշ իմացա, որ դահլիճում կային նաև հարևան երկրներից ժամանած ունկնդիրներ: Վուլֆսոնը հրաշալի էր նվագում. նրա ելույթն

այնպիսի մեծ տպավորություն գործեց, որ նա ստիպված էր կրկնել Կոնցերտի ֆինալը (որն, ի դեպ, բավական բարդ է):

Փառատոնի կազմակերպիչները նախատեսել էին ամենամյա մեկ մրցանակ բոլոր մասնակիցների համար, անկախ նրանից, թե դա մենակատար էր, նվագախումբ թե կոմպոզիտոր: Փառատոնի հովանավորը “Schneider” ֆիրման էր. այդ անգամ մրցանակն ինձ շնորհվեց Ջուրակի կոնցերտի համար: Ինչ խոսք, շատ հաճելի ու պատվավոր էր փառատոնի կազմակերպիչների ձեռքից ստանալ “Schneider” ֆիրմայի երաժշտական սարքավորման վերջին մոնուշի հավաքածուն...

Անգլիական “Chandos” ֆիրմայի պատվերով լույս տեսավ իմ հեղինակային կոմպակտ դիսկը, որի վրա ձայնագրված Կոնցերտը հիանալի են կատարում ջութակահար Իյա Գրուբերտը և կամերային նվագախումբը Կոնստանտին Օրբեյյան-կրտսերի ղեկավարությամբ:

Հետագայում՝ 2000 թվականի հունվարին, այդ ստեղծագործությունը կատարվեց Հոլանդիայի ութ քաղաքներում (Ամստերդամ, Ռոտերդամ, Հաագա և այլն): Ես ներկա էի Կոնցերտի պրեմիերային Ամստերդամի և աշխարհի լավագույն համերգասրահներից մեկում՝ «Նյուվյարկոնսերտում»: Համերգին ներկա էր Հոլանդիայի թագուհին: Կոնցերտի մենակատար Իյա Գրուբերտն այդ երեկո առանձնակի ոգեշնչմամբ էր նվագում: Համերգից հետո Բեստրիքս թագուհին ինձ հրավիրեց իր օթյակ, ուր հայտնեց իր գոհունակությունը: Տեղի «Հանդելսբլադ» թերթում տպագրված հոդվածում մասնավորապես նշվում էր. «Ալ. Հարությունյանն իր Կոնցերտը նվիրել է վերջերս Բորոդինյան քառյակի կազմում որպես առաջին ջութակահար հանդես եկող Ռուբեն Ահարոնյանին: ... Նույն հաջողությամբ նա կարող էր Կոնցերտը նվիրել Իյա Գրուբերտին, որի կատարման սրտաբուխ հուզականությունը լիովին կլանեց ունկնդրին: Գրուբերտն ինքն էլ ամբողջովին կլանված էր Կոնցերտով»:

90-ականների սկզբին Հայաստանի գեղագիտական դաստիարակության մանկական կենտրոնը պատանեկան սիմֆոնիկ նվագախումբ կազմավորեց դիրիժոր Հակոբ Լոգյանի ղեկավարությամբ: Այդ գործում մեծ էր Կենտրոնի ղեկավար Հենրիկ Իգիթյանի դերը: 1991 թ. ապրիլին ինձ առաջարկվեց որպես մենակատար մասնակցել այդ կոլեկտիվի ուղևորությանը ԱՄՆ: Նվագախմբի հետ պատրաստեցի «Մեր հին երգերը» ռապսոդիան: Ծրագրում ընդգրկված էին նաև Բեթհովենի Երրորդ սիմֆոնիան և Արամ Խաչատրյանի այուիտը «Գայանե» բալետից: Պատանի երաժիշտներն աչքի ընկան մախանձելի կարգապահությամբ ու կազմակերպվածությամբ, և ես մեծ հաճույքով էի նրանց հետ աշխատում ու շփվում:

Մեր համերգը կայացավ ապրիլի 30-ին Նյու Յորքի հեղինակավոր «Լինքոլն» կենտրոնում: Միացյալ Նահանգների հանդիսատեսին դժվար է զարմացնել սիմֆոնիկ նվագախմբով, այդուհանդերձ 75 դեռահասներից կազմված մեր կոլեկտիվին հաջողվեց զարմացնել ամերիկացիներին: Որոշակի նշանակություն ունեցավ նաև այն փաստը, որ պատանեկան նվագախումբը (որն, ի դեպ, իր ազգային կազմով համասեռ էր) ժամանել էր Հայաստանից, մի երկրից, որը չհայտարարված պատերազմի մեջ էր, տեսել էր աղետալի երկրաշարժի ու սոււմալիթյան դեպքերի սարսափները, փորձում էր գոյություն պահպանել դաժանագույն շրջափակման պայմաններում:

Յավոք սրտի, իմ կարծիքով, մեծ հեռանկարներ ունեցող այդ կոլեկտիվը երկար «չդիմացավ», քանի որ հանրապետությունում գնալով խորանում էր տնտեսական ճգնաժամը:

ԱՄՆ-ում եղած ժամանակ ես հաճախ տուն էի զանգահարում և ուշի-ուշով հետևում դարաբաղյան իրադարձությունների զարգացմանը: Մտովի անդրադառնում էի Անդրկովկասի երաժիշտների բարեկամական ու ստեղծագործական հանդիպումների դրվագներին, պատվիրակությունների փոխանակմանը, բազմաթիվ տասնօրյակներին, շաբաթներին, Կոնպոզիտորների միության համագումարներին ու պլենումներին և վերջապես իմ «Սայաթ-Նովա» օպերայի բեմականացմանը Բաքվում ադրբեջաներեն լեզվով... Մի՞թե այսքան հեշտ ու հանգիստ կարող էին խզվել այդ սերտ ու հաստատուն թվացող կապերը...

Ինձ անընդհատ տանջում էին այդ խոհերը, և ԱՄՆ-ից Հայաստան էի վերադառնում բավականին ծանր տրամադրությամբ: Ինձ թվում էր, որ այդ սրընթաց դեպքերը զարգանում են ըստ ինչ-որ անկանխատեսելի սցենարի...

Հասկանալի պատճառներով 1990-ականների սկիզբը ստեղծագործական աշխատանքի իմաստով ինձ համար բեղմնավոր չէր: Երախտագիտությամբ եմ հիշում հրատարակիչ Ժան-Պիեռ Մատեին, որն իր պատվերներով որոշակիորեն նպաստում էր իմ ստեղծագործական կենսագործունեությունը պահպանելուն: 1991 թ. նրա առաջարկությամբ գրեցի իմ Կոնցերտը տրոմբոնի և նվագախմբի համար: Նրա առաջին կատարողը դարձավ հանրահայտ երաժիշտ Միշել Բեկեն: Հնարավորություն չունենալով մեկնել Շվեյցարիա՝ այնտեղ կայանալիք պրեմիերային մասնակցելու, ստիպված եղա բավարարվել ինձ ուղարկված ձայնագրության ունկնդրությամբ: Շուտով Կոնցերտը նվագեց նաև հրաշալի տրոմբոնահար Բրանիմիր Սլոկարը Բեռլինի սիմֆոնիկ նվագախմբի և նրա ղեկավար Լիոր Շամբադալի մասնակցությամբ: Ժան-Պիեռ Մատեի նախաձեռնությամբ այդ Կոնցերտը տպագրվեց Շվեյցարիայի “BIM” հրատարակչության միջոցով:

Պետք է նշել, որ վերջին 10-15 տարիների ընթացքում օտարերկրյա հրատարակչությունների հետաքրքրությունն իմ ստեղծագործության նկատմամբ զգալիորեն աճել է: Դրանց թվին են պատկանում “Schirmer” (ԱՄՆ), “Hans Sikorski” և “Peters” (Գերմանիա), “Real Musical” (Իսպանիա), “Ricordi” (Իտալիա), “Zen-On” (Ճապոնիա), “Boosey and Hawkes” (Մեծ Բրիտանիա), “Fazer Music” (Ֆինլանդիա), “Leduc”, “Chant du Monde” (Ֆրանսիա) և մի շարք այլ ֆիրմաներ: Յուրօրինակ պարադոքս է՝ վերջին ժամանակներս իմ ստեղծագործություններն արտասահմանում ավելի հաճախ են հրատարակվում, քան իմ հայրենիքում:

Ի տարբերություն հայրենական հրատարակչությունների ծանրաբարո ղանդաղկոտության, արտասահմանյաններն առաջին հերթին աչքի են ընկնում իրենց նախանձելի օպերատիվությամբ, այրազ կողմնորոշվելու ունակությամբ և շահագրգիռ վերաբերմունքով, էլ չասած դրանց աշխատանքի մեծ արդյունավետության մասին: Եվ, իհարկե, այդ հրատարակչությունների և զանազան ֆիրմաների գործունեության առավել արժեքավոր կողմերից է կոմպոզիտորներին նոր ստեղծագործություններ պատվիրելու և դրանց հետագա հրատարակումն ստանձնելու գործելակերպը:

Կուզենայի անդրադառնալ մի պատվերի, որ ստացա ԱՄՆ-ի երաժշտական մի ֆիրմայից 1989 թվականին: Խոսքը շեփորի և փողային մեծ նվագախմբի համար Ռ-ապտոդիա գրելու մասին էր: Պատվերի արտատվորությունն այն էր, որ Ռ-ապտոդիան հատուկ նախատեսվում էր մի նավահանգստից մյուսը տեղափոխվող նավի վրա համերգներով հանդես եկող փողային նվագախմբի համար: Այդ մոտ 10 րոպե տևողությամբ ստեղծագործության վրա անչափի հանգամանորեն եմ աշխատել: Յավոր, ստեղծագործության ձայնագրությունը կամ մամուլի որևէ արձագանք ինձ չի հասել: Սակայն, այս երկի ստեղծումից մեկ տարի անց “Peters” հրատարակչության ամերիկյան բաժանմունքը լույս ընծայեց Ռ-ապտոդիայի պարտիտուրը:

1992 թ. Ժան-Պիեռ Մատեից ստացա տուբայի և նվագախմբի համար Կոնցերտ գրելու առաջարկություն: Համաձայնությունս տվեցի, բեև զիտեի գործիքի կատարողական առանձնահատուկ դժվարությունները: Այդ ստեղծագործության վրա աշխատեցի Լոնդոնում, և զարմանը Կոնցերտի կլավիրն արդեն պատրաստ էր: Արդեն Երևանում երկի մի բանի հատված Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի տուբահարի հետ փորձելուց հետո, սկսեցի նաև պարտիտուրի մշակումը և աշխատանքն ավարտեցի մեկամսյա ժամկետում:

Մատեն առանց հապաղելու հրատարակեց կլավիրն ու պարտիտուրը՝ Բյուլ քաղաքում տեղի մենակատարի և նվագախմբի օգնությամբ կազմակերպելով ստեղծագործության նախնական կատարումը: Իսկ Կոնցերտի

պաշտոնական պրենսիերան տեղի ունեցավ միայն 1995 թ., Ֆինլանդիայի Լախտի քաղաքում:

Ես ու Իրինան Մուսկվայից Ֆինլանդիա մեկնեցինք գնացքով, և առավոտյան կանուխ երկաթուղային կայարանում մեզ դիմավորեց մեմակատարն իմքը՝ Հարրի Լիդսլե անունով, հաճելի արտաքինով երիտասարդ ֆիննը: Լախտի փոքրիկ քաղաքը բավական լավ տպավորություն թողեց մեզ վրա: Առաջին իսկ փորձի ժամանակ համոզվեցի, որ հանձին Յոզեֆ Սվենսենի ղեկավարած սիմֆոնիկ նվագախմբի գործ ունեմ լավ կազմակերպված և ներդաշնակ կոլեկտիվի հետ: Համերգի օրը Շվեյցարիայից օդանավով ժամանեց անխոնջ Մատեն: Իմ հուզմունքը բնական էր, քանի որ ունկնդրի դատին էր հանձնվում տուբայի մման յուրահատուկ նվագարանի համար գրված իմ ստեղծագործությունը:

Երեկոյի ծրագրում ընդգրկված էին նաև Վագների «Լոհենգրինի» նախանվագը և Սիբելիուսի Երրորդ սիմֆոնիան: Տեղի երաժշտասերները, մտավորականության ներկայացուցիչները ջերմորեն ընդունեցին համերգային ողջ ծրագիրը: Երիտասարդ տուբահարը հաջողությամբ հաղթահարեց իր առջև դրված խնդիրը՝ իրագործելով փորձերի ժամանակ իմ արտահայտած բոլոր ցանկությունները:

Մեկ տարի անց, 1966 թ. մայիսին, Լիդսլեն ժամանեց Երևան և հենց առաջին փորձից բարեկամական ընդունելություն գտավ Հայաստանի ֆիլիարմոնիկ նվագախմբի երաժիշտների շրջանում: Տուբայի կոնցերտի երևանյան պրենսիերան կայացավ դիրիժոր Միքայել Ավետիսյանի ղեկավարությամբ, և ես անկեղծորեն ուրախ էի լիակատար փոխընթերցման հասած այդ երկու երիտասարդ երաժիշտների հաջողությանը:

Շուտով իմ կոնցերտը նվագեց ամերիկացի հանրահայտ տուբահար Սեն Փիլիպյանը: Հետագայում նա ինձ ուղարկեց այդ ստեղծագործության մի հիանալի ձայնագրություն, որն իրականացվել էր իր և Բոստոնի սիմֆոնիկ նվագախմբի մասնակցությամբ:

Տուբայի կոնցերտը որոշ ժամանակ անց մտավ Ֆրանսիայի Գեբլիլեր քաղաքում կայանալիք մրցույթի պարտադիր ծրագրի մեջ: Այնտեղից ստացա Մատենի հիացական նամակը, որի մեջ նա անվանում էր կոնցերտը «մրցույթի ֆինալի ապոթեոզ»:

Հայաստանի ֆիլիարմոնիկ նվագախմբի մասին հատուկ խոսք ունեմ ասելու: Այն ժամանակից ի վեր, երբ նվագախումբը ղեկավարում էին Մարաջևը, ապա՝ Մալունցյանը, Դուրյանը և Խանջյանը, այդ երաժշտական կոլեկտիվի հետ եմ կապված եղել գրեթե բոլոր ստեղծագործություններին:

երևանյան պրեմիերաները, որոնք հետագայում մտնում էին նվազախմբի համերգացանկի մեջ և կատարվում նրա հյուրախաղերի ընթացքում:

Հակասություններով լի 90-ականներին, շրջափակման այն անասելի ծանր օրերին, երբ ֆիլիարմոնիայի աշխատանքը նվազագույնին էր հասցվել, միայն հատուկեմտ կոլեկտիվների հաջողվեց պահպանել կատարողական մակարդակը: Դրանց թվին հարկ է առաջին հերթին դասել Հայաստանի ֆիլիարմոնիկ նվազախումբը:

Լուսավոր, իսկ ամենակարևորը՝ ձմեռային ամիսներին ջեռուցվող Ա.Խաչատրյանի անվան համերգային Մեծ դահլիճում այդ կոլեկտիվը ողջ տարին սիմֆոնիկ համերգներ էր տալիս: Առանց չափազանցության կարող եմ ասել, որ երևանցիների համար այդ համերգները շատ ավելի մեծ խորհուրդ ունեին, և դահլիճը մշտապես լեցուն էր երախտագետ ունկնդիրներով:

Անկասկած, նվազախմբի գործունեության սատարման գործում հատուկ դեր ունեցավ նրա գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր, կոմպոզիտոր և տաղանդավոր կազմակերպիչ Լորիս Ծզնավորյանը: Նրա եռանդուն գործունեության արդյունքում, նվազախմբի գոյության պատմության մեջ առաջին անգամ կոլեկտիվը հնարավորություն ստացավ մեկնելու արտասահմանյան հյուրախաղերի, իրականություն դարձան նրա կատարումների ձայնագրությունները կոմպակտ դիսկերի վրա, զանազան փառատոների կազմակերպումը, «Հոգևոր երաժշտության ժամ» շաբթի համերգները և այլն:

Ծզնավորյանի նախաձեռնությամբ 1995 թ. կազմակերպվեցին իմ 75-ամյակին նվիրված հեղինակային երեկոն և մի շարք այլ հոբեյանական համերգներ, որոնք նվիրված էին իմ սերնդի կոմպոզիտորների՝ Էդվարդ Միրզոյանի, Ղազարոս Սարյանի, Արամ Խուրոյանի համանման տարեդարձերին. կայացավ նաև Առնո Բաբաջանյանի հիշատակին նվիրված երեկոն: Բոլոր այդ համերգները Ծզնավորյանը վարում էր իրեն բնորոշ խանդավառությամբ, և ունկնդիրները դրանք ընդունեցին նույնքան մեծ ջերմությամբ:

90-ականներին իր ստեղծագործական դեմքը պահպանեց նաև Հայաստանի կամերային նվազախումբը, որի ղեկավարն այդ տարիներին Ռուբեն Ահարոնյանն էր:

Այնուհետև Ջարեհ Սահակյանց - Ռուբեն Ահարոնյան էստաֆետն անցավ նվազախմբի նոր ղեկավար ու տաղանդավոր դիրիժոր Արամ Ղարաբեկյանին, որը մեր երաժշտասեր հասարակայնությանը ներկայացավ մի շարք հետաքրքիր ծրագրերով: Մասնավորապես Ղարաբեկյանը դարձավ իմ Սիմֆոնիետի հիանալի մեկնաբանը, թողարկվեց նաև այդ ստեղծագործության ձայնագրությամբ կոմպակտ դիսկ: Հայաստանի կամերային նվազախումբը նվազեց Սիմֆոնիետը նաև 1997 թ. Հունաստանում կազմակերպված հյուրախաղերի ժամանակ. ես նույնպես որպես հեղինակ ներկա էի այդ համերգին:

Չեմ կարող շրջանցել այն մեծ կորուստը, որ կրեց մեր երաժշտական մշակույթը: 1998 թ. մայիսին վախճանվեց ականավոր կոմպոզիտոր, մանկավարժ ու հասարակական գործիչ, իմ սիրելի ընկեր Ղազարոս Սարյանը: Չարիկի հետ ընկերներ էինք դեռ մանկուց: Նա ճշմարիտ մտավորական էր, հազվագյուտ համեստության, հոգեկան ջերմության ու հմայքի տեր մարդ: Նրա լավագույն ստեղծագործություններին ներհատուկ էր մտահղացման լրջությունն ու խոհականությունը: Քառորդ դար նա դեկավարեց Երևանի կոնսերվատորիան, և ժամանակակիցների գիտակցության մեջ այդ ժամանակահատվածը զուգորդվում է բազմաթիվ հրաշալի նախաձեռնությունների հետ: Մարդիկ հավատում էին Սարյանին և ձգտում էին շփվել նրա հետ՝ ակնկալելով նրա միշտ բարի ու խորաթափանց խոսքը: Մեծ Մարտիրոս Սարյանի որդին պատվով էր պահպանում Սարյանների տան ավանդույթները:

Առնոյին կորցնելուց հետո Ղազարոս Սարյանի մահն ինձ համար անենաձանր կորուստն էր:

1999 թ. մարտին ես և տիկինս մեկնեցինք Լոս Անջելես, որտեղ ծրագրված էր իմ հեղինակային սիմֆոնիկ համերգը: Դրա նախաձեռնողն էր տեղի «Լարք» երաժշտական ընկերության ղեկավար, տաղանդավոր դիրիժոր Վահե Բարսումյանը, որը շնորհակալ աշխատանք է տանում հայ երաժշտության տարածման ասպարեզում:

Հազեցած էր համերգիս ծրագիրը. «Տոնական նախերգանք» և Սիմֆոնիետ, Ջութակի կոնցերտ և Շեփորի կոնցերտ, «Ասք հայ ժողովրդի մասին» վոկալ-սիմֆոնիկ պոեմ և «Հայրենիքիս հետ» խմբերգ (հանդեսին մասնակցեց տեղի հայերից կազմված երգչախումբը): Վ. Բարսումյանը կարճ ժամանակում նախապատրաստեց և վարպետորեն վարեց այդ ծրագիրը: Հուզումնալի էր Միչիգան նահանգից հատուկ ժամանած ջութակահար Վալտեր Վերդերի ելույթը: Բարսումյանի հրավերով համերգին մասնակցեց նաև համաշխարհային հռչակ վայելող շեփորահար Արտուրո Սանդովալը (ի դեպ, հարգելով իմ անունը, նա հրաժարվել էր որևէ վարձատրությունից): Նրա ելույթն ուղղակի հոյակապ էր, և մեր հանդիպումը ջերմ էր ու հուզիչ: Կատարողներն արժանացան լեփ-լեցուն դահլիճի ծափողջույններին:

Հանդեսին հաջորդած մեծ ընդունելության ժամանակ հաճելի անակնկալ էր տեղի ունեցած հանպատրաստից համերգը (դարձյալ հնչեցին իմ գործերը): Ինձ չհաջողվեց իմանալ այդ մեծ միջոցառման հովանավորների անունները (բացառությամբ պ. Հարություն Միմոնյանի): Մեր նկատմամբ անչափ ուշադիր էր հիանալի անձնավորություն, ջերմ սրտի տեր պ. Վարդգես Պետրոսյանը: Ինչպես մոռանամ այդ ամենը ...

Իմ անունը մամուլի մշտական ուշադրության կենտրոնում էր: Երաժշտության վերաբերյալ բավականին հետաքրքիր դիտարկումներ են պարունակում Ս. Կոպտևի և Ի. Յոլյանի գիտահանրամատչելի մենագրությունները¹: Երախտապարտ են Ռ. Մելիքյանին, Դ. Շոստակովիչին, Ա. Խաչատրյանին, Դ. Կաբալևսկուն, Տ. Խրեննիկովին, Զ. Քուշնարյանին, Ա. Շահվերդյանին, Գ. Տիգրանովին՝ տարբեր տարիներին իմ ստեղծագործության մասին արտահայտած խորաթափանց մտքերի համար: Հետագայում այդ էստաֆետը ստանձնեցին Ս. Ակսյուկը, Ե. Գիլինան, Է. Հովհաննիսյանը, Ռ. Ստեփանյանը, Մ. Բերկոն, Մ. Ռուֆիսյանը, Ս. Սարգսյանը և այլ կոմպոզիտորներ ու երաժշտագետներ:

Իմ ստեղծագործական գործունեության ընթացքում միշտ ձգտել են հետևել սրտիս թելադրանքին: Հենվելով իմ ժողովրդի երգարվեստի լադահնտոնացիոն կառուցվածքի վրա՝ փորձել են ընկալել այն արմատները, որոնք սնել են մեր երաժշտության ծառաբունն ու սաղարթը:

Կոմպոզիտորի ստեղծագործական աշխատանքի իմաստը ես տեսնում եմ ավանդույթների կենդանի զարգացման մեջ: Հայկական երաժշտության այդ ավանդույթներն, իմ համոզմամբ, չափազանց հետաքրքիր և վառ արտահայտություն են գտել Ա. Բաբաջանյանի, Ղ. Սարյանի, Է. Միրզոյանի, Է. Հովհաննիսյանի, Է. Բաղդասարյանի, Ջ. Տեր-Թադևոսյանի, Ա. Աճեմյանի, Ա. Տերտերյանի, Է. Արիստակեսյանի, Տ. Մանսուրյանի, Ռ. Ամիրխանյանի, Մ. Կարայելյանի, Ա. Չոհրաբյանի, Է. Հայրապետյանի և տարբեր սերունդների այլ կոմպոզիտորների՝ ստեղծագործության մեջ: Բնական և անգամ անհրաժեշտ են համարում մի մշակույթի շրջանակներում տարբեր ուղղությունների, ոճերի, ստեղծագործական ձեռագրերի առկայությունը: Սակայն հարկ է հետևել մի ընդհանուր սկզբունքի՝ երաժշտությունը պետք է ուղղված լինի ունկնդրին, զգացմունքային լիցք կրի և զուգահեռ վերապրումներ առաջացնի նրա հոգում:

Իմ, ինչպես և իմ սերնդի կոմպոզիտորների ծննդյան ժամանակը համընկավ Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման հետ: Մենք մեծացել ու աշխատել ենք սոցիալիստական կարգերի կայացման բարդ ժամանակաշրջանում, վկա ենք եղել նրա թե՛ անվիճելի նվաճումներին, թե՛ չափազանց սուր ներքին հակասություններին, որոնք 90-ականների սկզբին հանգեցրին ԽՍՀՄ-ի փլուզման և նրա նախկին տարածքում սոցիալ-քաղաքական նոր հարաբերությունների հաստատման:

Խորհրդային Միության փլուզման հետևանքով նախկին միութենական հանրապետությունների միջև հաստատված կապերը նույնպես խզվեցին,

¹ Ս. Կոպտև, «Ալեքսանդր Հարությունյան», Երևան, 1962 թ. (հայերեն), Ի. Յոլյան, «Ալեքսանդր Հարությունյան», Մոսկվա, 1962 թ. (խմբ.):

կտրուկ խանգարվեցին այդ համակարգի բոլոր ոլորտները, այդ թվում՝ երաժշտական մշակույթի բնագավառը սնուցող «արյան շրջանառությունը»: Հիմա արդեն չեն գործում շփման նախկին նորմերը, իսկ նորերը դեռ չեն հաստատվել: Հայաստանում ստեղծագործական գործունեությունը, կարծես, կաթվածահար լինի:

Չի կարելի մոռանալ, որ մինչև 1990-ականները Հայաստանում ձևավորվել էր երաժշտական կրթության և երաժշտական դաստիարակության ճյուղավորված համակարգ, աշխույժ գործունեություն էին ծավալում մեր հիանալի երաժիշտ-կատարողները և միջազգային մակարդակի կոլեկտիվները: Մենք ականատես դարձանք կոմպոզիտորական ստեղծագործության ամնախաղեպ վերելքի: Աստիճանաբար կարգավորվում էր հրատարակչական գործը և ձայնասկավառակների թողարկումը, կոմպոզիտորների ստեղծագործական նվաճումների նպատակաուղղված պրոպագանդա էր կազմակերպվում ֆիլիարմոնիայում, ռադիոյով և հեռուստատեսությամբ...

Այսօր անհրաժեշտ է վերաիմաստավորել և քննադատաբար ընտրել այն արժեքները, որոնք ստեղծվել են նախորդ ժամանակաշրջանում՝ փորձելով դրանք զարգացնել հասարակական նոր հարաբերությունների պայմաններում: Անթույլատրելի է կորցնել այն, ինչ մի անգամ հաջողվել է գտնել:

Ես մշակույթի ու արվեստի բնագավառում հստակ և հետևողական պետական քաղաքականության կողմնակիցն եմ: Պետությունը պարտավոր է բարոյապես և նյութապես սատար լինել մշակույթի գործիչներին և նրանց ստեղծագործական աշխատանքի համար անհրաժեշտ պայմաններ ապահովել:

«Անցումային» ժամանակաշրջանը շատ է ձգձգվում: Որքան էլ որ երկար լինի թունելը, նրա վերջում պետք է լույս երևա:

Հաճախ ինձ հարցնում են՝ արդյոք երջանի՞կ է եղել կյանքս: Այդ հարցին միշտ դրական պատասխան եմ տվել, ընդ որում՝ նկատի չեմ ունեցել, իհարկե, երջանկության արտաքին (և երբեմն այնքա՞ն խաբուսիկ) հատկանիշները:

Ես ինձ երջանիկ մարդ եմ համարում նախ և առաջ այն առումով, որ իմ ժողովրդի կյանքին լիարժեք մասնակցելու և նրա մշակույթի զարգացմանն իմ ուժերի սահմաններում նպաստելու հնարավորություն եմ ունեցել:

Երջանիկ եմ, որ ինձ վիճակվել է իմ հայրենիքի սահմաններից դուրս հայկական արվեստի նվաճումների ճանաչման ականատեսը լինել: Որպես կոմպոզիտոր և կատարող մասնակցելով բազմաթիվ երկրների երաժշտական համաժողովներին ու փառատոների՝ մշտապես զգացել եմ իմ՝ Հայաստանի քաղաքացու և նրա մշակույթի ներկայացուցչիս պատասխանատվությունը:

Երջանիկ եմ նաև, որ կյանքիս երկար տարիների ընթացքում և ստեղծագործական ուղուս տարբեր հատվածներում մշակույթի և արվեստի

խոշորագույն ներկայացուցիչների՝ Կոնստանտին Սարաջևի և Կոնստանտին Իգումնովի, Մարտիրոս Մարյանի և Դմիտրի Շոստակովիչի, Արամ Խաչատրյանի և Մստիսլավ Ռոստրոպովիչի, ինչպես նաև մշակույթի բազմաթիվ այլ գործիչների՝ կոմպոզիտորների և բանաստեղծների, երաժիշտ-կատարողների և նկարիչների, թատրոնի և կինոյի աշխատողների հետ ստեղծագործական ու մարդկային շփման բացառիկ հնարավորությունն են ունեցել: Այդ անձանց շարքում առանձնահատուկ տեղ են գրավում իմ սիրելի ուսուցիչներ Օլգա Բաբասյանը, Վարդգես Տալանը և Գեորգիս Լիտինսկին, որոնց մեծապես պարտական եմ:

Կյանքն ինձ պարզեւ է այնպիսի մարդկանց ընկերությունը, ինչպիսիք են Առնո Բաբաջանյանը, Ղազարոս Մարյանը, Էդվարդ Միրզոյանը, Աղամ Խուդոյանը... Նրանց հետ ջերմ հարաբերությունների մեջ է անցել իմ կյանքը, և յուրաքանչյուրից մի փոքրիկ մաս հիմա էլ ապրում է իմ մեջ:

Իմ ընտանեկան երջանկությունն են ինձ համար անսահմանորեն քանկ կլինա՝ Իրինան, երեխաներս՝ Նարինեն և Սուրենը, իմ սիրելի թոռները:

Երեխաներիցս յուրաքանչյուրը յուրովի է գտել իր տեղն այս կյանքում: Սուրենը, որը մասնագիտությամբ նկարիչ-դիզայներ է, Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտն ավարտելուց հետո աշխատում է ԱՄՆ-ում, համակարգչային գրաֆիկայի բնագավառում: Նարինեն, Մոսկվայի կոնսերվատորիայի դաշնամուրի դասարանն ավարտելով՝ զբաղվել է կատարողական և մանկավարժական գործունեությամբ: Այժմ նա ապրում և աշխատում է Լոնդոնում, որտեղ հաջողությամբ ավարտել է իրավաբանական ֆակուլտետը՝ ստանալով փաստաբանի որակավորում և արժանանալով մագիստրոսի գիտական աստիճանի: Ապրելով Եվրոպայում, նա միշտ եղել է իմ կողքին, ակտիվորեն մասնակցելով հրատարակիչների, կատարողների հետ իմ ստեղծագործական պայմանագրերի կարգավորմանը, հաճախ հանդես գալով դաշնամուրային երկերիս կատարմամբ:

Ես երջանիկ մարդ եմ, որովհետև հնարավորություն են ունեցել մշտապես զբաղվելու իմ կյանքի գլխավոր գործով: Ստեղծագործական արվեստը կոմպոզիտորից պահանջում է ստեղծագործական լիցքի հարստ կուտակում, եռանդի ու հոգևոր ուժի մեծ պաշար, իսկ ամենակարևորը՝ անձնուրաց և անմնացորդ նվիրում:

Իմ շարադրանքը մոտենում է իր ավարտին: Հետադարձ հայացք գցելով անցած տասնամյակների կենսական ուղու վրա՝ խորհում եմ այն մասին, որ թերևս կարողացել եմ իմ ներդրումն ունենալ հայրենական մշակույթի զարգացման մեջ:

Ժամանակը ցույց կտա, թե որքանով է շոշափելի այդ ավանդը:

Ալ. Հարությունյանին ուղղված նամակներից

Արամ Խաչատրյան
կոմպոզիտոր,
ԽՍՀՄ ժողովրդական արտիստ

Հունվարի 9, 1962 թ.
Մոսկվա

Կոտիկ, ուզում եմ, որ շա՛տ և լա՛վ ստեղծագործես: Ուզում եմ, որ մեզ՝ բոլոր ավագներիս, ոչ միայն հասնես, այլև մեզանից առաջ անցնես:

Սիրելիս, դու իրոք շատ տաղանդավոր անձնավորություն ես, և մարդիկ քեզանից ոչ միայն ակնկալիքներ ունեն, այլև, ուզենաս թե ոչ՝ քեզ որոշակի պահանջներ պիտի ներկայացնեն: Զու ուներին է ծանրացած (ի թիվս այլ բաների) հայ խորհրդային երաժշտության հետագա զարգացման պատասխանատվությունը:

Սպասում եմ քո նոր ստեղծագործություններին, և մի՛ մոռացիր, որ հայ երաժշտության առաջնորդներից մեկն ես դառնում:

Քեզ սիրող՝ Արամ Խաչատրյան

Արամ Խաչատրյան

Հունիսի 24, 1963 թ.
Մոսկվա

Սիրելի Կոտիկ,

Որքան երջանիկ կլինեի, եթե ողջ լինեի քո հորեյանական տարեդարձի ժամանակ և հնարավորություն ունենայի իմ կարծիքը քո մասին հայտնել այդ առիթով:

Այժմ դու խորհրդային նշանավոր կոմպոզիտորներից մեկն ես: Այդ մասին ասում եմ ամենուր, հնարավոր բոլոր առիթներով: Թող քո վիթխարի տաղանդն է՛լ ավելի ծաղկի: Եթե ես ինչ-որ բան արել եմ, ապա դու, քո սերնդի բազմաշնորհ ստեղծագործողների հետ միասին, արդեն այժմ զգալի նպաստ ես քերել մեր ընդհանուր նպատակների իրագործմանը և ստանձնել ես այն շարունակելու պատվավոր գործը:

Երանի քեզ, որ երիտասարդ ես: Երանի քեզ, որ գրում ես «Սայաթ-Նովա» օպերան: Դու ուղղակի պարտավոր ես այն լավ գրել: Դու կարող ես այդ անել: Համոզված եմ դրանում և անհամբեր սպասում եմ այն օրվան, երբ կլսեմ այն:

Նշանառության մասին շատ դիպուկ ես ասել քո հոդվածում: Իրոք, կոմպոզիտորը պետք է նշանառու լինի:

Գրկում եմ քեզ, քո Արամ Խաչատրյան

Արամ Խաչատրյան

Հունվարի 9, 1967 թ.
Մոսկվա

Սիրելի Կոտիկ,

Մեկ անգամ էլ կարողացի նամակդ, և ցանկություն առաջացավ մի քանի քան ասել այդ առիթով:

Ուրախ եմ, որ նկատել ես մեր երաժշտության խորքային զարգացման միտումը ու համաձայն ես ինձ հետ: Մեր երաժշտության ինտելեկտուալ ուղղվածությունը տվյալ պահին միանգամայն ակնհայտ ու անկասկած է: Մեր կոմպոզիտորները, հատկապես՝ երիտասարդները, չպետք է հույս դնեն իրենց տաղանդի և ինտուիցիայի վրա: Անհրաժեշտ են լուրջ գիտելիքներ, կուլտուրայի բարձր մակարդակ: Ժողովրդի կուլտուրան հիմնականում մեծապես աճել է, իսկ կոմպոզիտորներն, իմ կարծիքով, առայժմ հետ են մնում կյանքի, ժամանակի պահանջներից:

Բացի այդ, ինձ դուր եկավ մեր ազգային «դեմքը» չկորցնելուն վերաբերող բո մտավախությունը, կամ, ավելի ճիշտ՝ մտահոգությունը: Իրավացի ես, երբ ասում ես, թե երիտասարդ ստեղծագործողները ձգտում են միմյանց գերազանցել կեղծ արհեստականության մի երաժշտության միջոցով: Սակայն, դրա հետ մեկտեղ, հարկ է առաջ գնալ, որոնք նոր լուծումներ, ժամանակին համընթաց քայլեր, այսինքն՝ նոր մտքեր արտահայտելու նոր միջոցներ գտնել:

Ի՞նչ վիճակում է քո օպերան: Աշխատո՞ւմ ես, թե՞ ոչ:

Գրկում եմ քեզ, քո Արամ Խաչատրյան

Արամ Խաչատրյան

Դեկտեմբերի 7, 1965 թ.
Բարվիխա

Սիրելի Կոտիկ,

Ուրախությամբ կարողացի այն լուրը, որ գրեթե ավարտել ես օպերան: Վստահ եմ, որ պահպանել ես երաժշտության այն որակը, որն ակնհայտ էր ձեր տանն իմ լսած մի քանի հատվածներում: Մի՛ շտապիր: Գործը լավ արա: Այժմ դու միջակ կամ չիղկված երկեր ստեղծելու իրավունք չունես: Հույս ունեմ, որ քո օպերան կալկական օպերայի պատմության մեջ նոր «թվարկության» սկիզբը կազդարարի: Այսինքն, ուզում եմ ասել, որ դու պիտի նոր էջ բացես մեր դասական օպերային պատմության մեջ:

Մտածելու շատ բան կա, անհրաժեշտ է չափազանց պահանջկոտ լինել սեփական աշխատանքի նկատմամբ: Հաշվի առ նոր ուղղությունները, նոր պահանջները, խորհիր երաժշտական լեզվի դիպուկության մասին:

Օպերայում պետք է ունենաս հաղթանակի մի քանի գրավական: Դրանք են՝ արիաները, երգերն ու նվագախմբային գլոխգործոցները: Այսինքն՝ պետք է արիաները, երգերն ու նվագախմբային գլոխգործոցները: Այսինքն՝ պետք է այնպիսի հատվածներ լինեն, որոնք հետագայում կկատարվեն ինքնուրույնաբար, կարողանան գոյություն պահպանել միշտ և անճնուր:

Մեր ողջ կյանքը լույսի և ստվերի, ուրախության և տխրության յուրատեսակ հաջորդականություն է: Մեկ լավ, մեկ վատ: Երջանիկ է նա, ով սեփական աշխատասիրության և կամքի շնորհիվ մեծացնում է լավի բաժինը և կրճատում վատը:

Գրկում են քեզ, քո Արամ Խաչատրյան

Դմիտրի Շոստակովիչ
կոմպոզիտոր,
ԽՍՀՄ ժողովրդական արտիստ
(հեռագիր)

1970թ.
Մոսկվա

Ընդունեք ջերմ շնորհավորանքներս բարձր կոչման արժանանալու առթիվ՝
ցանկանում եմ առողջություն, երջանկություն, ստեղծագործական մեծ հաջո-
ղություններ:

Դմիտրի Շոստակովիչ

¹1970թ. Ա. Գ. Հարությունյանին շնորհվել է ԽՍՀՄ ժողովրդական արտիստի կոչում:

Դմիտրի Շոստակովիչ

Գեկտեմբերի 29, 1960թ.
Մոսկվա

Հարգելի Ալեքսանդր Գրիգորևիչ,

Ընդունեք լավագույն մաղթանքներս Նոր տարվա առթիվ:

Միշտ առողջ ու երջանիկ եղեք, հմարավորին չափ շատ և լավ երաժշտություն
գրեք: Ամուր սեղմում եմ Ձեր ձեռքը:

Դ. Շոստակովիչ

Դմիտրի Շոստակովիչ

Ապրիլի 25, 1962թ.
Մոսկվա

Հարգելի Ալեքսանդր Գրիգորևիչ,

Շնորհակալություն մամակի և ինձ հասցեագրված բարի խոսքերի համար:
Լիովին կիսում եմ նաև Ձեր վերաբերմունքը Մ.Ռ.Ոստրոպոլիչի հանդեպ: Այն, որ նա
չստացավ Լենինյան մրցանակը, համարում եմ մեծագույն թյուրիմացություն, որի
վկան երբևէ եղել եմ: Երկու տարի առաջ Սլավան¹ Առնոյի² հետ միասին ինձ մոտ
նվազեցին թավջութակի հոյակապ կոնցերտը: Ա.Բաբաջանյանի կոնցերտը շատ
լավն է, և Սլավան այն հիանալի է նվագում: Ճիշտ է, Առնոն ասում է, որ
նվազախմբային հնչողությունից հետո նրան այլևս դուր չի գալիս կատարել
կոնցերտը դաշնամուրի նվազակցությամբ, բայց միևնույն է՝ կոնցերտն ինձ վրա
շատ լավ տպավորություն թողեց:

Ուրախությամբ եմ հիշում Համագումարում հնչած Ձեր ստեղծագործությունները:

Ցանկանում եմ Ձեզ առողջություն, երջանկություն, ստեղծագործական մեծ հաջողություններ:

Ձեր՝ Դ. Շոստակովիչ

¹ Մատիսլավ Ռոստրոպովիչ:

² Առնո Բաբաջանյան:

Դմիտրի Շոստակովիչ

Հունիսի 10, 1969 թ.
Մոսկվա

Հարգելի Ալեքսանդր Գրիգորևիչ,

Ձերմոտեն շնորհավորում եմ Ձեզ՝ «Սայաթ-Նովա» օպերայի պրեմիերայի առթիվ: Ինձ շատ ուրախացնում է այն միտքը, որ Ձեր աշխատանքը հաջողությամբ ավարտել եք, և այն ջերմ ընդունելություն է գտել ունկնդիրների շրջանում:

Մեզ էլ եմ հասել բուն օպերայի և նրա փայլուն պրեմիերայի մասին լուրերը:

Իրինա Անտոնովնայի¹ հետ պատրաստվում եմ գալ Դիլիջան՝ հուլիսի 1-ից: Գուցե Դուք էլ այնտեղ լինեք, և կկարողանանք տեսնել իրար:

Ամուր սեղմում եմ Ձեր ձեռքը և սրտագին բարեմաղթանքներս եմ հղում Ձեր ընտանիքի բոլոր անդամներին:

Ձեր՝ Դ. Շոստակովիչ

¹ Դ. Շոստակովիչի կինը:

Դմիտրի Շոստակովիչ

1970 թ.
Մոսկվա

Հարգելի Ալեքսանդր Գրիգորևիչ,

Շնորհավոր Ձեր Նոր տարին: Երջանկություն, առողջություն եմ Ձեզ մաղթում: Ցանկանում եմ սմեղծագործական նորանոր, հիանալի հաջողություններ:

Ամուր սեղմում եմ Ձեր ձեռքը:

Ձեր՝ Դ. Շոստակովիչ

Սրտանց շնորհակալ եմ ուշադրության և հիասքանչ նվերի համար:

Դ. Շ.

Հարգելի Ալեքսանդր Գրիգորևիչ,

Շնորհակալ եմ անչափ ուրախալի լուրերով լի Ձեր նամակի համար:

Իմ բավական տաղտկալի այս գոյության պայմաններում Ձեր նամակը յուրօրինակ նեցուկ է նվազած ուժերիս համար:

Առողջական վիճակիս պատճառով հաճախ ստիպված եմ լինում բաց թողնել հետաքրքիր համերգներ, երաժշտություն քիչ եմ լսում, իսկ դա ինձ դառնացնում է, որից էլ ավելի եմ տրտմում:

Սրտագին շնորհավորանքներս Ձեզ և Ձեր ընտանիքին՝ Մայիսի 1-ի կապակցությամբ:

Բոլորիդ մաղթում եմ քաջառողջություն և երջանկություն: Իրինա Անտոնովնան հղում է Ձեզ իր լավագույն մաղթանքները:

Ձեր՝ Գ. Շոստակովիչ

Գմխորի Կաբալակևի

Մեպտեմբերի 13, 1968 թ.

կոմպոզիտոր,

Մոսկվա

ԽՍՀՄ ժողովրդական արտիստ

Սիրելի Կոտիկ,

Կուզենայի նամակս սկսել անկեղծ երախտագիտության խոսքերով՝ Ձեր բարեկամական վերաբերմունքի, հիանալի հյուրընկալության, այն ուշադրության և ջերմության համար, որ մշտապես զգում էինք Դիլիջանում անցկացրած բոլոր օրերի ընթացքում: Մինչև օրս վերհիշում եմք Ձեր «N 1 երթուղին»¹, որպես մի հրաշալի հեքիաթ, որի նմանը, թե՛ շքեղությամբ, թե՛ գեղեցկությամբ, երբեք ոչ մի տեղ չեմ տեսել: Եվ ընդհանրապես, պետք է ասեմ, որ բոլորիս համար էլ Դիլիջանը լի է ամենավառ հիշողություններով:

Սակայն, գեղեցկությունն ու բնությունը՝ մի կողմ, իսկ ինչպե՞ս է ընթանում Ձեր օպերայի հետ կապված աշխատանքը: Երբ մտածում եմ, թե որքան ժամանակ խլեցի Ձեզնից ու Էդիկից², խիղճս սարսափելի տանջում է: Հուսով եմ՝ հյուրերի սեզոնն ավարտվել է, և հիմա ամբողջ ուժով աշխատում եք: Ցանկանում եմ մոտակա ժամանակ հաջողությամբ ավարտեք պարտիտուրը:

Անկեղծորեն Ձեր՝ Գ. Կաբալակևի

¹ Խոսքը Հայաստանի Լոռու շրջանում Ալ.Հարությունյանի ավտոմեքենայով շրջագայության մասին է:

² Էդվարդ Միրզոյան:

Սիրելի Կոտիկ,

Այս գիշեր վերադարձա Պերմից ու տեսա, որ Չեզկից մամակ ունեմ: Ամբողջ հոգով ուրախ եմ ու սրտանց շնորհավորում եմ Ձեզ՝ նոր օպերայի բարեհաջող ծննդյան առթիվ: Դեռ այն ժամանակ, երբ ծանոթացրիք ինձ երաժշտությանը, չէի կասկածում, որ բեմականացումը մեծ հաջողություն կբերի Ձեզ, և այժմ, մեզ բաժանող հազարավոր կիլոմետրերի հեռավորությունից, ջերմորեն գրկում ու համբուրում եմ Ձեզ և Ձեր օպերային երկար, երջանիկ տարիների կյանք եմ մաղթում:

Ձեր՝ Դմիտրի Կաբալակսկի

Դմիտրի Կաբալակսկի

Հոկտեմբերի 25, 1969 թ.
Մոսկվա

Սիրելի Կոտիկ,

Մեկ անգամ ևս ուզում եմ շնորհակալություն հայտնել լուսանկարի համար: Շատ ուրախ եմ, որ ինձ հաջողվեց ունկնդրել «Սայաթ-Նովան»¹ և ակամատեսը լինել այն մեծ հաջողության, որն իրավամբ Ձեր հսկայական աշխատանքի իրական գնահատականն է: Կրկին անգամ սրտանց շնորհավորում եմ Ձեզ:

Ամուր գրկում եմ Ձեզ ու ողջունում Ձեր ընտանիքի բոլոր անդամներին:

Անկեղծորեն Ձեր՝ Դ. Կաբալակսկի

¹ Խոսքը 1969 թ. աշնանը թումանյանական հանդիսությունների օրերին Մոսկվայի Մեծ թատրոնում «Սայաթ-Նովա» օպերայի ներկայացման մասին է:

Գեորգի Սվիրիդով
կոմպոզիտոր,
ԽՍՀՄ ժողովրդական արտիստ

Հունվարի 19, 1984 թ.
Կրեշչենյե

Հարգելի Ալեքսանդր Գրիգորիկ,

Ինձ խորապես հուզեց Ձեր Ամանորյա մամակը, ոչ միայն ջերմ ու բարի խոսքերով, այլև այն անկեղծ ու սրտաբոխ ոգով, որով գրված էր: Ես վաղուց եմ ծանոթ Ձեր երաժշտությանը (դեռևս Ձեր օրատորիայից¹, որի մեծ հաջողությունը շատ լավ եմ հիշում), միշտ անկեղծ համակրանքով եմ դրան վերաբերվել, և այդ վերաբերմունքն ամենևին չի փոխվել:

Չեզ ամենայն բարիք եմ ցանկանում Նոր տարում և առաջիկայում: Ցավում եմ, որ Դուք նույնպես, ինչպես գրում եք՝ զերծ չեք մնացել հիվանդանոց ընկնելուց:

Ինքս էլ հիվանդանոցում էի, երբ ստացա Ձեր մամակը, և ուշադրության այդ դրսևորումն առավել ևս հաճելի ու ջերմ էր ինձ համար:

Լավագույն մադրանքներս Ձեզ,
Գ.Սվիրիդով

¹ Նկատի ունի «Հայրենիք» կանտատը:

Գեորգի Սվիրիդով

Փետրվարի 7, 1989 թ.

Մոսկվա

Հարգելի Ալեքսանդր Գրիգորևիչ,

Երեկ երեկոյան ստացա Ձեր մամակն ու հիանալի լուսանկարը: Այժմ այն տեղ կգտնի իմ աշխատասենյակում: Իսկպպես, լուսանկարը շատ հաջող է՝ այն իմաստով, որ երկուսս էլ մեզ մման ենք:

Ուրախ եմ, որ մամակս վերջապես գտավ Ձեզ:

Երաժշտական կյանքն այլևս շատ քիչ է ուրախություն պատճառում ինձ, եթե չասեմ ավելին: Այնտեղ վաղուց արդեն հաստատվել է չարի և փոխադարձ անբարյացակամության ոգին: Ծերությունն ու առողջությանս վատթարացումը այլևս դրա վրա ուշադրություն դարձնելու ուժ չեն թողել:

Նախորդ պլենումի ժամանակ մեր համդիպումն իրոք ինձ շատ հաճելի էր:

Չեմ կարող չարտահայտել հուզմունքս՝ ձեր մեծահոգության ու բարության կապակցությամբ:

Ավելի համախմբված եղեք, մադրում եմ Ձեզ արիություն, հոգու հանգստություն և ուժ:

Գ.Սվիրիդով

Գեորգի Սվիրիդով

Փետրվարի 2, 1991 թ.

Մոսկվա

Հարգելի Ալեքսանդր Գրիգորևիչ,

Բոլորովին վերջերս, ավելի ճիշտ՝ հունվարի 29-ին, ստացա Ձեր մամակը, որն ուղարկվել էր մեկուկես ամիս առաջ:

Մրտանց շնորհակալ եմ Ձեր ուշադրության, բարի խոսքերի համար: Դրանք առանձնապես հուզիչ են հիմա, երբ համընդհանուր խավարում է ամենուր: Այլ կերպ չեմ կարող կոչել այն ամենն, ինչ կատարվում է շուրջս, և չեմ գտնում դրա տրամաբանական բացատրությունը: Այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ մարդկային կյանք է ներխուժել անհայտ տարերքը՝ կույր հարվածներ հասցնելով ամենքին:

Մակայն Սերը միշտ էլ մնում է մարդկանց հետ, և նրա շունչն զգում եմ Ձեր մամակի տողերում:

Ձերմոտեն շնորհավորում եմ Ձեզ, քանկագին բարեկամս, Ձեր պանծալի յորանասունամյակի կապակցությամբ: Երաժշտական կյանքից ու միջավայրից կտրված լինելուս պատճառով է, որ դա ժամանակին անելու հնարավորություն չունեցա:

Սակայն իմ բարի զգացմունքները Ձեր հանդեպ անփոփոխ են, և խնդրում եմ հավատալ դրանց անկեղծությանը:

Գ.Սվիրիդով

Եվգենի Սվետլանով
դիրիժոր,
ԽՍՀՄ ժողովրդական արտիստ

Դեկտեմբերի 17, 1988 թ.
Մոսկվա

Թանկագին Կոտիկ,

Միշտ և ամենուրեք ասում եմ, որ Հարությունյանը հայ երաժշտության դասականն է (բառիս լավագույն իմաստով): Եվ դա միայն իմ կարծիքը չէ: Գիտեմ, որ նույնն էր ասում և՛ հանգուցյալ Գենրիխ Իլյիչը¹, և՛ Բորիս Փարսաղանյանը, և՛ շատ ու շատ ուրիշներ:

Դու մնայուն արժեքներ ես ստեղծել, որոնցով հարստացել է Սպենդիարյան-Խաչատրյանի ազգային դպրոցը: Դե, իհարկե, նաև՝ Կոմիտասի և հայ ժողովրդի մյուս հանճարների:

Շատ ուրախ եմ, որ չես մոռացել ինձ: Նման վերաբերմունքն այնքան քանկ է, ցամաքավանդ՝ այս համատարած անտարբերության մեր օրերում:

Գրկում եմ քեզ:

Զո՛ Ե.Սվետլանով

¹ Գ.Ի.Լիտինսկի:

Գենրիխ Լիտինսկի
կոմպոզիտոր, մանկավարժ,
ՌՖ արվեստի վաստակավոր գործիչ

Մայիսի 8, 1974 թ.
Մոսկվա

Հարգելի Կոտիկ,

«Սովետսկայա մուզիկա» ամսագրից ուրախությամբ տեղեկացա Ձեզ հանրապետական մրցանակ շնորհելու մասին:

Սրտանց գրկում եմ Ձեզ և շնորհավորում Ձեզ ու Ձեր մերձավորներին, բոլորիդ ցանկանում եմ նորանոր ստեղծագործական հաջողություններ, երջանկություն և ամենայն բարիք:

Միշտ Ձեր՝
Գ. Լիտինսկի

Ռոդիոն Շչեդրին
կոմպոզիտոր,
ԽՍՀՄ ժողովրդական արտիստ

Մայիսի 2, 1970 թ.
Մոսկվա

Սիրելի Կոսիկ ջան,

Անընդհատ վերհիշում եմ քո օպերան (հատկապես աղոթքը՝ այն միանգամայն հստակ հնչում է մտքումս):

Քո՝ Ռ. Շչեդրին

Անատոլի Գմիտրիև
երաժշտագետ,
արվեստագիտության դոկտոր

Դեկտեմբերի 5, 1977 թ.
Լենինգրադ

Իմ քանկագին ու բարի Ալեքսանդր Գրիգորևիչ,

Հենց նոր ռադիոյով հնչեցին հատվածներ Ձեր «Սայաթ-Նովա» օպերայից: Շատ ու շատ հաճելի էր դրանք լսել: Այդ հատվածների հաղորդումն ուղեկցվում էր իմ հակիրճ ու պատշաճ մեկնաբանություններով: Ամեն ինչ ձայնագրվեց ժապավենի վրա, և ձայնագրությունը հեռարձակվեց Լենինգրադյան ռադիոյով: Իսկ դա նշանակում է, որ ունկնդրելու հնարավորություն կունենա ոչ միայն Լենինգրադը, այլև՝ ողջ Լենինգրադյան մարզը, Պսկովի շրջանը և հյուսիսային շրջանները:

Արդեն զանգահարել եմ բազմաթիվ ունկնդիրներ և շնորհակալություն հայտնել Ձեզ և ինձ:

Խորին հարգանքով՝

Ա. Գմիտրիև

Մերգեյ Ակսյուկ
կոմպոզիտոր,
երաժշտական քննադատ,
ԽՍՀՄ Կոմպոզիտորների միության քարտուղար

Մայիսի 30, 1969 թ.
Մոսկվա

Հարգելի Ալեքսանդր Գրիգորևիչ,

Ձեր Սայաթը¹, առաջին իսկ տակտերից, որն ինձ վաղուց ներկայացրել էիք ձեր մոսկովյան այցի ժամանակ, գորեղ, լուսավոր ու ուրախությամբ առկեցում ստեղծագործության տպավորություն բողեց ինձ վրա: Այն մի երկ է, որ ծնվել է Ձեր ստեղծագործական բռնիքի պահին:

Հոյակապ է Սայաթի առաջին իսկ տեսարանը: Դարպասների մոտ տեղի ունեցող եզրափակիչ տեսարանը ցնցող է. այն ակամայից տխրության և կարեկցանքի արցունքներ է առաջ բերում՝ շաղախված նույն այն լուսաշող ու կենսաստեղծ ողբերգականությամբ, որով լի է Հայաստանի ողջ պատմությունը...

Դուք իրավացի եք՝ երևանյան հանդիսատեսն է առաջին և ամենամշակույթի դատավորը: Եվ եթե նա «դատապարտել է» Ձեր Սայաթին բեմական կյանքի երկար տարիների և նրանում ճանաչել է իր ազգային հերոսին, ապա դրանից ավելի լավ բան չի էլ կարող լինել:

Ձեր արտիստականությունն ու Ձեր հայտնաբերած՝ երաժշտության խորունկ ու մաքրամաքուր աղբյուրները Ձեզ մեծապես կօգնեն նաև նոր գործ ստեղծելիս, որի մասին, գուցե, ժամանակն է մտածելու: Դուք միանգամայն ի գորու եք մի նոր մտահղացման, որը կրիսի «Չարչարաններ ըստ...» - չգիտեմ, թե որ ավետարանչի, սակայն հաստատ գիտեմ, որ այդ վեսն զգացմունքներն առանձնահատուկ են Ձեր երաժշտական օժտվածությանն ու աշխարհընկալմանը:

Չընդունեք այս ամենը որպես վերամբարձության դրսևորում: Մենք հետ ենք սովորել խոշոր կտավի երաժշտությունից և հաճախ ենք մանրում նրա մասին մեր խոսքը: Ձեր երաժշտության մասին (սա հաճոյախոսություն չէ) կարելի է և հարկ է բարձր ոճով խոսել՝ մեծարելով Ձեզ:

Մեկ անգամ ևս հայտնում եմ անկեղծ ուրախությունս Ձեզ և Ձեր Սայաթի համար:

Ձեր՝ Ս. Ակյուկ

¹ «Սայաթ-Նովա» օպերան:

Իսահակ Ժուկ
ԽՍՀՄ Պետական նվագախմբի կոնցերտմայստր,
ՌՖ վաստակավոր արտիստ

Օգոստոս, 1969 թ.
Մոսկվա

Հարգելի Ալեքսանդր Գրիգորևիչ,

Վերհիշում եմ այն հիասքանչ օրերը, որ անցկացրի՞նք Հայաստանի լեռներում, և մասնավորապես՝ Ձեզ հետ միասին:

Այդ հուշերում առանձնանում է այն վառ տպավորությունը, որ ես վայելեցի Ձեր «Սայաթ-Նովայի» առաջին գործողության երաժշտությունից, և, իհարկե, բոլոր դերերի, պարտիաների, երգչախմբի, նվագախմբի և նրա մենակատարների միանձնյա կատարումից:

Ուզում եմ խոստովանել, որ իմ բավականին երկարատև կյանքի ընթացքում բախտ եմ ունեցել լսելու Ձերից ավելի լավ ձայնային ու տեմբրային տվյալներով օժտված վոկալիստների: Բայց կարո՞ղ էի, արդյոք, ըստ արժանվույն գնահատել Ձեր ձայնային օժտվածությունն այն պահին, երբ (թեկուզև մեջքով դեպի ինձ

նատած) այդքան ոգեշունչ և զարմանալի տեմպերամենտով կատարում էիք բոլոր դերերը. օժտվածությամբ, որն, ըստ երևույթիմ, հետին պլան է մղվել Ձեր բազմակողմանի տաղանդի ճնշման տակ:

Սեղմուն եմ Ձեր ձեռքը,

Իսահակ Աբրահամովիչ Ժուկ

Օթար Թաքթաբաշիշվիլի
կոմպոզիտոր,
ԽՍՀՄ ժողովրդական արտիստ

Մարտի 16, 1976 թ.
Թբիլիսի

Հարգելի Ալեքսանդր Գրիգորևիչ,

Կարդացի քո նամակը, որի հետ անվերապահորեն համաձայն եմ:

Քո նամակում շոշափված թեմաներն¹ ինձ ստիպեցին մտքերի մեջ ընկնել...

Առաջարկում եմ մի հեշտ լուծում՝ եկ հանդիպենք, և թող դա լինի հանդիպում հին բարեկամների ու գործընկերների հետ՝ դու, Էդիկը², Սուլխանը³, ես, Ֆիքրեթը⁴. միասին կնստենք ու կմտածենք, թե ինչ կարելի է անել:

Ավելի լավ կլինի դա անել այստեղ, Թբիլիսիում, ուր առաջին անգամ մենք հանդիպեցինք 1944 թվականին և որտեղ մեր այսքան երկարատև ընկերության հիմքը դրվեց: Վստահ եմ, որ այդ պարզ ու բարեկամական անկեղծ հանդիպումից հետո գործի կանցնենք և կընդլայնենք հանդիպման մասնակիցների շրջանակները. կներգրավենք ֆիլիարմոնիան, օպերային թատրոնը, այլ կոլեկտիվներ և, համոզված եմ՝ շատ ու շատ լավ բաներ կձեռնարկենք:

Եթե այն կարծիքին ես, որ հնարավոր է առաջարկս իրականացնել, գրիր կամ զանգահարիր ինձ, անհամբերությամբ սպասում եմ պատասխանիդ:

Ինձ համար միշտ թանկ են եղել թե՛ մեր եղբայրական ընկերությունը, թե՛ ընդհանուր հաջողությունները, ինչպես նաև ստեղծագործական սկզբունքների այն սրտամոտությունն ու կայունությունը, որը մեզ հաջողվել է պահպանել ի հեճուկս այս հեղինեղով կյանքի բոլոր դժվարությունների ու փոփոխականության:

Հղում եմ քեզ սրտազին բարեմաղթանքներս:

Սիրով, քո՝ Օ. Թաքթաբաշիշվիլի

¹ Օ. Թաքթաբաշիշվիլուն հասցեագրված նամակում Ալ. Հարությունյանը բարձրացրել է ժամանակակից երաժշտական կյանքի էական խնդիրներին առնչվող մի շարք հարցեր:

² Էդվարդ Միրզոյան

³ Սուլխան Ֆինցաձե

⁴ Ֆիքրեթ Ամիրով

Մարինե Յաշվիլի
Վրաստանի կամերային նվագախմբի
գեղարվեստական ղեկավար,
Վրաստանի ժողովրդական արտիստուհի

Ապրիլի 27, 1970 թ.
Թբիլիսի

Հարգելի Ալեքսանդր Գրիգորևիչ,

Շնորհակալություն Ձեր հրաշալի Սիմֆոնիետի պարտիտուրի համար:

Մեծ հաճույքով աշխատում ենք ստեղծագործության վրա և նվագելու ենք այն մայիսի 19-ին, աբոնեմենտային համերգի ժամանակ, որի ընթացքում կատարվելու են նաև Յինցաձեի, Ղանչելիի, Մաճավարիանու և Սկոբիկի ստեղծագործություններից:

Շատ ուրախ կլինենք, եթե կարողանաք ներկա լինել համերգին. խոստանում ենք լավ նվագել:

Առողջ եղեք, բարևներ Ձեր հմայիչ տիկնոջը:
Մարինե Յաշվիլի

Էդգար Հովհաննիսյան
կոմպոզիտոր,
ԽՍՀՄ ժողովրդական արտիստ

Հունիսի 5, 1986 թ.
Երևան

Հարգելի Ալեքսանդր Գրիգորևիչ,

Անկեղծորեն ու ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ՝ ստեղծագործական մեծ նվաճումների, այդ թվում՝ «Սայաթ-Նովա» օպերայի համար Արամ Խաչատրյանի անվան մրցանակի արժանանալու առթիվ:

Արամ Խաչատրյանի անվան մրցանակն ըստ արժանվույն պսակում է Ձեր անձնական ներդրումը մեր բազմադարյա մշակույթի զանձարանում, կրկին անգամ ընդգծելով Ձեր լավագույն ստեղծագործությունների անանց նշանակությունը և մարմնավորելով հայ կոմպոզիտորների տարբեր սերունդների ստեղծագործական մտահղացումների կենդանի ու զարմանալիորեն արգասաբեր կապը:

Դուք հիրավի արժանի եք Արամ Խաչատրյանի անվան մրցանակի նաև այն պատճառով, որ ինքը՝ Արամ Իսիկը (թուրքս էլ գիտենք ու հիշում ենք) Ձեր ստեղծագործությունների ջերմեռանդ ու շահագրգիռ ունկնդիր էր, իմաստուն և բարյացակամ ուսուցիչ՝ բոլորիս, ինչպես նաև Ձեզ համար: Ձեր «Սայաթ-Նովա» օպերայի մասին Արամ Իսիկն առանձնապես բարձր կարծիքի էր և բազմիցս հայտնում էր այն թե՛ գրույցներում, թե՛ մամուլում:

Սրտանց շնորհավորելով Ձեզ, քանկազին Ալեքսանդր Գրիգորևիչ՝ կուզենայի արտահայտել իմ անկեղծ ցանկությունը, որ Խաչատրյանի մրցանակը նոր խթան դառնա Ձեր հիանալի ստեղծագործության ուղին շարունակելու համար:

Անկեղծորեն Ձեր՝ Էդգար Հովհաննիսյան,
Ա. Խաչատրյանի անվան մրցանակակիր:

Ալեքսանդրյան Պախմոտովա
կոմպոզիտոր,
ԽՍՀՄ ժողովրդական արտիստուհի

Մարտի 5, 1988 թ.
Մոսկվա

Մեծարգո Ալեքսանդր Գրիգորևիչ,
Սիրելի Կոտիկ.

Շնորհակալություն քո բարի, հիասքանչ նամակի համար:

Քո նամակն առանձնապես թանկ է, քանի որ ինձ համար դու իսկական երաժիշտ ես, մեծատաղանդ կոմպոզիտոր և կիրթ, գեղեցիկ ու բարի մարդ: Այդ ամենն ինձ միշտ հիացրել է: Այժմ էլ քո երաժշտությունը շարունակում է ինձ հիացնել: Միշտ էլ չափազանց քնքրյալ, բարեկամական համակրանքով եմ քեզ վերաբերվել դեռ այն հեռավոր ժամանակներից, երբ ուսանում էիմք կոմսերվատորիայում:

Քո երաժշտության մեջ կա թարմություն, սրտամոտություն (*առանց պարզունակության*, որն ի դեպ, շատ հազվադեպ է պատահում) և, իհարկե, ազգային պայծառագույն բովանդակություն: Այդ ազգայինը հայկականն է, ինչն ինքնին նշանակում է՝ ժողովրդական արվեստի գեղեցկության գույակցում բարձրակարգ մասնագիտական վարպետության հետ:

Շնորհակալություն, որ չզրացար ինձ նամակ գրել: Չեմ կատակում: Չէ՞ որ միմյանց երաժշտության մասին անշտապ, մտերմիկ գրույցի այդ ավանդույթն էլ աստիճանաբար վերանում է:

Ամբողջ սրտով քեզ երջանիկ ստեղծագործություն եմ մաղթում:

Մինչ հանդիպում համագումարում,

Այլա (Ա. Պախմոտովա):

Վլադիմիր Չակ

երաժշտագետ,

ԽՍՀՄ Կոմպոզիտորների միության երաժշտագիտության
և քննադատության հանձնախմբի նախագահ

Մարտի 20, 1989 թ.
Մոսկվա

Հարգելի Ալեքսանդր Գրիգորևիչ,

Հաճույքով և ուրախությամբ եմ հիշում Մոսկվայում Ձեզ հետ շփվելու պահերը: ԽՍՀՄ Կոմպոզիտորների միությունում այժմ շատ են խոսում Պլենումի ընթացքում Ձեր ելույթի, ավելի ճիշտ՝ ելույթների մի ամբողջ սյուիտի մասին, որոնցից յուրաքանչյուրը խիստ պատճառաբանված էր ու յի այն ջերմ ու անկեղծ ինտոնացիայով և խառնվածքի կրքոտությամբ, որն արտահայտվում է Ձեր խոսքում, մշտապես զարմանք պատճառելով լսողին և մշտապես նմանվելով Երաժշտության: Հիրավի այդպե՛ս է:

Ձեր եռանդուն և բարի քննադատության ցանկացած դրսևորման մեջ շոշափելի է ճշմարիտ երաժշտականությունը, որն այնքան անհրաժեշտ է Ձեզ շրջապատող մարդկանց սրտերին: Մասնավորապես՝ իմ սրտին: Եվ հենց դրա համար էլ խորապես շնորհակալ եմ:

Գրկում եմ Ձեզ, Ձեր մերձավորներին ու ընկերներին:

Սիրով՝ Վլադիմիր Չակ

Տիմոֆեյ Դոկչիցեր
շեփորահար,
Ռ-Ֆ ժողովրդական արտիստ

Փետրվարի 26, 1982 թ.
Մոսկվա

Հարգելի Ալեքսանդր Գրիգորևիչ,
(Շատ եմ ուզում ասել՝ թանկագին Կոտիկ)։

Հաճախ եմ մտածում Ձեր մասին, և՛ որպես ոչ սովորական հոգու տեր մարդու, և՛ որպես այնպիսի մեղեդիների տաղանդաշատ հեղինակի, որոնք կարող է միայն բնութայունն ստեղծել։

Վաղուց հանգիստ չի տալիս շեփորի և երգչախմբի համար ստեղծագործության միտքը. այդ համադրումն ուղղակի հիանալի է։ Ես այն պատկերացնում եմ շեփորի և երգչախմբի համար գրված Կոնցերտի տեսքով, ձայնի (ընդարձակված վոկալիզի), շեփորի և երգչախմբի Կոնցերտի տեսքով։

Կարծում եմ, որ միայն Դուք կարող եք ստեղծել այնպիսի մեղեդի, որ շեփորն էլ կարողանա երգել։ Այսինքն՝ վեհաշուք, քնարականությամբ ու դրամատիզմով շնչող մեղեդի։

Իմ պատկերացմամբ՝ ապագային ուղղված պոեմ պիտի լինի ...

